

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ի Ր

№ 4 1890

Ա Պ Ր Ի Լ

1890 № 4

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ի

երես

1	ՆԱՄԱԼԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ. . .	481	Ջրադաց (անցածից պատկեր):
2	ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. . .	497	Հայ դիւզացու սև օրը (չարունակ.):
3	ԱԼԷՔՍԱՆԴՐ ՊՈՊ-ից՝ ԱՐԾԻԻԵԱՆ	523	Մեռանող քրիստոնեայ (բանաստ.):
4	ԷԼԼԻՕՏ-ից՝ ԱՐԾԻԻԵԱՆ.	524	Բանաստեղծի տապանադիրը (բան.):
5	ԹՈՄԱՍ ՄՈՒՐ-ից՝ ԱՐԾԻԻԵԱՆ.	525	Նրբ քեղ ճշում է... (բանաստ.):
6	»	526	Անն խաղում, փաղկիւմ է... (բան.):
7	ՓԻՐՈՒՄԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ.	527	Վանայ Ծովակը:
8	ՄԻԹԱՐԵԱՆՅ ԱՐՇԱԼՈՅՍ.	548	Արեղայ (բանաստեղծութիւն):
9	ՊՈՕՇԵԱՆՅ ՊԵՐՃ.	553	Իզդէ (չարունակ):
10	ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ ԱՐՇԱԿ.	587	Գերմանական զպրաց. գրութիւնը:
11	ՄՍԳԱԹԵԱՆ ԵՂԻՇԷ.	597	Քննադատներին:
12	Լ. Ս., Ա. Ա.	605	Գրախօսութիւն:
13	ԼՈՒՍԻՆԻ.	614	Ամուսնայ Քրօնիկ:
14	Ա. Ա.	620	Աշխարհաբար լեզ. զարգ. մասին:
15	Z.	625	Քաղաքական տեսութիւն:
16	ԽՄԲ.	628	Բացատրութիւններ:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Յ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՅՏԻՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротинианца, на Гол. просп. соб. д. № 41.

1890



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1890

Ա Պ Ր Ի Լ

1890 № 4

ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏԳՈՐԱՆ Մ. Գ. ՈՕՏԵԼԵԱՆՏԻ

1890

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го Апрѣля 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Гол. просп. соб д. № 41.

Զ Ր Ա Ղ Ա Ց

(Անցածից պատկեր)

Ա. Ն Ա Մ Ա Լ Ե Ա Ն Ի

I.

ՆՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԾՆԻՆԼԸ

1879 թւի հոկտեմբեր ամսի երեկոններից մէկն էր: Դուրսը լաւ եղանակ էր և ամեն մարդ աշխատում էր օգտուել տարւայ այդ ժամանակի տաք և պարզ օրերից՝ մի կուշտ զբօսնելու: Փողոցներում, ճեմելիքներում անց ու դարձ անողների թիւը անհամար էր:

Դանդաղ և անհոգ շարժւող ամբօխի միջով անցնում էր շտապով մի երիտասարդ, որ ամենեւին չէր նկատում իւր շուրջը կատարւածը: Այլալուծ և բարկացած դէմքով նա առաջ էր գնում՝ ձեռքին բռնած մի հաստ տետր՝ գլանաձև կօլօլած և թելով կապկպած:

Ծռւեց նա ձախ մի փողոց, յետոյ աջ, դարձեալ ձախ, մտաւ մի մեծ տուն, բարձրացաւ սանդուղքներով մինչև երկրորդ շարկը, բանալիով բացեց իւր բնակարանի դուռը, մտաւ սենեակը՝ շարտեց մի կողմ գլխարկը և կապած տետրը և ինքը բարկացած ընկաւ մահճակալի վերայ:

—Այսքան սպասեմ և այսպէս պատասխան ստանամ, անպիտաններ, մրթմրթաց նա և լռեց:

Կորկոտեանը (այդպէս էր երիտասարդի ազգանունը) ամբողջ մի տարի է սպասում էր, որ իւր յօդւածը տպւէր և նորան այսօր-էգուց ասելով հանգստացնում էին: Այժմ նա դարձաւ տուն իւր ձեռա-

զրով, իւր անտիպ մնացած յօղածով: Իսկ նա յոյսեր ունէր. նա կարծում էր թէ իւր «գրական տեսու թիւնով» մի հետաքրքրական և ողելից գրածք է տալիս հասարակութեան:

Այդ օրը նա գնացել էր խմբագրի հետ վերջնականապէս խօսելու և նորանից վճռական պատասխան ստանալու: Եւ յետ դարձաւ անբաւական նորա պատասխանից:

Երկաջն չը կարողացաւ նա պառկած մնալ, վերկացաւ տեղից, վեր առաւ իւր ձեռագիրը, ազատեց նորան կապանքից, նստեց փոքրիկ սեղանի մօտ և սկսեց նորա այս ու այն կողմերը աչքի անցկացնել: Կարդալով յօղածը՝ նա ևս նկատում էր, որ չիրաւի յօղածը գրած է բաւականին թույլ և իւր հեղինակի հիմնական «հայեացքները» այժմ իրան երևում էին զուրկ խորութիւնից և որոշակի լինելուց: Այս փոփոխութիւնը թէև այժմ նա զգում էր, բայց աշխատում էր իրանից առհասարակ հեռացնել զանազան կասկածներ և յամենայն դէպս դեռ այնքան մեծ կարծիքի էր յօղածի մասին, որ վճռեց կամ նոր խմբագրութեան ղիմել, կամ առանձին բրօշուրով հրատարակել: Նա չէր կարողանում կամ թէ չէր ուզում հաւատալ, որ իւր գրչի ծնածը կարող է աւելորդ համարուել: «Յօղածը կարող է փոքր ինչ անկատար լինել, բայց նա դարձեալ իւր մէջ կ'արձանացնի հեղինակի տաղանդը և մտածմունքի եղանակը»:

—Միթէ՞ կարելի է փչացնել մի քանի ամիսների աշխատանքը: Զարմանալի մարդիկ են, ուրեմն միւլեհոյնն է տասն թերթ մի բան գրած՝ թէ չը գրած: Անպատճառ տպագրել կը տամ և տեսնեմ թէ ինչպէ՞ս չեն հաւանիլ յօղածս: Անշնորհակա՛լ մարդիկ: Լա՛ւ. զուք ձերը արէ՛ք, ես էլ իմը կ'անեմ:

Կատարելապէս զայրացած՝ նա վեր թռաւ տեղից և սկսեց շուտ-շուտ մանզալ սենեակում: Նա մրմնալով անիծում էր խմբագրին, որ այնպէս պարզ և անպաճոյճ կերպով նորան յայտնեց թէ «ձեր յօղածը չենք կարող տպել, նա շատ անկատար է և թույլ մեք շատ նիւթ ունենք»: Դժբաղդաբար ոչինչ չէր կարող ասել նա խմբագրութեան հերթակալին և եթէ ասէր էլ՝ բոլորովին աւելորդ կը լինէր:

—Ի՞նչ խմբագիրներ չէք, բղաւեց նա վերջապէս խուլ սենեակում, այլ զիշակեր զազաններ. զուք զիշատում էք մարդկային հո-

զին, դուք կրծում էք հեղինակի ոսկորները. դուք մեռցնում էք և թաղում տաղանդը, եռանդը, հանճարը: Ա՛հ, տաղանդակեր, եռանդաբեկ, հանճարասպան գազաններ:

Յանկարծ միաքը եկաւ, որ այնպիսի սաստիկ զրգոււած դրութեան մէջ, նա կարող էր մի սարսափելի պատկեր դուրս բերել, որ յետոյ պէտք կը գար մի որ և է յօղւածի համար: Ուստի ձեռքը առաւ զրիչը և շտապեց նախ և առաջ թղթի մի անկիւնում գրել «տաղանդակեր, եռանդաբեկ և հանճարասպան» բառերը: Վախենում էր, որ յետոյ մոռանայ այդ հրաշալի բառերը:

Մի քանի տող փոքրիկ յառաջաբանում նա նկարագրեց միջին դարերի մտաւոր ճնշումը, որչափ նա չիշում էր մի ժամանակ սերտած պատմաբանութիւնից. «Անմահ Գալիլէն պէտք է զոհէր արիւնածարաւ կաթոլիկ հայրերից, որովհետեւ նա չը ցանկացաւ նոցա խմբագրութեան տալ իւր փայլուն կարծիքները և խոհերը: Իւրաքանչիւր օր ամեն մէկ խմբագիր՝ մօտ մի տասը Գալիլէ է յօշոտում, որ մի տարւայ մէջ կ'անէ այն քիչից մի քանի հազար: Եւ այդ հազարների համար մտածող չը կայ: Խաչակիրների արշաւանքի նման մի դու շարժում է հարկաւոր, որ ջախջախի մեր դարու սելջուկներին: Ո՛հ, Երուսաղէմ, կորա՛ր դու: Ո՛վ հանճար, ընկճեցիր ամենակալ խմբագիրների կողմից...»:

Եւ այդպէս նա երկայն կը շարունակէր իւր ոգևորւած յօղւածը, եթէ յանկարծ նորա ուսը թափ տալով Ջառափեանը չը զարթնացնէր լարւած դրութիւնից:

— Ի՞նչ ես անում, Կորկոտեա՛ն, ոտանաւո՞ր ես գրում թէ դարձեալ ճառ ես պատրաստում: Սաստիկ ոգևորւած էիր:

— Շատ ժամանակ է՞ այստեղ ես: Բարև, Սիմօ՛ն:

— Ձէ՛, հէնց այս է՞ որ մտայ: Ա՛ տղայ, ի՛նչ է պատահել քեզ. բոլորովին սիռնած ես. աչքերդ շողւած են:

— Փոքր անհանգիստ զիշեր եմ անցկացրել. զլուխս ծանրութիւն է զգում: այժմ էլ նամակ եմ գրում: Իսկ յիրաւի մի յօղւած մտալիր եմ այս երեկոյ գրելու. էգուց ե՛կ ճաշից յետոյ միասին կարդանք: Միքայելին էլ քաշ տո՛ւր: Ինչ թազցնեմ քեզնից, հէնց հիմի էլ մի քիչ այդ յօղւածոջն եմ զբաղւած:

— Կը զանք անպատճառ: Մեր սղա՛յ, արդիւնաւոր զլուխ ունես,

հանաքը դէն դրած: Դու քո տաղանդը չես ճանաչում: Մի քիչ մտածի՛ր ասածիս վերայ: Ինչքան յօղածներ ունես անտիպ, ես քեզ քանի անգամ ասել եմ. ինչո՞ւ չես խմբագրութիւնների հետ մօտ ծանօթանում. ուրախութիւնով կը ապեն:

—Չարժէ, եղբայր: Ի՞նչ խմբագրութիւններ ունենք:

—Ճշմարիտ է. բայց նոցա էլ կը գրգռես, կը շարժես մէկ:

—Այդ ինքս էլ եմ մտածել. բայց մինչև մեք մեր խմբագրութիւնը չ'ունենանք, ո՛չ մի բան չենք կարող անել: Իսկ այժմ միայն ողորմութեան նման շնորհք ենք ստանում մեր խմբագրութիւններից, երբ մեր յօղածին տեղ են տալիս:

—Որ ասում եմ դու քո տաղանդը մեռցնում ես: Գեղեցիկ առաջարկութիւն: Դու այնպէս խօսքի՞ միջում մէկ գիւտ արիր: Խմբագրութեան մասին անսպասելի արեւմտապետք է խօսենք. ես կը կանչեմ մեր տղերանց խորհրդի. հէնց հզուց, յօղածդ կը կարդաս, յետոյ կը խօսենք:

—Վաղուց ժամանակն էր. Սիմօն, բայց մտածում էի դժարութիւնների մասին. ծախքեր են հարկաւոր. խմբագիր է հարկաւոր:

—Դէ, բաւական է, ինչքան քեզ համեստ պահեցիր: Դու ես լինելու խմբագիրը:

—Եղբայր, դարտակ չը խօսենք. թող հզուց ժողովենք, դատենք: Իմ այժմ գրելի յօղածն էլ հէնց պատահաբար այդ առարկային է մասամբ վերաբերում: Յոյս ունեմ բարեկամներս հաւանեն: Ահա՛ կարդամ քեզ մէկ կտորը:

Ձառափեանը և միւս բարեկամները յիշաւի անկեղծաբար մեծ կարծիք ունէին Կորկոտեանի վերայ, նորան սլաշտում էին, զովում էին և երեսին և դրսում, և ի հարկէ նորա գոռողութեան գլխաւոր պատճառներից մէկն էլ նոքա էին: Կորկոտեանը այնպէս սովորել էր նոցանից գովասանքներ լսել, որ չէր հաւատում այն պարոններին, որոնք նորան հակառակում էին: Կորկոտեանը հեռանում էր այդ նախանձոտ պարոններից, որոնք միայն նորա ոգևորութիւնը սառեցնում էին, և աշխատում էր՝ որչափ կարելի է՝ կարճ կապել նոցա հետ:

Առաւ նա դրածը և սկսեց.

«Միջնադարեան թանձրախիտ խաւարի մէջ, ամենայն բան մթութեան ծնունդ լինելով, թոյլ չէր տալիս տգիտութեան քօղը

պատուելու... ընդհանուր կեանքի խմբադիրը նոյն ինքն մթու թիւնն էր խաւարային մտքերով նախասպաշարւած...

—Սպասիր, տղայ, մի՛ կարդալ, արդէն զգում եմ, որ խոր մտածած բան է: Նա ուզում եմ ընկերներին հետ միասին լսել, որ տպաւորութիւնը աւելի սաստիկ լինի և եռանդով ու զգացմունքով խօսենք մեր լրագրի վերայ: Մի քիչ առաջ, երբ ես քեզ մօտ մտայ, տեսայ քեզ նստած. հէնց խօսոյն գուշակեցի, որ դարձեալ մի հազար գիւտ բան պէտք է ազդիդ նւիրես: Մնա՛ս բարեաւ, ցտեսութիւն:

Կորկոտեանը, առանց ժամանակ կորցնելու, խօսոյն նստեց իւր սիրելի աթոռի վերայ, գրիչը առաւ ձեռքը և սկսեց այնպէս շտապով գրել, որ ինքն ևս զարմանում էր իւր վերայ: Յարմար էր թէ անյարմար, նա այդ չը նայեց, այլ սկսեց գրել նոր խմբագրութեան անհրաժեշտութեան մասին: Նա աշխատում էր ապացուցանել, որ կեանքի մէջ կատարուող բազմաթիւ անձուների երևոյթների պատճառը—լաւ խմբագրութեան բացակայութիւնն է: Զը դիտեմ ի՛նչ պատճառով նա մեղադրում էր խմբագրութիւններին, որ մինչև այժմ չը կան մանկական գրադարաններ մեր քաղաքներում, և երդեցողութիւնը ամենայն տեղ կանոնաւորւած չէ, ինչպէս ցանկալի էր: Ի վերջոյ նա յարձակոււմ էր սարսափելի ածականներով խմբագրիչների վերայ՝ նոցա առւտրական զանազան խարդախութիւնների մէջ մեղադրելով. ապացուցանում էր իւր այդ մտքը ակնարկելով յայտարարութիւնների վերայ: Գլխաւոր յօդւածին նա կցեց ամ ի քան ի մտքերս անունով մի թեթեւ գրւածք, որի մէջ աշխատեց մի քանի կէտեր նշանակել, որոնք ուղեցոյց լինեն միւս օրւայ խորհրդին: Արդէն շատ ուշ էր, երբ նա զգաց փոքր ինչ յոգնածութիւն, քաղց և ծարաւ. բայց ինչ պէտք էր արած:

—Առաւօտը յօդւածս կ'ուղղեմ, ասաց և կիսակատար շորերը հանած՝ ձգեց մահճակալի վերայ:

II.

Մ Ե Ծ Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ

Նշանակւած ժամին սկսեցին ժողովւել բարեկամները կամաց կամաց: Նախ եկան երկու վառվուռն պատանիներ, որոնք այնքան սաստիկ գրավւած էին բոլոր ճանապարհը իրանց խօսակցութիւնով,

որ միմեանց զրկելով և ուսին լսիելով ու ձեռքը սեղմելով, անց ու դարձ անողներին զարմանք էին պատճառում: Ուրախ ձայնով ներս մտան և այնպէս էլ ուրախ թռան Կորկոտեանի մօտ:

—Ա տղայ, լաւ բան ես սարքում: Ինչո՞ւ մինչև այժմ չէիր ասում: Նոր արին ամեցիր մեր ջղերի մէջը:

—Նստեցէ՛ք, բարեկամներ, պատասխանեց փոքր ինչ հպարտ կերպով Կորկոտեանը: Ես կամենում էի, որ դուք ինքներդ զայիք այդ համոզմունքին, որ զործը սկսէր առանց երկայն զլլացաւութեան, առանց անհաշտելի երկպառակութեան:

—Ո՞վ դէմ կը լինի լաւ բանին:

Ներս մտան այդ ժամանակ զարձեալ երեք մարդ և նոցա ետևից Սիմօնը: Բոլորն էլ ուրախ տրամադրութիւնով:

—Տեսնում ես, պարոն խմբագի՛ր, ինչքան մարդ ժողովեցի. դեռ երկուսն էլ կը դան: Ես ամբողջ գիշերը մտածում էի նոր հրատարակութեան վերայ. ի՞նչ անուն տանք նորան: Ես վճռեցի իմ կողմից առաջարկել «Նշոյլ» անունը: Ես կարծում եմ, որ այդ բառի նշանակութիւնից ինքն իրան հասկանալի է թէ ինչո՞ւ լրագիրը պէտք է այդպիսի անուն ունենայ: Մեք սկսում ենք նոր զործունէութիւն և ի հարկէ լաւ ազգային գործունէութեան նշոյլը մեք ցոյց կը տանք մեր հրատարակութեան միջոցով:

—Ես քեզ հետ համաձայն չեմ, սառն կերպով պատասխանեց մէկը: —Նշոյլ՝ դա ի՞նչ անուն է: Ուրեմն մեր լրագիրը ազգային գործունէութեան միայն մի նշոյլը պէտք է լինի: Նշոյլը մեր այժմեան հրատարակութիւնների մէջն էլ կայ: Եթէ բանը լոյսի վերայ եկաւ՝ աւելի լաւ է իմ կարծիքով անուանել արդէն «Ճ ա ռ ա գ ա յ թ »:

—Ի՞նչ էք բանել լոյսից. մէկ ուրիշ անուն է հարկաւոր: Այնպէս անուն, որից հասկացւի բոլորը. զորօրինակ «Ճ ա ռ ժ ու մ »:

—Բաւական է, եղբայրներ, անունի վերայ խօսել, մէջ մտաւ Կորկոտեանը. նախ պէտք է խօսել հրատարակութեան վերայ և յետոյ:

—Ձգոյշ տղայ ես, գիտենք: Բաց թո՛ղ խօսենք: Քեզ ի՛նչ վնաս է հասնում: Տեսնում ես ինչքան վառւած ենք:

Մտան վերջին երկու հիւրերն էլ, որոնցից մէկը՝ յողնած և տխուր դէմքով համարում էր միւսներից աւելի զարգացածը: Դորա ազգանունն էր Սերալեան և իսկապէս դա փոքր իշատէ խելօքն էր դոցանից:

—Տղերք, ասաց Սիմօնը, նստեցէ՛ք, որ ժամանակ չը կորցնենք, թող գործը շուտով սկսենք: Առաջ թող Կորկոտեանը կարգայ իւր յօղւածը, յետոյ կը սկսենք և խորհուրդը:

Բոլորը լռեցին. բայց բարակ քմճիծաղը և ուրախ տրամադրութիւնը չէր անցնում նոցա երեօից: Կորկոտեանը առաւ մաքուր արտագրած յօղւածը, դրաւ սեղանի վերայ, մի փոքր հազաց, օձիքը ուղղեց, աթոռը փոքր ինչ առաջ ու յետ տարաւ և յետոյ դառնալով հասարակութեան՝ բերանացի մի փոքր յառաջաբան արաւ առաջիկայ ժողովի մասին:

—Սիրելի բարեկամներ՝ և ընկերներ՝: Նրկայն ժամանակ միմեանց հետ ապրելով, մեք արդէն միմեանց ճանաչում ենք, ուստի խօսել խմբի մասին աւելորդ է: Գուք բոլորդ էլ գիտէք, որ մեր հասարակական գործիչների շրջանում մեք չենք մասնակցում և չենք էլ ցանկանալ մասնակցելու: Մինչդեռ մեք ունենք ցանկութիւն, և եռանդ, և ուստի գործից վախենալու առիթ չ'ունենք: Բայց այդ գործը սկսելուց առաջ մեք պէտք է կրիտիկաբար նայենք այժմ գործողների վերայ և չը ինչայնք նոցա և մտածենք մեր անելիքը համաձայն վճռելու: Ուրեմն կը կարդամ ես իմ կրիտիկական յօղւածը, յետոյ կը խօսենք լրագրի վերայ...

Կորկոտեանը քրտնած ճակատով բացաւ տետրակը: Նա մտքումը շարադրել էր ուրիշ յառաջաբան. բայց չը կարողացաւ բոլորը մտաբերել. ուստի աշխատեց շուտով աւարտել նորան: Սկսեց յօղւածի ընթերցանութիւնը ծանր և զողզոջուն ձայնով:

Ունինգիրների համար փոքր ինչ դժւար էր սկիզբը. բայց յետոյ քանի գնաց ճառը թեթեւացաւ և գեղեցկացաւ: Ինքը Կորկոտեանը վառւեց այնպէս, ինչպէս երէկ՝ յօղւածը գրում ժամանակը: Խոր լռութիւնը ընդհատուում էր զովասանութեան թեթեւ ձայներով. «կեցցէ—մեր տղայ, մօլօղեց»:

Երբ Կորկոտեանը հասաւ Նրուսաղէմին և ողբերգական ձայնով բացազանչեց. «ով հանձար, ընկճւեցիր ամենակալ խմբագիրների կողմից», պատանիները մի րոպէ ընդհատել տւին ընթերցանութիւնը իրանց աղաղակներով:

—Ճշմարիտ է. այդպէս, հէնց այդպէս, կեցցէ՛ Կորկոտեան:

Կորկոտեանը շարունակեց և հասաւ խմբագիրներին: Բազ-

մաթիւ սարսափելի մեղադրանքներից յետոյ այնպէս զգացմունքով աղաղակեց՝ տաղանդակեր, եռանդաբեկ և հանճարասպան, որ ինքն ևս փոքր ինչ զարմացաւ. բայց սաստիկ յուզմունքից վեր կացաւ և մի քանի քաջ յետ գնաց սեղանից: Միւս ընկերներն էլ աննկատելի կերպով հետևեցին նորան: Մի քանի րոպէից յետոյ դարձեալ խումբը տեղաւորեց առաջաց պէս և ընթերցանութիւնը շարունակեց:

Վերջացաւ յօդուածը ընդհանուր հաւանութեան ցոյցերով: Կորկոտեանը ոգևորած ասաց բերանացի մի կարճ ճառ, որտեղ աւելաւորաւ այն բաները, որ մոռացել էր յառաջաբանում, յետոյ սկսեց կարդալ «մի քանի մտքերը»:

«Մի քանի մտքերի» մէջ այնքան խճճւած խնդիրներ կային, որ լսելը դժւարացաւ. այնպէս որ Կորկոտեանը աշխատեց միայն հարևանցի ծանօթացնել լսողներին այդ հարցերի հետ:

—Այժմ, բարեկամներ, մնում է լսել ձեր խօսքը, ձեր կարծիքը, ձեր քաջալերութիւնը, ձեր դատաքննութիւնը:

—Կորկոտեանը ապացուցեց մեզ նոր լրագրի անհրաժեշտութիւնը և նախագիծ տւաւ մեզ. մնում է, որ քննենք արդե՞օք ով պէտք է լինեն խմբագիրը և ամենամօտ աշխատակիցները:

—Ապասեցէ՛ք, կորեց խօսքը Կորկոտեանը, այժմ ամենագլխաւոր խնդիրն է. ի՞նչ մեծութեան թերթ պէտք է հրատարակել և քանի՛ անգամ շաբաթը:

Երկայն վիճաբանութիւնից յետոյ վճռեցին. թերթը սովորական մեծութիւնով, հրատարակել շաբաթը երեք անգամ:

Խնդիրները խառնեցին. մէկը միւսին չէր հասկանում: Աղմուկին վերջ դրաւ Սերալեանը, որ գոռ ձայնով երեք բարեկամների հետ խօսում էր լրագրի ուղղութեան և բաժինների մասին: Խօսք եկաւ թղթակիցների վերայ. Սերալեանը յայտնեց, որ զուր կը լինի լրագիր հիմնելը, եթէ լաւ թղթակիցներ չը ճարւեն, զոնէ առաջին ամիսները կամ տարին, մինչև որ լրագրի կերպարանքը պարզւի...

Մի պատանի չէր կամենում թոյլ տալ, որ Սերալեանը վերջացնի և նախատինքով նորան ասաց. Սերալեան, դու իրաւունք չունես «զուր կը լինի հիմնել» բառերը գործ ածել. դու կարող ես կարծիքդ յայտնել թղթակիցների մասին և ո՛չ լրագրի գոյութեան:

Մի քանիսը պաշտպան դուրս եկան Սերալեանին, միւսները

առք պատանուէն: Կուէին վերջ դրաւ Սիմօնը, առաջարկելով թղթակից ունենալու Պօլսում. այդ նպատակով նա անհրաժեշտ էր համարում խմբի անդամներից մէկին ուղարկել Պօլիս մի քանի ժամանակ թղթակցելու մինչև տեղական երիտասարդները սկսէին թղթակցել:

—Այդ իսկ միջոցով կը գրաւենք պօլսեցիների ուշադրութիւնը մեր վերայ և կ'ընտելացնենք նոցա մեր լրագիրը կարդալու:

Քաղաքական բաժինը մի քանիսը առաջարկում էին բոլորովին դէն գձել. բայց չը յաջողեց, որովհետև նիւթ չեղած ժամանակը գոնէ նիւթ կը լինէր լրագրի համար:

Խօսք բացւեց յայտարարութիւնների մասին. վճռեցին ընդունել, թէև նկատեցին, որ դա մի չարիք է, մի զիջում է, որ նոքա պէտք է անեն, որովհետև այժմեան լրագիրները արդէն սովորեցրել են հասարակութիւնը այդ բանին:

Բաժանորդներ կարելի էր ձարել. ուստի այդ մասին խօսք չը կար: Փոքր ինչ մտածութեան նիւթ դարձաւ ծախքերի հոգսը, սպարանի ընտրութիւնը: Այդ էլ յետաձգւեց մի ուրիշ անգամաւ:

Խմբագիր ընտրեցին միաբերան Կորկոտեանին. իսկ միւսների վերայ բաժանեցին զանազան տեսութիւնները: Ընտրեցին երկու Ֆելիետօնիստ, որոնցից մէկը պէտք է իրական կեանքից գրէր. իսկ միւսը պէտք է քաղաածք անէր այն նամակներից, որ խմբագրութիւնը աւելորդ կը համարի առանձին սպաղրել:

Ուրախ-ուրախ ցրեցին երիտասարդները՝ հաստատ հաւատալով գործի յառաջադիմութեան: Երկու մարդ փոքր ինչ կասկածում էին. այդ ինքը Կորկոտեանը և Սերալեանն էին:

III.

ԿՐԻՏԻԿՈՍՆԵՐ

—Մի՞թէ չես լսել, ճշմարիտ ես ասում: Նատի՛ր քեզ պատմեմ բոլորը մանրամասն: Մեր ազգը այդպէս առաջադիմութիւն է անում և դու, Մարութեա՛ն, քնած ես: Սորանից չորս օր առաջ մի ժողով էինք կազմել Կորկոտեանի մօտ, որտեղ վճռեցինք մի նոր լրագրական խմբագրութիւն կազմելու: Առաջ Կորկոտեանը կարդաց մի յօդւած նոր լրագրի անհրաժեշտութեան....

—Իսկ շատ ժամանակ է, որ այդ միտքը չղացել է ձեր մէջ, թէ յանկարծ է երևացել. հարցրաւ Մարութեանը:

—Սպասի՛ր, պատմեմ, բոլորը կ'իմանաս: Իւր յօղածում Կորկոտեանը պարզ և ամենի համար շօշափելի կերպով ցոյց տուաւ, որ մեր բոլոր թշուառութիւնների պատճառը լաւ խմբագրութեան բացակայութիւնն է և այժմ եղածների վնասակար ազդեցութիւնը:

—Ի՞նչպէս էր նա ապացուցանում. ի՞նչ վաստեր էր բերում:

—Տեսնում եմ, եղբա՛յր, որ դու ըստ քո սովորութեան սխտւմ ես քաշքշել մեր գործունէութիւնը: Ինչո՞ւ չես հաւատում մարդիկների բարեմիտ պարապմունքներին:

—Նղբա՛յր, հաւատում եմ. բայց կամենում եմ ինձ համար խսկապէս պարզել մի բան. ի՞նչն է ձեզ զրդել նոր խմբագրութեան վերայ մտածել և ի՞նչ ոյժերով էք մտադիր նորան տանելու: Ես ինքս բաւական չեմ այժմեան խմբագրութիւններից մի քանի բաներում:

—Ինքդ էլ ես խոստովանում, որ այժմեան խմբագրութիւններից անբաւական ես: Այնպէս էլ մեք ենք անբաւական:

—Ինչո՞վ էք անբաւական, ի՞նչ կողմերով, ի՞նչ խնդիրներով, ի՞նչ կերպ յօղածներով, ի՞նչ հարցերումն էք դուք տարածաջնում, փոքր ինչ տաքացած հարցրաւ Մարութեանը:

—Կորկոտեանը ցոյց էր տալիս, որ շատ քաղաքներ չ'ունեն զրադարան և հասարակաց ընթերցարան, որ երգեցողութիւնը մեր մէջ անկանոն է: Մոռացայ ասել, որ նա սկզբում ապացուցանում էր խմբագիրների բռնաւորական ազդեցութիւնը հեղինակների վերայ:

—Ուրեմն ձեր նոր խմբագրութիւնը պէտք է զեղեցկացնէ մեր եկեղեցիները, բանայ զրադարաններ, ընթերցարաններ, սովորեցնի կանոնաւոր երգեցողութիւն: Տեսնե՞ք: Գոնէ այժմ գիտեմ թէ ինչ պէտք է սպասենք ձեր նոր լրագրից:

—Քեզ համար դա ծաղրալի է երևում: Ես մտադիր չեմ շարունակելու, խօսենք մի ուրիշ առարկայի վերայ:

—Իսկ ձեր այն միտքը թէ այժմեան խմբագրութիւնները բռնաւորական դիրք են բռնել մի քանի խնդիրներում, ես համաձայն եմ: Բայց չը գիտեմ ի՞նչ մտքեր էք մտադիր դուք առաջարկել հասարակութեան, որ իրաւունք ունենայիք նոր խմբագրութիւն հիմնելու:

—Իարձեալ համաձայն ես մեզ հետ, ինքդ ես ասում: Բայց էլի չես հաւանում մեր արածները:

— Ես կամենում եմ իմանալ ինչով պէտք է դուք այնքան զանազանէք, որ իրաւունք ունենալիք ասելու, թէ այժմեան թըլլառութիւնների պատճառը լաւ խմբագրութեան բացակայութիւնն է: Ի՞նչ է նշանակում «լաւ»: Ամեն մարդ կարող է ասել պէտք է ունենալ լաւ լրագիր, լաւ գրքեր, լաւ ուսուցիչ, լաւ ընկերութիւններ և այլն: Բայց ի՞նչպէս հասկանանք այդ լաւի ինչ լինելը:

— Արեւմտեան դու մեզ չիմար ես համարում: Կարծում ես թէ մեր եռանդը կը կորցնես այդպէս կրիտիկայով, մեր գործը հաստատ է և ոչ ոքի հաւանութեան մէջ կարօտ չենք:

Երիտասարդները լռեցին: Փորձեցին առօրեայ գործերից մի երկու հարց միմեանց առաջարկելու. բայց խօսակցութիւնը այնքան տաղտկալի դարձաւ, որ երկուսի դրութիւնն էլ դժւարացաւ:

Վերջապէս ներս մտաւ Սիմօնը և ուրախ ուրախու ժպիտը երեսին ողջունեց նոցա: Մարութեանը հէնց մի առիթի էր սպասում, զրակը առաւ և պատրաստուեց գնալու:

— Դու չես խանգարիլ մեր խօսակցութիւնը. դուցէ քեզ համար էլ հետաքրքրական լինի, աշխատեց նորան յետ պահել Սիմօնը:

— Գործ ունեմ այժմ. մնաք բարեաւ. հաղիւ հազ նոցա ձեռքը սեղմելով Մարութեանը դուրս թռաւ սենեակից, Սիմօնը այժմ նկատեց, որ միայն ինքն էր ուրախ արամադրութեան մէջ:

— Ի՞նչ է պատահել, Գրիգոր. դու էլ ես ունքերդ կիտած:

— Ե՛ թող մնայ, Մարութեանին չե՞ս ճանաչում: Հիմի ծաղրում էր այսանդ մեր լրագիրը, մեր խմբագրութիւնը:

— Ի՞նչ էր ասում:

— Իերանը ծեփեցի, թէ չէ ով զիտէ դեռ ինչ պէտք է ասէր. չէ հաւանում մի խօսքով. ասում է, որ նորան յայտնի չէ թէ ինչով ենք մեք լաւ ուրիշներից:

— Ելի այդ այժը խառնե՞ց. ո՞վ սկսեց խօսակցութիւնը:

— Ես սկսեցի: Ազում էի նորան ուրախալի լուր հաղորդել. բայց նա հէնց առաջին խօսքիցս սկսեց ծաղրել — այդ ի՞նչպէս, ասում է, ձեր զլխում չղացաւ այդպէս միտք:

— Տեսնում ես անպիտանին: Կարիճ է. նախանձօտ կարիճ: Ո՛հ,

Տէր Աստուած. երբ պէտք է այդպէսներից ազատենք, ողբերգական ձայնով Սիմօնը վերջացրաւ իւր խօսքը: Նորանից ոգևորելով Գրիգորը, նոյնպէս ողբերգական ձայնով շարունակեց.

— Անմիաբանութիւն, անմիաբանութիւն, դու վլլայառակ արիւր մեր ազգի բաղդաւորութիւնը... Է՛հ: Ի՞նչ նոր լուր կայ: Դու ուրախ տուն մտար. ընկերներին տեսել ես այսօր:

— Շուտով կը գան այստեղ: Արդէն երկու յօդած է պատրաստուում լրագրի համար. մէկը թղթակցութիւն է, միւսը բաց նամակ: Դէհ այժմ թող կասկածեն մարութեանները. կոյր նախանձոտնե՛ր:

— Մարդկերանց վերան խօսենք, ի՞նչ ես կպչել այդ խելագարներից. ես զարմանում եմ մեր Սերալեանի վերայ, նա միշտ դոցա պաշտպան է դուրս գալիս: Ձեմ իմանում ինչ համ է տեսնում դոցանից: Տեսնենք ի՞նչ կ'ասեն մեր լրագիրները, կը կատաղեն:

— Սերալեանը երեկ ինձ մօտ էր. նա ասում էր պէտք է մի քանի անգամ էլ ժողովել և առաջարկում էր Մարութեանի ընկերներից մի քանիսին էլ կանչելու խորհրդի. բայց հագիւ թէ զլուխ գայ:

Ներս մտաւ Կորկոտեանը ծանր-ծանր առաջ շարժելով. նորա ետևից երկու պատանիներ, որոնցից մէկը ճվլում էր անդադար և աշխատում էր ապացուցանել իւր առաջնաց միտքը թէ ճառագայթ անունը աւելի կը յարմարի իրանց լրագրին, քան մի ուրիշ անուն:

— Ես շատ մտածեցի և դարձեալ գալիս եմ այդ եզրակացութեան, ասաց նա: Ճառագայթը մտնելով խոր անդունդները լուսաւորում է նոցա. ճառագայթը թափւելով սառնակոյտերի վերայ՝ նոցա հալեցնում է. ճառագայթը իջնելով երկրի վերայ՝ տալիս է կեանք բնութեան: Այդպէս պէտք է լինի և մեր գրական ճառագայթը:

— Կեցցե՛ս տղայ. երևում է շատ ես մտածել: Ի՞նչ կայ—կարող ենք լրագրի մէջ բանալ բանասիրականի նման մի բաժին, որ կ'անուանենք ճառագայթ և կը յանձնենք քեզ:

Մի քանի ժամանակից յետոյ ժողովեցին խմբակիցները Պատմեցին միմեանց նոր լուրերը և նոր մտադրութիւնները. Մարութեանի խօսակցութիւնը ընդհանուր զայրոյթ և զղւանք պատճառեց: Նա մանաւանդ, որ Մարութեանի մօտիկ ընկերներից մէկը բաւականին հեղնական խօսքեր էր ասել խմբակիցներից մէկին:

— Վերջ ի վերջոյ անպիտանը, զիտէ՛ք, ի՞նչ է ասում ինձ:

— Ասա՛, ասա՛, վերջացրո՛ւ:

— Ասում է լաւ կը լինի ձեր լրագրի անունը դնել Չրաղաց....

Երիտասարդները բոլորովին զայրացան և տրտնջացին:

— Քողէք վերջացնեմ, ինչ որ ասաց նա ինձ. առաջնորդող յօդ-
ւածների անունը Չուր դնել, ներքին տեսութեանը—ալիւրափոշի
կամ կարծապէս փոշի. արտաքին տեսութեանը—աղմուկ. բանա-
սիրականինը—տուպրակ. իսկ խմբագրի անունը կարելի կը լինէր
դնել Չաղաց պան. բայց Կորկոտեանն էլ պակաս անուն չէ:

Բարձրացաւ սաստիկ տրտունջ. ամեն մարդ մի սպառնալիք էր
ուղարկում Մարութեանի խմբին: Միմեանց հասկանալը դժւարացաւ:

— Եղբայրներ՛ր, խնդրում եմ խօսք շնորհէք ինձ, բարձրաձայն
սկսեց Կորկոտեանը: Կարշելի վարմունք է նոցա կողմից այդ բոլորը.
բայց որովհետեւ այդ գործում խառն է իմ անձնաւորութիւնը—իմ
ազգանունը, ուստի թողէք հանգիստ այդ վայրահասներին, ես նե-
րողամիտ եմ դէպի նոցա երեխայութիւնը: Կ'աշխատենք, որչափ կա-
րելի է անմատչելի դարձնել նոցա համար մեր լրագրի էջերը:

Ընդհանուր լուռութիւնը և կամաց կամաց խոնարհող հայեացք-
ները վկայում էին, որ երիտասարդները հաճութեամբ լսում էին
Կորկոտեանին: Միայն Սերալեանը անհամբեր շարժումներով քար-
մացնում էր շրջապատողներին. վերջապէս նա խօսքը կտրեց:

— Անկարելի է, ընկերներ՛ր, հեռացնել նոցա մեր լրագրից. մէք
ինքներս խմբագրական բռնաւորութեան դէմ ենք. լրագրական աս-
պարէզը փակել անկարելի է: Նոցա ներկայութիւնը և յօդւածները
կարևոր են մեզ համար թէ նոր ոյժեր և թէ լրագրի մէջ ամենայն
կարծիք և միտք մտցնելու համար. թէկուզ...

— Աւրեմն թողնենք, որ թքեն մեզ վերայ: Եթէ ոտնատեղ տանք,
ով պիտէ դեռ ի՞նչ կը պահանջեն նոքա մեզնից:

— Այդ թոյլ տալ անկարելի է. բայց համբերութիւնը կորցնելը,
սաստիկ յուզւելը, զանազան կարծիքներից վախենալը—այդ բոլորն
էլ մեզ համար գովելի յատուկութիւններ չեն: Չրաղաց ասողը ամբողջ
խմբի ներկայացուցիչը չէ և իսկապէս մի առանձին խումբ կազմա-
կերպւած չէ ո՛չ այստեղ, ո՛չ այստեղ: Ինչո՞ւ ենք հեռացնում այն-
պիսիներին, որ դուրսէ մեր գործին համակրում են և կ'օգնեն էլ:

Երիտասարդները համարեա չէին լսում նորա խօսքերը:

միմեանց մէջ քչփչում էին — «ես շատ ժամանակ է նկատում եմ, որ նոցա կողմն է քաշում... դաւաճա՛ն. տեսնում ես ի՞նչ լեզու է բանեցնում նոցա համար... ասածը սուտ չէ. բայց ինչո՞ւ է նոցա պաշտպանում... անմիաբանութի՛ւն, անմիաբանութիւն, դու քանդեցիր...»

IV.

Դ Ա Ի Ա Ճ Ա Ն Ն Ե Ր

—Տո՛, ի՞նչ եղաւ ձեր նոր խմբագրութիւնը, հարցրեց Մարութեանը Սերալեանից մի տասն օր յետոյ:

—Ոչինչ. ինչ պէտք է լինի խակ մտածած բանի վախճանը: Մի քանի անգամ ժողովեցին, խօսացին, տաքացան, վառեցին, յետոյ հանդատացան և սառեցին: Հիմքը խախտու էր, խումբը շատ սահմանափակ էր. դուք էլ ձեզ շատ հեռու պահեցիք:

—Դու որ խմբի մէջն ես եղել, շա՞տ բան ես շահել:

—Ձեմ շահել. բայց և այնպէս փորձել եմ ուշադիր լինելու այդ նոր ձեռնարկութեան: Եթէ մարդ շատ խորութիւններ դնի, չի էլ կարող խկական գործի գալուստը իմանալ և նորան յարել: Այլ գիտէ կարելի է մի լաւ բան էլ դուրս գար այս փորձից յաջող դէպքում:

—Ոչինչ կարգին բան դուրս գալու է կարող այդ խմբից: Մի՞թէ ինքդ չը գիտես դոցա բոլորի մտաւոր արժէքը: Ես այն կարծիքին եմ թէ այդպիսիների հետ չը պէտք է երկայն բարակ զրոյցի մտնել:

—Ձէ, Մարութեա՛ն, չէ. սխալում ես: Մինչև որ զու քո երկայն մտածմունքներով քո ցանկացած «լուրջ գործունէութիւնը» իրագործես, ուրիշները լաւ.—վատ մի բան կը սկսեն և մի տեղ կը գրաւեն գրականութեան և հասարակական կեանքի մէջ:

—Մի խայտառակ և ծաղրալի տեղ:

—Դու այդպէս ասա՛. իսկ այդ պարոնները կարող են ամբողջ տարիներ հաստատ մնալ իրանց տեղում:

—Շատ ցաւալի է, եթէ այդպէս է: Դու ասում ես, Սերալեա՛ն, որ ձեր գործը քանդեց, փչացաւ:

—Այսինքն դեռ չի փչացել. բայց իմ կարծիքն է, որ նա կը փչանայ. շատ պարզամիտ անփորձ մարդիկ են: Պէտք է դարձեալ ժողովենք խօսենք. բայց ես արդէն յոյսս կտրել եմ:

—Եւ խորհուրդ տուր բոլորովին հեռանան այդ մտքից: Դոցա հրատարակութեանը կարօտ չէ մեր հասարակութիւնը. դոքա իրանք պէտք է բաւականաչափ պատրաստուեն ուսուցանողներ լինելու համար:

—Մարութեան, դու այդպէս չը պէտք է ձեռակերպես քո միտքը: Դու պէտք է երկու բան զանազանես, նոր հրատարակութեան կարևորութիւնը և նորա նախաձեռնողների ձեռնհասութիւնը: Կարող է երկրորդը վատ լինել, բայց առաջինը իւր նշանակութիւնը չէ կորցնում:

—Իսկ ես ասում եմ, եթէ երկրորդը վատ է, եթէ խմբագրութիւն կազմողները վատ են, անկարող, թոյլ, տկարամիտ—էլ ինչ խօսք կարող է լինել նոցա արդիւնաբերութեան մասին:

—Ո՛չ, եթէ մի գործի կարևորութիւնը դուք զգում էք, դուք պէտք է որոնէք միջոցներ նորան իրագործելու:

—Նախ դեռ խնդիր է կարևորութեան աստիճանը և յետոյ... այդ կարևորութիւնը զգալուն հետ միասին եթէ ես զգում եմ, որ միջոցներ չը կան ցանկացածս իրագործելու, այն ժամանակ:

—Ուրեմն դու կարևորութիւնը չե՞ս ընդունում:

—Ընդհանրապէս ասած, ոչ. ես կը ցանկանայի մի քիչ բարեփոխեղածի մէջ:

—Իսկ եթէ բարեփոխում մտցնելը անկարելի է:

—Այն ժամանակ հաշուել քո պակաս համարածի արժէքը մի կողմից և եղածի արժէքը միւս կողմից և համեմատել դոցա միմեանց հետ: Ես այդ համեմատութիւնը արել եմ և եկել եմ այն եզրակացութեան, որ այդ պակաս համարածը առայժմ դեռ թեթեւ կշիռ ունի... կարելի է ժամանակով նա աւելի զգալի կը դառնայ: Իսկ այժմ տեսնելով, որ այդ պակասը լրացնողները ուզում են լինել Կորկոտեանի աշխատակիցները, ես բացարձակապէս յայտնում եմ, որ դա յանդուութիւն է: Թող դոքա իրանց վերայ ընդունեն թղթակցի, լրատուի, թարգմանչի պաշտօններ մեր եղած հրատարակութիւնների համար:

—Բայց ա՞յն պակասը, որի մասին խօսեցինք, բայց ա՞յն բարեփոխումի կարևորութիւնը, որ ինքդ էլ շեշտեցիր:

—Ա՛յ, ե՛կ դորա մասին խօսենք. դա իսկապէս հեռաքրքրական հարց է. մտածենք, կարելի է մի բան յաջողցնում ենք: Վերջապէս, զուգէ այս տեսակ խօսակցութիւններից պարզւի առհասարակ այն, թէ ինչ լուրջ բան կարող ենք իրագործել այժմեան ոյժերով:

— Ես համաձայն եմ ասածիդ. բայց կասկածում եմ թէ այժմեան չարուցած խնդիրը կը քնի:

— Մի բան, Սերալեան, մի՛ մոռանալ, որ մեծ մտածողութեան և նախաձեռնութեան ոյժեր չ'ունենք: Դոքա առհասարակ հազւագիւտ են:

— Հաւաքական ոյժին մի՞թէ՞ չես հաւատում:

— Հաւատում եմ. բայց այն հասարակութեան մէջ, ուր կայ մտաւոր կեանքի աւանդութիւն, երկայն և լուրջ գործունէութեան մշակած անդատան: Իսկ այդ մեք չ'ունենք: Մեք երկու մարդ միմեանց պատահելուց, ստիպւած ենք լինում միմեանց երկայն բարակ բացատրելու մեր հայացքները: Որոշ դպրոցներ, որոշ սիւներ չ'ունենք:

— Ուրեմն խնդիրը դարձեալ չի մեռնում, այլ կիրպարանափոխուում է: Սակայն եթէ չը կարողացանք մեր ցանկացածին հասնել:

— Դորա մասին էլ յետոյ, ժամանակը ցոյց կը տայ:

— Ուրե՞մն, Մարութեա՛ն:

— Խօսենք մի քանիսների հետ և յետոյ մի տեղ ժողովենք:

— Այդ էլ փորձենք:

Բագու. 1880 թ.

ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ

Ս. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

(Շարունակութիւն 1)

Դ.

Ստեփանը և Սաքանը փոքրուց էլ, մինչև իրանց կնքահայրութիւնը, միմեանց շատ մօտ են եղել: Սաքանը իւր ընկեր տղաների մէջ համարուում էր մի խորամանկ, խեղկատակ տղայ. թէև չափից դուրս սուտասան և կեղծաւոր էլ էր, բայց նա այնպիսի ճարպիկութեամբ էր ծածկում, որ ոչ ոք չէր կարողանում իմանալ թէ Սաքանը զո՞րդ է ասում թէ սուտ, կեղծում է թէ ոչ: Ընկեր հարեանները օձիք էին պատռում նրանից. պառաւ կանայք նրան համարում էին «օձը բնից հանող», բայց իւր ընկեր տղաները նրան սիրում էին, որովհետև միասին հաւաքւած ժամանակ, երբ մտադրուում էին մի բան անելու, ինչ դժւար, խորամանկութեան, խելքի բան էր լինում, նա էր միայն յաջողութեամբ կատարում՝ ուրիշ ոչ ոք:

Գալով Ստեփանին, Ստեփանը մի ղիւրահաւան, անկեղծ, սրտոտ և անձնավստահ տղայ էր. բոլորեքեանք էլ նրան կը հաւատային. «նորա սուտը ուրիշի զորդից զորդ է», — այսպէս էին ասում իւր ընկերները: Ոչ մի պառաւ կին նորա վերայ չէր բարկացած, այլ ընդհակառակը միշտ օրհնում հա օրհնում էին, որ բարեյիշատակ է իւր մօր ու հօր համար: Մի խօսքով, Ստեփանը Աստուծոյ օրհնած գառն էր: Այսպէս քաջութեան և հաւատարմութեան կողմից նշանաւոր

1) Տե՛ս «Մուրճ»-ի № 3.

էր իւր ընկերների մէջ Ստեփանը, իսկ խորամանկութեան կողմից՝ Սաքանը: Այժմ՝ երկուսն էլ, որ երեսուն տարուն հասուհաս են, դարձեալ նոյնն են. մէկը կեանքի մէջ չի փոխել, էլի այն պարզ-սիրտ, դիւրահաւան և քաջն է ինչ որ առաջ էր, իսկ միւսը Բագու ընկնելով աւելի էր եփւել խորամանկութեան ու խարդախութեան մէջ, շահասիրութիւնը նորա մէջ ամեն ինչ խեղդել, սպանել էր. նա պատրաստ էր ամեն սրբութիւն ուրանալ, ոտի տակ տալ շահի համար. կեղծաւորութիւնը վերին աստիճան էր հասցրել. չորս, հինգ տարի մնալով Բագու՝ սովորեց այն բոլոր բաները, ինչ որ հարկաւոր են մի խորամանկ, կեղծաւոր և շահասէր մարդու: Սաքանը Բագու օրերն էր համարում, թէ ե՛րբ պիտի իւր սրտի ցանկացած զուամարը ձեռք բերի. և երբ այդ փափագին հասաւ, սկսեց մտածել թէ ի՛նչպէս գործադրի այդ զուամարը, որ մէկին մէկ փող աշխատի հանգիստ իւր տանը նստած. նա լաւ տեսնում էր, որ չորս, հինգ տարի շարունակ մշակութիւն անելով, այլ ևս դժւար կը լինէր կրկին մշակութիւն անել. փերեզակութիւնը ամենայարմարը գտաւ և, Բագուից ճանապարհւելիս, զնեց մի հարիւր բուբուլ մանրունք, ճանապարհ ընկաւ իրանց դիւղը. նա մտքումը հաստատ Վորկոտ էր գցել, որ տանը ծախսատակ նստած, առանց մէջք կոտրելու տասնապատիկ աւել կ'աշխատի: Այժմ՝ զլուղումն է. նա իւր սպրանքի գները լաւ բերան է արել, վճռել է փողով չը ծախել, այլ փոխել ցորենի, դարու և այլ բերքերի հետ. նա իւր օգուտը աչքի առաջ ունենալով այդ արաւ, և միւսնոյն ժամանակ գիւղացու համար հեշտացրեց առուտուրը:

Ստեփանը այդ բոլորը գիտէր. Սաքանն էր ասել, յայտնել էր նոյնպէս, որ այդ առուտուրից չափից զուրս մեծ աշխատանք կ'ունենայ և եթէ ուզում է կարող է ինքն էլ ընկերանալ, միշտ Բագուից սպրանք ուղարկել:

Ստեփանը հաւատալով Սաքանի ամեն ասած ու պատմածին նեղանալով ասաց.

—Ամա՛ն՝ ինչ տղայ ես, վեր կացիր սուս ու փուս, առանց իմաց տալու մի քանի ընկերներով գնացիր Բագու, աշխարհիս հարստութիւնը բերի՛ր, հիմա կուռդ զլխատակովդ դրած կարող ես ապրել, մեզ նման չես հո՛ւ:

—Ստեփան, փա՛ռք Աստուծոյ, Բագուն իրան տեղն է, չը փախա՛ւ հու, ինչ կայ որ, զորդն ասած՝ վախեցանք քեզ յայտնել, դու էլ իմաց տաս ծնողներդ, այն ժամանակ էլ մեր զնալը չէր բռնիլ, մեր հայերը կ'իմանային, էլ կը թողնէի՛ն որ մարդ ասը ոտի առաջ դնի. լաւ արինք մենք գնացինք և ձեզ համար հաստատ տեղեկութիւն բերինք. լաւ կը լինէր, որ միասին վեր կենայինք, գնայինք ու վա՛յ թէ այնպէս աշխատանք չը լինէր, ինչպէս մենք տեսանք, այն ժամանակ ի՛նչ կը լինէր մեր զրութիւնը:

—Հա, շատ լաւ էք արել, զորդ ես ասում, Սաքա՛ն. Սաքա՛ն, ասում ես ամիսը երեսուն, քառասուն մանէթ աշխատանք կարող եմ վերցնել. ասա՛ մի երկու տարւայ մէջ լաւ փող կը շինեմ էլի, և կ'ընկերանանք, այստեղ խանութ կը բանանք. հը՛, ի՛նչ ես ասում այս խելքին:

—Լա՛ւ ես մտածել, ես իմ Աստուածը, քեզ հետ որ չ'ընկերանամ, էլ ո՛ւմ հետ պիտի ընկերանամ. միտդ է, հէնց պտտիկուց էլ ընկեր ենք եղել: Դու Բագուից ապրանք կ'առնես կ'ուղարկես, իսկ ես այստեղ կը ծախեմ, դու տես ի՛նչպէս աշխատանք կը վերցնենք. մեր փողին էլ փող չի հասնիլ, մի քանի տարուց յետոյ դու էլ կը դաս գիւղը և ինձ նման կ'ապրես: Ստեփա՛ն, այս քեզ եմ ասում հա՛, չը լինի թէ բերանիցդ հանես, ուրիշները հասկանան, ձեռներիցս կ'ընկնի հա՛:

—Խելքս թոցրե՛լ եմ ինչ է, ինչո՛ւ պիտի ասեմ. դու միամիտ կացի՛ր, խօսքը՝ խօսք է, տղայ ես հէնց ծախի՛ր, ես այնտեղից ապրանքը ապրանքի տտից չեմ կտրիլ: Շատ լաւ եղաւ է՛, չես իմանում, հաւատացած եմ որ շատ շուտով պիտի հարստանանք. սօ հարստութի՛ւն, հարստութի՛ւն, առանց հարստութեան ի՛նչ ենք մենք, ո՛վ է նայում մեր կզակին, ո՛վ է մեր խօսքը չւանի դնում, դու այն ժամանակը տես ի՛նչ կը լինենք:

—Ստեփա՛ն, ինչպէս երեւում է բանից, ուզում ես այս երկու օրը դուրս դալ, գնացողներ շատ կան:

—Խօ՛սք կայ, խօսք կայ, է՛լ մնամ, քո տունը շինւի. որ ճարումս ճար լինի՝ հէնց այսօր դուրս կը դամ. Սաքա՛ն, սիրտս ճաքում է, էս, էս անտէր օրն էլ, ասես, անվերջ պիտի գնայ, մթնում էլ չի, որ էգուց շուտ գայ, վեր կենանք, այս խարաքին թքենք, հեռանանք:

—Դէ որ այդպէս է ականջդ ձայնի պահի՛ր, ինչ որ ուզեմ ուղարկի՛ր. զու տնից միամի՛տ կացիր, աչքս միշտ վրան կը լինի, շուտ չը վռագես դաս, մտածելով թէ տունը անտէր անտիրական է:

—Երեխայ՛ ես ինչ է. քեզ նման եղբայր տղան որ ունիմ էլ ի՛նչ կը մտածեմ. զորդ է, բարեկամներ ունինք, բայց աւելի լաւ է զու ինքդ նայես, — վարի ժամանակ վար անել տաս, հնձելու ժամանակ հնձել տաս, մի խօսքով ինչ որ հարկաւոր է. մեր տաւարի խոտն ու դարմանը կայ, ձմռնահասն կարող են լինել, նեղութիւն չը կայ զբանում, ցորենն էլ ազած է. ոչինչ պակասութիւն չ'ունինք, մնում է ճոթ ու պատառը, այն էլ եթէ կը հարկաւորւի կը տաս ի հարկէ:

Սաքանի դիտաւորութիւնը կատարեց. նա մի հինգ հոգու էլ այնպիսի դրութեան մէջ էր դրել, որ իրանք մեծ ուրախութեամբ, ինչպէս Ստեփանն էր, առաջարկեցին ընկերանալ, Բազուից միշտ ապրանք ուղարկել և երդւեցին գաղտնի պահել այդ ընկերութիւնը. իսկ իրանց տները երես արին Սաքանին, որ նեղ տեղ ընկած, մի կարիք պատահած ժամանակ՝ ձեռնհաս լինի ինչպէս տանտէր:

—Էլ ուրիշ մի բան չ'ունի՞ս ասելու հո՛ւ, ասաց Ստեփանը. ես մի գնամ տնով անցնեմ, պատրաստութիւն տեսնեմ, վաղ առաւօտեան երեսիս խաչ հանեմ, ճանապարհ ընկնեմ:

—Էլ ինչ կայ որ, ինչ որ հարկաւոր էր խօսեցինք. գնա՛ պատրաստութիւնդ տես. ճանապարհի պաշարը շա՛տ վերցուր, հիմա Թազուհին, ես եմ իմանում, ինչե՛ր է պատրաստել:

—Սաքա՛ն, այս ջանը մեռնի՛ թէ բանից տեղեկութիւն ունենամ. կ'ուզես մի գնանք, տեսնենք ինչ է շինել, մի-մի բաժակ կը գցենք, Աստուծու տւածից էլ նհար կ'անենք:

—Խէր բանին ինչպէս կարող եմ չէ ասել, գնա՛նք:

Թազուհին կռները սոթտած եփում, թխում էր, Սաքանին տեսնելով գլխով բարև արաւ, էլի բանին կացաւ:

—Աղջի՛, ի՛նչ ունիս, բեր մի տեսնենք, ասաց ինքնաբաւական կերպով Ստեփանը և օղիի շիշը առաջը դրաւ:

Թազուհին խփոյն մի խօնչի մէջ պատրաստեց հաց, պանիր ու մի խաշած հաւ և բերեց առաջները դրաւ:

—Սաքա՛ն, Սաքան, մի կտորի՛ր այս հաւը քո հալալ ձեռքով,

ջահէլ տղայ ես: Ա՛ռ մի շնորհաւորի՛ր մեր ընկերութիւնը և Աստուած կանչի՛ր, որ կապը երկար լինի:

Սաքանը ընկերութիւն բառը լսելուն պէս՝ աչք ու ունքով արաւ, որ ոչինչ չ՛ասի ընկերութեան մասին, իսկ Ստեփանը չը հասկանալով ուզում էր շարունակի, որ դէս-դէն նայելով կամացուկ ասաց.

—Ստեփա՛ն, տունդ շինւի, կնիկարմատի մօտ այդպիսի բանից կը խօսե՛ն. մնասից զատ օգուտ սկի չի բերիլ, հարկաւոր չի:

—Բա՛ մոռացել էի. դէ լաւ, խմի՛ր, նա ոչինչ չի հասկացել, միամիտ կացի՛ր. կնիկը ինչ խելք ունի, որ այդպիսի բան էլ հասկանայ:

Կերան ու լիացան Սաքանն ու Ստեփանը հանաքներ անելով, իրանց երեխայութիւնից պատմելով: Քաղուհին լսում էր և շատ ուրախանում, որ ամուսնուն Բագուհից եկած մի քաղաքավարի մարդ բանի տեղ է զցում, հետը հաց ուտում և, որ գլխաւորն է, հանաքներ անում. և այդ ժամանակ ամուսինը աւելի բարձր երեւաց իւր աչքերին. ինչքա՛ն ուրախ կը լինէր հէնց այդ րոպէին Բագուհից եկած տեսնէր նրան: Էկը գնաց Բագու՛ կը գայ, նորա շաքը բամբակով կը հաւաքեն, և այդ երկու տարուց յետոյ պիտի լինի, երկու զատիկ պիտի անցկենայ էլի—մեծ բան չի, մտածում էր Քաղուհին:

—Սաքա՛ն, այնքա՛ն ուրախ եմ, որ էլ չեմ կարող ասել, ասաց Ստեփանը օղին երրորդելուց յետոյ. մի տես է՛, մեր տանը բոլորեքեանք էլ ուրախ են, կարծես, մեր սևացած կոճերը, մեր ծխոտած պատերն էլ են ուրախ. եթէ դու չը լինէիր, կարո՞ղ էի ես այս օրին հասնել, քե՛զ եմ պարտական, քե՛զ. տունս, տեղս քեզ Փէշքեշ, այսուհետև քո տունը համարի՛ր, մեր կնիկն էլ քո քոյրը: Աղջի՛, Քաղուհի՛, դառնալով կնոջը, սրանից յետոյ տանոէրը Սաքանն է, էլ ես չը կամ, վաղը ես գնում եմ, Սաքանի բոլոր կարգադրութիւններին կը հնազանդուես, պակասութիւն եղած ժամանակը կ'ասես:

—Հերիք է հերիք, Ստեփա՛ն, ա՛ դու ի՛նչ տեսակ մարդ ես եղել, դու պէտք է ասես, որ ես հասկանա՞մ. էլ հարկաւոր չի, տունը այսուհետև իմն է, ես գիտեմ Քաղուհին, քեզ ի՛նչ կայ:

Քաղուհին աւելի ուրախացաւ, որ անտէր չը պիտի մնայ Ստեփանի գնալուց յետոյ: «Ինչպէս իրար սիրում են, մտածում էր նա,

իրար համար կարող են մեռնել. նեղութիւն սկի չեմ քաշիլ, այս լաւ եղաւ»:

—Դէ, Ստեփա՛ն, դու քո պատրաստութիւնդ տես, վերկացաւ տեղից Սաքանը. ես մի զիւղովը անցնեմ, տեսնեմ ինչ կայ, ինչ չը կայ. դեռ բարի ճանապարհ չեմ առում, ճանապարհ զցելուց կ'ասեմ. սանամօրը լաւ օյինի մէջ ես զցել, հիմա բեղարած կը լինի,—ասելով դուրս գնաց:

Ե.

Պանդուխտ զնացող քսանի չափ տղամարդիկ, որոնց մէջ էր և Ստեփանը, պարկերը, խուրջիները շալակած, երկար մահակները ձեռներին, իրանց ծնողների, կանանց և բարեկամների առաջև էին կանգնած: «Մի բոպէ չի անցնիլ մնաս բարև ասելուց յետոյ, կը թողնենք իրար», մտածում էր ամեն մէկը: Մայրը համբուրում էր իւր սիրատուն որդու ձակատը, լցւած աչքերով խրատներ տալիս՝ լաւ կենալ, փող աշխատել և իրանց չը մոռանալ. ամուսինները ձեռք ձեռքի տւած խորհրդաւոր հայեացքով, լուռ ու մունջ միմեանց հետ խօսում էին, իրար շաջողութիւն մաղթում. զոքանչը փեսին բռնած պատուիրում էր աղջկայ համար լաւ լաւ հագուստներ բերել, իսկ ընկեր-հարևանների նամակներն ու ասպարանքներն հօ՛ւ անվերջ էին:

Հատաւ ժամը. պանդուխտները ճանապարհ ընկան քաջ քաջ, կարծես, դէպի պատերազմի դաշտը. ա՛խեր, ո՛խեր դուրս թռան քնքոյշ սեռի վեր ու վար անող կրծքերից. արտատուքի կաթիլներ թափւեցան նոցա ոչ ուրախ և ոչ տրտում աչքերից. լուռ կանդնած նայում էին զնացողներին. բոպէական էր զոցա տխրութիւնը, կը ծռւեն պանդուխտները դէպի ձախ, էլ չեն երևալ, այնուհետև անձնատուր կը լինին երևակայութեան, օդային ամրոցները կը վանէ տխրութիւնը և ուրախութիւնը կը թազաւորի թոռ-արև սրտերին:

Վերջին անգամ երկու կողմից էլ իրար նայեցին զիւղացու հեռատես, սուր-սուր աչքերով և հայեացքով մնաս բարև ասացին ու աներևոյթացան: Նստերի աչքերը անթարթ նայելուց դեռ ևս պատկերացնում էր ճանապարհի և օդի մէջ իրանց սիրելիների հասակը:

«Գնացի՛ն» — այս ու այն կողմից ձայն տւին: «Աստուած բարի ճանապարհ տայ, բարով դան», — ահա՛ «զնացիներ» պատասխանը, որով

իրանց կտորած սրտերը սաղացրին և «բարով գան» բուռն երևակայութեան տակ ստեղծագործւած՝ ի՛նչ տեսակ ապագայ երջանիկ կենցաղավարութիւն հասկացան, ապագայ վարդազոյն յոյսեր—ահա՛ կտորած սրտերի դեղթափը: Բայց նոցա համար մի քանի տարին, ինչպէս իրանց ամուսիններն էին ասել, թէ գլխարկի մի քանի անգամ շուռ տալու չափ կը տուի, երկար ու ձիգ ժամանակ էր թուում. նոքա հեռու ապագայով ապրել չէին ուզում, այլ այն գլու ապրելը, գաղափարական կեանքը, որ իրանց մշակ ամուսինները պիտի զիւղը բերէին, ուզում էին մօտ ապագայում—վաղը, միւս օրը տեսնել և սրտի փուշը հանել. նրանք կանայք են, անհամբեր և հետաքրքիր, նոցա ձեռքերը շուտով է բանում՝ զաղտնիքը ծածկող խուփը, նրանց աչքերը մաղն է շրջում տակը տեսնելու, նրանց օրը մի տարի է, նրանք սպասել չը գիտեն: Բայց ինչո՛ւ նոցա դէմքերի վերայ ուրախութեան գծեր փայլեցան. չ՛ասես, երևակայութեան աշխարհի շէմքը կոխեցին, ուրախութիւնը լի ու լի է՝ մտան հոյակապ ապարանքները: Մարդու միտքը մի ակնթարթում ինչե՛ր չի ստեղծագործում, ի՛նչ ապարանքներ ու դարպասներ չի կառուցանում: Նոցա ապարանքները թէև բազմապարկ, շքեղ, զարդարուն, բայց մի վայրկեանում ստեղծագործւեցան և հէնց վաղը պիտի տիրանան և երջանիկ լինին. բայց մի՞թէ չեն յուսահատուի վաղը իրանց խաբւած տեսնելով. —վաղը դարձեալ աւելի բարդ, աւելի զարդարուն կը ստեղծագործէ նոյն ամրոցները միւս վաղւայ համար. այսպէս էզուցները կ'ընթանան աննկատելի կերպով և իրանց ամուսինների ասածին պէս՝ մի քանի տարին գլխարկի մի քանի անգամ շուռ տալու չափ կը տուի:

2.

«Տղա՛յք, ձեզ եմ բաշխում Բագուն, տե՛ղ, տե՛ղ սա է, է՛», զարձաւ ուրախ ուրախ Ստեփանը իւր ընկերներին, երբ Բագու հասան: Քսան հոգի՛ մեծ ու փոքր՝ պլշած աչքերով և դէմքով շտապում էին Ստեփանին հասնել, որը, ինչպէս յաղթանակը տարած զօրապետ, սրի տեղ մահակը ձեւին՝ խոչընդոտները յաղթահարելով տիրապետել էր քաղաքը, մտել ներս, ուրախ և սիզաքայլ առաջ էր ընթանում:

Օրը կիրակի էր, առաւօտեան ժամի տասը: Գիշերը աշնանա-
յին էր. մանրամաղ անձրևը փոշին նստացրել, օդը մաքրել, լրիկները
լւացել էր. կապոյտ երկնակամարի վերայ թագաւորում էր այրու-
թիւնը անցրած աշնանային արեգակը. ի՛նչ դուրալի էր նորա լոյսն
ու ջերմութիւնը: Տները, կարծես, հէնց այդ գիշերն էին ներկել
սպիտակ, կարմիր, դեղին: Երկնակամարը աւելի կապոյտ էր երևում
այդ օրը, իսկ ծովը երկնքի պատկերն էր. նա ծփծփում էր քաղց-
րադէմ արեգակի տակ և հանդարտ ու քնքշիկ դողոջով ափերն
համբուրում, գուրգուրում. լաւ գիտէր, որ ժամանակաւոր էր այդ
երջանիկ ու քաղցր ընկեր, կ'անցնի, ով գիտէ, մի ժամ կամ գուցէ
աւելի քիչ, հիւսիսը իւր դառնաշունչ քամին շառաչելով կը փչէ,
այն ժամանակ արեգակը ամպերի տակ կը կորչի, իսկ իւր պատկե-
րով զմայլուող սիրուն օրիորդներն ու երիտասարդները փոշուց կու-
րացած դէպի տուն կը վազեն: Նոյնը և մարդիկ մտածելով ուզում
էին այդ սքանչելի օրը դուրսը անցնել: «Նչ գեղեցիկ օր է, սա-
տանի ականջը խուլ, քամի չը կայ», — յաճախ կրկնում էին մարդիկ և
իրանց համար զբօսնում ծովի ափում, պարապեալի վերայ և այգում:

Հայ գիւղացու աչքի առաջն էր իւր «Աւետեաց երկիրը», իւր
երևակայութեան ստեղծագործած իրէպլ Բագուն: Ո՛րքան ճոխ ու
փարթամ, ո՛րքան բազմամարդ ու հարուստ էր երևում նոցա Բաւ-
ղի մէջ փակած՝ չը գիտէին ո՛ւր էին գնում, ո՛ւր պիտի դադար
առնէին. պլշած աչքերով ուզում էին ամեն ինչ միանգամից տես-
նել ու իմանալ, հետևաբար և մէկ բանի վերայ կանգ չէին առ-
նում. մէկ նայում էին երկչարի, եռչարի սրբատաշ տներին, մէկ
մեծ մեծ խանութներին ու կրպակներին: «Ո՛ւր են գնում այս մար-
դիկ, ոտով ու կառքով այսպէս շտապով, հէնց այսօր էր մնացել, որ
քաղաքից դուրս գնային», մտածում էր Ստեփանը, կարծելով կառ-
քով պտտողները դէպի ուրիշ տեղ են ճանապարհորդում:

Այսպէս անգեղակոթցիք հասնելով դէպի ծովը տանող լայն
փողոցը, լրիկի վերայ հաւաքւեցան և սկսեցին հետաքրքրութեամբ
խանութների ապակէ դռների յետև դարսւած իրեղէններին ու
պատկերներին նայել: Երթւեկող պարոններն ու տիկիները կծու
հայհոյում էին և արանքները պատռելով անցնում: Թուրք պահա-
պանը նկատելով, լիբը հայհոյանքով հրամայեց ցած զալ լրիկից.

լիրք հայհոյանք, մի սինլքոր թուրքի բերանից դուրս եկած, ելք-տրականութեան պէս ցնցեց նոցա և կրակոտ աչքերը չռելով կեղտոտ ու չեչոտ քեալբալայու վերայ, ամեն մէկը մահակը իւր ափում լաւ սեղմեց և պիտի վրայ բերէին խրուելակի գլխին, եթէ որ չ'իմանային թէ իրանք ուր են գտնուում և դէս դէն չը նայէին, որ այդ բոպէին, կարծես, ականջներովն ընկաւ. «Ռուք էլ ձեր սարերի ու ձորերի որդիքը չէք, դուք այստեղ ստրուկներ էք, ինչ որ անում, կատարում են՝ անպայման պիտի հնազանդուիք»: Ոմանք շտապով ցած եկան, իսկ մի քանիսը հետաքրքրւած դեռ նայում էին: Վախկոտ, բայց քաջսիրտ երեւացող թուրքը կրկին հայհոյեց աւելի խայտառակ կերպով և բոլորին էլ ցած բերաւ: Նորա արհամարհական հայեացքը դէպի մահակները, կարծես, ասում լինէր. «Երբ կը թողնէք ձեր մահակները, կը շալակէք բեռներ, էլ չէք վիրաւորւի դուք այս իմ համեղ ու քնքոյշ հայհոյանքներից, որ միշտ որդուս եմ տալիս»:

Պանդուխտները բարկացած յետ յետ նայելով փոխեցին իրանց ճանապարհը և դէպի վեր գնացին:

ԵՆՐԼԻ կուարած տեղերը միայն քաղաքացիների համար է պատրաստած. ա'խ, ինչո՞ւ մենք էլ չենք քաղաքացի. այս ի՞նչ հագուստ է, որ մենք հագել ենք, ոտներս տրեխ է ծածկում, իսկ զլուխներս մորթի գտակ. այս ի՞նչ դազանակ է ձեռներիս, մտածում էին աւելի երիտասարդները:

—Յարութի՛ւն, դարձաւ իւր ընկերը Մովսէսը, մեր գիւղացիներից սկի չենք տեսնում, հապա ո՞րտեղ պիտի դադար առնենք գիշերը:

—Ճիշդ ես ասում, աչքով պիտի պահենք, կարելի է հէնց կը տեսնենք:

Այս խօսակցութեան ժամանակն էր, որ ծանր բեռան տակ, վերից վայր գլորւելով գալիս էր մի մշակ. նա շալակը ցած դրաւ մի խանութի դրան առջև, վրան նստեց և գտակը վերցնելով ճակատի քրախնքը կռացաւ մատով սրբեց՝ ծը՛ւ գետնին. մէջքը տւաւ պատին, ուզում էր հանգստանալ, բայց յանկարծ աչքովն ընկնելով պանդուխտները՝ վեր կացաւ տեղից: Անդեղակութիւնը կը թողնէին նրան և իրանց ճանապարհը կը շարունակէին, նրան թուրք կամ թալիշ

մշակ համարելով, եթէ որ Աղաջանը, այսպէս էր մշակի անունը, չը մտնենար, բարև չը տար:

—Այդ դո՛ւ ես, Աղաջա՛ն, բացականչեց Ստեփանը, և սառը ջուր թափեցաւ նորա վառ երևակայութեան վերայ, տեսնելով իւր հայրենակցին ոչ թէ վերակացու, այլ բեռնակիր մշակ, այն էլ այդպէս հալւած, մաշած ու կեղտոտ Փոխեցաւ Ստեփանը.— նորա ծրագիրները, կառուցած բազմաշարկ դարպասները մշուշը պատեց, ինչպէս այդ պահին փոշիով ծածկեց ամբողջ քաղաքը. հիւսիսային քամին, որ կամաց կամաց տեղից շարժել էր մի կէս ժամ առաջ, այդ վայրկեանին ամենայն արագութեամբ շառաչելով փչեց: Երկինքը կորցրեց իւր թարմ կապուտութիւնը զորչ զորչ ամպերով ծածկելով, խաղաղ կասողտ ծովը, որ երեսայի պէս, մի քիչ առաջ, ամերի հետ էր խաղում, համբուրում, թոթփում, պղտոր զոյն ստացաւ՝ զոռում զոչումով ամերին բաղխելով: Մարդկանց զոյնն էլ փոխեց, նոքա էլ երկնքի ու ծովի նման մոխրի զոյն ստացան և աչքները ձայնացնելով, արտասուքի կաթիլներ վայր գլորելով՝ դէպի կանք, դէպի տուն շտապեցին:

Անդութ հիւսիսը իւր ցրտաշունչ քամիով կերպարանափոխեց ամենայն ինչ, մի մշակ իւր ճիւղ մարմնովն ու համետով փոխեց պարզամիտ զիւղացիների տրամադրութիւնը:

Աղաջանը, բարևելուց յետոյ, սև կոպէկը առաւ իւր վարձ և համագիւղացիների հետ նրանց առողջութիւնը, տնից-տեղից հարցնելով վեր բարձրացան փոշու հոսանքին հակառակ: Աւազը, դարմանը, թղթի կոորտանքը ի մի ձուլւած՝ քամին ամենայն արագութեամբ և արդարութեամբ բաժանում էր այդ «Աւետեաց երկրի» ամենալաւ բարիքներից մէկը լայն փողոցն ի վայր՝ աջ ու ձախ, վեր ու վայր: Զէր ընդհատում մի րոպէ, մի վայրկեան, որ մարդ աչքերը մի կերպ կարողանար բանալ, իւր առաջի ճանապարհը տեսներ, որպէս զի աջ ու ձախ յանկարծակի դղրդացող կառքերի տակը չ'ընկներ: Պարզ, յտոակ օդի սովոր զիւղացու աչքերը ձայնուում էին, արտասուքի կաթիլներ էին գլորում փոշոտած երեսներին և աւազը առամների տակը ընկնելով ողջ մարմինը սրտեցնում էր:

—Աղաջա՛ն, Աստուածդ սիրես, շուտ արա՛ մի տեղ տար մեզ, թէ չէ կուրացանք, պրծանք, այս ու այն կողմից թախանձեցին պանդուխտները:

—Ոչինչ չը կայ, սա ի՛նչ փոշի է որ այդպէս զանգաուուում էք, պատասխանեց Աղաջանը:

Այսպէս գնում էին, որ մէկը «մշակ» ձայն տւաւ: Ինչ ասել կուզէ որ Աղաջանը, ով էլ լինէր իւր հետ խօսացողը և ինչ կարևոր նիւթի վերայ էլ խօսալու լինէր՝ պիտի թողնէր և դէպի կարևորագոյնը վազէր: Վարպետ մշակը քամու ձեռք տալով իւր համազիւղացիներին՝ սև կոպէկի յետեից գնաց: Սև կոպէկը Աղաջանի համար քաղցր էր քան թէ իւր ընկերհարեան, պարզսիրտ համազիւղացիները: Մի՞թէ Աղաջանը նոցա չէր սիրում. ահա հարց, որին չորս, հինգ տարով մշակութիւն անողը կը պատասխանի. «Մէր, մի՞թէ սև կոպէկից զատ կայ մի առարկայ, մի շնչաւոր արարած, որին կարելի լինէր սիրել: Նա սիրում է սև կոպէկը զլստապատառ, հոտհոտելով դորա յետեից է գնում հաւաքելու և ամեն անգամ մատերի ծայրերով շօշափելով այդ կենսատու պղինձը, խոր ընկած, փոքրացած աչքերը աւելի մեծ են բացում, մի վայրկեան փայլում, երբ դեռ ձեռքին է, բայց հէնց որ զցում է կողքից կախ կաշւի քսակը, աչքերը կրկին խոր են ընկնում, փոքրանում, աղօտանում: Աղաջանը այդ ուրախ վայրկեանը ձեռից չը տւաւ. «մշակ» են կանչում, չը կար մէկը, որ նորա առաջը կտրէր, արգելք լինէր, վազեց ինքը մտքումը ասելով՝ «ի՛նչ թեթև ոտ ունին մեր զիւղացիները»:

Պանդուխտները փոշուց պատսպարելու համար մի պատի տակ կուշ եկան մայրը կորցրած ձտերի նման:

—Ո՛ւհ, հազիւ հազ որ վերջացաւ, ասաց Ստեփանը ընկերներին թթւած դէմքով:

—Ինչն է վերջացել, մի այն կողմը՝ դէպի ձախ նայի՛ր, տե՛ս ինչ է գալիս, կարծես սէլ է մեզ պիտի խեղդի, կուշ տայ, պատասխանեց մօտ եղողը:

Վը՛ղղ — եկաւ սէլաւը, հայ զիւղացիները չը կարողացան ծածկւել. իրանց սիրելի «Աւետեաց երկիրը» չը մոռացաւ, որ ունի նոր, սրտուաւոր հիւրեր, ապագայ մշակ-ստրուկներ՝ պատի տակ կուշ

եկած՝ մաս բաժին հանեց իւր բազմատարր բարիքից իւր արդար ձեռքով:

—Աղաջանը ո՛ւր գնաց, հարցրեց Աւետիսը Ստեփանին:

—Չ'իմացայ, երևի այստեղի բարեկամներից կանչող եղաւ. բայց ինչո՞ւ չ'եկաւ, չի իմանում, որ մենք անձանօթ ենք այս քաղաքին. այստեղ սպասե՞նք մինչև որ նա գայ թէ գնանք. բայց ո՛ւր ենք գնում, որտե՞ղ ենք ճանաչում, որ գնանք:

Ահա այն խօսքերը, որ Ստեփանի պէս անձնապատասան մարդը առաջի անգամ արտասանեց: Նա այդ տեսակ յուսահատական խօսքեր մի մոլորած ճանապարհի վերայ կամ մի ձեռնարկութեան ժամանակ չէր մտածած անգամ, ուր թէ ուրիշների զիմաց արտասանած: Ո՛ւր էր այն Ստեփանը, որ աջ ու՜ձախ շահատակելով, անվախ, աներկիւղ, առանց հեռանքները աչքի առնելու գործէր. էլ չը կար առաջւայ կրակը, առաջւայ աւիւնը, հիւսիսային շոր ու զօրեղ քամին հանգրեց նորա լափլիզող բոցը:

Քամին առաջն առած զանգի ղողանջիւնը դէս-դէն բաժին բաժին անելով՝ կիսատ-պռատ յայտարարեց փոշիապատ քաղաքին ժամի մէկը:

—Տղա՛յք, չ'եկաւ Աղաջանը, երևի գործ ունի, քաղցած չէ՞ք, նստենք հէնց այստեղ, անց ու դարձ անող չը կայ, մի քիչ հաց ուտենք, փոշին էլ ինչպէս երևում է նստելու վրայ է, ձայն տւաւ Յովսէփը:

—Շա՛տ լաւ կը լինի, այս ու այն տեղից վրայ բերին, կարծես, բոլորեքեանքն էլ այդ տեսակ մի առաջարկութեան էին սպասում:

Նոքա կերան իրանց գիւղից բերած պանիր-հացը, ինչպէս պախ ու փլաւ:

Գարձեալ չ'երևեցաւ Աղաջանը, Նոյի աղուան էր դարձել: Նա բեռներ ունէր շալակելու, ի զուր չէր ասել՝ «ի՛նչ թեթեւ է գիւղացիների ոտը»: Քաղցր է աշխատանքը. եթէ կան իրար վերայ դարստած հակեր և պէտք է կրել, նա չի հեռանալ ոչ մի պատճառով, նա ուժասպառ, անշնչացած երեսն ի վայր կ'ընկնի հակի տակ, քան թէ կասի՝ «պարո՛ն, խիստ դաղրած եմ, սպասէ՛ք մի ժամ հանգրստանամ և դարձեալ շարունակեմ կրելը», կամ թէ չէ՝ «բաւական է, այլ ևս չեմ ուզում կրել, ես հանգստանալ եմ ուզում»: Աղա-

ջանք ինքն իրան բանաւոր արարածի շարքը չէր դասոււմ, որ համարձակւի վաճառականի առջև խոյրպիսի մի միտք յայտնի:

Աղաջանը գործի մէջ էր խրւել. լաւ իւզոտ թիքայ էր, ինչպէս իրանք են սովոր ասելու. իւր բաղդից մենակ ինքն էր, մշակի հոս չը կար, և ինքը մտադիր էր մինչև երեկոյ պարոն վաճառականի հակերը կրելու: Նա արիւն քրտնքի մէջ կորած՝ բեռներ էր որ տանում էր և միւսնոյն ժամանակ ճանապարհին միշտ կրկնում կրած բեռների հաշիւը. երբ բեռների հաշիւն էր միտը բերում, ստանալիք փողի գումարն էր իսկոյն և եթ զըր'նգ զըր'նգ ավումը տեսնում, և այդ ինչպէս ոգելից խմիչք թոյլ ոյժերն էր գրգռում, հետևաբար՝ ըստ երևոյթին հեռանում էր դադրածութիւնը և մնացած հակերի կրելը աւելի ուրախութիւն էր քան տանջանք:

Ժամի չորսն էր: Քամին նւագել էր. այժմ փոշին էլ կոպտաբար չէր վարւում, միանգամից անակնկալ հոփ անում ու խփում մարդու աչք ու երեսին, այլ ինչպէս մի կատարեալ նոր լուսաւորութեան հետևող տիկին կամացուկ, քնքշիկ, ահագին տիւրնիւրով բարև էր տալիս անցնողին, և անխտիր հարստին ու աղքատին, մեծին ու փոքրին, հակառակ պարահանդէսների վարչութեան խստորէն հաստատուած կանոններին՝ առաջարկում պարելու և միւսնոյն ժամանակ հովհարով զովացնում և մազով անցկացրած փոշին, ոչ թէ աւազը, աչքերին ու միրուքին խփում: Թողնում էր տիկինը ասպետին, և շտապում էր ուրիշին գրկել, որովհետև զամբլթաթախ ջրաղացպանի էր աւելի նմանում, քան պարահանդիսում զարդարած երիտասարդի:

Ահա այսպէս փոշին նստել էր. փողոցների սև կոլորիկ քարերը տնկել էին իրանց մաքուր գլուխները. փոշին՝ տեղ տեղ տների ու լրիկների անկիւններումն էր կուտակւել: Ասպարէզը սատանու քամուն էր մնացել. նա էլ սկսեց կամաց կամաց, սաստկացաւ, ցատկեց մի ուրիշ աւելի փոշոտ տեղ, ուր պարզւած էին երկու շիկահեր արհեստաւորներ, ոլորեցաւ, վեր բարձրացաւ՝ թղթի կտորտանքն ու փոշին ոլոր-մոլոր խաղացնելով դոցա գլուխների վերայ:

— Հիւանդ են այս ընկած մարդիկը տեսնես՝ թէ՞ քնած, հարց-

րեց Կարապետը իւր մօտ եղողից, մի կարեկցական հայեացք գցելով դոցա վերայ:

—Ասես թէ քնած լինին:

Անգեղակոթցիք դեռ այդտեղ էին՝ երբ զուրս եկաւ մօտիկ գինեանից ոչխարի եփած գլուխը ձեռին այդ ընկածների ընկերը. նա ոչխարի գլուխը կրծկրծելով, ծռռ ու մռռ անելով, գնացող եկողին հայհոյելով մտեցաւ ընկածներին և սկսեց ճուխտ ճուխտ խօսել.

—Իւսն, ա՛յ յիմար Ի-Իւան (մի խայտառակ հայհոյանք աւելացնելով), ահա բե-բերել եմ, քոքո սի-սիրելի կերակուրը:

Ասում է, կրծում, կողքին ու մէջքին ոտով խփում: Իւանը մի փոքր շարժւեցաւ և իւր սովորական արիւն ու մարմին դարձած հայհոյանքը բերանից հանեց: Կանգնածը զբանով չը բաւականացաւ, պարզաձի վերայ ընկաւ, ձեռքից չը տալով ոչխարի գլուխը. չարչարում էր Իւանը, խրխում, հայհոյում էր, բայց նա ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում, կրծում էր գլուխը և երբեմն պոկած մսից ընկածի բերանը կոխում: Երկար չը մնաց այդպէս, երևի անհանգիստ էր այդ զրութեան մէջ, ինքն էլ վեր ընկաւ. երկուսն էին՝ երեք դարձան:

—Կարապետ, հարբած են է՛, տեսնում ես, կիրակի օր է, երևի ուրախութիւն են անում, բայց տեսնես ի՞նչ ազգից են, լեզուները հայի չէ:

—Հարբածի լեզուն չի իմացւի, նրանց լեզուն գիր տարած, շփոթով այրած է, այժմ նորա ճուխտ ճուխտ են խօսում, պատասխանեց Կարապետը:

Անգեղակոթցիք հեռացան այդտեղից և սկսեցին դարձեալ աննպատակ մանգալ:

Է.

Ժամի վեցն էր, որ Աղաջանը, քրտինքի մէջ կորած, երեսը հէնց իմանաս ցեխաթաթախ, մազերն ու վիզը մի մատ փոշիով ծածկւած, ներկայացաւ վաճառականին՝ կրած հակերի վարձը ստանալու: Չը կար վաճառականը. երևի դեռ չէր բարեհաճում զուրս գալ կամ ներս կանչել մշակին. բայց ի՞նչ, մի՞թէ մշակի սուրբ պարտականութիւնը չէ սպասելու, թէև քրտնած, ջուր կորած կանգ-

նաժ է հիւսիսային քամու զիմաց, մինչև պարոն վաճառականը մի ժամանակ կը յիշէ կամ չի յիշիլ, կը տայ վարձը կամ չի տալ՝ ասելով առաւօտը զայ:

Աղաջանը սպասում էր. հիմա է, մի ժամից յետոյ է՝ իւր վարձը կը ստանայ. բայց կանչող չը կայ: Մտնէ՞ր ներս, մտածում էր. բայց ինչպէս փորձուած մշակ, լեզուն կծած, ձայնը փորը զցած սպասում էր պարոնի երևան դալուն:

«Բաւական փող պիտի ստանամ, 15 հակ եմ կրել. քիչը քիչը մէկը երկու կոպէկից հաշուելու լինի՝ այդ կը լինի քեզ երեսուն կոպէկ, բայց եթէ մի կոպէկից հաշուելու լինի, այն ժամանակ կէսը կը լինի. ի՞նչ եմ ասում, մի՞թէ այդքան էլ անաստուած կարող է լինել մի տարիքն առած մարդ: Դէ՛ լաւ, ճարս ի՞նչ, այն ժամանակ ես էլ քան կոպէկ կ'ուզեմ»:

Ապուշի պէս կանգնած էր Աղաջանը. քամին սկզբում հովացրեց նորա ջերմ մարմինը, բայց յետոյ հաստ կեղտի շերտով ծածկուած շապիկն ու արխալուղը սառցրեց և կոթ դարձրեց, այնպէս որ մարմնին կաշւիս սրսուում էր ողջ մարմինը: «Մի՞տում է թէ լուսանում, կարծես, մի ձայն այն ժամանակ ազդարարեց. ի՞նչ ես կանգնել անասունի պէս, ողորմութիւն խօ՛ չես ուզում, քո արդար աշխատանքի վարձն ես ստանում, մտի՛ր, ստացի՛ր և փաստփուսէդ քաշի՛ր քամու առաջից»: Նա, ճիշդ է, մտաւ բայց չ'ուզեցնալով, որովհետեւ այդ տեսակ մշակներին երես առած են համարում և նրանց էլ միւս անգամ գործ չեն տալիս:

—Հը՛, ի՞նչ կայ, գորգոտալով դարձաւ պարոնը. չե՞ս տեսնում ձեռքիս գործ կայ, չե՞ս կարող մի քիչ սպասել. օ՛հ, սիսիանցի մշակներ, լաւ է սատանին պարտական լինեմ քան թէ ձեզ, որ մարդ կարողանայ սրանց երեսը չը տեսնէ է՛, վերջացրեց իւր խօսքը ձեռքի գրիչը բարկացած սեղանի վերայ նետելով:

Աղաջանը ձայն ու ծպտունը կտրած յետ յետ դուրս գնաց քթի տակ մրթմրթալով.

«Ախր չէի ուզում գնալ, ի՞նչ չիմարութիւն արի, չէի կարող մի քիչ սպասել, ինքը դուրս կը դար և լաւ կը վարձատրէր, այժմ բարկացրի, երևի հաշիւը սխալացրի, պիտի կէս վարձը տայ. տեղն է ինձ, ասա երբ ես այդպէս բան բռնել, որ այժմ բռնում ես.

բայց նա այնքան որ խօսեց, հա՛, չէր կարո՞ղ փողը տալ, ճանապարհ գցէր. է՛հ, էլի սատանի մտքեր եկան զլուլսս, այդ ինչ իմ գիտնալու բան է, ինչպէս նա ցանկանում է, այնպէս էլ պիտի լինի, ախր ուրիշ տեսակ ո՞նց կարելի է:

Ձեր անցել մի քառորդ ժամ, որ դուրս եկաւ հաստափոր վաճառականը և մի սպիտակ երեք շահանոց դրաւ Աղաջանի ձեռքը: Վերջինս երեք շահանոցը տեսնելով, կարծես, տաս և հինգ հակի արած ծանրութիւնը այդ ըոպէին զգաց:

—Շա՛տ քիչ է, համեստ կերպով ասաց և պարզեց ձեռքի երեքշահանոցը դէպի վաճառականը. տասն և հինգ հակ եմ կրել, երկու կոպէկից էլ չէք հաշոււմ, ուրիշներից մէկին երեք, չորս կոպէկ եմ առնում:

—Ուրիշները այդպէս փող են դտել էլի, որ դու մի հակ դնես մէջքիդ, այստեղից ուրիշ տեղ տանելու համար երեք, չորս կոպէկ ստանաս: Ի՞նչ ես յետ տալիս, չես ամաչո՞ւմ, այդ էլ նոր սովորութիւն է, օ՛հ, օ՛հ, լաւ է ձեզ հետ միշտ գործ չ՛ունինք, թէ չէ էլ ոչ հաւատ, ոչ հողի կը թողնէք մեր մէջ:

—Ձէ՛, պարոն Զախա՛ր, փողը վերցրէ՛ք, ձեզ համար տասն և հինգ հակը ինչ է, որ ձրի չը կրեմ. ճշմարիտ, փող չեմ ուզում:

Աղաջանը երկու ծայրայեղութիւններից դուրս ուրիշ մի միջին ճանապարհը տանջանք էր համարում, ցանկանում էր անպատճառ իւր ուղած երեսուն կոպէկը ստանալ կամ թէ ոչինչ: Փողը տուաւ պարոնին, նա էլ վերցրեց բարկանալով. «Շատ ես խօսում, դէ կորի՛, էլ գիւղացի՛, փոշմանած կը գաս վաղը, տասը կոպէկ էլ չես ստանալ: Եղբա՛յր, խօսացնել չի լինում էլի սրանց. մեր փողը բոլորը սրանց ջիբերն է մտնում, էլի գանգատաւոր գանգատաւոր. տալիս ես գործը, առանց խօսելու, ասում ես՝ դէհաց է, մի հինգ կոպէկ էլ աւելի կը տամ, էլ ինչ առաջուց խօսեմ, չանայ թակեմ. 10 կոպէկ կը տայի անպատճառ՝ եթէ խօսացնէի, ախր ինչո՞ւ չիմարութիւն եմ անում, երես տալիս, որ աստառ էլ ուզեն. բա ա՛փսոս իմ Ծ կոպէկներ, որ այդ սիսիանցիքն են տարել: Հէնց այժմ, որպէս զի իմ սխալը ուղղած և ինձ համար սովորութիւն շինած լինիմ, ա՛ռ այս երկու շահին:

Երեքշահանոցը արդէն առել ջէրն էր զրել: Հանեց երկու մեծ

մեծ սև շահիներ, մէկի երեսը չեչոտ, իսկ միւսի կողքը պուտտ և մեկնեց Աղաջանին, որ մի քանի քայլ հեռացել էր:

—Ճշմարիտ, պ. Զախա՛ր, հանաք չեմ՝ անում, ձրի եմ՝ կրել ես հակերը, ինձ փող չի հարկաւոր, ասաց ու գնաց քթի տակ մըրթմըթալով. — տա՛ր մաճնի տուր, քսի՛ր գլուխդ, դորանով էլ փողատէր չենք դառնալու. շատը շատի մօտ է դնում, սա դարմանալի չէ, բայց քիչն էլ է շատի մօտ գնում, ա՛յ սա է զարմանալի:

—Գնա՛, աւանա՛կ, կարծում է յետ պիտի կանչեմ, աղաչեմ, չէ մի ոտե՛ր, սև կուպէկին էլ խօսք կայ այսուհետև. բանը սա է, մէկն էլ տեսնի՛ կը կարծէ վարձը կորել եմ. հիմա կը գնաց այս-այնտեղ չաւ կանէ, սուտ սուտ լաց լինելով՝ «ա՛յ փողս կտրեց, փողս կերաւ էս ինչ մարդը». դէ դու ե՛կ էլը ցիւիցը հանի՛ր, խղճացի՛ր, մի 5 կուպէկ աւել տո՛ւր ինչպէս հայ մշակի: Ձէ՛, այդ անիծածներին այնքան փող պիտի տալ, որ հազիւ հազ կարողանան օրւայ հացը ճարել, թէ չէ սր փորները հացոտ է լինում, ջիբներում կուպէկի չխկոց են լսում, էլ իրանց մշակ չեն համարում: Ժամանակիս ո՛վ է կարողանում փող աշխատել, իսկ այդ գայլազուաները աշխատում հա աշխատում են: Տասը կուպէ՛կ... ո՛րքան պիտի կանգնեմ և քանի գազ պիտի չափեմ, որ տասը կուպէկ աշխատեմ: Ժամ ու կեսում 10 կուպէկ է աշխատում, բաւական չէ. եթէ հաշուելու լինինք օրեկան 12 ժամ աշխատանք, տե՛ս որքա՛ն փող կ'աշխատի. և սկսեց քթի տակ հաշուել, տասներկու ժամ այդ քեզ երեք արասի, տասը կուպէկը կ'ուտէ և մնացածը կը պահէ և ամսական 15 մանէթ փող կ'ունենայ: 15 մանէթ... էլ գիւղացին ի՛նչ է, որ իւր յիմար տեղովը գայ քաղաք և այսքան փող աշխատի և մեր տւած փողով չը բաւականանայ: Դէ կորէ՛ք, էլ գիւղացիներ, այսուհետև կը տեսնէք — այնպէս վերջացրեց խօսքը, կարծես թէ դիմացը կանգնած էին սիսիանցի մշակները:

Ը.

Աննպատակ պտտում էին մեր պանդուխտ սիսիանցիք. նոքա չ'ունէին այն ուրախ տրամադրութիւնն ու դէմքը, ինչ որ առաւօտն էր, մի տեսակ թոյլ, թոշնած, թռումած, ոտները քաշ տալով, փո

շխաթաթախ անցնում էին փողոցից փողոց, աւելի ցանկանալով մի տեղ նստել հանգստանալ, քան թէ նոր նոր բաներ տեսնել քաղաքում: Որտեղից որտեղ, այդ դուրսեան մէջ դարձեալ պատահեցան թուրք պահապանին. ցած եկան իսկոյն և եթ լրիկից և իրանց ճանապարհը շարունակեցին, իսկ թուրքը կանգնեց և դոցա յետևիցն էր նայում թէ ո՛ւր են դնում: Երբ անգեղակոթցիք լայն փողոցից նեղ փողոց մտան, թուրքը հետևեց դոցա: Մի քանի քայլ էր մնացել նոցա հասնելու, յանկարծ կանչեց ձեռք ձայնով՝ «կանգնեցէ՛ք»: Բոլորեքեանք միանգամից յետ նայեցին մտածելով՝ «տեսնես ի՞նչ կայ»: — Ո՞րտեղացի էք, հարցրեց թուրք՝ քեալբալային:

— Սխիանցի:

— Նա, բաց ո՛ւր են ձեր անցաթղթերը, հանէ՛ք տեսնեմ:

Ծոցերից և զրպաններից թաշկինակ էր, որ դուրս էր գալիս փաթաթած անցաթղթերով: Մէկը չ՛ուներ, մնացել էր վիզը ծուռ կանգնած:

— Քոնն ո՛ւր է. դու փախտական ես, մտրակը բարձրացնելով, թո՛ղ ընկերներիդ. ոչինչ չի լինի, մի՛ վախիր, մի քանի տարի բանաւումը կը նստես, այնուհետև ձեռք ու ոտդ կապած կ'ուղարկեն. դէ շուտ ընկերներիցդ ջոկելի՛ր. հանաք չեմ անում, չե՛ս լսում. և մտրակը վրայ բերաւ որ խփի, բաց չը կպաւ:

Ստեփանը շրթունքները կծոտում էր, պինդ ունէր մահակը ձեռքումը բռնած, առաջ եկաւ և խօսքով էր ուզում նրան ճանապարհ գցել:

— Ո՛ւր ես տանում դրան, ո՞վ է փախտական. սա մեր գիւղացին է, անցաթուղթը շուտով պիտի գայ:

— Յո՛՛, բարի լո՛յս, տանուտէրի վկան գլխիդ կը լինի ի հարկէ. համարձակում ես դեռ խօսելու, մի տեսնեմ քո անցաթուղթը: Բաց անել տալով սկսեց նայել, իբր թէ կարգում է: Քո անցաթուղթը կեղծ է, տո՛ւր այստեղ և դու էլ ճանապարհ ընկի՛ր:

— Ոնց թէ կեղծ է, մեր գաւառապետիցն եմ ստացել մի 5, 6 մանէթ ծախսի մէջ ընկնելով:

— Ի՞նչ ես դուրս տալիս, ա՛յ հայ, քեզ հրամայում եմ ճանապարհ ընկի՛ր. զուք էլ, ձերն էլ է կեղծ, ցոյց տալով մի հինգ հոգու և մտրակով սկսեց սպառնալ:

Արիւնը Ստեփանի աչքերը կոխեց, մի ակնթարթում վրայ վազեց և երկաթի ափումն էր մտակը բռնած սև, չոր ձեռքը, և եթէ Մկրտիչը, որ տարիքը առած մարդ էր, ահ ու դողի մէջ ընկած, չը գար, չը խնդրէր բաց թողնելու, ոսկորը կը ջարդէր, կը փշրէր ափի մէջ:

Ստեփանը երբ բաց թողեց, թուրքը աւելի կատաղած սկսեց դոցա հետ խօսել: Մկրտիչը ընկած դուրս եկած մարդ էր, յետ մնաց և թուրքի լեզու բանեցրեց:

— Բարեկամ, իմ աչքի լո՛յս, մենք հեռու տեղից ենք եկած, ինչո՛ւ ես մեզ վրաս տալիս, խնդրում ենք ներես, բաց թողնես մենք գնանք, չէ՞ որ մենք էլ մարդ ենք, քո լաւութիւնը չենք մոռանայ, առանձին շեշտելով վերջի խօսքերը:

— Ձէ՛, բարեկամ-մարեկամ չը կայ, օրէնքը բարեկամ չի ճանաչում, օրէնքը անցաթուղթ չ'ունեցողներին պատժում է, իսկ այնպիսիները, ցոյց տալով Ստեփանին, որոնք համարձակում են մեզ վերայ ձեռք բարձրացնել՝ կախ տալ:

— Բարեկամ, դու լաւ մարդ ես երևում, արի՛ դու այս անգամ ների՛ր, մենք քեզ կը շահենք փոխարէնը:

Հէնց թուրքն էլ դորան էր սպասում:

— Դէ լա՛ւ, բերէք տեսնեմ, եռանկիւնի աչքերով այս և այն կողմը նայելով:

— Մարդը մի երկու շահի հանեցէ՛ք կպցնենք ճակատին, ձեռք քաշի կորչի, ասաց Մկրտիչը:

Սև փողը հանեցին:

— Այդ ինչ է, սև փո՞ղ էք հանում, երեխայ էք խաբո՞ւմ, կարծում էք ձեր տանուտէրին կամ զգրին էք տալիս. թո՛ւղթ հանեցէք, թո՛ւղթ, խելքներդ ո՛րտեղ է. քաղաքումն էք և ոչ թէ գիւղումը:

— Քեալբալաչի՛, ջանիդ մեռնեմ, եկ դու բաշխի՛ր այս անգամ, թուղթ մանէթ մեզ ո՛րտեղից է, դեռ ոչինչ չենք աշխատել, հէնց այսօր ենք եկել այստեղ:

— Դէ շուտ արէ՛ք, ես այդ տեսակ բաներ չը գիտեմ. ուզում էք հէնց բանտումը փոէ՛ք:

Նորա կասկածոտ, վախտա խողի աչքերը հեռուն էին նայում, նկատեց եկւորներ և շտապեցրեց շուտով տալ:

— Դէ լաւ, մի մի շահի էլ հանեցէ՛ք, մեր քեալբալայի սիրտը մի՛ կոտրէք, ասաց Մկրտիչը:

Այդպէս էլ արին. թուրքը շուտով առաւ, կրնկին թքեց, հեռացաւ:

— Լա՛ւ տարաւ մեր փողը, այս ու այնտեղից ձայն տւին ափսոսալով:

— Շուն մարդ է, ի՛նչ պիտի անես, պատասխանեց Մկրտիչը, չես տա՛լ բանտ կը նստացնի: Ստեփա՛ն, դու էլ կարծում ես մեր տեղն ես, որ այդպէս բաներ ես անում, Բագու կ'ասեն սրան հա՛:

Թ.

— Այդ ո՛րտեղ գնացիր, Աղաջա՛ն, հարցրին անգեղակոթցիք, երբ պատահամք հանդիպեցին նրան:

— Գործս շատ էր, չը կարողացայ շուտով վերջացնել. դէ բաւական է, որքան ման էք եկել, գնա՛նք, յոգնած կը լինէք, մի քիչ հանգստացէ՛ք:

Մութը գետինն էր առել, քամին բոլորովին դադրել, երկինքը պարզել և նոր-նոր սկսել էր աստղերը դուրս դալ, երբ Աղաջանը՝ համազիւղացիների հետ միասին՝ մտաւ թուրքի քարւանսարան:

Տեղաւորւեցան բոլորեքեանք. դոցանից ոչ մէկն էլ ախորժակ չ'ունէր խօսելու: Պանդուխտները տխուր էին՝ Աղաջանի վիճակը տեսնելով, բացի այդ՝ թուրք պահապանին աւելորդ փող տալով: Աղաջանը նոյնպէս տխուր էր այդ օրւայ դէպքից. ամեն անգամ յիշելով այլուում, խորովւում էր, լաւ գիտէր որ էլ կորաւ, ձեռքից ընկաւ համարեա մի օրւայ վարձը:

Նստոտել էին գետնափոր սենեակում, որը թիկն էր տւել պատին, որը ոտներն էր պարզել, մի քանիսը նստած հէնց տեղները ննջում էին, գլուխները ցած ու բարձր անելով: Թիթեղեայ փոքրիկ կեղտոտ լամբարը աղօտ լոյս էր սփռում այդ խոնջացած, վաստակած և օիրտները կտորած բնութեան որդկերանց վերայ. աղօտ լոյսիցը տեսանելիքները մթնելով, սիրտները սևացել և աւելի ու աւելի էր կոտրւել, այնպէս որ չէին ուզում ոչ մտածել, ոչ խօսել, ոչ ուտել, այլ այնպէս, առանց հանելու ընկնել, քնել և վաղան կարգադրութեան թողնել ամեն բան:

Աղաջանը ամուսնացած մարդ էր, ունէր որդիք, ունէր հայր ու մայր: Նա ժամանակ էր ինչ տեղեկութիւն չ'ունէր տնից, չարմար ժամանակ գտնելով՝ սկսեց հարց ու փորձ անել: Նա սպասում էր մի ապստրանքի, մի զոյգ գուլբաջի, բայց ոչ մէկն էլ չը կար: Վերևի մի բան եղել է—մտածում էր Աղաջանը:

—Էլ ինչո՞ւ էք ծածկում, ի՞նչ է պատահել մեր տանը, այնպիսի մի եղանակով հարցրեց Աղաջանը, որ լսողները գուշակեցին նորա ներքին վիճակը:

—Ոչինչ չի եղել, փառք Աստուծոյ, ի՞նչ պիտի լինի, պատասխանեց Մկրտիչը:

—Ձէ, մի՛ խաբէք, մի բան կայ:

—Վա՛, այլ ի՞նչ պիտի լինի, բոլորն էլ տանը ողջ և առողջ են և բարև են արել:

—Է՛հ, ասում ես էլի, ասաց մի խոր հոգոց քաշելով:

Աղաջանը նոցա խօսալու եղանակից և իրար նայելուց մի բան հասկացաւ. «Նորս կամ մօրս գլուխը մի բան է եկել, եթէ հայրս մեռած լինի, Տէր մի՛ արասցէ. այն ժամանակ տունը առանց գտակարի ի՛նչպէս կը կառավարւի, մտածում էր Աղաջանը:

—Էլ ծածկելու տեղը չէ, ասացէ՛ք, վերջը չը պիտի իմանա՞մ, ասաց ու աչքերը շառեց դետնին: Մտածողութեամբ գիւղումն էր. ինչե՛ր չէր անցնում նորա մտքով հօր մահը, որդիերանց, կնոջ ու մօր անել գրութիւնը. այս բոլորը կենդանի պատկերներով ներկայացան նորա աչքի առաջ և եթէ լամբարը պարզ լուսաւորէր, կը տեսնէին անշուշտ իւր համագիւղացիները նորա նիհար, փոշիով ծածկւած դէմքի վերայ արտասուքի կաթիլների ակօսած տեղերը:

Մկրտիչը էլ ոչինչ չը կարողացաւ ասել, արտասուքի կաթիլները նորա աչքերումն էլ սկսեցին շարժւել: «Ասեմ, չ'ասեմ, մտածում էր նա, ասելը լաւ է, որ վաղը հէնց գնաց իւր երեխաներին տերութիւն անի. բայց ի՛նչպէս ասեմ, խեղճ է. չէ, պէ՛տք է առիլ»:

—Աստուածանից միտիթարեա, դէ էլ ի՛նչ ծածկեմ, հայրդ վախճանել է. Աստուած հոգին լուսաւորի, Աստուած քո երեխաներին խեղճ զայ, քեզ պահի:

Մրտաճմլիկ էր տեսարանը. վաստակած Աղաջանը էլ չ'իմացաւ ինչպէս Վալց ապէր՝ կանչելով ու լաց լինելով գլուխը համետի վերայ

դրաւ: Յաւակցում էին անկեղծ սրտերը. տան պատերը, առաստաղը, մանաւանդ լամբարը մռայլ էին ինչպէս իրանց հիւրերը, կարծես նոքա էլ լալիս էին: Ձայն-ձուն չը կար, Աղաջանը քնել էր. խորթոցը թնդեցնում էր սենեակը: Գիւղացիք անշարժ քարի արձան էին կորուել, աչքերը Աղաջանից չէին հեռացնում:

«Ա՛ա՛յ ապէր, վա՛յ ապէր», յանկարծ ձայնը բարձրացեց և սկսեց լալ և ամենքին էլ լացացնել:

Լռութիւնը կրկին տիրեց: Աղաջանը խոր քնել էր:

—Տղա՛յք, ասաց Սկրտիչը լացակումած, մի քիչ հաց ուտենք, վէր դառնանք քնենք:

Հացը կերան և առանց հանելու գետնի վերայ վէր թափուեցան և քնեցին:

Ժ.

«Ո՛ւհ, ողջ մարմինս ասես փշրած լինի», շշնաց Ստեփանը քթի տակ յորանջելով ու ձգձգելով, երբ արթնեցաւ: Նորա ընկերները դեռ աջ ու ձախ պարզւած, քնած էին. դրանցից մի քանիսը շրջաշրջելով գլորուել իրար վերայ էին թափթափուել, որ աւելի դիակների էին նմանում, քան թէ քնած մարդկանց: Հերոսը խոցւած սրտով նայեց իւր ընկեր զորականներին և հէնց բռնես նորա մռայլ դէմքը, քնաթաթախ աչքերը ասում լինէին. «Յաղթեցինք, տիրապետեցինք քաղաքը, բայց մենք էլ պատերա՛զմի դաշտումը ընկանք»:

Իսկ անհոգ, հանգիստ քնածները ասես թէ իրանց ահեղագոչ խորթոցով պատասխանում էին. «Այո՛, քա՛ջդ Սիւնեաց աշխարհի, յաղթեցինք, տիրապետեցինք, բայց մենք դեռ կենդանի ենք և պատերազմի դաշտում անդուլ անդադար պիտի գործենք»:

Ստեփանը քնաթաթախ տնդըհորած դուրս գնաց մի քանիսի տոբը կոխտակելով:

Յուայարկ քառակուսի քարանասարան կատարեալ բանտի էր նմանում: Վերը միայն բաց էր և երևում էր կապուտակը քառակուսի շրջանակում: Սղը զարշահոտութեամբ էր ծծւած: Գոնա գետնի մի անկիւնում յարզով լիքը արկղներ, արկղիկներ էր դարստաւած, միւս կողմը երկաթի ձողեր, մի այլ տեղ տախտակներ ու հակեր, իսկ մի անկիւնում աղբն էր կուտակած: Յիսուսի մօտ սիսիան-

ցի մշակը, կզկզւած սպիտակախառն, ծխաթաթախ մաղերով, նի-
հար դէմքով, որի վերայ տեղ-տեղ երևում էր թուփակ թուփակ կա-
ժուկի պէս կծկւած մաղեր, կրակ էր դցում կուշ ու ձիգ անելով՝
հակառակ պատի տակ դրւած մի քանի սևացած, ժանգոտած,
կողքերը նիճճկած, եռոտանի, երկոտանի, ծորակների տակը խմորած
ու կլայտակած հեշտաեռներ:

Ստեփանը յօրանջելով մօտեցաւ Պետրոսին, այսպէս էր մշակի
անունը, բարև տալուց և հետը մի քիչ զրուցելուց յետոյ, ջուր
խնդրեց լւացելու: Բագուայ աղի-լեղի, պղտոր ջուրը զւարթացրեց
նորա տխուր դէմքը, մէջքը պատին տւած, գլուխը կրծքին խոնար-
հած, ինչպէս մի յոռետես, մեղամաղձային մտածմունքների անձնա-
տուր եղաւ:

«Ես մշակութիւն պիտի անե՞մ», ասաց Ստեփանը մի սարսուռ
զգայով ամբողջ մարմնում. «բա ի՞նչ... վերադառնա՞մ գիւղը... ի՞նչ
կ'ստեն ինձ. չէ՛, չէ՛, կը մնամ ինչ որ էլ լինի»:

Արևը ծագել էր, երբ անգեղակոթցիք քնաթաթախ ճպոռոտ
աչքերով, տնդըհորած դուրս եկան մէկ մէկու յետևից: Ի՞նչ կ'ուզե-
նային գիւղի աղբիւրը իրանց առաջը ունենալ, մի կռանալ վճիռ
ջրի վերայ, իրանց պատկերները տեսնելով չոմփ-չոմփ տալ երեսներին.
բայց աւա՛ղ, նա հեռու էր, նա իրանց գիւղումն էր: Նոքա պատնե-
ղուրս կանգնած ամենայն հետաքրքրութեամբ նայում էին պատերին,
պատուհաններին ու հեշտաեռներին:

Իուրս եկաւ և Աղաջանը՝ աչքերը արիւնով լցւած ու ուռած:
Նա մի գիշերուայ մէջ մեծ փոփոխութիւն էր կրել, կարծես, աւելի էր
չորացել ու փորը մէջքին կպել, դէմքը աւելի նիհարել ու այտո-
սակրները դուրս ցցել: Այս և այն կողմից իւր ընկեր մշակները եկան
մխիթարանք ասացին, սիրտ դրին:

— Աստուածանից մխիթարուես, դարձաւ Պետրոսը, ամենքս էլ
պիտի մեռնենք, ո՛վ պիտի մնայ այս աշխարհքում, ծնւել ենք, որ
մեռնենք, դեռ բաղդաւոր ես, որ հայրդ ծերացած է մեռնում:

Աղաջանը ոչինչ չը խօսեց, աչքերը գետնին յառած անթարթ
նայում էր:

— Տխրութիւնը ձեռք չի տալ, Աղաջա՛ն, շարունակեց Պետրոսը,
հայրդ ծերացած մարդ էր, ծերը ի՞նչ ունի աչքի առաջ — միայն

մահ, և որքան շուտ է վերահասնում այդ քաղցր մահը, այնքան էլ շուտով է ազատում այս ունայն աշխարհից և ճաշակում երջանկութիւնը. նրանցը այն միւս կեանքն է. նոքա ուրախ են, երբ Քաբրիէլ հրեշտակի սուրն են տեսնում:—Շատ սառնասիրտ և վստահ կերպով զրուցելով մօտեցաւ հեշտատուներին, ալը սուա, կրկին եկաւ Աղաջանի մօտ:

—Աղաջան, ինչպէս տեսնում եմ պիտի զիւղը գնաս անպատճառ, տունը անտէր անտիրական թողնել չի լինի:

Այս խօսքերից ցնցւած պատասխանեց Աղաջանը խուպոտ ձայնով.

—Գնալը հեշտ է:

—Ի՞նչ կայ որ. բա առանց տղամարդի ի՞նչպէս կը լինի, քո վար ու ցանքը ո՞վ պիտի անի, դու էլ զիտես, որ ժամանակիս հեշտութեամբ չեն իրար օգնում:

—Պետրո՛ս, ի՞նչպէս գնամ, ի՞նչ ունիմ, որ գնամ, եղած չեղածը սորա-նորա մօտն է. չէ, աւելի լաւ է փող կ'ուղարկեմ, այնտեղ իրանք կը կառավարեն, մինչև որ Ստոուած ողորմած է:

—Նրեխայի պէս ես խօսում, անտղամարդ տունը, որքան էլ որ լիութեան մէջ լինի, դարձեալ տան նմանութիւն չի ունենալ. էլ այսուհետեւ քեզ մշակութիւն անելը չի բռնիլ, հայրդ քանի որ կենդանի էր, հա արժէր որ դու այստեղ աշխատէիր, բայց այժմ չէ. ծան մեծը դու ես. անմեծաւոր տունը անտիւն տան է նմանում, որ ամեն բոպէ պատրաստ է փլչւելու: Աւելի լաւ է քո վարն անես, քո երեխաներին տէրութիւն անես, քան այստեղից փող ուղարկես:

—Ճիշդն ասեմ, սիրաս չի տալիս զիւղը դնալ. հէնց այս բոպէին էլ աչքիս առաջն է գալիս՝ թէ ի՞նչ կը լինի վիճակս, երբ մի օր մշակութիւն չ'անեմ:

—Օրհնա՛ծ, վարելը, հնձելը, կալսելը մշակութիւն չէ. հէնց պէտք է մէջքիդ ահագին բեռ դնես, քրտինքը ծլծլալով ման գա՛ս:

—Ղորդ ես ասում, նա էլ մշակութիւն է և աւելի հանգիստ, բայց այստեղի առաւելութիւնը շօշափելի է, այստեղ աշխատելուց զբաւանս փող է տեսնում, իսկ այնտեղ ո՞վ է մեր ցորենին փող տուղը. իսկ մեզ հարկաւոր է փող և այդ էլ քաղաքներումն է:

—Դու էլ ես զորդ ասում, բայց որ հանգամանքներդ չեն նե-

րում, աւելի շուտ փողից պէտք է ձեռք քաշես, քան թէ տնից բաց քո զիտնալու բանն է, դու զիտես, լաւ մտածի՛ր:

Պետրոսը միշտ սովորութիւն ունէր խորհուրդ տալուց յետոյ այս խօսքերը ասել մտածելով՝ «բան է, ասածս արաւ, մի փորձանքի հանդիպեց և դորա պատճառը ես կը լինիմ»:

Աղաջանը մինչև կէսօր գործի չը գնաց. հաստատ վճուեց տուն չը գնալ, փող ուղարկել:

Աղաջանի ընկերներից Խօսրովը դարձաւ նորեկ համագիւղացիներին. «Նչ էք նստտել, դուրս գանք գործի, աշխատանքի ժամանակ է, բաց համետ չ'ունէք, պէտք է գնել, այ՛ իմին պէս», թէ չէ առանց այդ բեռ շալակել չի լինի»:

Ստեփանի վիճակը անտանելի էր. «համետ» խօսքը, որքան որ հեշտ արտասանեց Խօսրովը, այնքան ծանր, մի սարի ծանրութեամբ ձնչեց Ստեփանին և ոչինչ չ'ասաց, սխուր տրտում ոտները քաշ տալով հետևեց հայրենակցին»:

Գիւղացիները իրանց սիրելի մահակները՝ թողեցին և համետները կռնակները առան: Համետները խանի պէս բազմաձ գիւղացիների լայն մէջքերին կարծես ասում լինէին. «Նչ լայն ու փափուկ է մեր բազմոցները, բացաւ աւ'ղ, կ'անցնի մի քանի տարի և չոր ու ցամաք ոսկորների վերայ կը շնթակենք»:

Խօսրովը ցոյց էր տալիս այն փողոցները, որտեղ գործ չատ էր լինում. երբ անցան մի ուրիշ փողոց շեշտելով ասաց. «Այստեղ աղբ շատ է լինում, այստեղ էլ աչքից չը պիտի տաք»:

«Աղբ» խօսքը որ չը լսեց Ստեփանը, համետը, որ դեռ ձեռին էր, դէն զցեց զժւածի պէս և արհամարհանքով սկսեց նայել մէկ համետին, մէկ Խօսրովին: Մնաց կանգնած. մնացածները Խօսրովի հետ միասին առաջ էին անցել:

«Հերիք չէ համետը մէջքիս եմ դնում, դեռ աղբ էլ պիտի շալակե՛մ». և այն վիթխարի հսկան մնաց կուչ եկած համետի առաջ կանգնած: «Բաց չէ, կը մնամ ինչ էլ որ լինի, թէկուզ աղբ չը լինի, ինչ էլ լինի կը շալակեմ, կը մնամ այստեղ և զիւրը չեմ գնալ, թքածս չեմ լիզիլ»: Այսպէս խօսելով մօտեցաւ, համետը ձեռքն առաւ և հետևեց խմբին»:

—Ստեփան, ինչո՞ւ չես կռնակդ անցնում համետդ, ա՛յ այստեղ շատ գործ է լինում, ասաց Խոսրովը:

—Է՛հ, ինչ անցնեմ:

—Տեսնում եմ, Ստեփան, որ փոշմանածի նման ես այստեղ դալով, մի՛ տխրիր, ինձ էլ սկզբում մշակութիւնը վատ էր երևում, բայց այժմ սովորել եմ. թէև չարչարում, շան տանջանք եմ քաշում, բայց ձեռք չեմ վերցնիլ: Պէտք է մի քիչ համբերել, քաղաքի հետ ծանօթանալ. սկզբում, ի հարկէ, աշխատանք քիչ կը լինի, բայց յետոյ, որ լաւ ծանօթացար, ջուր տո՛ւր, քշի՛ր:

Ստեփանը, Խոսրովի ասածին իւր խելքումը տեղ տալով, սուս ու փուս համետը կռնակն անցրաւ: Համետը բարձրից նայելով իւր ընկեր համետներին, հէնց դիտենաս պարծենալով ասում լինէր. «Կռնակ, կռնակ սա է է՛, փափուկ, լայն ու ձիգ, լող եմ տալիս վրան»:

(Կը շարունակելի)

ՄԵՌԱՆՈՂ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

(ԱԼԵԿՍԱՆԴՐ ՊՈՊ-ԻԿ)

Ա. ր ծ ի ւ ե ա ն ի

Երկնային դո՛ւ կայծ, վեհաշունչ հոգի,
Թօթափի՛ր քեզնից այդ քունը մահւան,
Քուն տկար մարմնի, քուն երկչոտութեան.
Իա անմիտ խաղ է չարաշուք բաղդի...
Այժմ քո ժամն է, ո՛վ վսեմ հոգի.
Փշրի՛ր կաշկանդող շղթան բընութեան
Եւ թռի՛ր դէպի սուրբ ազատութեան
Աղբիւրն անսպառ — աղբիւր նո՛ր կեանքի:

Լսի՛ր, տե՛ս քո շուրջ սուրբ հրեշտակներ
Երգում են և քեզ տալիս քաղցր աւետ.
«Ի՛նչպի մեզ, քուրի՛կ թռի՛ր դու մեզ հետ...»
Եւ մթնանում են իմ պայծառ աչքեր...
Շունչս կտրւում է... սյժերըս հատնում.
Խօսում եմ անկապ, խլւած իմ ուշքից...
Օ՛հ, տաս՛, հոգի՛, փարատի՛ր դու ինձ.
Մի՛թէ սորան չեն մարդիկ մահ կոչում:

Թռչում է երկիր... թռչում, սլանում...
Բայց ահա նա էլ ծածկւեց իմ աչքից.
Ել բուն չեմ տեսնում, բացի երկնքից,
Այնտեղ սերովբէք տաղեր են հիւսում.
Ուզում եմ թռչել... և՛ ես ձեզ նման.
Իուք, ազա՛տ ոգիք, տւե՛ք ինձ թւեր...
Ա՛խ, ո՛ւր է, ո՛վ մահ, սուրբ մահաբեր,
Ո՞ւր յաղթանակըդ, մռա՛յլ գերեզման...
Մօսկւ. 28 սեպտեմբերի, 1889 Թ.:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

(ԵՂԼԻՍՏ-ԻԳ)

Ա Ր Ծ Ի Լ Ե Մ Ն Ի

Այստեղ հանգչում է եղբայրը մարդկանց,
եղբայր և երգիչ մեր ցաւ ու վշտի.
Սար, դաշտ, գետ, երկինք—ահա քաջ սերտած
Քաղցր էջերը նրա սիրած գրքի:

Աքսոր ու շղթայ, ստրկի հեծեծանք,
Լացող շինական, հրճող վաշխառու—
Ահա չարիքներ, որոնց լծի տակ
Դատապարտւած էր նա միշտ տանջելու:

Եւ նա տեսնում էր կիրք ամենուրեք,
Մոլի արատներ փռւած աշխարհում.
Սակայն թնջ անէր... այս կեանքից երբէք
Նա սուրբ մաքրութիւն չէր էլ սպասում:

Նա հալածում էր կեանքի ցեցերին
Իւր կծու խօսքով, իւր խոր զգւանքով.
Երկրիս հզօրին և խեղճ անզօրին—
Նա միշտ նայում էր հաւասար աչքով:

Նա իւր երգերում օրհնանք էր կարգում
Թշւառ, լքեալի արի պաշտպանին.
Արդար զայրոյթով տնէճք էր թափում
Անկուշտ, աւազակ հարուստի գլխին:

Եւ սրտով ազնիւ, կամքով անսասան,
Նա ջերմ սիրում էր ամբողջ մարդկութիւն.
Եւ անարգելով ոգին չարութեան,
Բարձր երգում էր սուրբ ճշմարտութիւն:

ԵՐԲ ՔԵՉ ՃՆՇՈՒՄ Է...

(ԹՈՄԱՍ ՄՈՒՐ-ից)

Ա Ր Ծ Ի Լ Ե Մ Ն Ի

I

Երբ քեզ ճնշում է թախիճը խորին,
Եւ դու տանջանքով թառանջ ես քաշում,
Ես էլ մի տեսակ, ընկե՛ր իմ անգին,
Կարճես տանջում եմ, սիրտս է մաշում:

Բայց երբ արցունք է քո աչքում փայլում,
Արցունք մանկական վառ ցնորքների,
Օ՛, այդ լացը քեզ այնքա՛ն է սազում.
Երնէ՛կ միշտ այդպէ՛ս լայիր, նազելի՛...

Մտկւ. 10 մարտի, 1890 թ.:

II
ԱՅԱ ԽԱՂՈՒՄ, ՓԱՅՆՓՈՒՄ Է...

(ԹՈՄԱՍ ՄՈՒՐ-ԻՅ)

Ա Ր Ծ Ի Լ Ե Ս Ա Ն Ի

Ահա՛ խաղում, փայլփլում է պայծառ շողը պարզ ջրում,
Բայց շողի տակ, ալիքներում ցուրտ ու խաւար է տիրում.
Տեսէ՛ք կարմիր վարդ է փթթում և՛ պատանու թշերին,
Բայց սև մտքեր, մռայլ թախիժ պաշարած են նրա հոգին...

Կա՛ն անցեալի տխուր վշտեր, որոնց թոյնը դառնալի
Թունաւորում ամբողջ կեանքը, մեռցնում է սիրտ և հոգի.
Եւ էլ մարդը չի՛ ճաշակում, էլ չի՛ զգում ոչ մի բան—
Ո՛չ խնդուլի, ո՛չ սփոփանք, ո՛չ խոր տանջանք հոգեկան:

Այգպէս կտրւած ճղան վերայ խղճուկ տերևն է թոշնում.
Եւ էլ զո՛ւր է խիտ անտառում մեղմիկ քամին ղոզանջում,
Էլ ի զո՛ւր է արևն առատ ցողում շիթեր վառ, անշէջ.
Տերևն, այո՛, կանաչում է—բայց կեանք չկայ նորս մէջ...

ՎԱՆԱՅ ԾՈՎԱԿԸ

ՏԻԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՑԻ

Հայաստանի երեք նշանաւոր լճերից կամ, ինչպէս ասում էին հին ժամանակ՝ ծովերից՝ ես ամենից շատ սիրում եմ Վանայ ծովը: Վաղ ժամանակներում սա կոչւում էր «ծով Բզնունեաց» կամ «ծով Ախթամարաց», իսկ այսօր յայտնի է ամեն տեղ միմիայն «Վանայ ծով» անունով: Ես սիրում եմ աւելի այդ, քան Հայաստանի մնացած երկու, այսինքն Սևանայ և Ուրմիոյ ծովերը:

Եւ ահա՛ թէ ինչու:

Երբ անց ես կենում Սևանայ ծովի կողքով՝ սիրտդ, ճշմարիտ է, բացւում է, դիտելով այդ սրբազ ու հանդարտ ջրային տարածութիւնը, նրա շրջակայ լեռները և միջի համանման կղզեակը իւր վանքով: Այդտեղ մի կարօտալի ու ախորժալի շունչ ես քաշում, ճգնելով մաքրել, որքան հնար է, թօքերիդ այն ահագին թոցը, որ լցրել է այնտեղ Երևանի ամբողջ ճանապարհին կէս արշին խորութեամբ կանգնած փոշին: Այդտեղ, վերջապէս, միտդ են դալիս այն համեղ «իշխան» և «դեղարքունի» ձկները, որ միմիայն այդ ծովիցն են ստացւում ու նրանց վայելողների լեզուն զամաղին կպցնում:

Այդ ամենը, անշուշտ, լաւ է, բացց քիչ է...

Երբ ոտդ դնում ես Պարսկաստանի այն մասը, որ կոչւում է Ադրբէյջան և ուր գտնուում են Խոջն, Սալմաստն և Ուրմին, — ամեն մի լեռնոտ տեղից նկատում ես տխո՛ւր, մուգ-կապո՛ցտ Ուրմիոյ ծովը: Այդ կապուտթիւնը շատ աչքի ընկնող է ու անախորժ: Դա մի պատկեր է, որին չէ դիպել նկարիչ-արւեստագէտի քնքոյշ մատը, այլ որի վրայ քսմնւել է միայն մի անձաշակ ներկարարի կոշտ-կոպիտ

վրձինը: Ծովի շուրջը նկատում ես լերկ ու բիրտ քարեր, խուպանացած ու ամայացած վայրեր, որոնք սփռում են այդ սև-լեզակ ջրի վրայ իրանց ժահահոտ մեռելութիւնը... Լճի մէջ երևում են նաև երկու, երեք կղզիներ, նոյնպէս ակեր ու անհիւրընկալ, բայց անշուշտ լաւ ապաստարաններ բուերի, ագռաւների, օձերի, մողեսների ու ամենատեսակ սողունների...

Զգում ես, որ այդ շուրջը չէ կարող կեանք ունենալ ու կեանք տալ ուրիշներին. նա մեռած է:

Եւ արդարև, Ուրմիոյ ծովում ձուկ չը կայ:

Բայց բոլորովին այլ պատկեր է ներկայացնում Վանայ ծովը:

Մինչդեռ Սևանայ ծովի շուրջը անզոյն—պարզ է որպէս ցոյզ, իսկ Ուրմիայինը՝ թանձր—գունաւոր որպէս լեզակ,—Վանայ ծովը պայծառ-կապոյտ է որպէս երկինք: Նա թափանցիկ է, նա խորանդր է որպէս անմահութիւն: Եւ նա այդպէս է՝ որ կողմից որ նայէք, կ'ուզէք հեռուից, կ'ուզէք մօտից, կ'ուզէք դրսից, կ'ուզէք ներսից: Նաւի մէջ նստած, դուք տեսնում էք երեսուն արշիներից աւել խորութեան մէջ ծովայատակի փոքրիկ գոյնզգոյն խիճերը որպէս ձեր ափի վրայ: Մի սքանչելի երևոյթ է տեղի ունենում, երբ մենք կանգնում ենք այդ ջրի ափին արևածագին կամ արևամտին, այսինքն այն միջոցին երբ երկնքի մեծ լուսատուն զգում ու շոյում է իւր առաջին կամ վերջին մեղմ ճառագայթներով անխռով ծովակի փափլիկ զանգուրները: Մի կատարեալ հրաշք է տեսնել թէ ինչպէս ջրի մի ահագին տարածութիւն կերպարանափոխւում է իսկոյն անթիւ անհամար ժպտող շրթունքների, լուռ, համեստ, շնորհալի ծիծաղ արտայայտող բիւրաւոր վարդագոյն բերանների...

Եւ սուրբ Գրիգոր Նարեկացին, հին և նոր հայոց այդ անզուգական, իւր նմանը չ'ունեցող մեծ բանաստեղծը, հմուտ վարպետը բառաստեղծութեան՝ չէր կարող գուցէ աւելի լաւ բառով արտայայտել իւր սիրած ծովակի այդ յատկութիւնը, քան կոչելով նրան «ծիծաղախիտ»...

«Աչքն ծով 'ի ծով ծիծաղախիտ

«Մաւալանայր յառաւօտուն»:

Պէտք է տեսած լինել Վանայ ծովը համոզելու համար թէ
 ո՛րքան խիտ ծիծաղ ունի նա արևի ճառագայթների ազդեցու-
 թեան տակ: Եւ քանի՛ սքանչելի է մեր հոգևոր բանաստեղծի այդ
 սազացրած մեկնութիւնը:

Այդպէս է լինում նա իւր հանդարտ ժամանակը:

Բայց եթէ դուք սիրահար էք բնութեան կատաղի երևոյթ-
 ների՛ կարող էք լիովին բաւականութիւն ստանալ զիտելով Վանայ
 ծովակի զէզազէզ փրփուրներն ու վայրենի մռունչները՝ նրա ալե-
 կոծութեան միջոցին: Այդ ժամանակ նա այլ ևս իրան նման չէ, նա
 կորցնում է բոլորովին իր գլուխը:

Ահա կամաց կամաց, բաց յաճախ էլ յանկարծ՝ բոլորովին ան-
 սպասելի կերպով բարձրանում է մի խառնափնթոր քամի. ջուրը
 կորցնում է իր զոյնը, խառնւում, պղտորւում: Ապա նա սկսում է
 ուժգին կերպով երերալ, ծփալ ու մռնչել... Ալիքները՝ անկարգ ու
 խառնիխուռն՝ զիզւում են իրարու, լեռներ կազմում ու մի ակն-
 թարթում անհետանում, տեղի տալով իրանցից աւելի զօրեղներին:
 Ջրի մռնչիւններին միանում է քամու անախորժ, վայրագ շվշվոցը,
 փոշին ու աւազաթողը մթնացնում են ծովեզրի մթնոլորտը և այն
 համեստ, ծիծաղախիտ հայելին մի բաբելոնեան խառնակութեան
 վերածում:

Պատահում է—և համարեա թէ միշտ—որ ճիշդ այդ բոպէին
 տանեակներով առազատային նաւեր են լողում ծովակի ամենախոր
 ու վտանգաւոր տեղերը: Ի՞նչ պէտք է անեն արդեօք այդ միջոցին
 նաւավարներն ու նաւորդները:—Նրկուսից մէկը:

Եթէ նաւը լցւած է միմիայն ուղևորներով, սրանք, կորցրած
 ազատւելու ամեն մի այլ յոյսն ու ճարը, յանձնում են իրանց միմիայն
 Աստուծոն: Միկաչօք ու կուրծքը բաղխելով, բարձրացնում են մի սրբ-
 տաճիկի վայնասուն, մի խառնակ ու բիրտ վըլվըրոց, որ խառնւում,
 խեղդւում է տարերքների ընդհանուր թոհ ու բոհի մէջ:—«Իէ՛հ,
 շուա արէ՛ք, փող վեր եկէ՛ք, —գիմում է բարեպաշտ սգեամըլչին» (նա-
 ւապետը) իր ուղևորներին—փող վեր եկէ՛ք, որ ս. Իէորդի համար
 խունկ ու մոմ առնենք, երբ որ ազատւենք Աստուծով էս պատու-

Հասիցս: Մի ակնթարթում լսում է աւելի քան հազար անգամ Աստուծոյ անունը և նաւապետի բուռը լցում է պղնձեայ ու արծաթեայ դրամներով:

Եթէ Աստուած լսում է այդ թշւառների աղօթքը ու աղատում նրանց,—այդ փողը հասնում է ծովակի հարաւային ափին՝ Մոկաց սարերում գտնւած Փութկի ս. Գէորգ վանքը: Փութկի ս. Գէորգը շատ զօրաւոր սուրբ է, նա Վանայ ծովակի Պօսէդօնը, նրա չաստուածն է:

Սովորական աղօթքներ ու սաղմոսներ ասում են նաև ամեն ժամանակ, երբ առաջին անգամ ոտը նաւի մէջն են դնում և շատ յաճախ, երբ նաւը արդէն զգալի կերպով սկսում է ափից հեռանալ՝ բոլոր ճանապարհորդները մի սրտառուչ ու լիուլի ձայնով «ձանապարհ ճշմարիտ» յայանի մեղեդին են զեղզեղում:

Բայց պատահում է, որ այդ ջերմաջերմ աղօթքների ու սուգ ու շիւանի միջոցին նրանց գլիններին երևում է յանկարծ թաթար կոչւած քամին, որ մի ուժգին ու ձագարածն պտոյտ անելով օդում՝ ընկնում է յանկարծ նաւակի վրայ ու մի ակնթարթում ներքև խրում, ծովակի անդունդը տանում նրան... Թաթարից աղաուելու միակ հնարն է՝ իսկոյն առագաստի շանները կտրտելն ու նրան վայր զցելը, բայց թաթարը այնպիսի անասելի արագութեամբ է ներգործում, որ հմուտ նաւավարների խելքն ու ոչժն անգամ թուցնում, կորցնում է: Կործանման մի ուրիշ պատճառը լինում է յաճախ նաև այն, որ ալիքները յանկարծ մեծ քանակութեամբ շուր են թափում այդ բաց նաւակը, ծանրացնում ու ներքև քշում...:

Իսկ երբ ուղևորների տեղ այդ նաւակները ծանրաբեռնւած են լինում ցորենի ջւալներով, ապրանքի հակներով, փայտ ու ածուխով կամ Կիրաշէնի բրուանների խելալաց—փարշերով,—այն ժամանակ Աւանցցի նաւաստիների ջղոտ ու երկաթի բաղուկներն են հարկաւոր, որպէս զի այդ բոլոր «խառախուրան» շուտ շուտ ծովն ածելի ու զոնէ իրանց կեանքն ու նաւն ազատուի: Բայց, անշուշտ, բազկի ոչժն էլ իր սահմանն ունի և շատ յաճախ ուժասպառ նաւաստիները անցնում են գէպի անտեսանելի աշխարհ իրանց՝ ապրանքով բեռնաւորւած՝ նաւակների հետ...:

Այդպէս են կործանւում նաւակները, ոչնչանում ապրանքները,

խեղզուով ու կուլ գնում թշուառ նաւաստիներն ու ճանապարհորդները: Եւ այդ՝ ամեն տարի, զի Վանայ ծովը ձեռք չէ վերցնում իրան վաղուց ի վեր չատկացրած զոհերից...

Կեղեցիկ ու խաղաղասէր Վանայ ծովակի այդ միակ սև բիծը, նրա այդ աններելի գժութիւնը կը ջնջւի ու կը վերջանայ միայն այն ժամանակ, երբ Հենրիկոս Պոտտերի զիւտը մոտք գործէ Հայաստան, երբ շոգենաւի շվշվոցը մարդու ականջը ծակէ հայկական այդ ամենամեծ ու ամենահարևոր լճակի վրայ:

Եթէ մենք կանգնենք ծովակի մի բարձր ափին ու դիտենք նրա հօրիզօնը,—մեր աչքին կը ներկայանայ հեռուեալ տեսարանը: Նրա արևելեան ափին տարածուով են հին Գնունիք, Վան—Տոսոյ, Հայոց-Ձոր. հարաւային կողմը—Ռշտունիք, Կարճկան, Կեօզալտարէ, Մոկս, Շատախ, Գարգար. արևմտեան ափին—Բաղէշ, Չխուր ու Մշոյզաշու և հիւսիսում վերջապէս՝ Բուլանըղ, Արծկէ, Խլաթ ու Քաջբերունիք գաւառները իրանց հաղարաւոր գիւղերով: Կը տեսնենք՝ Վան, Ոստան, հին Արտամէտ, Բաղէշ, Արծկէ, Խլաթ, Մանագլերա և Արծէշ բաղաքները: Սիփան, Նեբրովթ, Գրգուռ, Ընձաքիսար կամ Կապուտողն սարերը, Վարագի, Կորդւաց, Մոկաց, Կարճկանի և Բուլանըղի լեռնաշղթաները: Տիրամայր, Վարագ, ս. Խաչ, Նարեկ, ս. Քովմաս, ս. Յակոբ, Սորփայ ու Մեծորայ անուանի վանքերը: Վանի ու Ոստանի կանանչախիտ այգիները, Քաջբերունեաց ու Բուլանըղի ոսկեայ արտերն ու զմոխտեայ արօտատեղերը, Կարճկանի թաւ անտառները, Սիփանայ սարի մշտապատ մաքուր ձիւնը: Կը տեսնենք վերջապէս՝ ծովակի միջի Ախթամար, Կոուց, Լիմ ու Առտեր կղզիները իրանց փառաւոր եկեղեցիներով ու այլ շինութիւններով:

Սրանք միմիայն ծովակին կպած, նրա անձուկ հօրիզօնի տեղերն են: Իսկ եթէ մենք ընդարձակէինք փոքր ինչ մեր հօրիզօնը, եթէ մենք միայնէինք այդ տեղերին նաև նրանցից մի փոքր յետև գոնւածները,—այն ժամանակ մեր աչքի առջև կ'ունենայինք այժմեան Տաճկա-Հայաստանի ամբողջ սիրտը և նախկին Արմենիայի մի շատ նշանաւոր մասը: Ծովակի այդ բազմազան ու երփներանդ շրջակաները տալիս են նրա ընդարձակ պայծառ—կապուց երեսին:

զրախտային մի պատկեր, որ տեղն ու տեղը տեսնել ու զմայլել միայն կարելի է և ոչ թէ նկարագրել:

Վանում եղած ժամանակ, ես յաճախ բարձրանում էի մեր տան բարձր կտուրը և դիտում այնտեղից ծովակը իր այդ չքնաղ հորիզոնով: Նոյնը անում էի ես յաճախ նաև Վարազաչ սարի Կարկուտխաչ կոչւած պուրից: Եւ այնուհետև, ամեն անգամ, երբ ևս ձիով կամ ոտով ճանապարհորդում էի նրա շրջակայքում, երբէք առիթ չէի փախցնում վեր սողալ մի բլրի կամ սարի գլուխ ու նորինորոյ գննել այդ իմ ծանօթ տեսարանը: Զննել ու թարմանալ հոգով՝ աչքս սեւեռած ջրի կապուտակութեան կամ նրա նկարչական շրջակայքի հեռու հեռու անկիւններին:

Ամեն տեղից կարելի էր նայել անկուշտ ու ժամերով, բայց կիսանքումս չեմ մոռանայ երկու կէտ, որոնցից, ինչպէս լետոյ համոզեցայ, Վանայ ծովն ու նրա շրջակայքը չը տեսնողը, կարելի է ասել, նրանց ամենեւին էլ չէ տեսել:

Եւ այդ կէտերն են՝ Նարեկացու ճգնարան-քարայրը և Կարձկանի Սորփ գիւղը:

«Ծիծաղախիտ ծովի» հռչակաւոր սիրահարը, ի հարկէ, առանց դիտաւորութեան չէ ընտրել այդ բարձրադիր քարանձաւը: Թէև հեռու ճիշդ երկու ժամ ծովի ափից, քարայրը՝ շնորհով իւր բացառիկ դիրքի՝ ցոյց է տալիս լճի շատ ընդարձակ մասը և նրա հանդիպակաց հիւսիսային եզրը որպէս մի ձեռքի ափի վրայ: Տեսարանին շատ է նպաստում և՛ այն հանգամանքը, որ քարայրի տակ փուռում է նախ Ռշտունեաց նախշուն, կլորիկ զաշտը իր վանքերով ու գիւղերով և ապա թէ գալիս ծովն ու իր դիմացի ցամաքը: Խիստ վսեմ է այդ տեսարանը և լիովին արժանի հանձարեղ ճգնաւորի ¹⁾ վայելման:

Գալով Սորփ գիւղին, նա ունի մի ուրիշ, աւելի մեծ, առաւելութիւն: Նրանից երեւում է ամբողջ ծովը իր համայն զարդերով ու շրջականերով: Եւ այդ նրա համար, որ այդ գիւղը ամենաբարձր կէտն է ծովակի հարաւային ափի, որը իր կողմից նոյնպէս ամենաբարձրն է նրա միւս երեք ափերից: Այդ մէկ: Երկրորդ՝ Սորփը

¹⁾ Գրիգոր Նարեկացու մասին կը խօսեմ մի ավ անգամ:

շինուած է մի այնպիսի ժայռի վրայ, որ խիստ կերպով դուրս է ցցուած դէպի ջուրը ու կազմում նրա ամենագեղեցիկ հրանդանը: Ուրեմն ինչ զարմանք, որ Սորսի գուտ հայկական գիւղը հսկայորէն իշխում է ամբողջ Վանայ լճի վրայ ու ինքնագոհ ժպիտով աչք ածում աջ ու ձախ...

Այդ բարձունքից ահա, որ մօտ երեք օր հետու է Վան քաղաքից, կարելի է ժամերով ու օրերով զմայլել մի վեհ ու հրաշալի տեսարանով և ապա միայն ասել թէ՛ «այո՛», ես տեսել եմ Վանայ ծովակը...

Առհասարակ ծովակի միայն այդ հարաւային ու արեւելեան ափերն են լեռնոտ ու բարձրադիր, թէպէտև բազմաթիւ միջանց-հովիտներով, ձորերով ու մանրիկ դաշտերով: Իսկ արևմտեան և մասամբ հիւսիսային կողմում ջրին անմիջապէս պատում են տափակ դաշտերն ու զառիվայրներով բարձրանում մինչև մօտակայ սարերը: Այդ տափարակները տեղ տեղ չոր են, լերկ ու անբերրի: Դրանց բոլորովին հակառակ են առաջին երկու ափերը, որոնց խիստ այգիները, անտառները, մարգերը, բոստաններն ու ծաղիկները իրանց զբոջըջան առւակներով ու անմահական աղբիւրներով Հայաստանի բնութեան թագն ու պսակն են կազմում:

Անասելի հրաշալի են երևում այդ երկու ափերը, երբ նայում ես նրանց ծովի մէջտեղից, նստած մի առաքաստաւոր նաւակում: Նրանց գեղեցիկութեան մեծ փայլ են տալիս նաև նրանց վրայ գտնուած հարիւրաւոր վանքերն ու մատուռները, որոնց մեծ մասը՝ ապացոյց նախնի հայոց խիստ բարեպաշտութեան՝ դեռ ևս կանդուն և բարեղարդ են մինչև այսօր, իսկ քնացածը՝ աւերած, խարխուլ ու կիսակործան:

Այդ սարերում մանդալիս երբեմն նկատում ես նրանց ստորոտներին, ձիշգ ջրին կպած, փոքրիկ ու կանաչագեղ զխ դեր, որոնց համար ծովը կազմել է մի փոքրիկ ծոցիկ և այդ ծոցիկի մէջն էլ գիւղացիք կապել են իրանց երկու, երեք նաւակները: Աւ երբ վերելից՝ սարի զլսից՝ նայում ես այդ պայտաձև գիւղակին ու նրա պտղիկ նաւահանգստին՝ երևակայում ես քեզ Շվէյցարիայի լճերի ափին:

Իրան ծովակի միջի գեղեցկութիւններից չէ կարելի մոռանալ այստեղ նրա նաւակներն ու թուշուները:

Կաւ եղանակին և բարեյաջող քամու միջոցին լծի վրայ միշտ, զիշեր թէ ցերեկ, կարելի է տեսնել քսանից մինչև վաթսուն առագաստաւոր «գեամիներ» (նաւեր), լցած ապրանքով ու մարդկանցով: Նրանք անդադար վազվզում են ծովի զանազան ուղղութեամբ, գնալով այս կամ այն, մտաւոր կամ հեռաւոր գիւղն ու գաւառը: Միշտ գեղեցիկ են երևում այդ նաւակները իրանց ձիւնի պէս սպիտակ առադաստներով՝ ծովակի ջինջ կապոյտ մակերևոյթի վրայ: Եւ ևս առաւել՝ երբ որ նրանք խմբերով ու սագերի նման սուրում են միմեանց յետևից իրանց ուռած-փքած առագաստներով, նպաստող քամու օդնութեամբ:

Վանայ ծովի ու նրա ափերի թուշուները շատ բազմազան են, սկսած մեծամեծ կոտ-կոտ արաղիխներից ու վերջացրած մանրիկ սարեակներով: Իրանց մէջ կան այնպիսիները, որոնց երփներանգ քնքոյշ փետուրները կանացի զարդերի թագն ու պսակը կը կազմէին: Եւ նաև այնպիսիները, որոնք իրանց մտով ճաշակաւոր եւրոպացու ամենահամեղ խորտիկները կը կազմէին: Այլ աւա՛ղ, որ որսորդութիւնը դեռ ևս չէ զարգացած այն կողմերում և այդ երջանիկ արարածները պառաւում, քոստուում են ազատ, անվրդով ու միլլիարդների հասնում....

Այն ամենը, ինչ որ ասացի մինչև հիմա Վանայ ծովակի ու նրա շրջակայքի մասին, կարող է տեսնել ամեն մարդ իր երկու առողջ աչքերով, իսկ եթէ այդ մարդը ունենայ նաև մի առողջ ու լուսաւորւած միտք, եթէ նա ծանօթ լինի այդ տեղերի վեց հազար տարւայ պատմութեան, եթէ նա շրջած ու լսած լինի բնիկների մէջ բերանէ բերան ու որդուց որդի անցնող պատմական, դիցաբանական ու առասպելական անթիւ ու անհամար աւանդութիւնները, եթէ նա անձամբ ստուգած լինի, որ այդ տեղ ամեն մի քար, ամեն մի փոս, ամեն մի ծառ ու ջրի կաթիլ իր ուրոյն ուրոյն և խիստ հեռաքրքիր անցեալն ունի, — ա՛հ, այն ժամանակ, ասում եմ, մարդս մի շա՛տ բանաստեղծական հայեացք կը սևեռէ Վանայ ծո-

վակին ու կը սուզւի իր մտքերի ու յիշողութիւնների անել լարերին թոսի մէջ: Եւ արդարեւ, ի՛նչ անցքեր ասես չեն անցել այդ ծովակի գլխին, ի՛նչ նշանաւոր գործողութիւններ չեն կատարւել նրա շրս ափին: Ո՛րքան երկար է նրա վեց հազարամեայ պատմական դէպքերի շարքը՝ սխաժ Նոյից, Հայկից և Նամիրամից:

Այստեղ, այս ծովի գլխից, անցաւ մարդկութեան նախահայրը իր անպիտատ տապանով, մտոեցաւ Գրգուռ սարին ու ասաց.

«Գրգուռ, ա՛ռ զիս.»

Բայց ծովակի համեստ լեռը պատասխանեց.

«Գնա՛ ի Մասիս,

«Զի բարձր է քան զիս...»

Տապանը հնազանդւեցաւ և անցաւ, արդարեւ, ի Մասիս...

Այստեղ փշրեց հայ ազգի նախահայրը բռնութեան շղթաները, վայր գցեց Բէլին, հիմնեց իր սկզբնական իշխանութիւնը:

Այստեղ հին արևելքը տաին ու վրայ անող աշխարհակալ թագուհին մտցրեց Ասորեստանի քաղաքակրթութիւնը, հիմնեց իր Նամիրամակերտը, և հռչակաւոր առուն (որ հիմա էլ կայ):

Այստեղ թագաւորութիւններ էին կանգնում ու կործանւում, հսկայական շէնքեր հիմնւում ու հիմնայատակւում:

Այստեղ էին Լանկթամուրը, մողոլները, թաթարները, թուրքերը, սելճուկները, արաբները և հին ու նոր արևելքի համայն ցեղերն ու կարիճները ճնախաճաշում:»

Այստեղ, այս՝ բնութիւնից օրհնւած ու մարդկանցից թշւառացրած՝ երկրումն էին արեան ու արտասունքի հեղեղներ հոսում ու ծովի գոյնը այլակերպում:

Այստեղ էին հին հայոց փոքրիկ անկախ նախարարութիւնները միմեանց թոքն ու լիարդը կրճոտում, քանդում ու քանդւում:

Եւ ինչո՞ւ մէկ մէկ թւեմ, քանի որ ոչ ժամանակը և ոչ այս գրւածքի չափն են ներում այդ անել: Թո՛ղ ինքը Վանայ ծովը լեզու գառնայ մի օր ու յետ պատմէ մեզ իր փորում պահած բոլոր դաղանիքները:

Այդ ծովակի կղզիների ու նրա շրջականների բեւուազիրները մի օր մեժ լոյս պիտի գցեն ոչ միայն այդ կողմերի հին պատմութեան

այլ և առհասարակ հայոց հին դիցաբանութեան վրայ: Առատունների, զենարանների և ի մէջ այլ բազմաթիւ հեթանոսական չիշատակարանների ուշադրութեան արժանի է նաև «յարլէղների» կամ «արալէղների» հայրենիք Վէզք զիւղը, որ մինչև հիմա էլ կանգուն է իր տեղում:

Գանք հիմա այն հարցին թէ ի՞նչ օգուտներ է տալիս ներկայումս Վանայ ծովակը:

Նրա տւած առաջին և ամենամեծ օգուտն է նաւազնացութիւնը: Ծածկաստանի ցամաքային ճանապարհների վերին աստիճանի անցարմարութիւնները անդին են դարձնում այդ ջրային ուղին: Բաւական է այստեղ յիշել, որ մինչդեռ ապրանքակիր գրաստները երկուերեք շաբաթ գործ կը դնէին ծովի շուրջը ստտելու համար, տեղական հնադարեան առագաստաւոր նաւերը՝ յաջող քամու ժամանակ՝ միմիայն երկու օրումն են անում նոյն ճանապարհը... Բայց ցանց այն է, որ հէնց ամեն բան այդ յաջող քամուցն է կախած: Իսկ յաջող են կոչւում այն երկու քամիները, որ մշտապէս և մեղմ ու հանդարտ փչում են Վանայ ծովակի վրայ, մէկը արևելքից արևմուտք՝ զիշեր ժամանակ, միւսը՝ ընդհակառակ և օր ցերեկով: «Անյաջող» է դառնում քամին ու փոթորիկ բարձրանում, երբ դրանց աւելանում են նաև հիւսիսից կամ հարաւից անտեղի կերպով եկող ուրիշ քամիները: Յաջողի «սէզօնն» է ամառն ու ձմեռը. անյաջողինը՝ դարունն ու աշունը: Իբրև բացառութիւն, յանկարծակի այեկոծութիւններ պատահում են նաև լաւ սէզօններին, բայց նրանք անտանելի են գարնանն ու աշնանը: Այդ միջոցներին գլխաւոր նաւահանգիստներում բեռնաւորւած նաւերը, աչքերը երկնքին տնկած, սպասում են «լաւ քամուն» ամբողջ երեք, չորս և մինչև իսկ վեց շաբաթ: Յետոյ, մի լաւ ժամ դտնելով, վստահանում են տեղերնից շարժելու, բայց հազիւ մի երեք ժամ անցած՝ հանդիպում են յանկարծակի փոթորիկի ու շտապով մի ուրիշ նաւամատոց մտնում: Պատահում է, որ այդ երկրորդական նաւահանգստում նաւավարները ուրիշ մի ամիս էլ, ձեռքերը ծոցերնին դրած, սպասում են մի այլ «լաւ քամու», որպէս զի կամ ճանապարհի միւս կէսն էլ անցնեն կամ էլի իրանց զնացած ճանապարհով վերադառնան յետ...

Այդպիսով սովորական է լսել թէ ի՛նչպէս մի նաւ երկու ամսումն է անում այն ճանապարհը, որ յաջող քամուն միմիայն եօթ ժամումն է կատարում...

Ել չեմ խօսում յամառ և համարձակ նաւապետների ու ճանապարհորդների կրած սոսկալի պատիժների մասին ծովի ալեկոծութիւնից, որ արդէն առաջ նկարագրեցի: Աւելացնեմ այստեղ միայն, որ այդ ընդհանուր տաքնապի ժամանակ, երբ նաւը լցւում է ալիքներով ու նրան դէպի ներքև ծանրացնում՝ ամեն մի նաւորդ, զբուժուածի պէս դէս ու դէն ընկնելով, աշխատում է իր ձեռքի թասով, գլխի ֆէսով կամ շորի փէշով նաւի ջուրը դուրս շարտել ու նրան զոնէ մի մաղաչափ թեթեւացնել...

Վանայ ծովի «գեղամիները» սովորական փայտեայ նաւակներիցն են, բայց մի քիչ մեծ, մօտ տասն երկու արշին երկարութեամբ, երեք արշին լայնութեամբ և նոյնքան էլ խորութեամբ, տրամագիծ վերցնելով նրանց ամենադուրս ցցւած կէտերը: Նաւակի երկու կողմերին ամրացրած են երկայն նստարաններ, իսկ ծայրերին կան երկու ծածկւած տեղեր (նաւի երեսից ցած), որոնցից մինի կողմն է դէկը, իսկ միւսը այնքան տեղ ունի, որ նաւաստիները հերթով քնում են մէջը ու պահում իրանց պաշարեղէնը: Այդ կողմն են նաև կայմերը նաւի մեծ ու բարձր առագաստի համար:

«Գեղամին» հեշտութեամբ տեղաւորում է իր մէջ 40—50 հողի, իսկ մերձակայ ուխտատեղերի յայտնի տօներին՝ նրա մէջ լեցւում են մինչև իսկ հարիւր մարդ: Մարդոց փոխարէն նրանց մէջ դարսւում են 20—30 լիքը ջւալներ կամ չորս հինգ սայլաչափ վառելու փայտ: Այնտեղ պահւում են նաև բաւականաչափ աւելորդ չւաններ ու մի երկայն սանդուխտ, որով ուղևորները ցամաքն են ելնում և որը անյոյս ալեկոծութեան միջոցին մի կոււածաղիկ է դառնում... բազմաթիւ բազուկներ մեկնւում են դէպի նա, մէկնում էլ վերջապէս յաղթանակ է տանում, չւանով իրան նրա վրայ կապտում և ծովը նետւում....

Այդ բոլոր նաւակները շինւում են Վանից մի ժամ հեռու գոնեոյ Աւանց զուտ հայկական գիւղում, որտեղից են նաև բոլոր

նաւապետներն ու նաւատիրները, որոնք իշխում են իրանց անվեհեր ու անձնապատան բնաւորութեամբ ծովակի ու նրա բոլոր նաւահանգիստների վրայ: Աւանցը, այդպիսով, կեդրոնատեղին է ծովակում պտտող բոլոր նաւերի, ի բաց առեալ մի քանի վանքերի ու դիւղերի փոքրաթիւ նաւերն ու անառազատ մակոյկները: Աւանցը, ի հարկէ, միւլնոցն ժամանակ Վանի նաւահանգիստն է. իսկ նրա դիմացն է, ծովի հակառակ ափին, Բաղէշ քաղաքի Գաոււան նաւահանգիստը: Աւանց ու Գաոււան, — ահա՛ այն երկու կարեւոր աւանցքները, որոնց շուրջը պտտում են ծովակի բոլոր նաւերը:

Այդ երկու վաճառաշահ կէտերից յետոյ դալիս են Սորփի և Արճէշի նաւահանգիստները, որոնցից առաջինը առատ փայտի ու ածուխի, երկրորդը՝ ամենաընտիր ցորենի անսպառ ամբարներ են:

Աչքի առաջ ունենալով ծովակի շուրջը գտնուող անթիւ քաղաքներից, դաւառներից ու դիւղերից այդ ճանապարհով արտահանած կամ նրանց մէջ ներմուծած ապրանքների ու ամենատեսակ կենսական մթերքների ահագին քանակութիւնը, աչքի առաջ ունենալով, որ այդ կերպով տեղափոխւած իրերը առնւազը քառապատիկ էժան են նստում, — շատ հեշտ է հասկանալ ոչ միայն այն, թէ ինչ մեծ օգուտ են տալիս մի ընդարձակ և բազմամարդ երկրին դեռ ևս այդ ողորմելի, նահապետական սիստեմով շինւած փայտեայ նաւակները, այլ և այն, թէ ինչ հսկայական ծառայութիւն կը մատուցանէին այդտեղ մի շորս հինգ հատ նոցն իսկ փոքրիկ շոգենաւերը:

Համեմատեցէ՛ք. մի տարածութիւն, որ տարւայ վատ սէզօնին այժմեան մի «գեամին» երկու ամսումն է անցնում, մի փոքրիկ շոգենաւ, տարւայ ամեն տեսակ եղանակին, ամենաշատը չորս ժամումը կը թռչէր...

Եւ ի՛նչ կեանք, ի՛նչ նորութիւն կը մտցնէր այդ՝ այդտեղի կանգնած ու լճացած կեանքում:

Յայտնի է, որ շատ շատ անգամ ծրագիրներ են կազմել և մասնաժողովներ ու քննիչներ ընտրել թէ՛ զանազան ընկերութիւնների և թէ՛ մանաւանդ տաճկական կառավարութեան կողմից՝ Վա-

նայ ծովակի վրայ շողենաւեր բանացներու հարցը վճռելու, բայց հէնց ամեն անգամ նրանց դիտումները օդն են ցնդել ու զոլորչիացել...

Կար մինչև անգամ մի խիստ յանդուզն ծրագիր.—միացնել նախ հայկական այդ ընդարձակ լիճը մի մեծ ջրանցքով Պարսից ծոցի հետ և ապա այդ օրհնեալ «շողին» ներս թողնել: Ա՛վ մարդկային յուսախաբութիւն...

Բայց մի աններելի յանցանք կը լինի իմ կողմից ասել թէ երբէք Վանայ ծովը շողենաւ չէ տեսել. չէ՛, նա տեսել է և այն էլ ամբողջ երկու տարի:

Ահա՛ թէ ինչպէս:

Ինչպէս յայտնի է, Վանում կայ հայ բողոքականների մի փոքրիկ հասարակութիւն ընդ նախազահութեամբ ամերիկացի միսիօնարներին: Հիւսիսային Ամերիկացի աշխարհահռչակ «Ռօրդ»—կամ, ըստ սլոյսեցոց, «Պօրտ»—ընկերութիւնը պահում է իր ուսեալ քարոզիչներին (ու տալիս նրանց բարեկեցութեան ամեն դիւրութիւններ) ծածկա-Հայաստանի բոլոր դիւսաւոր կէտերում: Եօթանասնական թւականների վերջերում Վան ուղարկած քարոզիչ միտորը Բարնհամը լինում է ոչ միայն լաւ ատենախօս, աստուածաբան ու բժիշկ, այլ և հմուտ մի քանի բարձր արհեստների... Եւ ահա՛ այդ միտորը Բարնհամը չգանում է իր այդ առաքելական պաշտօնի համար մի զեղեցիկ միտք.—կառուցանել մի շողենաւ ու դուրս դալ ասպարէզ՝ քարոզելու ջրի շորս կողմը...

Ընկերութիւնը տալիս է նրան իր լիովի հաճութիւնը և ուղարկում Ամերիկացի պէտք եղած ատաղձեղէնը: Միսիօնարը իր ձեռքով կառուցանում է մի զեղեցիկ շողենաւակ ու բաց թողնում ծովը իր յատուկ նաւապետութեամբ: Նաւը նստելու արտօնութիւն ունէին միմիայն բողոքական «եղբայրները», իսկ խեղճ լուսաւորչականները մնացին էլի՛ զէլէնկիկօ՛ն, զէլէնկիկօ՛ն...

Եթէ հաւատանք տեղացոյց ասութեան, այդ երկու տարւայ ընթացքում միմիայն մի հաս լուսաւորչական է ընդունել այդ նաւում, այն էլ մի այնպիսին, որը իր հայեացքներով շատ էլ օտար չէր երևում մեր «եղբայրներին»...

Միտորը Բարնհամի հեռանալուց յետոյ, նրա յաջորդ միտորը

Ռէնչնհոլցը, ուրիշ նաւապետ չը ճարելու պատճառով, քանդել է տւել այդ նաւակը և այսօր էլ ամեն մի հետաքրքրող կարող է տեսնել նրա գլխաւոր մասերը Վանի «Ամերիկական» դպրոցի բակում, մի ծածկոցի տակ:

Նաւազնացութիւնից յետոյ արդիւնքի մեծ աղբիւր է ծովակի «տառեխ» կոչւած ձուկը:

Պէտք է իմանալ, որ ծովակի մօտակայ զաւառներում ու նահանգներում մեծ դետեր չը կան: Նզած փոքրիկ զետակներում, ճիշդ է, ձկներ պատահում են, բայց սաստիկ քիչ և միմիայն «բէկերին» ու «փաշաներին» մատչելի. ամբողջ անմասն է նրանցից: Այդ է պատճառը, որ ծովակի՝ աւազի նման միլլիօններով դուրս թափուող փոքրիկ տառեխները մեծ մխիթարանք են տեղացիներին: Բայց տառեխից, նրա ինքնուրոյն համի ու էթանութեան պատճառով, օգտւում են ոչ միայն տեղացիք և ոչ միայն Տաճկա-Հայաստանի ուրիշ նահանգներ, այլ և Պարսկաստանն ու մեր Նրևանի նահանգը: Բայց տառեխը հասնում է յաճախ նաև մինչև Թիֆլիս:

Տառեխը չէ որսացւում ուղղակի ծովից: Ինչո՞ւ:—Նրա համար արդեօք, որ նա սիրում է ծովի ափերից շատ հեռու մնալ, նրա համար արդեօք, որ նա կորչում, հաւաքւում է միմիայն ջրի յատակին, նրա համար արդեօք, որ նա արդէն որսացւում է ուրիշ աւելի հեշտ ճանապարհով.— ոչ ոք չը գիտէ: Ամեն մարդ գիտէ միայն, որ պապերից ու պապի-պապերից մնացած սոփրութիւն է Վանաց ծովի մէջ ուռիսն չը նետելը:

Արդ, ապրիլը սկսելուն պէս, միլլիօնաւոր էդ տառեխներ, հետեւելով իրանց բնագոյման, դուրս են լողում ծովից, գունդազունդ մանում նրա մէջ թափւող Սև, Բանդիմահու և Սրճէշ զետակներն և շառաջանում՝ նրանց ափերին իրանց ձուն ածելու: Հէնց այդտեղ էլ հայ և թուրք ձկնորսները սարքած ունեն իրանց «րանդը» (թումբը) բազմաթիւ կողմերից, որոնց մէջ և միլլիօններով լեցւում են խեղճ լուզորդները, չը հասնելով իրանց կարօտին:

Նրանց անմիջապէս զարտիւում են ցամաք քթոցներում, շուխտ ջուխտ բարձում էշերի վրայ ու ճանապարհ գնում. գէպի քաղաք

կամ մանածում գիւղէ գիւղ: Այդպիսով, տառեկը ծախում է «սատկած» դրութեան մէջ (չը մորթւած), մի բան, որին ոչինչ նշանակութիւն չեն տալիս այն կողմեր:

Վաղ առաւօտից Վանի բոլոր փողոցներում կը լսէք «ձուկ առէ՛ք, ձուկ առէ՛է՛ք» մարդու ականջը ծակող, զիլ ու առողջ ձայները: Եւր էլի յետեւից անց են կենում տասնեակներով ու տեղացոց ախորժակը շարժում: Իսկոյն դուրս են թափւում թաղի տղամարդիկ, կանայք, երեխայք մի մի պղնձէ ամանով ու էժան էժան գնտտում իրանց սիրելի ձուկը: Նա ծախում է կամ մի մաթալիքի (2 կոպ.) կամ 100 հատի հաշուով: Մի մաթալիքով տալիս են 8—13 հատ, իսկ հարիւր հատը 15—20 կոպէկ, նայելով ձկան առատութեան կամ սակաւութեան:

Տաճիկները, որոնց լեզուն անընդունակ է առհասարակ մեր «ձ» ձայնը հնչել, բղաւում են՝ «զուկ առէ՛ք, զուկ առէ՛ք», իսկ հայ չարածճի երիտասարդները՝ երբ տեսնում են տան դռներին ջահիլ հարսներին ու աղջիկներին՝ «ձիկ (ինձ) առէք, ձիկ առէ՛ք»...

Տառեկը Կուր գետի «ցոցլալի» նման է, չորսից մինչև վեց վերջով երկարութեամբ և ոչ երբէք աւելի: Տաճկաստանցիք երբէք նրան ջրի մէջ չեն եփում, այլ միայն կրակի վրայ խորովում: Նրբ հարցնում ևս դրա պատճառը, նրանք զարմանում են ու պատասխանում. «ըշտէ՛, մենք մեր հացերից ու պապերից այսպէս ենք սովորած ու այսպէս էլ կ'անենք»: Ես մի քանի անգամ փորձեցի եփել տառեկը մեր ձկների նման, բայց ամեն անգամ էլ համոզեցայ, որ համարեա թէ չարժէ այդպէս անել, որովհետև այդ քնքոջ ձուկը ջրի տաքութիւնից սաստիկ փափկում է ու «փափայ» (ճաշ) դառնում: Բայց նա շատ լաւ էր դուրս գալիս իւղի մէջ տապակած:

Իսկ տեղացիք թարմ տառեկը պատրաստում ու ուտում են այսպէս: Առանց ամենեւին կտրելու ու փորտիքն հանելու, ձուկը մի հինգ տասը բոպէով զգում են շօռ ջրի մէջ: Յետոյ հանում են ու պոչերը կարգով կպցնելով թոնրի պատերին, թողնում են այդպէս մինչև որ նրա կրակի զօրութեամբ ձուկը «եփւի»: Մի կարճ ժամանակից յետոյ տաք տաք ձուկը նորէն յետ են պոկոտում: Ընում մի աման ու վաչելում, փորի աւելորդ մասերը ձեռքով հանելով ու զին գցելով: Այնուհետև անում են նաև, զլխաւորապէս հարուստ-

ները, հեռեկայր. օգուտ քաղերով ամեն մի տառելի փորում դանւած ահագին քանակութեան խաւիարից, դատարկում են առաջուց նրանց փորերը, խաւիարը առանձին տապակում իւզում և ձուկն էլ առանձին կախ անում թոնրում, ինչպէս վերև նկարագրեցին

Այդպէս է պատրաստում ու ուտում ծովակի ձուկը նրա թարմ ու առատ ժամանակ, այսինքն ապրիլի սկզբից մինչև մայիսի կեսը: Այդ ժամանակից արդէն նա սկսում է շատ քիչ քիչ երևալ «բանդերի» մօտ, իսկ մի երկու շաբաթից յետոյ, այսինքն մայիսի վերջերին, նա ման է դալիս միմիայն ծովի խորքերում:

Ամիս ու կէս թարմ ուտելուց յետոյ պէտք է պատրաստել նաև տարւայ պաշարը. և ամեն մի տուն, քաղաքացի թէ գիւղացի, պէտք է անպատճառ ունենայ, տարին տասերկու ամիս, իր տառելիք: Առանց այլ և այլութեան, թարմ տառելիք ածուում է փոքր կարաններում պատրաստւած սաստիկ աղի ջուրը ու մնում այնտեղ մինչև վերջանալը: Տանտիկինը հանում է այնտեղից ամեն անգամ մի քանի հատ, լւանում փողոցի առւում, ձգում թոնրի տաք մոխրի տակ (և ոչ թէ կախում, ինչպէս առաջ), խորովում և ապա թափ տալիս ու մօտ բերում հացի սեղանը: Այդ զրութեան մէջ տառելիք լինում է սարսափելի շօռ մի անտփոք մարդու համար, բաց տեղացիք ուտում են նրան մեծ ախորժակով ու կարօտով: Փոքր-փոքր, համարեա թէ փշրանք-փշրանք միայն ուտելով այդ շօռ ձուկը, մի մեծ ընտանիք բաւականանում է երեք չորս տառելիով. ապա դատարկում են վրան կամ գինու գաւաթները, կամ խոչտում թթու «թանապուրը»: Այդ հաշուով, ամեն մի ընտանիք, նայելով նրա փոքրութեան կամ մեծութեան, շատանում է 300—600 հատ տառելի տարեկան պաշարով: Շատ են ախորժում տեղացիք նաև՝ փշրել այդ շօռ ձուկը ձաւրէ փլաւում:

Արճէշի կողմերում ձուկը շօռացնում են առանց աղաջրի, մի միայն ծեծած աղ ցանելով վրան ու այնպէս ցամաք պահելով: Այդ ցամաք զրութեամբ է նոյնպէս, որ տառելիք արտահանում է Տաճկաստանի ուրիշ նահանգներ, Պարսկաստան ու Ռուսաստան:

Բաց փանցիք, թէև փոքր քանակութեամբ, ձմեռւայ տառելի մի մասը պատրաստում են նաև մի ուրիշ տեսակ: Թարմ ձկների քիմուխտներից մի բարակ չւան անցկացնելով, շինում են շարաններ

ու չորացնում արևի տակ: Այնուհետև այդ շարանները պահում են կախ արած՝ երեսբացում ¹⁾, ամեն տեսակ օդի ներգործութեան տակ, մինչև որ քիչ քիչ սպառւեն իրանց տէրերից ու սրծնեն:

Շարանի ձուկը կոչւում է «մաճար»:

Շարանից պոկելով, մաճարը դնում են նախ մի 10 բոպէ զօլ ջրի մէջ, ապա հանում, մի քիչ դանակով մաքրում և մի հինգ բոպէ էլ թողնում զինու կամ զինեջրի մէջ: Այնուհետև մաճարը՝ զօլ ջրով ու զինով փափկացած այդ ապուխտը՝ ուտում են առանց խորովելու կամ կրակին մօտեցնելու: Չափազանց համեղ է այդպէս պատրաստւած տառելիք և սիրելի ամեն մի օտարականին:

Մի կողմ թողնելով այն ահագին օգուտը, որ ստացւում է տառելի արտահանութիւնից, այդ ձկան գոյութիւնը Վանայ ծովակում մի անասելի մսիթարութիւն է տեղացիների համար: Երևակայեցէ՛ք. չը լինէր տառելիք, — հին Վասպուրականի ու Տուրուբերանի զաւառների մեծ մասը ոչ միայն կը զրկէր մի վերին աստիճանի էփան, համեղ ու սնդարար ուտելիքից, այլև մի տարրական գաղափարից: Նա չէր հասկանայ թէ ինչ է ձուկը. և մեծ զրժւարութեամբ պէտք էր նրան բացատրել թէ դա մի արարած է, որ լողում է ջրի մէջ գորտի պէս...

Պէտք է ման եկած լինել Վանայ ծովի շուրջը, զիտած նրան շրջապատող ժողովրդի սոսկալի աղքատութիւնը՝ հասկանալու համար թէ ի՞նչ է նշանակում «տաս փարայի» (2 կոպ.) տառելիք: Տես փարայի կամ մի մաթալիքի տառելիս — դա՛ է այն միակ սննդարար կերակուրը հազարաւոր քանդւած օճակների, որոնք չ'ունին ոչ այլ ինչ, բաց եթէ մի պատառ ցամաք ու չոր հաց: Տաս փարայով տալիս են տասը, տասներեք տառելի... օ՛, դա մի հարսանիք է այն թշուառ ծնողների համար, որ շրջապատւած են կէս զիւժին կիսամերկ ու սոված մանուկներով: Եւ ահա՛ բացւում է մի մայիսեան առաւօտ. ի՞նչ է խնդրում աղքատ հայրը իր Արարչից: — Մի մաթալիք, այո՛, միմիայն մի սև մաթալիք, որ առնէ իր օրհնեալ ձուկը կամ «գուկը» ու ոգևորէ իր ապերժանիկ զաւակները:

¹⁾ «Երեսբաց» է կոչւում տաճկաստանցոց պատշգամբը, բալկօճը, որի վրայը լինում է միշտ ծածկւած, իսկ երեք կողմերը — բաց:

Եւ չիրաւի, շատ զւարթ է Վասպուրականը սպրիլ ու մայիս ամիսներին. տառելսը, որպէս մի երկնային մանանայ, կշտացնում է նրա բազմամբոխ որդիներին...

Մի՞թէ այլ ևս հարկ կայ աւելացնելու, որ կարելի է նոյնպէս պատրաստել՝ հիանալի «սելեօզկայ» տառելի ձկնից ու հիւթալի խաւիար նրա փորից: Հարկ չը կայ: Սակայն հարկ կայ աւելացնելու, որ Վանայ ծովակը կարօտ է շատ հմուտ ձեռքերի:

Չը մոռանանք չիշատակել նաև մի զարմանալի երևոյթ: Մինչդեռ Վանայ ծովակը գնացկան ջրեր է ընդունում ամեն կողմերից, տառելսը դուրս է գալիս միմիայն նրա արևելահիւսիս և հիւսիսարևելեան անկիւններում և այդ վերջին կողմի ձկները աւելի խոշոր են առաջինից: Այդ ի՛նչ զարմանալի գաղտնիք է, Տէր իմ Աստուած...

Գուցէ շատերը չեն լսել Վանայ ծովակի այն արտադրութեան մասին, որ կոչւում է բարակ: Դա մի աղային բաղադրութիւն է, որ ստացւում է նրա ջրի գոլորշիացնելուց: Բաց այդ գոլորշիացնելը չը պէտք է լինի կրակով, այլ այն ինքնուրոյն և տարօրինակ եղանակով, որ գործ են դնում ձեզ արդէն յայտնի Աւանց գիւղի բնակիչները:

Շովի ափին դրանք ունին փորած բազմաթիւ քառակուսի ածուներ: Մի փոքրիկ առուով ծովի ջուրը բերում, կանգնեցնում են առաջինաձուի մօտ: Այդտեղ, մօտ արշին ու կէս բարձրութեան փայտերի վերայ շինւած է մի մաղ: Այդ ջուրը թիակով լցնում են քիչ քիչ այդ մաղը ու անցկացնում առաջին աձուն, այնտեղից էլ նա ման է գալիս, վարպետներին միայն չայտնի եղանակով, միւս մնացած չորս կամ հինգ աձուները, էլի յետ դալիս, էլի քամւում և այլն... Այդ ձևականութիւններից յետոյ մի քանի օր անցած, ամեն մի աձուի վերայ մնում են չոր աղի շերտեր դառը սօղաչի» համով, որոնք և հաւաքւում են ու «բարակ» անունով (չէ՞ դա արդեօք «բորակ») ի վաճառ հանւում: Բարակը գործ են ածում ոչ միայն Վասպուրականում ու մօտակայ նահանգներում, այլ և Պարսկաստանում: Քաղաքացի ու գիւղացի կինը հաւասարապէս գնահատում են բարակի անփոխարինելի ծառայութիւնը սպիտակեղէն լւացքի հա-

մար, որից նա հանում է բոլոր կեղտերն ու «լաքաները» (բծերը) և ձիւնի նման սպիտակացնում: Բարակ ունեցած ժամանակը սապոնը երկրորդական տեղ է բռնում և մի երկու անգամ միայն քսում սպիտակեղէնին: Աչքի առաջ ունենալով տեղական ազգաբնակիւթեան աղքատութիւնը և բարակի չափազանց էթանութիւնը, հեշտ է հասկանալ այդ ծովային աղի տնտեսական ահազին նշանակութիւնը: Բարակով է հանուում նաև մարդոց գլխի կեղտը ու պահուում անասունների անպատրաստ կաշիքն ու մորթիքը:

Վան եղած ժամանակս մի ծանօթ վաճառական ինձ պատմում էր, որ մի քանի տարի առաջ, ինքը Թիֆլիս գնալիս՝ մի կտոր բարակ է տարել և ցոյց տւել այնտեղ մի քանի «հասկացող ու գիտուն» մարդոց, որոնք, զանելով նրա մէջ մեծ քանակութեամբ «սողայ», խորհուրդ էին տւել ծանօթիս սկսել բարակի առուտուր Թիֆլիսի հետ: Վաճառականը մեծ փափագ ունէր հետևելու նրանց խորհուրդին, բայց իւր գործերի ձախորդ գնալու պատճառով ձեռք քաշեց այդ մտադրութիւնից: Այստեղ նրան հասկացրել էին, որ բարակը կը ծախուի ոչ միայն լւացքի, այլ և նրանից ղեղազործական յայտնի սողան հանելու համար:

Բայց բարակը կ'արտադրուէր անհամեմատ աւելի մեծ քանակութեամբ ու կը ծախուէր ամենաշնչին դնով, եթէ չըլինէր մի նշանաւոր խոչնդոտ: Բանն այն է, որ բարակ պատրաստելը մի դաղտնիք է և դարերից ի վեր յայտնի միմիայն Աւանց գիւղի բնակիչներին...

Ի՞նչ գաղտնիք ասես, որ հայն չը հանեց իր սրտից: Բայց Աւանցցի հայն պահեց իր բարակի գաղտնիքը...

Երբէք Աւանցցի բարակահայնը աշակերտ չի պահի իր մօտ մի ուրիշ գիւղում ծնւածին և երբէք էլ ինքը չի դնայ ուրիշ գիւղերի համար, նրանց հաշուով, բարակ հանելու:

Սրանից մի քանի տարի առաջ Դանիէլ անունով մի շատ համակրելի վարդապետ (բնիկ Ալէքսանդրապօլցի, միաբան Վարազայ վանքի) վերանորոգեց Արձակի ս. Աստուածածին վանքը և կամեցաւ այդ Արձակու յայտնի լճակից, որ հինգ ժամ հեռու է Վանից, հանել չիշեալ բարակը: Ստուգւեցաւ, որ լճակի ջուրը շատ նման բաղադրութիւն ունի Վանայ ծովակի ջրին:

Սկսեցան երկար բանակցութիւններ Աւանցցիների հետ և նրանք մերժելով մերժեցին հայր սուրբի խնդիրը՝ որ և է պայմանով բարակի պատրաստելը ուսուցանելու վերջինին: Երկար թախանձանքներից յետոյ նրանք վճռեցին երեք մարդ ուղարկել իրանցից, որ վանքի համար բարակ հանեն լճակից, բայց այն պայմանով, որ ոչ հայր սուրբը և ոչ Արճակեցիք հետամուտ լինեն նրանց գաղտնիքին...

Նրանք ստանում էին միմիայն իրանց վարպետութեան, մշակութեան օրավարձը և ոչ այլ ինչ: Բայց մի տարուց յետոյ, Աւանց գիւղի համախօսական վճռով, այդ երեք վարպետները յետ կանչեցան և սուրբ Ասողաճաճին վանքը մինչև օրս էլ մնում է զրկւած այդ կարևոր արդիւնքից...

Բայց չեմ կարծում, որ եթէ մի գեղեցիկ օր քիմիկոսները ձեռք զարկէին Վանայ ծովակին, — նրանք վնաս քաշէին Աւանցցիների մըրցումից:

Ի դէպ է այստեղ ասել, որ հայ նաւադործների, նաւավարների ու բարակահանների հայրենիք Աւանց գիւղը մի սքանչելի տեսարան է ներկայցնում իր զւարթ այգիներով, մաքուր, բարձրադիր տներով ու լայն փողոցներով՝ Վանայ ծովակի ափին: Գիւղը ունի նաև, ի հարկէ, իր սեպհական արտերը, իր երկրադործներն ու այգեպանները, բայց նա՛ աւելի մի ծովափնեայ անգլիական փոքրիկ քաղաքի, քան մի հայկական գիւղի է նմանում: Նրա այգիներում կարելի է գտնել Վասպուրականի ամեն տեսակ բարեհամ պտուղները. իսկ նրա բնակիչների մէջ՝ անգլիացի նաւաստիների լուրջ, ինքնապաստան, անվեհեր ու անկեղծ սրտերը:

Աւանցը մի բոլորովին ուրիշ տեսակ նմուշ է լայնատարած Հայաստանի գիւղերում:

Վանայ ծովակը մեծ ազդեցութիւն ունի իր շրջակայ երկիրների օդի ու կլիմայի վրայ:

Նա մեղմացնում է ու բարեխառնում Վասպուրականի խիստ ու չոր օդը՝ իր գոլորշիներով:

Նա մի անմահական զեփիւռ է սփռում ամեն գիշեր՝ արևա-

մըաից յետոյ՝ Վասպուրականում, իսկ ամբողջ օր՝ արևածագից յետոյ՝ Մշոյ դաշտում:

Նա՛ իր կանոնաւոր քամիներից առաջացած այդ զեփիւռով՝ մաքրում, տանում է իր շրջակայքի թոզն ու կեղտը, օդի ամեն տեսակ ապականութիւնները:

Նա, իր համեստ կարողութեան չափ, թուլացնում է Հայաստանի սառնամանիքը ու ևս աւելի զովացնում նրա հրաշալի, զւարթարար ամառները:

Նա, միացած իր շրջակայքի պերճ ու շռայլ բուսականութեան հետ, մի Եդեմական դրախտի է փոխարկում հին Հայաստանի մի շատ կարևոր մասը:

Այս բոլորից յետոյ ես կը ցանկայի խօսել նաև այն ազդեցութեան մասին, որ արել է Վանայ ծովակը իր Ախթամար, Կտուց, Լիմ և Առտէր կղզիներով՝ իրան շրջապատող ժողովուրդների վրայ, բայց այդ, ինչպէս նաև յիշեալ կղզիների նկարագրութիւնը, ես վերապահում եմ իմ յաջորդ գրած քերթին:

Ա Բ Ե Ղ Ա Յ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆՅԻ

Սերեցեալ զընկեր քո երբև զանձն քո:

Ասէ ցՅիսուս. և ո՞վ է իմ ընկեր: Պատասխանի ետ Յիսուս և ասէ, այլ մի իջանէր յերուսաղէմէ յերեքով և անկաւ ի ձեռս առաջակաց, որք մերկացուցին զնա և վէրս ի վերայ եղին, Թողին կիսամահ և զնացին...
Աւետարան:

I.

«Յիշում եմ, յիշում, օրիորդ, ես այն
Գիշերն ու կաղնին, որի տակ չոքած
Երգւեցայ ես ձեզ սիրել յաւիտեան,
Որպէս չէ սիրել ոչ մի արարած:
Անցան այդ օրից երկար տարիներ,
Ես բոլորեցի հայրենի աշխարհ,
Տեսայ այլ մարդիկ, այլ դէմք ու աչեր
Ու ձեր սէրն անցաւ անհետ ինձ համար:
Նենգեցի ես ձեզ... Մի՛ խնդրէք զուր ինձ,
Ոչ աչք արտասուող, ոչ սիրտ աւերւած
Կարող չեն դարձնել ձեր գիրկն ինձ նորից—
Ես ձեզ վաղուց եմ վաղուց մոռացած:

II.

Իբրև հուր աղօտ շիջաւ ձեր պատկեր,
Երբ գերեց ուրիշն իմ սիրտն ու հոգին.
Եւ հիմա արդէն ցերեկ ու գիշեր

Նա է միշտ կանգնած աչքիս առաջին.
 Նորան է միայն իմ գիրկըս բացուում,
 Նորան եմ սեղմում կրթօքիս կարօտով,
 Նորա՛ շուրթերն եմ անվերջ համբուրում,
 Ես շունչ եմ առնում միայն նորանով:
 Բայց մի նախանձէք, օրիորդ. նորա
 Համար չէ ժըպտում այս ուրախ աշխարհ,
 Ու թէ գիտենաք ինչպէս խեղճ է նա,
 Ինչպէս տարաբաղդ, սղքստ ու թըշւան:

III.

Ես ձեզ կը պատմեմ դառն պատմութիւն
 Բորբոքւող սիրոյ, որ անգըլթաբար
 Չարչարում է ինձ ցուերով անհուն
 Ու կը չարչարէ դեռ երկար երկար:
 Գուցէ կը ներէք դուք այն ժամանակ,
 Որ ես դըրժեցի երգումըս տըւած,
 Որ յանձն առայ ես խաչ ու չարչարանք՝
 Քաղցր ընտանեկան վայելքը թողած.
 Գուցէ կ'իմանաք, որ կայ մի այլ սէր,
 Որի առաջին սէրը կանացի
 Հանգչում է, որպէս լուսին ու աստղեր
 Յաղթական շողովն արևածագի:

IV.

Գա սէրն է ճընշւած, մոռացւած մարդու...
 Ես տեսայ նորան մի օր ծերունու
 Խորշոմած դէմքով կանգնած փողոցում՝
 Ամօթահարւած նա ձեռք էր մեկնում:
 Նորա լայն թիկունք, նորա բարձր հասակ,
 Թէև կորացած տարիների տակ,
 Վրկայում էին, որ անշուշտ մի օր
 Եղել էր նա քաջ ու կրտրիճ բանւոր:
 Անշուշտ չէր ծնւել այդպէս նա մենակ,
 Նա ունէր գուցէ և կին և գաւակ,

Ունէր բարեկամ, ծանօթ, ազգական,
Ժառանգած հօրից մի յարկ սեպհական:

V.

Բայց ո՛ւր են դռքա... Ո՞ր ձեռքն անօրէն
Խլլեց նորանից օրական պարէն,
Ո՞վ քարշեց նորան հայրենի յարկից,
Ո՞վ յափշտակեց որդու գըզւանքից:
Այդ վաղուց էր շատ. երևի ինքն էլ
Կարծում է հիմա լըսած առասպել
Խաղաղիկ օրերն հայրենի գիւղում,
Հեռու մոռացւած սարի ծերպերում:
Եւ ո՞վ ձեզ կ'ասէ--դէպի ո՛ւր հիմա
Գողգոզուն քայլով երերում է նա
Քաղցած, ծարաւի, մերկ, անհարեկից,
Վաղուց դուրս ձրգած մարդկութեան հաշուից:

VI.

Գնում է... Արդեօք գոնէ մի անգամ
Պատահել է ձեզ մընալ տարածամ
Գիշերեան պահուն ճանապարհներին,
Մինչ կատաղութեամբ շընչում է քամին,
Մինչ մըռայլ ամպեր ծածկում են երկինք,
Մինչ չարագուշակ բուք ու փոթորիկ
Պըտոյտ են անում ձեր շուրջն երգելով
Մեռելաթաղի նըւագ կազմելով.—
Այնտեղ է, այնտեղ գընում ծերունին:
Ու թող նա գնայ... Մահաշունչ քամին
Գըլթած կը լինի, գուցէ, մեզանից,
Կը փըրկէ նորան այդ դառն օրերից:

VII.

Եւ որքան այդպէս անտոհմ և անզարմ
Ձեռք են կարկառում մեզ ըտտեղծւածներ.
Իբրև ոսկըր շան, մի մանրիկ դըրամ

Զրգում ենք, անցնում դէմքով անտարբեր:
 Ախ, գէթ մի վայրկեան կանգ առէք այդտեղ,
 Նայեցէ՛ք նոցա վառւող աչերին,
 Որքան ցաւ, կրսկիծ, չարչարանք ահեղ
 Կը կարգաք նոցա խամրած դէմքերին,
 Կը կարգաք արդար գանգատ ձեզանից,
 Բողոք ուղղըւած ամբողջ մարդկութեան,
 Որ խըլեց նոցա տուն ու սերընդից
 Ու ձրգեց աշխարհ անտէր, անպաշտպան:—

VIII.

Ես տեսայ նորան մի այլ օր—մանկան
 Թոյլ ու նիհարիկ մարմին ըստացած,
 Սեղմըլել էր նա այն միակ գըրանն,
 Ուր հաւաքուում են մերժւածն ու զըրկւածն:
 Բաց գըլուխ և կուրծք, մերկ սըրունգ ու ոտ
 Այրւում էին վառ արևի տակին,
 Տարիների կեղտն ու վէրք ժանտահոտ
 Ծածկում էին խիտ անխընամ մարմինն.
 Աչքերը հանգած, երեսը դալուկ,
 Խոնարհած գըլուխն, իբրև մեղապարտ,
 Կանգնած էր այնտեղ տարաբաղդ մանուկ—
 Մարդկութեան մեղքի այդ զոհն անարատ:

IX.

Ես ճանաչեցի.—դա նա է, որին
 Դեռ ևս արգանդում անիծում է մայրն,
 Որին արցունքով, տըրտմութեամբ խորին,
 Իբրև հիւր անկոչ, բերում են աշխարհ.
 Դա նա է, նա է, որին ըշտապով
 Մուտ ու մըռայլի գաղտուկ ժամերին,
 Օրօրոցի տեղ գընում են քարին
 Ծընընդեան օրից ցաւին մատնելով:
 Եւ Ասուած գիտէ թէ ինչպէս դոքա

Շուն ու գազանի ազատւած ճանկից
 Դեռ ման են գալիս աշխարհի վերայ
 Թէև հալածւած, մերժւած ամենից...

X.

Քար չէր իմ սիրտըս, օրհորդ. այդ օր
 Շրջում էի ես խելագարի պէս,
 Ես լալիս էի մոռացած բոլորն—
 Ինձ տանջում էին ցաւեր աղեկէզ:
 Առաջին անգամ ահա այդ օրեր
 Ըզգացի, որ լուռ է սէրդ իմ սըրտում,
 Որ ապագայի երազած պատկեր
 Իւր դիւթիչ ուժովն այլ չէ գրաւում,
 Ըզգացի ամբողջ մարմնովս ու հոգով,
 Որ կեանք անձնական, վայելք ու բարիք
 Կարող չէին ինձ անել երջանիկ
 Պատած-պաշարւած տառապեալներով:

Բ Ա Պ Ե

Պ Ե Ր Ճ Պ Ռ Օ Շ Ե Ա Ն Ց Ի

Նուէր մեծ, բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցին:

(Շարունակութիւն 1)

ԻՍ.

ԶԱՐԳԱՐ ՍԻՄՈՆԸ

Բարի և հեղահամբոյր մարդ էր Զարգար Սիմոնը. նորա ծննդավայրը մինչև այսօր էլ ամենքից անյայտ մնաց, բայց լսեցբեկ բարբառը, լեզուի տակին ոլորուող բառերը, վարդակարմիր կիսաբոլորակ դէմքը, խնամքով պահպանուած, ծիծեռնակի թևից աւելի թուխ, սրածայր ընչացքը, կոնաձև, մի կողմը ներս ծալած Բուխարայի թանգագին մորթուց գլխարկը, մուգ կապտաւուն թևաւոր չուխէն, այս ամենը նրան մասնում էին, որ Ղարաբաղի կողմից մի եկաւոր էր:

Սկզբներումը Սիմոնը մի թափառաշրջիկ վարպետ էր՝ իւր համարուեստ շատերի նման. նա ձմեռները դաշտային գիւղերումն էր մի փոքրիկ սենեկի մէջ բաց անում իւր խուրճը, գետնի մէջ ամբարացնում փոքրիկ սալը (գնդան), իսկ ամառները լեռնային հով ու գով գիւղերի հիւրն էր լինում:

Նա շինում էր պղնձեայ, կամ արծաթեայ դիւրագին գիւղա-

1) Տե՛ս «Մուրճ»-ի 1889 թ. № 12 և 1890 թ. № 1, 2, 3:

յարմար մատանիք և ապարանջաններ, փոխանակում էր ցորենի, իւղի և ուրիշ տեղական բերքերի հետ և գեղջկական նորատի հարս ու աղջիկներին զարդարում:

Ուստա Սիմոնը հմուտ էր իւր գործին. պատահում էր, որ նա ոսկի զարդեր ևս պատուէր էր ստանում նշանադրութիւնների և հարսանիքների համար. նորա ձեռացաջուրն ամենքից հաւանութիւն էր գտնում:

Չը գիտեմ՝ աւչի (արտոգ) Փիլումի Սիրամարգ աղջկայ գեղեցկութիւնն էր, թէ թափառականութիւնից ձանձրոյթ զգալը, բայց այդ երկուսից մէկը խլեց ուստա Սիմոնի ուսից պանդխտութեան խուրճը, կոխեց նրան Աշտարակու տներից մէկը, տանտէր շինեց և հաստատ գործի կանգնացրեց:

Հաւանական է, որ Սիրամարգի, (առաւել լաւ է զիւղական կոչումով ասենք) Սիմիղարի բարձր հասակը, կեռ-կեռ յոնքերը, գրաւիչ աչքերը, քնքոյշ և սպիտակ մորթը յափշտակեցին երիտասարդ զարդարի ուշքն ու միտքը, երբ նա, Փիլումի երկայնափող, բազա սարայ, անսխալական հրացանն արծաթի օղերով զարդարելուց յետոյ՝ մի օր էլ պատուէր ստացաւ չափել նորա հրեշտակագեղ զուսար Սիմիղարի հոլանի բիլակը (չեռ-էր արտոգ), հնուց մնացած ջարդ ոսկիներից աղջկայ համար մի ապարանջան շինելու:

Այդ արտակարգ դէպքին էր պարտական ուստա Սիմոնը, որ տեղը պնդացրեց, Աշտարակից զուրս քայլ չ'արեց. ապա թէ ոչ, Ղարաբաղու զաւակը գաղթականութիւնից ձանձրացողը չէ:

Այսօր իսկ, ո՛ր գիւղը կամենաս՝ գնա՛, ո՛ր քաղաքումը կը ցանկանաս՝ հարցրո՛ւ, եղած օտարականների մեծամասնութիւնը զարաբաղցիներից է կաջացած. զարաբաղցիք են, որ բնատուր խելքով և ճարտարութիւնով զանազան միջոցներով փող են աշխատում. վաճառական, արհեստաւոր, աշուղ, կապալառու՝ գլխաւորապէս ամեն հողում, ամեն երկրում զարաբաղցիք են:

Սկզբներումն այս մարդիկն իրանք միայնակ էին շրջում՝ չ'ընդհատուելով իսպառ իրանց սիրելի լեռ ու ձորերից, մի տարի, երկու տարի քարշ էին գալիս և մի օր էլ մոքները բերած հայրենիքումը թողած սիրասուն զերդաստանը, շտապում էին գրկել նրանց ու իրանց կարօտը լցուցանելուց յետոյ՝ կրկին պանդխտութեան դա-

ւազանը ձեռք առնել. իսկ վերջերումս՝ մի կորստաբեր սովորութիւն հայրենիքի խորթ և ասերախտ զաւակի յատկանիշ է ընծայում նրանց:

Այժմ զարաբաղցի թափառականն իւր ընտանիքն էլ հետն է քարշ ածում:

Իիւզ չը կայ այսօր, ուր չը գտնես տեղական կանացի զարդ ու պանծունքներինց որոշուող մի կնոջ գլուխ՝ հարիւր գոյնզգոյն մետաքսեայ թաշկինակներով փալանած, չը գտնես մի կին՝ ոսկի կոճակով, կարմիր բեհեզեայ շապկով և չաքաւոր արխալղով: Դա զարաբաղցու կին է՝ Ղարաբաղի գիւղերինց, կամ Շուշուայ—Ղալից այստեղ վերաբնակուած:

Ուստա Սիմոնները բացառիկ երևոյթներ են: Ընդհանրապէս Ղարաբաղի ժամանակաւոր պանդխտութեան դիմողներինց շատ սակաւներն ամուսնանում են օտարացիների հետ: Այլ բան է, եթէ նոքա Սիմոնի նման բոլորովին գաղթել են իրանց ծննդավայրինց:

Տարիներով բացակայում էր, ասացինք, առաջ, զարաբաղցին ընտանիքինց, բայց միշտ աչքը դէպի յետ էր՝ դէպի իւր սիրելի կինն ու զաւակը, և գուցէ, այդ ընտանեւորութիւնն է, որ դժուարացրած թափառականութեան արհեստը՝ ստիպել է շատերին գերդաստանը կատուի ձագի նման բերաններումը բռնել և պտտեցնել աշխարհէ աշխարհ:

Աշտարակը չէր միացն, որ սիրում էր ուստա Սիմոնին իւր քաղցր բնաւորութեան և ճշդասիրութեան համար. նա միշտ պատուէրներ էր ստանում և շատ հեռաւոր տեղերինց:

Առանձին խանութ չ'ունէր զարգար Սիմոնը. նորա փոքրիկ սենեակն էր իւր ընդունարանը, ննջարանը և խանութը:

Մի անկիւնում, դրան մօտ, նա իւր ձեռնափուքն էր վայր թողել, միւս կողմը՝ իւր ամօթխած ջահէլ կինն էր պատի մէջ շինած փոքրիկ կրակարանի վերայ կաթսան դրել, երկու հոգու համեստ ճաշը պատրաստում. մի կողմին էլ Ղարաբաղինց հետը բերած փոքրիկ գեղեցիկ զորգի վերայ իւր այցելուներին էր ընդունում:

Այս ձմեռն էր. ամառները նա գործում էր բակումը՝ չարդախի հովումը:

Ուստա Սիմոնի բնաւորութեան հետ ընտելացել էր ողջ գա-

ւառը. ամենքը զիտէին, որ երեկոցեան զանգակը տալուց յետոյ՝ մինչև միւս առաւօտեան ժամերգութեան վերջը՝ արհեստին վերաբերեալ գործով նորա մօտ դալ անհնարին է: Այս լի օրերն էին: Կիւրակէ և տօն օրերն ինքն ըստ ինքեան հասկանալի են: Այդպիսի գործից ազատ ժամանակներն ուստա Սիմօնի այցելուները լինում էին իւր սրտակից բարեկամները, որոնց հետ նա սիրում էր ուտել, խմել, զուարճանալ և իւր բարձր ու քաղցր երգերով ու բայաթիներով ամբողջ բերրութաղը թնւագնել:

Մի ամարային երեկոյ, բաւականին ուշ, մինչ զարգար Սիմօնը դեռ նոր վերջացրել էր իւր զիշերային «Պաղաղականի» աղօթքը և պատրաստուում էր անկողին մտնել, նորա բակի դուռը բաղխեցին:

Այդ ժամանակ, տեղական սովորութեան համաձայն, ուստա Սիմօնը կտերն էր քնում:

—Ո՞վ էք, ձայն տուեց զարմացած ոսկերիչը:

Բաղխողը չի պատասխանում. դրան հարուածները դադար առան: Սիմօնն էլ իւր կողմից է սպասում պատասխանի:

Նորից բաղխումը շարունակուեց:

—Ո՞վ ես, եղբայր:

Լռութիւն է:

Ուստա Սիմօնի համբերութիւնը հատաւ, նա կտրիցն իջաւ բակը և դրան սողնակի ծակից կրկնեց իւր հարցմունքը:

—Բաց արա՛, ուստա Սիմօն, գործ ունիմ հետդ:

—Ո՞վ ես:

—Ընչի՞դ է պէտք, քեզ համար գործ եմ բերել:

—Ի՞նչ գործ:

—Զարգարի:

—Զարգարի հետ էգուց չէ՛ էլօր կարող ես տեսնուել, էս ժամանակ զարգար Սիմօն չը կայ տանը. հիմի աւչի Փիլումի փեսայ Սիմօնն է դնում իւր կռներին հանգիստ տալու, զարգար Սիմօնը տանը կը լինի վաղը չէ միւս օրը, չորեքշաբթի, առաւօտեան ժամից յետոյ. կարող ես դալ, հետը տեսնուել:

—Ախար ինչո՞ւ համար:

—Թէ դու հայ ես, կ'իմանաս որ էգուց կիւրակի է:

—Սխալ ես, ուստա՛, երեքշաբթի է:

—Սխալը դու ես, հզուց հայի համար մեծ օր է, Սահակ, Մեսրոպի տօնն է. ասնեք տօնացոյցի մէջ կիւրակի չի նշանակած, բայց ես մեր աշխարհքումը մի քանի շաբաթ ջահէլ ժամանակս կարգալու էի գնում մեր վարդապետի մօտ, նա ինձ հասկացրել է, թէ Սահակ, Մեսրոպն ի՞նչ մարդիկ են եղել, ի՞նչ լաւութիւն են արել հայի համար. լուսահոգին հրամայեց, որ հզ օրը միշտ կիւրակի պահեմ, ես էլ կատարում եմ. ինձ ի՞նչ, թէ ես աշխարհքումն ոչով չի պահում:

—Տօ՛, եղբա՛յր, հաց ասա՛, ոսկի ասա՛, կիւրակիս ո՛րն է, հալալ կիւրակիքն էլ որ պահես, քեզ հերիք է:

Սիմօնն ուշք անգամ չը դրեց սողնակից լսուող փսփսոցին, որի մէջ «ոսկի» բառը մի քանի անգամ շեշուեց. նա շտապով վեր բարձրացաւ կտուրը և սկսեց շորահան լինել:

—Մեղա՛յ քեզ տէր, բարկացաւ կարից ուստա Սիմօնը, երբ դրան բաղխինքը նոր ի նորոյ շարունակուեց:

—Եղբա՛յր, քեզ չե՞մ ասում՞ զարգարը տանը չի, ի՞նչ ես գլխացաւանք տալիս, հէնց հիմի ձայն կը տամ, ողջ թաղը գլխիկ կը հաւաքեմ, քաշուի՛ր, հեռացի՛ր:

—Աստուծոյ հիւրն եմ, պանդուխտ ճանապարհորդ եմ, զիշերս դուրսն եմ փնացել, ուստա Սիմօն, մի՛թէ դու հայ-քրիստոնեաց չես, որ էս կէս գիշերին օտարականի վերայ դուռն երեսին փակում ես. ինձ համար շատ տեղ չի հարկաւոր, մի անկիւնում կուչ կը գամ, առաւօտը կերթամ իմ ճանապարհը. ես կատակ էի անում, քո հաւատք էի փորձում, թէ չէ այս ի՞նչ զարգարի մօտ գալու ժամանակ է:

Այս խօսքերը Սիմօնի առաջը դրեց անծանօթը՝ երկրորդ անգամ սպառնալիք տալուց յետոյ:

—Հիմի, ով և լինիս, իմ գլխի, իմ աչքի վերայ տեղ ունիս, համեցէ՛ք, ասաց ուստա Սիմօնը դուռը բաց անելով և ինքը յետ դարձաւ, կայծաքարը ձեռքն առաւ, ճրագը վառեց:

—Բարի երեկո՛յ:

—Օ՛հ, Բղդէ՛, դու ե՞ս, այս ո՞րտեղից էսքան ուշ:

—Կարբուց, ուստա Սիմօն, Կարբուց, ուղիղ քեզ մօտ, քո դուռն եմ ընկել. գլուխս կորես՝ հակառակողը չեմ, պէտք է ինձ խելք սովորցնես, բացի քեզանից ոչ ոք ինձ օգնել չի կարող:

—Տօ՛, սատանախաբ Կարբեցի՛, դու խելքի համար ինձ մօտ կը դա՞ս, օրական քանիսի՞ գլուխն ես անլուաց կլեկում, հացը ձեռքիցն առնում, ճանապարհ դնում. ո՛վ գիտի, էլ ինչ հատիկ ունիս թակելու, մի փորացաւանք կ'ունենաս, ասա՛ տեսնեմ:

—Ձէ՛, դեռ առաջ քո օրհնած բերանով, ինչպէս Տէրն ինքը ճշմարիտ է, խօսք տո՛ւր, որ խնդիրս կը կատարե՛ս:

—Սխար ի՞նչ գործ ունիս:

—Դեռ քո կորական խօսքդ ինձ բաշխի՛ր:

—Իսկ եթէ խնդիրդ իմ ուժից վեր լինի՞:

—Տանիցդ խռկի՛ր, դուրս քշի՛ր:

—Խօսք եմ տալիս, ստիպուեց ասել ուստա Սիմոնը:

Մի բռնաչափ ոսկի թաշկինակի մէջ փռուեց Սիմոնի առաջին: Սիմոնը մի հատ վերցրեց, զննեց և ասաց.

—Դշտոյն շեղինէի փոս ոսկի են, սրանք թանգադին բաներ են, ամեն մինը տասը մանէթից աւել կը կշռեն, իսկ հասկացողի համար մի հաար հարիւրներ կ'արժեն. սրանք հին սի.ք.քեա են, Յռանդներն ու Ինգլիզները պղնձէ հին ժանգոտած սև փողին մանէթներ են տալիս, էս հօ՛ ոսկի է. նրանցից մի երկու հողի Սբարանով անցկենալուս՝ մօտս եկան և ինձանից խնդրեցին. ամառ էր, ես կալումը նստած՝ գործում էի:

—Հիմի էդ մարդիկը ձեռք ընկնողը չեն, Յռանգստանը հեռու է, դու ուրիշ խորհուրդ տո՛ւր:

—Ի՞նչ ես ուզում:

—Ընչի՞ր չես հարցնում՝ ո՛րտեղից են:

—Իմ ի՞նչ ցաւն է, քո ձեռքին է, քո ապրանքն է:

—Սխա՛ր գտել եմ:

—Բարով վայելես:

—Ուղիդ եմ ասում, եղբա՛յր:

—Ես խօսքիդ իսկութեան համար կասկած չը յայտնեցի՛:

—Բողոքն չխուն հատ է:

—Թէկուզ հազար լինի, ինձ համար միևնոյն է:

—Ի՞նչ անենք, որ կարողանանք մխտել:

—Տար դիւանի (Գանչարանի) առաջը դի՛ր:

—Որ ձեռքիցս առնե՞ն:

— Ես լսել եմ, որ կէսը քեզ կը տան:

— Եթէ չը տուի՞ն:

— Այդ էլ քո գործն է:

— Իսկ եթէ հալենք, ոսկու տեղ ծախե՛նք:

— Ո՛ւժ ձեռքը կը զօրի դրանց հնոցի մէջ դնել հալել:

— Ուստա Սիմոնի:

— Ասենք էդ մեր գործն է, բայց ուստա Սիմոնը գլուխը քարովը կը տայ ու էդ սխալը չի անիլ. ես, իրաւ է, իմ կեանքումս շատ փողեր եմ ջարդել, հալել, ոսկեղէն, արծաթեղէն շինել, բայց նրանք բոլորը նոր փողեր են եղել, որոնցից շատ կայ, իսկ դշտոյն Հեղինէի փոս ոսկի, քանի խելքիս տիրացել եմ, մի հատ եմ տեսել, ես էդ բանը չեմ անիլ:

— Էս բոպէիս դշտոյն Հեղինէն մեզ հաց չի տալ, ուստա Սիմոն, սրանց մտխելու հնարքը գտի՛ր:

— Եթէ հալալ մարդ ես, ինչպէս ասացի, պէտք է դիւանին յայտնես, կը գնահատեն, կիսի արժէքովը քեզ փող կը տան, չիտունի կէսը մօտ 200, 250 մանէթ կը բռնի, էլ ընչի՞ քո բաժին Աստուածանից գոհ չես:

— Ամենից լաւն այն է, մէկը քեզ վերցրո՛ւ, Ծռանգների վերայ թանգ գնով կը ծախես, մնացածը հալի՛ր, ինձ տո՛ւր, բայց այն պայմանով, որ հալելու ձեն ինձ սովորցնես. ո՛վ գիտէ, աշխարհք է, կարելի է բաղդս կտրում է, էլի եմ գտնում, ամեն անգամ քեզ ընչո՞ւ զլխացաւանք տամ, քնահարամ անեմ:

— Հասկանում եմ, շատ ունիս ու ինձանից թազցնում ես. Աստուած քեզ հետ, ես քո ասած մարդը չեմ, ուժ որ խաբել ես, էլի նրան խաբի՛ր, ես ոչ կը հալեմ, ոչ կը սովորցնեմ:

— Ի՞նչ է, մի հատը քի՞չ ես կարծում. էս ոսկի՛ է, ո՛սկի, մի դատարկ հալելու համար մէկը վերցնելը նա՞ղ ես անում:

— Էդ քո մի հատ ոսկին տա՛ր մաճնի տուր, գլուխդ քսի՛ր:

Իզդէն խիտ ալլալուեց վերջին վիրաւորական առածի վերայ. նա այս խօսքն այսօր երկրորդ անգամն էր լսում:

— Ուստա Սիմոն, ընչո՞ւ ես ինձ անպատիւ խօսք ասում, էս առուտուր է, չես ուզում հալել, քո կամքն է, ի՛նչն է շատ՝ զարգարը, շանը խփում ես՝ զարգարների վերայ է հաչում, դու չէ՛ քո՛

հօրեղբոր որդին կը հալի. ծանօթ, բարեկամ մարդիկ էինք, քեզ մօտ բերի, որ օգուտը դու տեսնես, մէկը քիչ ես համարում աշխատանքիդ վարձ, երկո՛ւսը վեր կալ, միայն էլի՛ ասում եմ, հալելը սովորցրո՛ւ:

—Ա՛ռ, քաշուի՛, ասում եմ, քանի տանուտէրին չեմ բերել, գլխիդ կանգնացրել, էդ սուզացրած ջիւերդ դարտակել տուել. ես քո երեխէ՛ն եմ, որ խաբում ես. չէ՛ որ գողացած աքլորիդ պոչը, վաղի մօլլի նման, փէշիդ տակիցն երևում է. դէ՛ զնա՛, ես ոչ թագաւորական փող ուտող եմ, ոչ գող եմ, ոչ գողի ընկեր եմ. մեր ճակատի քրտորնքով Աստուած մի կտոր հալալ հաց է տուել, թող էն ո՛չ կտրուի իմ գլխիցը. քո ասած մարդն ես չեմ, ես հայ քրիստոնեաց եմ, հայը գողութիւն չի կարող անել, անի էլ՛ չի կարող պարտակիլ:

—Ես էլ քեզ պէս հայ եմ, ուստա Սիմոն, քեզ ասացի, որ գողացել չեմ, գտել եմ. իմ բազդս էր՝ Աստուած ինձ տուել է, ընչի՛ պէտք է տանեմ խազինէն (գանչաբանը) տամ:

—Գնա՛, եղբայր, գնա՛, ում որ կեղծաւոր փարիսեցութիւնով մինչև օրս խաբել ես, էլի նրանց գլուխը կլէկի՛ր, քո ուղածն ես չեմ, քեզ ընկեր կարող է լինել Երևանցի զարգար մաշաղի Ռաջաբը, որ երկար շուկայումը խանութ ունի. էս դաւառի բոլոր ճանապարհ կտրող աւազակների կողոպտածը նորա փորն է մտնում, նորա ձեռովը է պարտակում, նա ինքն է հալում. հինգ անգամ դիւանի ճանգն է ընկել, բայց էլի գլուխը դուրս է պրծացրել, նորա համար, որ Երևանի զուլուղի մարդկանց կնանոնց մատներն ու վիզը նորա ձեռքովը են զարգարուած:

—Իմ ուղածն էլ հէնց դա՛ է, հալալ է նորա կերածը, մարդն էդպէս պէտք է լինի, քեզ պէս իւր հացին քացի տուողը քեզ պէս ձեռը դատարկ կը մնայ. մնա՛ս բարեւ, շատ լաւ տեղ սովորցրիր:

Այս խօսքերով Բղդէն ոսկիքը կապեց ու դուրս եկաւ Սիմոնի մօտից:

ԻԲ.

ԷՍՕՐ ԲՕՇԱ, ԷԳՈՒՅ ՓԱՇԱ

1850 թուականների առաջին կիսումն ենք. Երևանու երկիրն ինքն իրան չի նմանում, աշխարհն արիւնի մէջ ծփծփում է:

Շատ ժամանակ չէ այս տարապայման և տարադէպ փոփոխութիւնը. պատմութիւնիցս դեռ մի քանի օր յառաջ՝ դառն ու գայլը միասին էին արածու՛մ. մարդիկն իրանց սովորական աշխատանքի հետ էին, իսկ այսօր, ո՛ր կողմը դառնում ես՝ մտքերն յուզուած են և ուշադրութիւնները լարուած:

«Ալէքսանդրապօլ, Կարս, Օսմանցի, Բէհբուզով, զօրք, ասկեար.» — ահա՛ այն խօսքերը, որ ամեն անկիւնում ականջներդ չորս շինած՝ լսում ես ու զարմանում:

Ներկարարի լեղակի կարաս չի խանգարուել¹⁾, լուրերը շինծու և ստեղծովի չեն. կատարուած դէպքերը, գիւղերում մտած կենդանութիւնը հաստատում են իրողութիւնը:

Ի՞նչ է այս:

Ամեն տեղ խօսում և պատմում են, թէ իշխան Բէհբուզեանը թուրը հանած՝ ոռուսի զօրքի առաջն է ընկել, Ալէքսանդրապօլու բերդումն և շրջապատումը բանակներ տուել, Ախուրեան գետի այս կողմի ավերքը զինուորներով լցրած՝ պատրաստուում է այս օր կամ վաղը, էս րոպէին, կամ միւս ժամին գնալ Օսմանցուի դէմ պատերազմը. պատմում են նոյնպէս, ճշգրէն, թէ չափազանցացրած՝ որ գետի միւս երեսին ծածկի ասկեարի (չօրք) կարմիր Փասերի շատութիւնից՝ հեռուիցն էլ ուրիշ բան չի երևում, կարծես, դիտմամբ դաշտ ու սար լալազար ծաղիկ, կամ կարմիր պուտ ցանած՝ լինի, կամ շիլա է փռած:

Պատմածներին ոչ մինն առասպել չէ, հաստատ փաստ է, որ 50 թուականների պատերազմն անսպասելի կերպիւ մեծ ուժգնութեամբ յանկարծ յառաջ մղուեց և մեր աշխարհի ամեն անկիւնը շարժման մէջ դրեց:

Թէ քաղաքական շրջաններում քանի՛ ժամանակ էր այս հարիւսան կփուում ու հարուում, այդ ժողովրդի խելքից և մտածողութիւնից վեր էր և Վովկասեան համայն բազմատարր և բազմալեզու ազգաբնակչութիւնների համար միանգամայն անմատչելի, սակայն այսօր այլ ևս գաղտնիք չէ, ողջ աշխարհն եռում է, մարդակեր

¹⁾ Ըստ աւանդութեան՝ ներկարարի ներկի կարասը խանգարուելու՛մ մընչն մի արտասովոր սուտ չը հուշակեն, չի ուղղուել, ներկը չի բռնիլ:

պատերազմը կամ սկսուել է, կամ սկսուելու վերայ է. Ախուրեանի երկու ափերին Ռուսի և Տաճկի անթիւ անհամար բանակներն են նստել և կռուարար խոյերի նման մէկ իրար են դիպչում, մէկ էլ յետ ու յետ գնում առանց երես թեքելու, որպէս զի նորից յարձակումն գործեն, նորից ճակատ ճակատի շրխացնեն:

Աշխարհը ժողովել է Ալէքսանդրապօլ, տեղից շուտ զարթնողը Նիրակ է վազում. աշխատանքի ու շահի տարի է, փող վաստակելու ճանապարհը հարթուել, լայնացել է, ոսկին թիերով են քերում, չ'օգտուիլը խելքը կորցնել կը նշանակի:

Այս ամենը շատ լաւ, բայց մարդիկը բոլորն ատամնաւոր են. արտաքին համագումար շարժականութեան նման մի ներքին կենսական մեքենայ ևս իւրաքանչիւր անթիւ և անփետուր երկոտանու իւր մէջն է գործում, սրանք ամենքն էլ ուտել են պահանջում, քաղցած մնալ չի կարելի, այսքանի կարիքը ո՞րտեղից պէտք է լցուի: Ղիցուք՝ որ Նիրակի ամբարները հազարաւոր տարիներ յառաջ շատակեր Շարաներ են կշտացրել, բայց Շարաներն այն ժամանակը բիւրաւորներ չեն եղել. այսքանին մի՞թէ Նիրակը կը յագեցնի. սրանց մի ձար պէտք է տեսած, թէ չէ քաղցած կը կոտորուեն:

Երկիւղ չ'ունինք այլ կողմից, մեր երկրումը ոչ ոք քաղցած չի մեռնիլ, շէն ու հաստատ մնայ բարեւից և արգաւանդաբեր աշխարհը՝ Երեւնու հողն ու ջուրը:

Ահա հասել է օրը, որ աշխարհի միւս ծայրից մարդիկ հաւաքուին մեր հողումը, ականատես լինին մեր երկրի արգաւանդութեանը և յետ գնան, զարմանքով պատմեն իրանց հայրենիքումը:

Այդպէս էլ եղաւ. կռիւլ բորբոքուեցաւ Նիրակումը և մեր երկրի բերքերն այնտեղ տեղափոխուեցին: Բոլորը խլուեց և կրուեց դէպի պատերազմի դաշտը:

Խլողներն եղան իրանք արդիւնահանողները. նրանք թանգ գնով էին վաճառում իրանց արդիւնաբերութիւնը. եղան դրամատէրերը՝ սրանք գնում էին առաջին ձեռքից և կրկնապատիկն օգտուում. եղան նոյնպէս և տեղական վարչութիւնից կարգուած հարկահանները:

Վերջիններս նպատտում էին պատերազմական պաշարեղէն հալթայթողներին: Կապալառուները ձեռնհաս չ'եղան ճշդութեամբ դուրս տանել իրանց չանձն առած պարտականութիւնը. նրանք կապալը

վերցնելու ժամանակ նախապէս աչքի առաջ չեն ունեցել առաջիկայ պատերազմը և այսօր ընկճուել են ծանրութեան տակ:

Նրանց զիջողութիւն եղաւ, կարգադրուեց, որ տեղացի ժողովրդի կողմից նրանց օգնութիւն տրուի:

Որպէս զի ըստ կարելուոյն շտապեցրուի ժողովրդի կողմից լինելիք գործակցութիւնը, կապալառուները բազմադիմի ներելի և աններելի միջոցների ձգտեցին. նրանք անձնական ներկայութեամբ, կամ իրանց ճարպիկ գործակալների ձեռքով՝ մտերմական յարաբերութիւններ հաստատեցին զիւղական, համայնական և զաւառական վարչական մարմինների հետ, ճնշում գործ դրին միամիտ զիւղականի վերայ, ուսկի յօժարակամ գործակցութեանը պարտականութեան ձև և նշանակութիւն տուին և ծակամուտ բաղդախնդիրների համար որսկանութեան ազատ ասպարէզ բաց արին:

Յաւալի և տաժանելի էր այդ ժամանակ գեղջուկի վիճակը. իւր զառն աշխատանքը—Ատուածոյ տուած բարիքը, որոնցով առատ էր այդ տարին, ուսկի գլխին պատիժ դարձաւ, նորա արդար վաստակն իւր քթերիցն եկաւ:

Բաւական էր, որ անխիղճ կապալառուի ստորաքարչ գործակատարն իւր ոսկով վարձած լրտեսների ձեռքով հոտ առնէր, թէ այս ինչ զիւղում մի որ և է զիւղականի մօտ ամբարած կայ, ինչ տեսակ և լինի միւլնոյն է, հացահատիկ, կամ աղացած ձմեռուան ալիւրի պաշար, — ահա զաւառապետի կամ իւր օգնականի գրագիրը, եասաւուլը, շատ անգամ նոյն պաշտօնատարներից մէկն ու մէկը յանկարծահաս յարձակումն էին գործում, դատարկում էին շտեմարանը, բարձում էին հէնց իրանց պաշարատիրոջ գրաստին և քշել էին տալիս այնտեղ, ուր արիւնը ջրի հետ միացած էր, ուր հազարաւոր մարդիկ բերուածը ուտում, մարսում, սպառում էին և միւս օրը կրկին գտնում էին տեղը լի:

Այդ ապօրինի յափշտակուածի փոխարէն կապալառուն՝ իբրև ողորմութիւն՝ շարտում էր երկրագործի երեսին նախկին էժանութեան ժամանակի զինը, մի վարձատրութիւն, որ այսօր ծաղրալի էր անուանելը:

Շատ անգամ երկուստեք համաձայնութիւն էր զլուսի գալիս կապալառուի և զիւղական ստորին վարչութիւնների մէջ, տա-

լիք աննշան գումարը վերցուում էր մի նորաստեղծ, երեակայական հարկի վճարք և հաւասար կիսուում մեքենաներ լարողների մէջ:

Ձենք իմանում ի՛նչպէս և ի՛նչ ճանապարհով, բայց մի օր էլ ամենքը տեսան մեր կօլոտ չարչուն փերեզակութեան ցնցոտիներն իսպառ մի կողմը ձգած:

Բղղէն զարդարուել էր սև լաստիկի արխալուղով, մի կապտագոյն մահուտ ոսկեայ ժապաւէնով Ձերքեզի չուխայ շատ յարմարում էր իւր անտաշ թիկունքին, և որ ամենից աչքի ընկնողն է՝ ուռսական մի լայն ծածկոցով Քոթմէյ ցցուել էր նորա հաստ գլխին, և ի հարկէ այնպէս էր սագում, ինչպէս կովի վերայ արծաթապատ թամբը:

Այս օրուանից բօշի տղայ սև իշուկը չէր Բղղէի համեստ ընկերակիցը. մի սպիտակ խրինջան վառվռուն Ղարաբաղի նժոյգ էր նորա անտաշ կաղմուածքը պարսկական թանդազին թամբի մէջ գեղեցկացնողը:

Այս կերպարանափոխութիւնը կատարուեց Սալբու տղայի մէջ՝ զարգար Սիմոնի տանից հեռանալուց մի քանի օր յետոյ:

Բղղէի ցանկութիւնը կատարել էր մաշաղի Ռաջաբը. թուրք ոսկերիչը և՛ հալել էր բոլոր ոսկիները, և՛ իւր համարուեստների մէջ ձեռնտու գնով վաճառել էր հալուածքը՝ զանազան զարդեր շինելու համար, տեղը համարել էր Բղղէի առաջ հազարի չափ նորաձոյլ փոշաթաթախ պօլիմսկերեալներ:

Այս դէպքը պատերազմը հրատարակելուց մի քանի օր առաջ եղաւ: Բղղէի առաջին գործն այնուհետև էն էր, որ խսկոյն նա Աշտարակումը մի ընդարձակ խանութ բաց արեց:

— Հիմա թող մրցի ինձ հետ Բատինի թոռն իւր խանութով, թող օգնի ջհուտ Աղաջանն իւր փեսին, շատ չի քաշիլ, աչքդ բաց ու խուփ կ'անես և ահա մի յաճախորդ չի մնալ Բատինի թոռի կրպակում, ասաց Բղղէն և կտաւեղէնի ու մանրունքի բեռները թափեց Աշտարակու տանուտէրի բակումը:

Բղղէն իրան ընկեր ընարեց տանուտէրի որդուն, նորա սենեակներից մէկը դարձրեց կրպակ: Այս թէ ձեռնտու էր ՍՅօջի դէմ մըրցումն գործ զնելու և թէ տեղի յարմարութեան պատճառաւ չափած ու ձեւած էր խանութի համար:

Տանուտէրի տղէն էր կառավարիչն և խանութպանը: Էլ ո՛ր գիւղացին կը համարձակէր Սհօջից առուտուր անել. տանուտէրն ամեն բանում աչնպիսի յանդուգն մարդից վրէժ կը հանէր:

Արդարև, կարճ միջոցից Սհօջի խանութի ոտքը կտրուեց և Բղդէի հռչակը ողջ գաւառը բռնեց:

Այս բանին առաւելապէս նպաստեց Բղդէի նոր պաշտօնը:

Ամեն աչք Բղդէի վերայ սկսեց քաղցրանալ. նորա չարչիութիւնը մոռացութեան տրուեցաւ. ընդհանուր կապալառուի կողմից Բղդէն կարգուեց զլիաւոր գործակատար և Աբարանի գաւառակից ցորենառու:

ԻԳ.

ԷՆ Ի՛ՆՁՆ Է, ՈՐ ՊՍՏԻԿ Է ՈՒ ՃՍՏԻԿ Է

— Բարո՛վ ես էկի:

Այս խօսքերով ողջունեց առաջին անգամ գաւառապետը, երբ երէկուան չարչին իրաւունք խնդրեց և տրորեց նորա բնակարանի շեմքը:

Բղդէն խիստ կոկիկ էր հագնուած: Նա եկել էր կապալառուի կողմից զբաւոր յանձնարարութեամբ:

Մեծաւորը հետազննին աչքով նայեց կապալառուի տարօրինակ գործակատարին, քթի տակին ժպտաց և բարև տուեց:

Բղդէն խորին խոնարհութեամբ մինչև գետին ծռուեց և երկրպագեց:

— Ի՛նչ գուզիս, երկրորդ հարցը տուեց գաւառապետն ուրախ դէմքով և վրաստանին յատուկ հայ արտասանութեամբ:

— Քո ողջութի՛ւնը, աղա՛, կլկմաց Բղդէն. և ձեռքը զրպանը տարաւ ու սկսեց խառնել:

— Ի՛նչ ես պտուում, զարմացած հարցրեց իշխանաւորը:

— Քո ողջութիւնը, տէ՛ր, կրկնեց խորամանկ կարբեցին և մի ոտք յառաջ դալով՝ մի նամակ և մի ծրար հանեց զրպանից ու վախժախելով դրեց սեղանի վերայ:

— Այս ի՛նչ նամակ է:

— Կապալառուիցն է:

— Իսկ այս ի՞նչ ոսկիք են, բացեց գաւառապետը կողոված թուղթը
և հարց տուեց:

— Քո մեծութեան համար ընծայեմ բերել:

— Քո տիրոջի՞ցդ է, ի հարկէ:

— Ո՛չ, տիրոջս խոնարհ ծառայիցն է:

— Քեզ համար լսել եմ, որ դու մի հասարակ շարժի էիր ու
չանկարծ մեծ խանութի տէր ես դարձել, գաւառի հարուստներից
մէկն ես հռչակուել ու կապալառուի հաւատարմութիւնն ես ձեռք
բերել. ո՞վ տուեց քեզ այսքան կարողութիւնը:

— Քո հրամանքդ:

— Ի՞նչպէս:

— Երբ քո բարի աչքդ քաղցր է քո ժողովրդի վերայ, աշխա-
տանքն էլ շատանում է, սէր ու եղբայրութիւնն էլ աւելանում է:
Անչի՞ չէի հարստանալ, քո ահիցն երկրի գոյ ու աւազակութիւնը
կարուել է, ճակատի քրտինքը զատողի գրպանից ոչ ով չի խլում,
գիւղացուն ոչ ով չի վտահանում ասել՝ աչքիդ վերեն յծնք կայ.
ամեն մարդ էլ էդպէսով հացի տէր է դառնում, ամեն բերան քեզ
է օրհնում, քեզ արեշատութիւն խնդրում. հիմի էլ հօ յառաջ ժա-
մանակներումը չե՛նք, որ մինչև իրիկուն կը շարչարուէին ու ձեռք
բերածն աւազակի ու շուն ու գայլի բաժին կ'անէին:

— Սուտ չես ասո՞ւմ, ա՛յ տղայ, կեղծաւորութիւն չես անո՞ւմ:

— Սուտը սատանայ է:

Գաւառապետը շատ լաւ գիտէր, որ Բղդէի խօսքերի ոչ մի
բառը ճշմարտութիւն չէ, բայց բարեոք համարեց կարճ կտրել
և ասաց.

— Շա՛տ ուրախ եմ, որ քեզ պէս կտրի՞մ մարդիկն իմ ժողովրդի
մէջ աւելանում են, կարողանում են հարստանալ, խեղճին օգնել,
աղքատի կարիքին հասնել. դու աչքումս խելօք տղայ ես երևում,
ես քեզ իմ հովանաւորութեան ներքոյ կ'ունենամ. նոյնն է խնդրում
քո տէրդ՝ կապալառուն, նամակն աչքի տակով անցնելով՝ շարունա-
կեց գաւառապետը, գնա՛, պաշտօնդ կատարի՛ր ու երբ պէտք կ'ու-
նենաս, համարձակ տուն մտի՛ր, իմ դուռը քեզ համար այսուհետև
միշտ բաց է:

— Ինչրեմ, ներող լինես, այս մի քանի կոպէկը ծառայիցդ վերց-

նես, յոյս ունիմ՝ շատ անգամ ոտքդ դամ, գա՛մ լիքը ձեռքով. դատարկ փայտին շուն չի հաշալ, դատարկ ձեռքով սևերես մարդիկը միայն տուն կը խցկուեն:

—Շնորհակա՛լ եմ, ընդունում եմ, բուռն արեց դաւառապետը ոսկիքը և շուռալով կրկին ցած թողեց թղթի մէջ. երևաց, որ համարում էր:

—Ես զգում եմ, զլիսիդ մատա՛ղ, ուզում ես հասկացնել, թէ անքաղաքավարութիւն եմ արել. շատ ուղիղ ես հրամայում, տասը ոսկին քո մեծութեանը վայել չէ. բայց եթէ այդքանն ընդունելութիւն կը գտնի, ուրիշ ժամանակ կրկնապատիկը կարող է լինել:

Բղդէի խօսքն ընդհատուեց եասաւուլի ներս գալով:

—Փոքր կնեազն է, խոնարհաբար յայտարարեց եասաւուլը:

—Թող գայ, հրամայեց գաւառապետը և ոսկիքը փաթաթեց, սեղանի արկղումը թաղցրեց:

Ներս ստնողը մի գեղեցկադէմ, գեղեցկակազմ, գանգրահեր, բարձրահասակ երիտասարդ էր. պաշտօնագրեստից կարելի էր ճանաչել, որ նա գաւառական վարչութեան ծառայողներից է. իսկ Բղդէն անունից հասկացաւ նորա ո՛վ լինելը և մտքումն ասաց.— շատ յարմար ժամանակ էր, նշանակում է գործս յաջող է:

—Ո՞վ էր ներս եկողը:

—Փոքր կնեազն էր:

—Բայց ո՞վ է փոքր և ո՞վ մեծ կնեազը:

—Մեծն ինքը գաւառապետն էր, փոքրն իւր օգնականը:

Այս անունով էին յայտնի այս երկու պաշտօնատարները գիւղացուն. բայց թէ իսկապէս ի՞նչ մարդիկ էին, ի՞նչ ազգից էին, ի՞նչ ազգանուն ունէին, — գաւառացու գիտենալու և դատելու սահմանից վեր էր. բաւական էր, որ նորեկ պաշտօնէին մի անունով կնքեց ամբօխի միջից մի տանուտէր, մի գիւղական պատուելի, և ահաամբողջ գաւառն այդ կոչումով է ճանաչում իւր մեծաւորին՝ առանց ուշադրութեան առնելու, թէ իւր կոչած անունը պակաս-պուտ է, սուտ ու սխալ է: Այդ ուսմի սովորութիւնն է. նա երբէք ճիշդ անունը չի կարողանում տալ, մանաւանդ իւր համար խորթ ազգանուններին: Նա սովոր է ամեն անուն կրճատել, համառօտել, կամ խեղաթիւրել. նոյնն անում է և իւր իշխանաւորների վերաբերութեամբ.

Նիկո, Միսօ, Գասօ—ասում է գեղջուկը Նիկողայոսին, Մխիթարին, Գասպարին. Փուչկով, Սվարով, Փանվօսկի, Մաճարբերի՝ յեղջեղուում են օտարազգի անուկները: Պատահում է և այնպէս, որ ժողովուրդը նոր անուկներ է հնարում ամեն մէկ ծառայողի համար. մէկին մեծ աղայ է ասում, միւսին Խաթաբալա-բէպ, երրորդին ծուռ. Կալօ և այլն:

Այս իսկ հիման վերայ, Բղդէին հիւրասիրողը կոչուում էր Մեծ կնեազ, իսկ օգնականը՝ Փոքր կնեազ:

—Ի դէպ, մեր երեկուան խօսակցութեան առարկայ երկոտանի որսն իւր ոտքովն է ընկել, ասաց Մեծ կնեազը Փոքրին՝ Բղդէի համար անհասկանալի լեզուով. էլ հարկաւորութիւն չը կայ սրան անհանգիստ անելու, սա իւր գործը հասկացող է երևում, սրան պինդ պէտք է բռնած:

—Ահա, պարոն Բաղդասար, խօսքը հայերէնի դարձրեց դաւառապետը, Պատիկ կնեազն էլ լսել է քո անունը, ուրախ է, որ քեզ տեսնում է:

—Շա՛տ շնորհակալ եմ երկուսիցդ էլ, ձեր ոտքի հող ու մոխիրն եմ:

—Ես Փոքր կնեազին խնդրեցի, որ քեզ վերայ քաղցր աչք ունենայ, դու այսօր գնա՛, սորա դուռն էլ ձանաչի՛ր:

—Իմ աչքի, իմ գլխի վերայ:

—Ես սրան ասացի, որ դու կապալառուի գործակալն ես, սա խոստացաւ ամեն ժամանակ քեզ օգնել:

—Ես էլ իմ ձեռքիցն եկած ծառայութիւնը միշտ պարտք կը համարեմ կատարելու:

—Գնա՛ ուրեմն դուրսն սպասի՛ր, մենք ինչ հարկաւորն է՝ կը խօսենք, ինչ անելու ենք՝ սորա ձեռքով կ'անենք:

Բղդէն երկիցս և երկիցս գլուխ իջեցնելով՝ դուրս դնաց:

Նա այդ օրը ոչ միայն Մեծ ու Փոքր կնեազներին ներկայացաւ, այլ ամենաստորին դռնապանին էլ այցելեց ու ծանօթացաւ: Փայլուն պոլիմպերեալներից բոլորեքեան մասնաւորութիւնն իրանց կոչման և արժանաւորութեանց համեմատ:

Եսասաւուկներն ու զաղախներն էին սակայն, որ ոսկու փոխարէն արծաթեայ փոշեթաթախ մանեթներ ստացան և իրանց կողմից խոստացան Բղդէի հաւատարիմ շները դառնալ:

Ուրախ տրամադրութեան գազաթնակէտին հասած՝ դուրս եկաւ Բղղէն գաւառական վարչութիւնից երեկոցեան դէմ և ձի հեծած՝ շտապեց ճրագվառոցին Կարբի մտնել:

—Այսուհետեւ, Շողի՛կ, փափկացրո՛ւ քարի պէս կարծր սիրտդ, ոսկիքը մածնի չը տաւի զլուսս քսելու, տեղին գործածեցի՛ քո սրտին տիրանալու. հիմի տեսնենք՝ քո աչքումն ո՞վ աւելի զին կ'ունենայ՝ Բատինի թո՛ւր, թէ մեծաւորների հետ ոտը ոտին դրած բազմող պ. Բաղդասարը. սպասի՛ր, Շողիկ ջա՛ն, դեռ. հօրդ բերանի զոյն իմանանք: Աւայ՝ ջհուտ Աղաջանին, թէ որ էչէ՞ ասի, հոգեց հոգի կը կորցնեմ, Սեծ կնեազին աչքով կ'անեմ, Պատիկ կնեազին կը հրամայի՛ փոշին քամուն կը տայ: Աէ՛, ջհուտ Աղաջանը խելքը հացի հետ չի կերել, օրն էղուց աշխարհը չաւ կը լինի, որ մեծ ու փոքր կնեազների հետ մի մօր կաթը ծծած եղբայրների պէս ենք:

Բղղէն ցուցամատով երեք անգամ ճակատին լսփեցու շարունակեց.

—Հը՛, զլո՛ւս չի՛ զլո՛ւս, խելքի բուն է, որ կայ. մի քանի հաս պսպղուն ոսկիքն էսօր քանիսի՛ աչքերը շլացրին, ի՞նչպէս բոլորին իմ դրան շունը շինեցին. դրա համար է ասած՝ «պատիկ է ու ճստիկ է». ի՞նչ գործ կատարեցին կոպէկի մեծութեամբ ոսկիները:

—Էլ կասկած չը կայ, որ ջհուտ Աղաջանի հոգին բռանա մէջն է, երեք անգամ դրականապէս շարժեց նա զլուսը. երեք օրից տէր-Յակովբը ջհուտ Աղաջանի խնամաքարին կը նստի, Աղաջանի խօսքը կ'աւնի, իրիկունը նշանը կ'օրհնի, մի երկու շաբաթից՝ Շողիկս իմ նոր շինուող տանը սորոք տալով՝ խանութիւն կ'անի, Բատինեց Սհօյի վերայ թքել էլ չի արժան տեսնիլ:

Այս և տոյնանման վերացական մտածութիւններով մութը գետինն առած՝ նախկին չարչին մտաւ Կարբի:

ԻԳ.

Տ Ե Ր Յ Ա Կ Ո Վ Բ Ը

Հին Բայազիդից գաղթած, Կարբու նոր բնակիչների մէջ նշանաւոր տներից մէկն էր ջոչ աէրտէրենց տունը:

Պատմութիւնը մանրամասն չէ յայտնում, թէ ո՞ր օրից այդպիսի հռչակ է ստացել այս տունը և ի՞նչ աչքի ընկնող յատկութեան

համար, բայց մի աւանդութիւն տան սերնդների ձեռքին յաջորդաբար քահանայական զաւագանը ժառանգական սեպհականութիւն է արել:

Մեռաւ քահանան, տեղը ուրիշն է հարկաւոր, օտարներին զիմելու սախմունք չը կար, անշուշտ ջոջ տէրտէրենց տան մի, կամ միւս անդամն ի մանկութենէ պատրաստ է այդ կոչման համար:

Մեծ ուսումն և պաշար չէր պահանջուում նոր քահանայացուից, պատրաստուելու յարմարութիւն և տեղ էլ չը կար, դպրոց կոչուած հիմնարկութիւնը վանքերի շորս պատի մէջ էր ամիսփուած, Սուրբ Գրքի խորին աստուածաբանական հմտութիւնը վանականներին էր բաժին թողած, իսկ քահանայացուներն ուսանում էին՝ որքան անհրաժեշտ էր կնունք անելու, պսակելու, թաղելու և ժողովրդի այլ և այլ, հոգևոր, ծիսական պաշտամունքը կատարելու համար:

Բաւական էր տէրտէրին որդիներից, կամ արիւնակից ազգականներից մէկին եօթը տարեկան հասակում սպասաւոր տալ մերձակայ վանքի միաբան հայր սուրբներից մէկին, թողնել այնտեղ մինչև տասն և չորս տարեկան հասակը և մանուկը կատարելապէս տիրացուացած՝ վերադառնում էր հայրենի տնակը՝ տեղական եկեղեցում սպասահարկելու մինչև փիլոն ծածկելը:

Աղմկայոյց խռովութիւնների առիթ էր լինում ժողովրդին այն հանգամանքը, եթէ քահանայութիւնը վիճակուում էր աշխարհական տների զաւակներից մէկն ու մէկին:

Պատահում էր, որ միաժամանակ մի յարկի տակ բնակուած երկու-երեք եղբայր միմեանց «օրհնեա տէր» էին տալիս:

Այդ դէպքերում ժողովուրդն առաւել ուրախ էր լինում, հաստատ համոզուած լինելով, որ երբ իրանց հոգևոր հովիւների մէջ սերն ու խաղաղութիւնը կը լինի թագաւորած՝ զիւղի խաղաղութիւնն անվրդով կը մնայ և քահանայական շարունակ անբաւականութիւններն ու կռիւները գժտութիւնների տեղիք չեն տալ:

Հաստատապէս ասել անհնար էր այս. սակաւ չի պատահել, որ ժողովուրդը ներկայ է եղել երկու հարազատ քահանայ եղբայրների միմեանց հետ տարիներով խռով պատարագելուն, ծեծ ու ջարդին,

մազ ու միրուք փետտելուն, բայց բացառիկ դէպքերը մեծ չարիք չեն. նոյն ժողովուրդը հնումը, թէ նորումս, ամեն տեղ և ամեն օր վհատ ու ուժ է ահանատես լինելով իւր համայնքի հոգևոր հայրերի անդրելի անկարգութիւններին:

Հայր Աբրահամու օջաղ կոչուելու աներ այսօր հազուագիւտ երևոյթ են դարձել, իսկ 25, 30 տարի յառաջ և աւելի խորը՝ դա մի զարմանալի բան չէր: Հայր Աբրահամու օջաղ էր կոչուում այն օրհնեալ տունը, որի ծերունի հայր-նահապետը, բոլորած իւր շուրջը բազմաթիւ եղբայրների, հօրեղբօր զաւակների ու թոռների, նրանց որդկանցն ու թոռան թոռներին՝ քաջափորձ զօրականի անձնապատան հմտութիւններով ղեկավարում էր շարժուն գործարանը, ընդհանուր հրամաններ էր արձակում և բոլոր անդամներից իրանց գործառնութեանց հաշիւն ու համարն էր պահանջում: Ի հարկէ, կը կաղար գործը, անիւը կոտորուած սալլի նման կը կործանուէր, եթէ հայր-նահապետին գործակից չը լինէր տան ներքին կառավարութեան մէջ մայր-տանտիկինը — ընդհանուրի յարգանքը վայելող ու հրամայող մեծ նանը, որի ձեռքին էր տանտիկնութեան շերտիւր, որի քաղցր խօսքը պատուէր էր տան իզական սեռի բոլոր անդամների համար:

Տասնեակ տարիներ, շատ անգամ և հարիւրամեակներ էին զլորուում յաւիտենականութեան անդունդը, իսկ հսկայական մեքենան անքակ կերպիւ միմեանց հետ աղխադուած անդամներով գործում ու տևում էր. որդին հօրն էր փոխանակում, հարսն սկեսօրը. մէկը գլուխը վայր էր դնում, միւսն արդէն իւր ծանրատար, բայց քաղցր պաշտօնի մէջն էր:

Այլպիսով սէր ու միաբանութիւնը նշանաբանն էր լինում այն քաղաքային, կամ ղիւղական հասարակութեան, որի մէջ հայր-Աբրահամու օջաղներ մի քանիսն էին գտնուում:

Իսկ եթէ աշխարհական տների բարոյական արդիւնքն այսչափ մեծ էր համայնքի համար, ինքն ըստ ինքեան հասկանալի է ժողովրդի ուրախութիւնն ու երջանկութիւնը, բարօրութիւնն ու անգորրութիւնը, եթէ ժողովրդի սոււած առաստ աուրքը մի դռնով էր ներս մտնում, միևնոյն շտեմարանումն էր ամբարուում:

Չոչ տէրտէրեկնց տունը թէ Բայազիդումն և թէ Կարբի հայր

Աբրահամու օջաղ անունն է կրել. և իրաւամբ. ոչ մի ծերունի չէր յիշում իւր կենաց շրջանումը ջոշ տէրտէրենց տան մէջ բաժանութիւն կամ անհամաձայնութիւն. շարունակ երկու-երեք քահանայ իրար հետ ժամ են գնացել և նրանց միջի ծերունին աւագութեան ու հրամանատարութեան արօժնութիւնն է վայելել:

Ջոշ տէրտէրենցից երկու հարազատ պատկառելի քահանայ եղբայրներ առաւօտեան և երեկոյեան ժամերգութիւնը կատարելով՝ զաղթականներին առաջնորդեցին Բայազիդից մինչև Կարբի և այստեղ էլ մնացին:

Նոքա էին քաղցրախօս տէր-Սիմոնը և սրտաշահ տէր-Յակովբը՝ Միայն իրանց հօտը չէր, որ սիրում էր իւր քաջածանօթ, առաքինի հայրերին. Կարբի զաղթելուց շատ չ'անցած՝ եղբայր տէրտէրները զրաւեցին շրջակայ զիւղերի հայ ու թուրք ազգաբնակութիւնների սէրն ու համակրանքը: Այդ նրանց վարք ու բարքի նրանց աղքատասիրութեան ու առատասրտութեան արդիւնքն էր. բերանի պատառը նրանք տնանկի ու կարօտի հետ բաժանում էին:

Սակայն Կարբուն չը վիճակուեցաւ մի կողմից Բայազիդի երջանկութիւնը. շատ չը տևեց, ջոշ տէրտէրենց սունն երկու ճիւղքի բաժանուեցաւ:

Խռովութիւնն ու երկպառակութիւնը չէին, որ երկու եղբայրներին մի չարկի տակից բաժանեցին. մեծ խօլերի անողորմութիւնն էր այդ անողը:

Մշտարակու տէրտէրները զո՛հ գնացին խօլերի ճիրաններին, ասագին զիւղը մնաց առանց հոգևոր հովուի, իսկ հոգևոր ծայրագոյն վարչութիւնը զիջաւ աշտարակցոնց թախանձանացը՝ հրամայեց Կարբեցի տէր-Սիմոնին Կարբին թողնել իւր եղբայր տէր-Յակովբին և փութալ լցուցանել Մշտարակցոնց հոգևոր պիտոջքը:

Տէր-Սիմոնը վերաբնակուեց Մշտարակ, այնտեղ հովուեց, այնտեղ ապրեց և այնտեղ մեռաւ, իսկ տէր-Յակովբը մինչև վերջին շունչը մնաց Կարբումը, սիրեց ու սիրուեց իւր ժողովրդից և մեռնելուս՝ իւր տեղ պարզեց սիրելի հօտին իւր հարազատ Հայրապետին՝ տէր-Հայրապետ կոչումով և ինքը խաղաղ հոգևով աչքերն յաւիտեան փակեց:

Ահա՛ այս տէր-Յակովբի մօտ մի երեկոյ ներս մտաւ խօջա՞յ

ասենք, աղա՞յ, թէ պարոն Բաղդասարը՝ մեր նախածանօթ կօլոտ չարչի Բղդէն:

Վերոյիշեալ կոչումներից դեռ ոչ մէկը չէր սեպհականացել Բղդէին. բայց գուշակելի էր, որ ոչ հեռու ապագայում մէկն ու մէկին տիրանալու էր. այժմ այսքանը յայտնի էր, որ Բղդէ անունը իբրև թշնամանք նորա բացակայութեան ժամանակ շատ սակաւները վտահանում էին ասել, երեսին ոչ ոք իրան թոյլ չէր տալիս այդ աններելի սխալն անելու, այդ յիմարութիւնը քարէ կարկուտ կը դառնար վերջը և կը թափուէր ասողի գլխին:

Տէր-Յակովբին խորթ թուեցաւ Բղդէի այցելութիւնը:

—Աստուած օրհնեսցէ, որդի՛, աջ տալով պատասխանեց տէրտէրը Բղդէի «Թրհնեա տէրին»․ բայց այս ո՞ր քամին է քեզ պտըտել, մեր դռնովը ներս խցկել:

—Մի՛թէ, տէր հայր, ամօթ է ժողովրդին իւր հոգևոր հօր ոտքը գնալը, ժպտալով ասաց Բղդէն:

—Նեղհակառակը պարտականութիւն է, որդի՛, բայց դէ՛, չարչի ժամանակդ ոչ միջոց ունէիր և ոչ կարիք, այսօր էլ որ հարուստ ես, Աշտարակումը ծովի նման լիքը կրպակ ունիս, կապալաւու ես, երկու-երեք ձիաւորով ես ման գալիս, մեծ տներ ես շինիլ տալիս, ազաների ու միրզաների հետ ես նստում, վեր կենում, ինձ պէս մի գիւղական խեղճ քահանային ի՞նչ միտքդ կը բերես, մինչև մի փորացաւանք չ'ունենաս:

—Մի՛թէ դու ուրախ չես, աջիդ մատա՛ղ, քո ժողովրդի բաղդաւորութեան վերայ, որ իմ չաջողութիւնն երեսովս ես տալիս:

—Չափազանց ուրախ եմ, եթէ մի քանի բաներ, որ պատմում են, թշնամու խօսքեր լինէին:

Տէրտէրը չը քաշուեց թուել Բղդէի անիրաւութիւնները, որոնց մէջ համբաւ էր հանել նա վերջերս և որոց մասին չիշատակութիւնը թող մնաց յետոյ:

—Դու ինքդ ասացիր, տէրտէր ջա՛ն, որ թշնամու խօսքեր են, իմ յառաջադիմութիւնը շատերի աչքը ծակում է, դու դեռ իմ խնդիրս լսի՛ր ու գլուխ բե՛ր, յետոյ կը տեսնես, թէ քո ծուխդ ի՛նչ անուն կը հանի և ի՛նչ ծառայութիւն կ'անի քեզ:

—Սա՛ւ, որ լսեմ:

—Խնդիրս շատ հասարակ բան է, քո մտածելիքն ես եմ քեզ չիշեցնում, հոգեոր զաւակներիդ մէկը չափահաս է, Կարբումը ծնուած նրան հասակակից ոչ ոք չը կայ, նրանից փոքրերը բոլորն երեխի ու կնոջ տէր են դառել, իսկ նա դեռ միայնակ չոր կ'ան դառ ի փշի պէս քամու ձեռքից տարուբերուում է, ամենքը նրան մտքից հանել են՝ դու էլ նրանց հետ:

—Մ... ա'... ա'... հասկացայ, հասկացայ, շա'տ լաւ, շա'տ բարի, օրն էգուց ցանկութիւնդ կատարեմ, ուզում ես նոր շինուող տան համար մի նոր հարսը բերել, այնպէս չէ', թափանդ իւղոտուել է, մեր տղա'յ:

—Ամօթ հօ չի', որ կարմրացնում ես ինձ, տէրտէ'ր:

—Ասենք՝ դու կարմրող պտուղ չես, բայց փնաս չ'ունի, եթէ փոքր ինչ երեսդ տաքանայ, իսկ քո առաջարկութիւնդ, ճիշդ՝ որ հարկաւոր է և ժամանակադարմար:

—Ուրեմն մինչև ե՞րբ պէտք է գործը ձգձգես, աշունքը երկու քայլ է մեզանից հեռու, հարսանիքների հօտը փչում է, մի քիչ ցուրտը որ ընկաւ, ամեն տեղ գուռնի ձայնը կը բարձրանայ, մենք ո՞ւմնից ենք պակաս:

—Ո՞ւմ աղջիկն ես ուզում, ասա՛ տեսնեմ:

—Ում դու ինքդ կամ կը տեսնես, ում որ եթէ մինչև այսօր արժան չէի, հիմի քո օրհնութիւնովը հաւասար եմ, կամ մի փոքր էլ անց եմ. այնպէս չի՞, տէրտէ'ր, որ ես մի ժամանակուայ Բղղէն չեմ հիմա, ուրիշ եթէ ոչինչ չի լինի, հագուստս հօ զարձր է ձայն տալիս: Բղղէն մատով մի մի ցոյց տուեց իւր շորերը:

—Առակն անխոտելի է, սրտիդ չ'առնես, Բաղդասար ջա'ն, ասած է. էչն էլ էն էչն է, փալանն է փոխել. փողն ու հարստութիւնը, շորն ու զարդարանքը չեն մարդիս մարդի կարգ գցողը, պատիւը մարդիս իւր մէջը պէտք է լինի. բայց, ի հարկէ, ես չեմ ուզում սիրտդ կոտրել, ինձ յայտնի է, որ դու խելօք տղայ ես, մեր Աղաջանի ձեռքովը ոչինչ տեղից հացի տէր դարձար. այսօր էլ եթէ չը գնաս այդ ծուռը և մոլար ճանապարհովը՝ մարդ կը դառնաս՝ ինչ որ մարդին պէտք է ու վայել:

—Պէ', հրամանք արա՛ օրհնած բերանովդ, տէրտէր ջա'ն, տեսնենք՝ ո՞ւմ աղջիկն ես ինձ կամ տեսնում:

Տէր-Յակովբը քաջ ճանաչում էր Կարբու բոլոր հասած աղջիկներին, զիտէր ամենքի ծնողների ղիրքն ու աստիճանը: Նա սկսեց ծայրէ ի ծայր, փողոցէ փողոց անուանել Բղդէի համար իւր նախկին զասակարգի տան աղջիկներին:

—Ի՞նչ ես անում, տէրտէ՛ր, այդքան էլ մարդի հողի հետ չեն հաւասարացնիլ. քեզ ի՞նչ, թէ երեկ աղքատ էի, քեզ ի՞նչ թէ ես երեկ բոշայ էի. այսօր չէ՞ որ հարուստ եմ, այսօր փաշայ եմ, դու ինձ էսօրուայ գազով չափի՛ր, քո հաշուած աղջիկները մի քանի ամիս առաջ կարող էին ինձ յարմար նշանածներ լինել:

—Հապա էլ ո՞ւմ անունը տամ, որ սրտերը չը վիրաւորեմ, Բաղդասա՛ր. հօ չե՞մ կարող Ալմաստ խաթունենց, Նանի-Յարթենենց խօսքը մէջ բերել:

Տէրտէրը սկսեց այնուհետև առաջիններից մի աստիճան բարձրներին չիշել:

Բղդէն ևս առաւել քիթը շինեց զափի կոմբալ կամ հաւի փուշիկ. տէրտէրի խօսքերը նրան վիրաւորական էին:

—Ինձ ի՞նչ, եթէ ուզում ես մեր իշխաններից մէկն ու մէկի աղջիկը՝ իրաւունք ունիս. դու անունը տո՛ւր, ես կերթամ կը խօսեմ. կը տան՝ իրենք զիտեն, չեն տալ՝ իրանց կամքն է, շատ կարելի է, տալիս են, աշխարհը հիմի փչացել է, հիմի մարդը գլխով ու սրտով չի գնահատուում, այլ զրպանով ու քսակով, իսկ հարստութիւնով, ինչպէս լսուում է, քեզ արժան աղջիկ չի ճարուիլ Կարբու մէջ, պէտք է գնաս Աշտարակիցն առնես:

—Ձե՛, տէրտէր ջա՛ն, զուր ես ինձ փողոցէ փողոց քցում, ես իմ հայրենակիցներից հեռացողը չեմ, իմ կինն անպատճառ Բաղաղիդու աղջիկ պէտք է լինի, և հէնց զորա համար եմ քո ոտքն եկել:

—Շատ ես հեռանո՛ւմ, տէրտէր ջա՛ն, ընդհատեց Բղդէն, երբ տէր-Յակովբը կամենում էր տէրողորմի հատիկների վերայ թուել Կարբու առաջնակարգ ընտանիքների աղջիկներին, իմ կորուստը դրանց ոչ մէկի մէջը չը կայ:

—Մնացի ես, ա՛յ որդի, մէկ էլ իմ մեծ եղբայր տէր-Սիմոնը, ինքս, քեզ յայտնի է, որ աղջիկ չ'ունիմ, եղբօրս աղջիկն էլ Աշտարակ նշանած է:

—Անչի՞, տէրտէ՛ր, ջհուտ Աղաջանի հատն ո՞վ ունիս Կարբու

մէջ. նա ու ես հաւասար կը դանք, երկուս էլ նոր հարստացած ենք:

—Վա՛հ, դու եօթը սարի էն երեսի՞ցն ես, Բաղդասա՛ր, զարմացաւ տէր-Յակովբը, չը գիտե՞ս, որ երկու տարի է Աղաջանի աղջիկը նշանած է և այս ձմեռ պէտք է պսակենք:

—Կարելի է, ի պատիւ իմ, Աղաջանը նշանը կը վերադարձնի՛:

—Ա՛յ տղայ, Բաղդասա՛ր, Աստուածանից վախեցի՛ր, մարդից ամաչի՛ր, ոչ դու Աղաջանի հաւասար մարդ ես և ոչ նա քեզ մարդատեղ կը դնի:

—Բայց ես Բաղդասարն եմ, տէրտէ՛ր, ես հարուստ եմ, պարկերով ոսկի կը թափեմ Աղաջանի առաջին:

—Եթէ ես Աղաջանի տեղ լինէի, քեզ կ'ասէի՝ ոսկիքդ մածնի տո՛ւր, գլուխդ քսի՛ր:

—Քանի՛ մի քանի ես այդ անիծուած խօսքերը լսեմ, էսքանը մածնի տալ կը լինի՞, բարկացած ձեռքը գրպանը տարաւ Բղդէն և հանելով մի քսակ լի պօլիմպերեալ, շաղ տուեց քահանայի գորգի վերայ:

—Էլ ընչի՞ ես նեղսրտում, որդի՛, երբ որ քեզ ամենքը վատ են ասում. քեզ շատ լաւ յայտնի է, որ Աղաջանի աղջիկն անուն արած է, նշանած է, ուրեմն դու ցանկանում ես Բստինենց Կարապետի հին օջաղի հիմքը շրջել. լսողը քեզ վերայ էլ կը թքի՝ իմ վերայ էլ, թէ որ ես քեզ լսեմ ու զնամ խնամխօս. չը գիտե՞ս, որ ես Աստուծոյ քահանայ եմ և անիրաւ. մարդկանցը պէտք է ուղիղ ճանապարհը բերեմ:

—Ի՞նչ անիրաւութիւն եմ արել, տէրտէ՛ր:

—Ուրիշի նշանածն ուզում ես յափշտակել, այդ անիրաւութիւն չի՞:

—Որ սիրում եմ, ի՞նչ անեմ, աջիդ մատա՛ղ:

—Էլ աղջիկ չը կա՞ր, որ նշանած աղջկայ վերայ մատը դրիր:

—Սրան հարցրո՛ւ, կարգիդ մեռնի՛մ, սիրաը ցոյց տուեց Բղդէն, սորա վերայ նեղացի՛ր, կպել է՝ չի պոկուում. ես ինքս էլ շատ ուրախ չեմ, Աղաջանն աչքիս գրողն է, ուզում եմ մի բուռը մոխրի պէս քամուն տամ, բայց բանն այն տեղն է հասել, որ ինքս եմ գլուխս զնում թշնամուս ոտքի տակը, որ ինձ սրորտակ տայ, օրական հարիւրաւոր թքանքներ թափի երեսիս, միայն թէ վերջ ի վերջոյ ինձ խղճայ ու փափագիս հասցնի:

— Իսկ եթէ Աղաջանը չը կամենայ Բստինենց Սհակին տուած խօսքը յետ առնել:

— Ս'... օ'... օ'... Էն ժամանակը շները կապեցէ՛ք, իմ շղթան կտրեցէ՛ք, կատաղի զազանի նման ծուխի-ծուխի, պատառ-պատառ կ'անեմ Բստինենց աղին է՛լ, ջհուռ Աղաջանին է՛լ, ողջ կարողութիւնս արենխում, մարդասպան գողերին կեր կ'անեմ, աշխարհքը սարսափի մէջ դնող աւազակ Եղիկին կ'եղբայրանամ ու Աղաջանի ցեղը բնաջինջ կ'անեմ:

Տէրտէրը զարհուրեց Բզդէի աչքերից դուրս ցայտած կայծերի փայլատակումից. բերանը փրփրակալել էր, ատամների կրծտոցի հետ մատներն ինքնաբերաբար բացուում և խփուում էին, ճիշդ՝ քաղցած զալլի, կամ զիշատիչ անզղի ծուռտիչ ճիրանների նման, երբ յարձակուելով թոյլ նապաստակի, կամ անշունչ լէշի վերաց, ազահաբար մի կողմից սուր սուր մազիլներն է ի գործ դնում, միւս կողմից ժանիքով կամ կեռ կտուցով է քաշկուտում, մսմատում:

— Հանգստացի՛ր, սիրելի Բաղդասա՛ր, բաւական է, արածս կատակ էր, այս շաբաթ յարմար միջոց կ'ընտրեմ, Աղաջանին կը համոզեմ, քո իզդէ կատարել կը տամ: Վնաս չ'ունի, Բստինենց Կարապետն էլ ինձ կը լսի, Սահակի համար ուրիշ աղջիկ կ'ուզենք, մինը չէ՛ միւսը լինի, միայն թէ աշխատելու է, որ Աղաջանը չը զրկի Սհօյին խանութի ընկերութիւնից, խեղճն երկու տարի է հետը մաշուում է:

— Ե՛ս, ես ի՛նքս Սհօյին կը բաղդաւորացնեմ, զլուխը ոսկու մէջ կը թաղեմ, եթէ նա Աղաջանի աղջկանից ձեռք քաշի:

— Որ այդպէս է, գործը յաջողացնելը թող պարտքս լինի:

— Որ այդպէս է, այսքանը թող առհաւատչեաց լինի քո աջահամբուրի համար, բուն աջահամբուրն էլ յետոյ:

— Ո՛չ, սիրելի Բաղդասա՛ր, ժողովի՛ր փողերդ, քսակդ զի՛ր, ջոշ տէրտէրենց եօթն անգամ եօթը պորտը քահանայ է եղել, Աստուծոյ կարող զօրութիւնով մինչև Քրիստոսի աշխարհք գալը մեր տան տէրտէրը չը պիտի պակասի, բաց մինչև էսօր լուած չի, յոյս ունիմ, որ այսուհետև էլ չի լուել, թէ մեր տունն էդպիսի կեղտոտ ճանապարհով է հաց աշխատել. Աստուած հաստատ պահի ջերմեռանդ ժողովուրդը, լիաբուռն շահել է իւր քահանային՝ իւր հարամը հալալողին ու էլի կը շահի, մեր աչքը մեր դուանն է պահել, ապրել

ենք՝ կրկին կ'ապրենք, աշխարհքիս գանձն ու հարստութիւնը աշխարհքումս կը մնայ: Աերցրո՛ւ փողերդ, երբ բարով—խէրով հալաւդ կ'օրհնենք, որքան սիրող կը բղխի, կը տաս, ետ էլ, առանց վրէն աչք թեքելու, ծոցս կը վնեմ, նորափեսին ու նորահարսին բաղդաւորութիւն կը ցանկամ:

—Ուրե՞մն:

—Ուրեմն դու գնա՛ գիշերս հանդիստ քնի՛ր, վազը զործդ շարունակի՛ր, Ասածու ճանապարհը մի՛ մոռանար, աղքատի ու տնանկի աշխատանքը մի՛ խլիր, մի կտոր հաց կե՛ր և Աղաջանին օրհնի՛ր, որ քեզ մարդի մէջ մտցրեց, յոյսդ Աստուծոյ նախախնամութեան վերայ զի՛ր, որ քեզ մի կտոր ցամաք հացի տէր է արել. եթէ Աստուած կամեցել է, ցանկութիւնդ ինքն իրան կը կատարուի, իսկ եթէ ոչ, հազար էլ տանջուիս ու մաշուիս, ինչ գրուած է, այն կատարուելու է:

—Ամա՛ն, տէրտէր ջա՛ն, էդ վերջին խօսքերը բերանիցդ մի՛ հանիլ, տէր-Յակովբի աջը կաթողին համբուրելով՝ բարի գիշեր ասաց Բղդէն:

—Սպասի՛ր, սպառնաց տէրտէրը նորա քամակից հրամայական ձեռով. նզովեա՛լ լինիս, եթէ այս երեկոցեան խոստովանութիւնը բերանիցդ հանես, կամ թէ աշխատես ճակատիդ գրուածին դէմ կենայ, կամ բացի ինձանից՝ ուրիշների գլուխը ցաւացնես, միջնորդ ձգես. այն ժամանակը թո՛ղ Ապէնի և Յուզայի անէճքը թափուի գլխիդ, փափազիդ ո՛չ հասնիս, երեք անգամ մեծ շարժարանքով աշխարհ մտնես (ածաւանանալ)՝ երեքիցն էլ անպէտք փշի պէս անպտուղ մնաս, վերջումը մի ժառանգ լոյս ընկնի քեզ համար, որ աչքերդ բաց՝ վատնի, շուայլի կարողութիւնդ և դու տեսնես ու հրուիս, հրուիս ու տնքաս, տնքաս և ոյժ չ'ունենաս յառաջն առնելու, կոպէկի կարօտ՝ շունչդ փչես, հոգիդ սաղայէլի ճանգը ձգես:

Բղդէն դողմանի եկաւ, ոտքերը թուլացան, ծնիները ծալուեցին. բաց շատ չը քաշեց, չը դիտեմ՝ ի՛նչ ներքին զրգամբ՝ ուժի եկաւ, լուրջ դէմք առաւ և ասաց.

—Շա՛տ բարի, յօժար եմ, միայն թէ դու աշխատես զործը գլուխ բերել, հնգապատիկ անէճքի կը զիմանամ:

Նա էլ չը կանգնեց, դուռը շտապաւ քահանայի երեսին ծածկեց ու հեռացաւ:

ԻԵ.

ԳՈՂԸ ԳՈՂԻՅ ԳՈՂԱՅԱԻ, ԱՍՏՈՒԱԾ ՎԵՐՆԻՅ ԶԱՐԲԱՅԱԻ

Ժողովրդի նեղութիւնները հեազհետէ աւելանում են. երկրագործ, այգեգործ, բոլորեքեան միատեսակ ճնշուած են. կապալառու Բաղդասար աղայի քամու նման թռչող նժոյգի սմբակներից՝ կրակի կայծերը փայլակից աւելի են պէծաւորուում. անբան անասունն արդէն ճանաչում է զաւառական տանուտէրների դուռը, նա բնագրամամբ հասկանում է իւր գնալու զիւղը. զաւառական վարչութեան գոմուհին իւր տեղը որոշած ունի և մի տեսակ ներքին հաճութեամբ և հպարտութեամբ սիրում է կեր ուտել ուռսական ձևի մսրքում:

Բղդէն այժմ միայն չի մանգալիս, չորս զինավառուած կտրիճ թուրք թիկնապահ ձիաւորներ նորա անբաժան ընկերներն են, իշխանութեան կողմից էլ մի եասաւուլ շարունակ նրան առաջնորդում է:

Բղդէն յաճախակի է այցելում զաւառական վարչութեան բնակատեղին. շատերի մօտ է ել ու մուտ անում, սիրով ընդունուած է Մեծ և Փոքր կնեագների մօտ:

Մի այգալիսի այցելութիւն կատարուեց տէր-Յակովբի հետ տեսակցութիւնից մի քանի օր յետոյ:

Նոր էր վերադարձել նա Աբարանից Կարբի և պատրաստուում էր գնալ տէր-Յակովբից լուր իմանալու, որ մի ձիաւոր իջաւ նորա դրանը և մի փոքրիկ նամակ տուեց նրան: Նամակը զրած էր Բղդէի ստորագրեալների մէկից. նա յայտնում էր, թէ զիւղերից շատերը ոտքի են կանգնել և ցորին շէն տալիս. եթէ յառաջը չ'առնուի, գրում էր գործակատարը, բոլորը կ'ապստամբին:

Բղդէն ամեն բան մոռացաւ, ձի հեծաւ և երկու ժամից իջաւ զաւառական վարչութեան մօտ եղած գինետան առաջին:

Նա կանգնեց գինետան դրան շեմքին, գլուխը ներս խցկեց և մանրախոյզ հետաքրքրութեամբ խորքը դիտելուց յետոյ՝ ապահովացաւ, որ օտար ոչ ոք չը կար ներսը, ուստի և ձայն տուեց.

—Սաքօ'...

—Չը', Բղդէ', դու ե՞ս, ներս մտի՛ր, ընչո՞ւ ես հեռու կանգնել, աչքերը չալ (խաթալէն) կովի նման մտիկ տալիս, վստահ պատաս-

խանեց զինու տկի բերանն ամրացնելով Սաքօ կոչուածն և շարունակեց ¹⁾).

—Տօ՛, ա՛յ մեռած, էլի եկել ե՞ս, չե՞ որ ես քեզ ասել եմ՝ խաթէդ (քորչանք) մեղանից հեռու պահի՛ր. դու մեր զլուխը մի փորձանքի մէջ բանդ կ'անես:

—Ի՛նչ փուչն ես, Սաքօ՛, «չեմ ուզում» զրպանս զի՛ր, որպէս թէ ուրախ չես իմ դալուն, իբր թէ չը զիտես՝ որ առանց քեզ էս երկրումը ծառի տերեւն էլ իրաւունք չ'ունի շարժուելու:

—Հանաքը թող, ասա՛ տեսնենք՝ ընչի՞ր ես եկել, չե՞ որ մի քանի օր առաջ գործի կարգի զրինք՝ գնացիր:

—Ի՛նչպէս չը գայի, ամեն տեղ ոտս քարին է առնում, Աբարանի ժողովուրդն էլ է, էն տեղ ատամն կտրում է, բաց դաշտի մեծ գիւղերից մի քանիսը, համարեա, երես են թեքել, ձեռքները պասն են քսում, խօսք չեն ուզում հասկանալ, տուն չեն կամենում թողնել:

—Ի՞նչ են ասում:

—Ասում են՝ մեր դաւառի մեծ ու գլխաւոր գիւղն Աշտարակն է, աշտարակցիք են զինու-արաղի կէսը ջուր անում, Ալէքսանդրապօլումը ոսկի շինում, օգուտ տեսնում, Աշտարակը մի բուռը ցորեն չի տալիս, մենք ընչի՞ր պէտք է տանք:

—Եթէ Աշտարակը ցորեն չի ցանում, ո՞ր տեղից պէտք է տայ:

—Գն՛ա ու հասկացրո՛ւ. կոպիտ գիւղացի են, ո՞ր մէկի գլխումը խելք նստացնես:

—Ինձ ի՛նչ ես տալիս, որ օրն էգուց աչքս աջ ու ձախ դարձնեմ, ամենքը քո զուլը դառնան:

—Աշտարակն է՞ր:

—Աշտարակի անունը մի՛ տալ, նա թթու խնձոր է, մի՛ աշխատէք կծել, ոչ դու, ոչ քո կնեազները, բոլորիդ ատամներն էլ կ'առնի, էլ բան չէք կարող ծամել, քաղցած կը մնաք:

—Հողն ու ջուրը լաւ գիտի, Սաքօ ջա՛ն, ի՛նչպէս ես պաշտպանում քո հայրենիքդ:

¹⁾ Միկիտան Սաքօյի համար տե՛ս «Հացի Խնդիր» աշխատասիրութիւնս:

—Դու քո Կարբին չես պաշտպանի՞լ:

—Պարտքս է:

—Ուրեմն էլ չը համարձակուիս հը ծուռն աչքդ Աշտարակի վերայ թեքել, թէ չէ էս դաւառից մի բուռը հաւի կուտ չես կարող դու տանել:

—Միւս զիւղերի համար ինչ ես ասում:

—Տեսնենք՝ ո՛րքան ես ցնծում:

—Ա՛յ եղբայր, տղրուկ ես դառել, ինձ արենքամ արել, տուածս հերիք չի՞:

—Լռի՛ր, լռի՛ր, թէ չէ հինգ օր չի քաշիլ, պոչդ կը խուզուի. դիմացինդ միկիտան Սաքօն է, Սարգարաբատի մոկրոջների միկիտանը, քո ցերեկուայ ման եկած տեղերն ես գիշերն եմ ման եկել, ինձ լաւ յայտնի է, թէ ո՞ր զիւղումն ինչքան աւազ է բանում, թէ ամեն մի խալվար ցորենին ո՛րքան ես վճարում, ինչքա՛ն հաշիւ տալիս:

—Սաքօ ջա՛ն, չէ՞ որ էս բանի մէջ իմ վարժապետը դու ինքդ ես, հիմի էլ կանգնել ես, հակառակն ես ասո՞ւմ:

—Հանաք եմ անում, քանի ես ողջ եմ, դու քո էշը քշի՛ր, միայն թէ տեսնենք՝ քանի՞ պոլիմպերեալ ես համարում առաջիս, որ բացի Աշտարակից՝ մնացած զիւղերը կամքի զան, ցորեն տան:

—Ինչքա՞ն ես կամենում:

—Շատ չեմ ուզիլ, ամեն մի ջուալին մի կօտ ¹⁾ աւազ էլ ինձ համար աւելացրօ՛ւ:

—Իմ աչքի վրայ, ահա այս էլ թող բէհը լինի:

Բղդէն մի բուռը ոսկի ցրիւ տուեց հանրահռչակ միկիտան Սաքօյի առջևը:

—Ուրեմն ձիդ նստի՛ր գնա. երեք օր չը քաշած՝ ամեն զիւղից գործակատարներդ քեզ աչքալուսէք կը գան:

—Մնաս բարև, ասաց Բղդէն և ձիու քամակն անցած՝ իջաւ զիւղերից մէկում տանուտերի տանը:

Տան տիրոջ և հիւրի մէջ մի տեսակ լուռ մնջկատակութիւններ տեղի ունեցան:

Ներկայ եղող օտարները բարևօք համարեցին արգելք չը լինել նրանց պարզ խօսելուն:

¹⁾ Մի կօտը 12 դրուածքալ է պարունակում:

— Ի՞նչ արիր, տանուտէ՛ր, փակուելով տանուտէրի հետ՝ հարցնում է Բղղէն:

— Ի՞նչ պէտք է անէի, պարոն Բաղդասա՛ր, հազարիցը մի անգամ գործդ ինձ է ընկել, այն է՞լ չը կատարեմ:

— Վամ եկա՞ն (համաշայնել):

— Վիզներն էլ եօթը գազ չ'երկարե՞ց. իրանց որ մնար, մի հատիկ ցորեն չէին ուզում տալ, բայց էնպիսի խաղ խաղացի, որ իրանք աղաչեցին ու տուին:

— Ի՞նչ արիր:

— Ի՞նչ պէտք է անէի, յայտնեցի, որ հրաման է դուրս եկել թէ՛ ինչ զիւղում ցորեն չեն տալիս, ամեն մի տանը մի կով թողան, մնացած չորքոտանին քաշեն, տանեն Ալէքսանդրապոլ, մորթոտեն, զօրքին կշտացնեն: Այս որ լսեցին, փորները կատու ընկաւ. ամեն մէկի տանը տասը քսան կթան ու լծկան կան, չիմար հօ՛ չէին, որ մի քանի խալվար ցորենի համար իրանց ապրանքից ձեռք քաշէին:

— Հիմի մեր ամբարումը ցորեն կա՞ջ:

— Երեկ երեսուն խալուար բրնձի նման աղունիլ տուի ու քո ամբարդար (շաբարանապետ) Պապիկին պահ տուի. էս երկու օր է, Պապիկը տուն էլ չի գալիս հաց ուտելու, բեռները կապում է, գրում է ու չը գիտեմ ի՞նչ է անում:

— Ե՞րբ պէտք է, ուրեմն, ճանապարհ զնէք:

— Երբ որ Պապիկը կ'ասի:

— Շնորհակալ եմ, տանուտէ՛ր, ա՛՛ն, ահա, էս քեզ մի չուխագին:

— Ատուած կեանք տայ, աղա Բաղդասա՛ր:

— Հիմի զիւղին որքա՞ն փող եմ պարտ:

— Քո կամքն է, պարոն Բաղդասա՛ր:

— Անչո՞ւ, քեզ յայտնի չի՞, խաղնիցը խալուարին տասն ու հինգ մանէթ է նշանակած, էն էլ զեռ փողրաթի՛ն մի կոպէկ չի ստացել, ինչքան էլ տալիս է, իւր քսակիցն է համարում:

— Շատ ուղիղ է քո խօսքը, Բաղդասա՛ր ջան, բայց ես ու իմ հո՛գին, ժողովուրդը մեղք է, քանդուեց ու քարատակուեց, աղիքդ փորումդ կտոր կտոր կը լինէր, եթէ բարի աչքովդ տեսնէիր, թէ ո՞նց մեր ու մանուկ գլխներին վայ տալով՝ աչքերիցը կրակ էին դուրս թափում, երբ գզիրը կօտն առած՝ Պապիկի հետ հորերիցը

դուրս էր բերում ցորենը և զլուխ զլուխ չափելով՝ ջուլաներն էր լցնում. ես երեսս յետ էի դարձնում, արտասուքս չէի կարողանում պահել. զլուխը վիս'յ, խօջաջ Բաղդասա՛ր, այնպիսի չքաւոր տանից ենք ցորեն հանել, որ միւս օրուայ համար տաշտումն ուտելու հաց չեն ունեցել: Շատ որ մղկտացին, ես խեղճ եկայ ու իմ՝ կողմից խոստացայ, որ քո օտքերն ընկնեմ, խալուարին 25 մանէթ խնդրեմ: Յոյսս դու ես, աղայ Բաղդասա՛ր, ինձ կախ տո՛ւր, կտոր կտոր արա՛ ու դատարկ ձեռքով ժողովրդի երեսը մի զրկիլ:

—Ախար, էդպէս անկարելի խոստումն ըն՝ո՛ւ ես անում, տանուտէ՛ր, ես ինքս հօ՛ չեմ փողրաթչին, ես էլ քեզ պէս մի հրամանակատար մարդ եմ, շատ էլ կը ցանկանայի քո խօսքը գետին չը ձգել, 25 մանէթ տալ, կարող ե՞մ, իրաւունք ունի՞մ, իմ ձեռքիցը կը գա՞ջ:

—Ի՛նչ կ'անես արա՛, ինձ հասարակութիւնի լեզուի տակիցն ազատի՛ր:

—Վնաս չ'ունի, քո ազիզ խաթեր՝ քսան մանէթով հաշիւ կ'անեմ, չեմ թողալ քո երեսիդ մի սառը խօսք դայ ու ինքս երեսս գոմշի կաշի կը շինեմ, փողրաթչու եախիցը (օջիւր) կախ կ'ընկնեմ, խալուարին հինգ մանէթ աւելի կը պոկեմ. եթէ չը տայ էլ՝ քո ցաւը տանի՛, իմ քսակիցը կը տամ:

—Է՛յ, աղայ Բաղդասա՛ր, ո՛ւմ յայտնի է, ո՛ւմ չէ, ինձնից հօթազուն չի, հաստա՛տ մնայ մեր գետը, աւազին հաշիւ ու համար չը կայ, ինչքան քո սիրտը կ'ուզի՝ աւելացրո՛ւ:

—Ա՛յ եղբայր, տանուտէ՛ր, մէկն ասում ես, միւսը թողնում, չը գիտե՞ս, թէ ամեն մի հատիկի վերայ քանի աչք կայ, էդ մի փոքր խառնուրդն էլ որ չը լինի, խեղճ փողրաթչին ո՞ր մէկի ծակ աչքը պէտք է կշտացնի. դու հաւատո՞ւմ ես, որ ձեռքիս մէկը քսակիցս չի դուրս գալիս, Սեճ կնեազին հարկաւոր է, Փոքրին՝ նմանապէս, զրազրի պէտք է տաս, եասաւուլի ուելը կրճելու ոսկր պէտք է քցես, զազախն արադի փող է ուզում, միկիտան Սաքօյի բերանը եօթը խուրճը խոտով չես կարող փակել. հիմի էս կողմնարի՛, — սանուտէր կայ, գզիրը նորա պոչիցը կպած է, զիւզի իշխանաւորը մի կողմիցն է փէշը քաշում, ծառան ձեռքն է դէմ անում, ո՞ր մէկը համարեմ, լեզուով ասելը հեշտ է, սրանց փող կը դիմանա՞ց, խոտի նման սարի թմբին հօ չի՞ բուսնում:

—Վնաս չ'ունի, խօջայ Բաղդասար, փողբաթ:ին մի մարդ է, հասարակութիւնը հարիւր ու մի, դու ինձ լսի՛ր, խալուարը 25 մանէթով հաշիւ արա՛:

—Մէջտեղն իմ օգուան ի՛նչ է:

—Եթէ կամենաս, երեսուն մանէթի ստացական տանք, հինգը դու վերցրո՛ւ:

—Ո՛չ, երեսունը շատ է աչքի ընկնում, քսան և հնդի գիր տո՛ւր՝ քսան ստացիր, զրանից՝ տասնութը ժողովրդին՝ երկուսը քեզ, հոգ չէ, մեր տանուտէրն ես, դու էլ օգուտ տես:

—Յետոյ քո բաժինը շատ չի լինո՛ւմ:

—Ա՛յ, պա՛, պա՛, պա՛... ինձ հարամ լինի, էն հինգն էլ պէտք է մոնի վերեն յիշածս մարդկանց փորը:

Եւ Բղդէն 20 մանէթով համարեց տանուտէրի յառաջ՝ 30 խալուարի գինը ու 25-ով ընկալազիր ստացաւ:

Ապահովագրին բացի տանուտէրից ստորագրել էին և երկու գիւղական առաջաւոր անձինք:

—Էս երկսի կտուցն էլ մի քիչ մեղր քսի՛ր, մասնացոյց արեց տանուտէրը Բղդէին ձեռք քաշողների ստորագրութիւնը:

—Ի՛նչ ես ինձ ձեռն առել, տանուտէ՛ր, երեսս կախուղ սեսա՞ր, առամներս համարեցի՞ր. ես չը գիտե՞մ, որ ցորենատիրոջ զրպանը կոպէկ չը պէտք է մոնի, բոլորը մարսելու էք դու և քո այդ ձեռք քաշող մարդիկը. մի գոգ փող եմ համարել առաջիդ, եթէ դու ապերախտ մարդ չես, պէտք է զորա մի մասն ինձ բաժին հանես, ա՛յ, թէկուզ այս երկու հատ թղթի կտորը:

Բղդէն ձեռքը ձգեց և յետ վերցրեց երկու հատ 25-նոց:

—Ը՛... ր՛... ր՛... խօսքը ծամծմոտեց կուչ ու հուպ գալով տանուտէրը և արտասանեց.

—Քո ցաւը տանի՛:

—Ուրեմն հիմի գնամ, տեսնեմ ի՛նչ գործի է մեր ամբարդար Պապիկը, ստաց Բղդէն և տեղիցը վերկացաւ, իսկ մինչև իմ գալս՝ դու ճաշի պատրաստութիւն տես, շատ քաղցած եմ:

—Հը, Պապի՛կ, ի՛նչ գործի ես, յանկարծ շտեմարանի դուռը բաց արեց Բղդէն, ներս մտաւ և ողջունեց իւր շտեմարանապետին: Շտեմարաններ գիւղերումը չը կան, նրանց փոխարինում են դատարկ սենեակները:

— Բարև՛, հաղար բարի՛, աղայ ջա՛ն, էն է՛, հա՛, էս գիշեր ջուալ-
ները կը լցնենք, բերանները կարելուց կը պրծնենք, էգուց կը
բարձեմ, ճանապարհ կը դնեմ:

— Աւազը խոշոր հօ չի՞, սև հօ չի՞:

— Ես բանական չե՞մ, հացակեր չե՞մ, աղա՛յ, խոշոր ու սև
աւազը խառնեմ լսի նման սպիտակ ցորենին, որ մտիկ տուողի աչ-
քին երևի՞: Ա՛յ, զլխիդ մեռնե՛մ, թէ չես հաւատում, համեցէք քո
բարի աչքովդ տե՛ս, աւազն իմ աչքի առաջին եմ՝ մաղիլ տուել ու երեք
օր արևումը փուել, չորացրել. այ՛, էս մի շեղջ ցորենն առանց աւազ
խառնելու է, մէկէլը խառնուած պատրաստ է, տե՛ս, կարողանո՞ւմ
ես երկու շեղջի ցորենները մէկս մէկից զանազանել:

— Ինչքա՞ն ես խառնուրդ անում:

— Ասենք՝ տասնին մէկ եմ՝ խառնում, բացց այդ հաշիւ չի, մի
բուռն աւազը տասը բուռը ցորենից ծանր է, մեզ էլ քաշն է
հարկաւոր. ախար չէ՞ կուռատեղը մեզինից քար ու կշիւքով են ստանում:

— Ի սէ՛ր Աստու, Պապի՛կ, աւելի չը խառնես, կարող է աչքի
ընկնել, յետոյ հոտը վեր կը լինի, մեզ համար ամօթ է:

— Ես ի՛նչպէս քո հացին կոյր մտիկ կը տամ, աղա՛յ ջան,
զլուսս աւազի միջին թաղուի լաւ չէ՛, քան թէ քո երեսին մի
սաւը խօսք դիպչի:

— Ապրի՛ս, ապրի՛ս, ա՛ռ քեզ համար մի արխալղացու:

Բղղէն մի հատ արծաթի նորաձոյ մանէթ երեք մատի մէջ բունած՝
մօտ կանչեց իւր ստորադրեալին ու լեզուով թաց արեց, փակցրեց
նորս ճակատին:

— Էս քիչ է, դեռ քանի՞ էսպէսը պէտք է ինձանից ստանաս,
Պապի՛կ, եթէ գործիդ արի ու հաւատարիմ կենաս:

Այնուհետև մի քանի ուրիշ կարգադրութիւններ արեց նա և
դուրս եկաւ, գնաց դէպի տանուտէրի տունը՝ իւր մէջ մտածելով.

— Շատ խելօք և վարպետորդի էմեր Պապիկը, կարծում էի, թէ
նեղացած կը լինի ինձանից, որ անցեալ օրը փողրաթ չու կողմից նշանակած
ռոճիկի կէսը կարեցի իմ օգտի համար, բացց ո՛չ, ինչպէս երևում է՝
իւր գործը հասկանում է: Հը՛, ժպտաց իւր մէջ Բղղէն, մեր խե-
լօք Դաւիթ-Պապիկն իւր խելքովն էլ կարծեց, թէ կ՞ու կ՞ու երդում-
ներով ու քաղցրախօսութիւններով ինձ միանգամայն վստահացրեց

իւր հաւատարմութեան վերայ, իբր թէ ես չը գիտեմ, որ եթէ շահ չ'ունենար մէջ տեղը, ամասկան հինգ մանէթով ինձ գերի չէր դառնալ ու փոշի կուլ տալով չէր խեղդուիլ. թող անի, ի՞նձ ինչ, իմ վաստակած ու քրտնածը հօ՛ չի ուտում. ասած է՝ ինչ որ պահասի, բաղիցը կը պակասի, բաղմանչու ի՞նչը պէտք է պակասի. մեզը ծախողը մատը կը լպսաի:

— Գնա՛, Աստուած քեզ հետ, Բղղէին ճանապարհ դնելուց չետոյ՝ նորա քամակից գլուխը շարժում էր Պապիկը. քո խնկրովը լաւ բան արիւր, որ վարձիս կէսը կարեցիր, ես էլ տեղը հանեցի. քո կարծեօքդ տասին մէկ եմ խառնում, էն էլ գետի աւազ. ի՞նչպէս չէ, խնկքս հացի հետ էի կերել, որ հինգ մանէթի համար կօլտո չարչի Բղղէի մշակը դառնայի. ընչի՞ չես ասում՝ տասին երկու եմ խառնում, ապառաժ լեռ քարն եմ ջարդել տալիս, փշրում ու խախալով մտղում, խառնում. մի ձեռնաչափ քարի մանրունքը տասն այնքան աւազից ծանր է. մի սոմար ցորենը քեզ համար դառնում է երկու սոմար, տակին էլ մի սոմար ինձ է մնում. հիմի սորա վերայ էլ աւելացրո՛ւ էն աւելորդ կօտը, որ ամեն մի խալուարին ստանում ենք ցորենասիրոջից: Ասենք էս վերջինի մէջ ինքը տանտէրը հետս մասն ունի, մի քանի բուն էլ զգրին է հասնում: Եղպէս է, պարոն Բղղէ՛, «գողը գողից դողացաւ, Աստուած վերնից զարմացաւ»:

(կը շարունակւի)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ, ՁԱՐԳԱՑՈՒՄՆ ԵՒ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՐՇԱԿ ՏԵՐ-ՄԻՔԷԼԵԱՆԻ

«Բազմութիւն խնայող փրկութիւն է աշխարհաց»։ (Առակ)

«Կրթեցէք զանձինս ըստ ժամանակիս նախասկութեան»։ (Ոսկերեբան)

«Այլ մարդոյ, թէ և իցէ սք խնայողն, չի ամօթ ըզգում ինչ ուսանելի...»։ (Սոփոկէս)

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅԻ ԳՊՐՈՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ ՄԻՆՁԵԻ
ՊԵՏԱԿՈՅՑԻ

Քրիստոնէութիւնը մտաւ Կերմանիալ բաւական ուշ, աչն է Տ-րդ դարում, ըստ որում և զպրոցական աշխարհի մարդասիրական ծաւալման ճշմարիտ սերմերը ցանկեցան աստուածային բանի քարոզութեամբ։ Քանի տարածւեց քրիստոնէութիւնն, աչնքան աւելի բազմացան եպիսկոպոսական նստավայրերը, նոցա հետ ևս հաստատուեցան զպրոցներ։ Ազգային վարերից ամենանշանաւորն էր Ֆուլդալի վանքն, որ իւր միաբանութիւնով և լիաբառ նւիրատութիւններով օր ըստ օրէ ծաղկում էր, որտեղ և մեծ անուն ստացաւ Ալիւինի աշակերտ Ռաբանուս Մաուրուս, որ «առաջին վարժապետ» տիրոզոն էր կրում։ Ալիւինի հեռանալուց վատու, լանձնուում է զպրոցը սրան, որ և առաջինց ստանում է քրիստոնէական խրատներ աշակերտներին կրթելու, նոցա ճշմարիտ օրինակ լինելու և պատիրել ուսանիլ, որ հապա ուսուցանել կարողանալին։ Վանահօր շուրջ գտնուում էին 12 արեղաներ, որոնք զպրոցական գործին աջակից խորհրդատուներ էին։ զպրոցի տեսուչն էր Ռաբանուսն, որն «մագիստրոս» կոչումն էր ստացած։ Գպրոցի գրութիւնը շատ բարդաւած էր, աչնպէս որ ամենափե-

րին ընտանիքներից իսկ աշակերտներ էին լաճախում. այնտեղ աւանդուում էին քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, թւաբանութիւն, երկրաչափութիւն, գեղարանութիւն (արևեստ բանաստեղծութեան), երաժշտութիւն, աստղագիտութիւն, բնագիտութիւն, իմաստասիրութիւն և աստուածաբանութիւն: Գործի չառաջանալուց զգալի եղաւ կարևորութիւն հողենւէրներին բաժնելու աշխարհականներից, ըստ որում առաջինները տարւեցան վանք, իսկ երկրորդները հեռու մնացին նոցանից: Վանական բաժնի վերաջ դարձրեց նա իւր բոլոր ուժերն ամենայն հաւատարմութեամբ, ուսուցանելով իւրաքանչիւրին այն մասնաճիւղերը, որոնց ընդունակ էր ամեն մի աշակերտ: Ժամանակի ուսումնատեւնչ կրօնաւորները դիմում էին նորա մօտ ուսումն և գիտութիւն ստանալու համար, սակայն ոչ լոկ աստուածաբանական: Այդ դպրոցը մեծ ազդեցութիւն ունեցաւ ամբողջ երկրի վերայ, իսկ Մաուրն առաջինն եղաւ ուսուցման գործում:

Մաուրի աշակերտների մէջ անուն հանեց Սարաբօ, որ իւր ժամանակի ուսուցման և կրթութեան օրագրութիւն կազմեց, որ իւր տեսակի մէջ միայն լինելով, շատ ուշագրաւիչ է: Նա հաղորդում է իւր ուսման ընթացքը մանրամասնաբար. ուսուցումն չառաջ է գնում փոքր առ փոքր, իւրաքանչիւր վեցամսեակում մի առարկայ և ամենքի մէջ զոց անելը գլխաւոր տեղն է բռնում, այնու ամենայնիւ կանոնաւորութիւնից զուրկ չէ եղել: Բացի կրօնական գրութիւնները որում էին աշակերտներին ընթերցանութեան Արկերոն, Յւարբիտի և Բեղա՛ի քրոնիկոնները, Մալուտ, Տիտոս Ալվիուս և այլք: Ատիներէն խօսել և թարգմանել, ճարտասանական բերանացի և գրաւոր վարժութիւններ անել և ոտանաւորներ գրել՝ աշակերտների մշտական զբաղմունքներն էին լինում: Գործանէր ուսուցիչների աշխատութիւնը չաջողութեամբ պսակում էր, վասն զի դպրոցական գործին աջակից էր կարլ Մեծն, որ Ալիւինի ազդեցութեանն էր ենթարկւած: Նորա շուրջը ժողովւած ուսումնականներն անվո-սաքսեր էին, որոնք գիտնական առատ պաշար ունէին իրանց լանձնւած դպրոցներում օգտակար լինելու համար: Կարլ Մեծը ձգտելով առաջնորդելու իւր ազգը գէպի լուսաւորութիւն և եկեղեցուն պաշտպան և գլուխ զինքն հաստատելով, ջանում էր հռովմէական սերունդը գերմանների հետ ի միասին մէկ քրիստոնէական պետութիւն կազմել իւր իշխանութեան ներքոյ և հէնց ազդպատակով զեղում էր իւր շնորհները պապերի վերայ, որով վերջիններս զաղարում էին ինքնազլուխ լինելուց: Նա եկեղեցական կալւածներն ու հարստութիւններն աւելացնելով, դպրոցներին կանոնաւոր ապահովութիւն տւեց, որոնց կառավարութիւնը գտնւում էր եպիսկոպոսների ձեռքում: Մինչդեռ պապական իշխանութիւնը սկսում էր ձգտել ուսումն և գիտութիւնը նեղ սահմանների մէջ զնելու, կարլ Մեծը հասկացաւ քրիստոնէութեան խնդիրը մարդկութեան լիակատար կրթութիւն ու ուսումն տալու,

հատկացաւ նորա բազմապարունակ շրջանը դանազան ազգերի առանձնա-
 չատկութիւններն և հոգևոր բարձր տարրերն իւր մէջ ընդունելու տրամա-
 դրութեամբ և ջանաց ազգայինը, պետականը նորա մէջ ամփոփելու և նորա
 հետ ձուլելու: Նա ինքն առաջինն մտցրեց ուսման մէջ գերմաներէնն և
 գեղաբանութիւնն, ինքն ևս սկսաւ ուսանիլ իւր լեզուի քերականութիւնն
 և ժողովիլ տւեց ժողովրդական երգերն, որոնք ազգային գրականութիւն
 պիտի կազմէին: Նա դրաւ գերմաներին գերմաներէն ուսուցանելու հիմքը,
 սակաւն չը ժխտելով հին լուսաւորութիւնն՝ իրրեւ լինարան նորի համար,
 ըստ որում, հին դասականներն (կլասիկները) ընթերցանութեան նյութ-
 թեր էին թէ աշակերտների համար և թէ նոյն իսկ իւր համար: Նա նկա-
 տելով որ ամենաբարձր լուսաւորութիւնը քրիստոնէութեան ծաղկումն է,
 այն համոզմունքին եկաւ, որ հոգևորականներն ևս գիտութեան և արեւտի
 առաջնորդներ պէտք է լինին, ըստ որում վերջիններս ամենաբարձր ու-
 սումն և կրթութիւն պէտք է ստանային: Սւ իրաւ, նա բարեփոխեց քահա-
 նաների դրութիւնը, քաջալերեց գրքերի արտագրութիւնն, ուչք դարձրեց
 եկեղեցական երգեցողութեան վերայ և ազգային լեզուով գրել տւեց քրիս-
 տոնէական վարդապետութիւնները: Արտեղ եպիսկոպոսանիստ չէր, անսեղ
 ևս հրամայեց, որ քահանաների վարչութեան տակ դպրոցներ բացւեն՝ կար-
 դալ, գրել, հաշու և երգելը դասընթացք դարձնելով, ըստ որում կարգա-
 դրեց 813 թւին Մանցի ժողովում, որ ծնողներն ուղարկեն իրանց որդոց
 կամ վանքերը կամ քահանաների մօտ՝ «ձալը մեր» և կաթոլիկական կրօնն
 ուսանելու: Հանրային կրթութիւնը լաւաջ ստանելու համար էր, որ հրա-
 մալից ծաղկեցնել եպիսկոպոսական կամ թեմական և վանական դպրոց-
 ներն, որոյէս դի հոգևորականներն ուսման մեծ պաշար ունենան ուսուցա-
 նել կարողանալու համար: Նա ասում էր՝ «Թէև աւելի զին ունի դործելը
 (ուսուցանելը) քան գիտնալը, բայց և այնպէս մտաղ պէտք է գիտենալ ու-
 սուցանել կարենալու համար»: Ամբողջ գիտութիւնը բաժանւած էր երեքի՝
 բարոյագիտութիւն, բնագիտութիւն և աստուածաբանութիւն—Աստուած,
 մարդ և բնութիւն՝ երեք շրջաններին զուգահեռաբար: Ամենաբարձր ու-
 սումնաւարն էր արքունի դպրոցը (schola Palatina), որտեղ ուսանում
 էին ազնւականները պետական ծառայութիւնների պատրաստելով, և որ
 գրութիւն ունէր այլ դրութեամբ Մերովինգների օրից, սակաւն կարլի
 ժամանակ մեծապէս լաւաջացաւ և կրթեց ոչ միայն նորա տղաներին այլ և
 արքունի կանանց: Արքունի դպրոցն օրինակելի եղաւ, ըստ որում ծաղկեցան
 քանի մի այլ դպրոցներ, որոնց ուսումնաւարիչներն էին Ալիւինի աշա-
 կերտները, նոյն օրինակից հիմք ստացաւ հապա Պարիզի հռչակաւոր հա-
 մալտարանը: Ուսման այս լաջողութիւնը շատ երկար տևողութիւն չ'ունե-
 ցաւ. կարլ Մեծի մահից վետոյ հետզհետէ գնում էր դէպի անկում և ու-
 սումը կենդրոնանում էր օր ըստ օրէ կրօնաւորների ձեռքում: Միական
 դպրոցներում նշանակւում էին այլ ևս ոչ թէ փոքր ի շատէ ուսեալ ան-

ձինք, այլ մեծ մասամբ տղէտ և անարժան հացաստրուկներ: Ամենուրեք կրօնը միակ աւանդելի առարկան դարձաւ և ճշմարիտ գրագէտները բացառութիւն էին կազմում, ըստ որում գրագիտութիւնն հոգևոր արւեստ էր կոչուում (ars clericalis): Հասկանալի է՝ որ ուսման այս միակ շտեմարաններում պէտք է կրթւէին և գիտութեան պաշար ստանալին ժամանակի լառաջավարները, պետական գործիչներն և իշխաններն, և ահա տեսնում ենք, որ ամենաբարձր պաշտօնեաներից սկսած մինչև դատաւորները չը գիտէին ստորագրել իրանց անուններն անգամ: Պապերի կողմից ուշադրութիւն չը կար, վասն զի նոքա իսկ զանազան սիրահիների ձեռքում խաղալիք էին. միայն երբեմնապէս կաշարներն ուշքի գալով բարւոքում էին զպրօցները, սակաւն ոչ երկարատեւ: Այս անկումը զգալի եղաւ մանաւանդ, երբ վանքերի գոները փակեցին աշխարհականների առաջ:

Գիտութիւնը խորասկեց ամենայն ուժով Գրիգոր Ե. (1073—1083), որի օրով զժողովքը տօնում էր իւր չաղթանակը և խորին խաւարը ափրում էր ժողովրդեան: Այդ կրօնաւոր ծպտեալ աշխարհակալը հիմնեց եկեղեցապետութիւն և աստուածալին փոխանորդութեան զառանցանքի մէջ իւր ձեռքն առաւ եկեղեցալին և աշխարհալին գործերի վարչութիւնը: Նա հրամայեց պարօցների մուտքը կրթեկներին արգելելու, որ իբր թէ կրօնաւորներն իրանց ջերմեռանդութեան խանդարիչներ չ'ունենան, ընդ նմին և և ոչնչացրեց ուսման և գիտութեան ծաւալը հոգևորականների համար, կարծելով թէ ազդոքիկ վնասակար են հաւատքին և բարեպաշտութեան: Արժարժումն ստացաւ վանական խիստ ձգնական կեանքն, որ հաւածեց հոգևորականների բարեկարգութեան և խլեց ժողովրդից լուսաւորութեան ազբիւրը. իսկ ապա այդ հարւածը մեծ ուժ ստացաւ զպրօցականութեան (սխօլաստիկա) ազդեցութեան տակ, որի հաւակներն էին Լանֆրանկ և Անսելմ Բենեդիկտեաններ Բեկի վանքում: Սր ըստ օրէ զարգացաւ օտար և կեղեցու բունութիւնը Կերմանների վերալ, ըստ որում և ազգալին գրականութիւն, լեզու և այլն կորցրին իրանց արժէքն ժողովրդի մէջ, որ անձեռնհաս էր որ և է մտաւոր պործունէութեան առանց ժամանակի ուսեալներին՝ կրօնաւորներին, բոլորովին անտրամադիր լինելով ինքնախոհութեան: Ժողովրդի մտաւոր անկումը չարակից է կրօնաւորների կատարեալ մտամերկութեան և անբարոյականութեան, որոնք տեղի տւին եկեղեցական անկարգութիւններին և անապաշտամունքների, որպիսիք էին «լիմարատօն» «փշատօն» և այլն, որոնք աչնպիսի չարգ էին ստացել, որ քանի մի պապերի խտտարգելութիւններն անօգուտ էին անցնում: Կրօնաւորներից գիտութիւն չէր պահանջուում, բաւական էր եթէ նոքա եկեղեցական պաշտամունքը գիտէին. իսկ կախարգութիւն, անապաշտութիւն, գիւլապաշտութիւն և ամենայն տեսակ մոլախաղեր նոցա մէջ սովորական բաներ էին, ըստ որում գիւլական արւեստը կամ գիւլագիտութիւնը նոցա մենաշնորհը լինելով, ժողովրդի մէջ տարածած առօրեայ ամենայն չարիքներ և թերութիւն-

ներ դեերի անմիջական ներդրութեան էին վերադրում: Հարկաւ, հոգեոր հովիւների մտաւոր կենաց ալտարիսի ոչնչութեան հետ զուգահեռաբար անմիսթարական պէտք է լինէր ժողովրդի կացութիւնը...

Խաչակրաց պատերազմը նոր շարժում տւեց գերմանական կեանքին, երբ ասպետները, մինչդեռ Հռովմը պարձեռնում էր սուրբ երկրի գրաւմամբ, փոքր ինչ մտախոհութեան գալով, սկսան վիպական, քնարական և խրատաբանական բանահիւսութեան անձնատուր լինել, որով դարձան ժողովրդի լուսատուրութեան և մտքերի զարթուցման մանևտիկներ. սիրերգուներն և վարպետերգուներն (Minnesänger, Meistersänger) մեծ ժողովրդականութիւն ստացան: Ժողովուրդն ևս ինքնադիտակցութեան եկաւ, շփուելով թէ ասիական ազգերի հետ և նոցա գիտութիւններին և արեստներին ծանօթանալով և թէ եւրոպական ալազգի խաչակիրների հետ, իրանց աղգալին մտաշրջանն ընդլայնելով: Գիտութիւնն և բանասիրութիւնն անցաւ աշխարհագրի ձեռքը, որոնք սկսան պարապել պատմադրութեամբ, իրանց տեսածները դրի առնելով, իմաստասիրութիւնը դարձաւ աստուածաբանութիւնից անջատ առարկայ (Պարիզի համալսարանում 1270): Մինչդեռ Նոնկենտիոս III-ի աշխարհակալական և եկեղեցատեսական ձգտումներն և Իտալիան օտարից աղատելու ջանքերը նման սերմեր էին ցանում Գերմանիայում, եկեղեցականներն ևս ուշքի գալով, չը թող սուին ձեռքից ուսուցման գործը: Արկին բացւեցան դպրոցները ժողովրդի աջակցութեամբ միայն այս անգամ, բազմացան ուսումնավարերը: Գոմինիկեաններն ուսման վարիչներն էին, որոնք և 13-րդ դարում բացին Թովմասեան վարժարանը Լապպիցում. ապա մի եկեղեցական ժողով հրամայեց, որ երեխաներն 7 տարեկանից ուղարկեն տօն և կիւրակէ օրերն եկեղեցի հռովմէական հաւատքն և «Հարմերը» սովորելու: Նկատելի է, որ այս դպրոցները ժողովրդականութեան և աղղալնութեան շատ սակաւ հետքեր ունէին, վասն զի լատիներէն էր դասաւանդութեան լեզուն, որ եկեղեցական և գրական կիրարկութիւն էր ստացել: Իրերի նոր վիճակն և ուսման տենչը մանաւանդ արևելեան գիտութիւնները ծանօթութիւնը մղեցին ժամանակի ուսեալներին դէպի համալսարանի դաղափարը. ալը նկատմամբ Ֆրանսիան խաչակրաց արշաւանքներից զգալի և խոր մտաւոր ցնցում ստանալով 1170 թ. հիմնեց Պարիզի հռչակաւոր համալսարանը (Սօրբօն կոչւած), որ օրինակ եղաւ ալրոց և անչափ աղղեցութիւն գործեց գիտութեան, իրաւանց և ալն վերալ: Անտի լոյր տարածւեց և Գերմանիայի վերալ, որտեղ 14-րդ դարուց զինի համալսարաններ երեկեցան նախ ի Պրագ 1348 թ., որ Յուսեանների վրդովումների պատճառով Լապպիցի ճիւղը տւեց 1409 թւականը:

Թէ գրավարժոցներն և քաղաքալին ուսումնարանները, թէ համասարանները չէին կարող անշուշտ մեծ օգուաներ տալ կամ լատաջադիմութիւն ունենալ թղթի և գրչագիր դասադրքերի անմատչելիութեան կամ

թանգութեան պատճառով: Շատ ժամանակ չ'անցաւ և անա չունաց գիւնականները խոյս տալով թիւրքերի տիրապետութիւնից, անցան Խաւիւար, իսկ ապա թղթադործութիւնը և տաղադրութիւնը նպաստեցին զրաւոր հնութիւններն ի լոյս ածելու և հսկայական դարկ տւին ուսման, գիտութեան և լուսաւորութեան չառաջադիմութեան: Զարգացման զօրաւոր միջոցները կապին—մտքերի կաշկանդանքների թօթափումը պէտք է հետեւէր անհրաժեշտաբար...

Հռովմէական եկեղեցականների հակադդպւնը բռնի վարչութիւնը, հակաւետարանական ձգտումներն և վարաբարչ անբարոյականութիւնը չը կարողացաւ ալլ ևս իւր ներքին փթրանք մտքերի կաշկանդելով և ինքնախոհների հալածելով վարազուրել: Ոչ մի դէպք չը կարողացաւ նրան սթափեցնել: Խաւիւարում երեկեցան բողոքողներ եկեղեցականների աղանջօրինակ անկման դէմ, որոնք թերևս փրկէին Հռովմը և իրանց եկեղեցին, սակայն խարուղին և տանջանքը պսակում էր նոցա իբրև հերձաւորներ: Գեռ Արնօլդ Բրեսչիա բողոքի ուժգին ձայն բարձրացրեց Խաւիւարում, քարողեց և իւր պարտքը կախադանի վերաջ վճարեց 1155-ին: Նոյն դարում երեկեցաւ Պետրոս Վալդուս և բողոքի աւելի հիմնաւոր սերմն ցանց, հիմնելով Լիօնում մի առաքելա-քրիստոնէական համայնք, որն Իննուկենտիս III-ից սաստիկ ճնշման հանդիպեց, բայց և այնպէս նոքա տարածումն ունեցան Ֆրանսիայում, Իտալիայում և ապա Գերմանիայում: Լսելի ձայն բարձրացրեց 14-րդ դարում Վիկլիֆ Անգլիայում, որ իւր նախորդ բողոքողների (Սալիսբուրի, Բակօ և այլն) զօրաւոր չաջորդն էր, և գրեց պապի բռնութիւնների, կամազականութիւնների և այլն դէմ, բայց հարկադրաւած ծրարտունը կտրեց: Նոյն զրօշակը կրեցին Յ. Հուս Պրագայում և Սաւանարոլլա Ֆլորենցիայում և պապական կրակին չանձնելով ոչնչացան:

Ճշմարտութեան սերմերը ցանկել էին, պապութիւնը դնելով իւր հիմքը աղու ևս Պետրոս և ի վերաջ աղբ վրմի շինեցից ղեկեղեցի իմ խօսքերի սխալ մեկնած հետեութիւնների վերաջ և ապա իւր եկեղեցականներին շնորհավաճառութեան փերեղակներ դարձնելով և ճիղուլթութեան անդունդի մէջ խորասուզելով, չէր կարող չարատեութիւն ունենալ. վաղ թէ ուշ ընդդիմութիւնը պէտք է զօրանար և անա վերջապէս գերմանական քնաթարթափի ազգը դարերի ընթացքում մտաւոր ցնցումներ ստանալով ինքնապիտակցութեան շարժում առաւ: Աւետարանի մտքերի հետ միացաւ ազգային գաղափարը, որ և բարձրացրեց օտարի լծի թօթափման զրօշակը: Շահասէր ժողովրդի համար կատաղելու միջոցներ ևս կապին՝ վանական կալուածքները: Խռովութիւնը հետևանք ունեցաւ և վերանորոգութեան առաջնորդները չաջողեցան ժողովրդի մի մասը Հռովմի բռնութիւնից ազատելու, ըստ որում չառաջադիմութեան դարկ ստացաւ նոյն իսկ հռովմէական աշխարհը:

Հռովմէականութիւնը վրժեց նորակրօններին, որոնք այժմ սկսան

ըստ կարեաց տարածել աւետարանը ժողովրդի մէջ: Յկեղեցին դարձաւ ազգի և ժողովրդի սեպհականութիւն, ուսումն էլ անցաւ նոցա հոգատարութեան: Ուսումն որ մինչև այդ ժամանակ ժողովրդին անմատչելի էր և նրանից անջատ՝ տարածումն ունեցաւ և դիւրին ոճերի մշակմամբ, զանազան խոչընդոտների անհետացնելով և որ գլխաւորն է մայրենի լեզուի վերակենդանացմամբ կամ շաւ ևս սասած՝ ստեղծակերպելով շարմարեցաւ հում մտքերին: Մի երկրում, որտեղ թէ եկեղեցական պաշտամունքները թէ ուսման, գրագիտութեան մէջ ժողովրդի ականջին խուժաղուժ, բողբոլին օտար, մայրենի լեզուի հետ ոչինչ շարաւերութիւն չ'ունեցող լեզու էր կիրարկութեան մէջ՝ նորոգել մայրենի լեզուն և ամենաչն շարաւերութիւն թէ առ Աստուած, ուսումն և գիտութիւն և թէ դէպի միմեանց գիտակցական կացնել, —այդ արդէն մի: Կենսաբան մեծ գործ էր, որ պակաս լեզափոխութիւն չը պիտի մտցնէր կեանքի մէջ: Սակայն սկզբում մայրենի լեզուն չ'արտաքսեց հիմնովին լատինը. շատ տեղեր դեռ ևս ի շարքի էր վերջինը, մանաւանդ չը կորցնելով իւր ազդեցութիւնը թէ հռովմէական դպրոցների նոր շարժումից և թէ Պետրարքայի ոգևորած մարդասէրների (հումանիստ) լոյն և լատին գրականութիւնը ուսումնասիրելու տենչանքից զարկ ստանալով: Իսկ ապա Կոպերնիկեանների փորձերն, աստղագիտական և այլ գիտերն ուղղեցին բանասէրների մտքերն առ բնախուզութիւն, որով բացեց գիտութեան մի նոր ասպարէզ:

Այս նոր ուղղութիւնը բարերար հետևանք ունեցաւ փորձի և զննութեան աշխարհը բանալով, որ պարտնակում էր իւր մէջ նոր իմաստասիրութեան սաղմերը. այդ երևաց առաջին անգամ իւր փոքր ի շատէ զարգացման մէջ 1620 թւին Բակօ Վերուլամ անգլիացու գրւածքում: Աչնուհետև մանկավարժութեան զարգացումն ևս սկիզբն առաւ այդ ուղղութեան ազդեցութեան տակ: Բակօն՝ Անգլիայի Եղիսաբէթ թագուհու կենքապահապետի որդին՝ ծնաւ 1561 թ., ուսումն ստացաւ Պարիզում և ապա հասաւ նախարարապետի ատոյժանի Յակոբ Ա. ի օրով: Նա զնում է գիտութեան մէջ 3 շրջանների, ըստ որում և մեր ճանաչողութեան երեք առարկաներ՝ Աստուած, բնութիւն և մեր սեպհական էութիւնը: Բնութիւնը ներկայացնում ենք մեզ սնմիջաբար, Աստուած՝ բնութեան միջոցով — ապա միջնորդաբար, անդրադարձաբար մեզ ինքեանցս: Աչսպէս, այդ մեծ մտածողը աստուածային բանի՝ չափանութեան վերայ է զնում իւր ճանաչողութիւնն Աստուծոյ: Նորա գլխաւոր նշանակութիւնը «լատաջագալական» (գենեալիկական) ոճն է բնական գիտութիւնների շրջանում, ըստ որում պիտի տալ սկիզբը, տարրականը և ապա մէկ կէտից մէկն անցնել չորրորդաբար. նա ասում է նոյնպէս, որ ուսուցումը հպեցողական պիտի լինի, «մարդիկ պիտի սովորած և ձեռք բերած հպեացքները առ ժամանակ թողնեն և զառնան իբրև նորածին մանուկներ զննական պարզ իմացքով դէպի աշխարհը», ուրեմն իրանց բաց աչքերով և սգով կենդանի ընտելանը

զիտեն: Այսպիսով Բակոն մանկավարժութեան իրադիտական (բէալական) ուղղութեան հարն է համարուում: Ըստ աստուածալին բանին, իշխուել երկրի վերայ, ճանաչել իրերի զօրութիւնը և նոցա ինքեան օգտակար կայցնել,— այս եղաւ պիտութեան շրջանաբար սկզբունքն, որ տւեց Բակո Վերուլամցին: Այնուհետև մանկավարժութեան ճանապարհ շաւղեց Յովհանն Ամս Կոմենիոս, որ Պետտարցցու լարանման նախորդն է. այդ «Նախասուն մանկավարժների մէջ» ծնաւ 1592 թ.-ին, ըստ նոր կենսագիրներին Ունդարիալի (Մաճառաստան) Մեհրեն գիւղում, ուսումը կատարելագործեց ի Հերբորն և Հալլէրբերգ. Նա նւիրելով դպրոցական գործին, անօրինակ շրջանակցութեամբ, մտախոնութեամբ և հիմնաւորութեամբ մտահոգ եղաւ ուսուցումը վերակերպելու: Հաստատուն հաւատքով քրիստոնեայ էր նա, որի ուրախութիւնը Աստուծոյ մօտիկ լինելն էր հոգով և ամենալն մտածողութեամբ: «Ինչպէս Մեծն Աղէքսանդր, ասում էր նա, որն երբ Հընդկատան արշաւեց, իւր բոլոր աւելորդ ռազմագործիներն ալրել տւեց, աչնպէս ևս ես պիտի այս կեանքի բազմաթիւ անկարևոր հոգսերը տակաւ առ տակաւ ինձնից թօթափեմ և նւիրեմ մէկ կարևորին և եթէ Մի խղճուկ խրճիթ բաւ է ինձ իբրև բնակարան: Իմ գրադարանս պիտի կազմել աստուածալին երեքկին գրքերից՝ չարմուքեան, բնութեան և խղճի»: «Մէկ անհրաժեշտի» վերայ էր կանչնած նորա ամբողջ մանկավարժութիւնը (unum necessarium) և նորա մանկավարժական հիմնասկզբունքն էր «Սկիզբ ի մաստութեան՝ երկիւղ Տեառն»: «Պիտի ցոյց տալ մանուկներին, ասում էր նա, Աստուծուն որոնել, Նրան հնազանդ լինել և ի վեր քան զամենայն սիրել և այդ շատ վաղանից սկսելով: Թող չը կարծեն ոմանք, թէ նոքա անհասկացող են. եթէ սկզբում չը հասկանան թէ ինչ են անում, ապագալում կը գալ և հասկացողութիւնը»: Երեխաներն Աստուծոյ որդիներն են, որոնք մկրտութեամբ լետ են տրուում Արարչին և Փրկչին. կանխապէս պէտք է նոցա սովորեցնել, որ մեր գոյութեան նպատակն է ոչ թէ ժամանակաւոր, այլ չաւիտենական կեանքը, մինչ ժամանակաւոր կեանքը նախապատրաստութիւն է չաւիտենականին... Ուստի պատանիները պէտք է առ տն ուղղելն, որ ինչ առ Աստուած է տանում, այն է՝ Ս. Գրքի ընթերցանութիւն, պաշտամունքների ներկայութիւն և բարեգործութիւն: Հաւատք, սէր և յոյս—անհա նոցա ուսման հիմնակէտերը:

Կոմենիոսին է պատկանում՝ կրթութեան ձևը մարդկային ունակութիւններից դուրս բերելու գաղափարը, որին հետեւեցին Ֆրանկէն և Պետտարցցին: Նա բաժանում է ուսուցումը 4 աստիճանի՝ մանկութեան, երկխալութեան, պատանեկութեան և երիտասարդութեան, ըստ որում խրաքանչիւրի համար զատ ուսումնարան—1) մայրական կրթարանը (schola materna), 2) գերմանականը (schola vernacula), 3) գիմնազիա (schola latina) և համալսարանը (Academia), առաջինը ամենքի տանը պէտք է լինի մինչև 6 տարեկան մանկան համար, երկրորդը խրաքանչիւր համալնքում

6—12 տարեկանների համար, երրորդն ամենայն քաղաքում 12—18 տ. և համալսարանը գաւառում 18—24 տ.: Գլխաւոր տեղն է բռնում մայրականն, որտեղ «առաջին 6 տարեալ միջոցին երեխաների մէջ ամենի հիմքն է զըւում»... Նախ ծնողները պարտ են բարի օրինակ լինել, ապա մանուկների իմացութիւնը՝ բարւոյն, գեղեցկին, կանոնաւորին ընդլայնել, բոլոր ուսմունքների հիմքերը տալ—պատմութեան, աշխարհագրութեան, երաժշտութեան, ճարտասանութեան և այլն, մանաւանդ շրջակայքը և հանդիպած իրերը զիտել սովորեցնել, ամենաչնչին իրերն անգամ աչքաթող չ'անելով:

Նա տարբերութիւն կամ որոշումն չէ դնում հասակների և դիրքերի միջև. հարուստ, աղքատ, մանուկ, պատանի, տղայ, աղջիկ—ամենքն էլ պէտք է ուսանին, ամենքն էլ հաւասար են Աստուծոյ առաջ՝ ամենքն էլ պէտք է ձգտեն աստուածանմանութեան և իրանց ապագայ կոչման ընդունակ դառնան: «Ամենքն էլ պէտք է ուսանին ամենայն ինչ. իւրաքանչիւր մարդ մի մանրաշխարհ է (միկրոկոսմոս)»: Ոչ թէ իւրաքանչիւրին մի գիտութիւն հիմնելու կարողութիւն տալ պէտք է, այլ ամենքն էլ պէտք է այնպէս ուսուցւին, որ իրերի հիմքերին, չարաբերութեանց և նպատակներին ուշադիր լինին, նկատել կարենան, որպէս և սահմանաւած են ոչ թէ զիտող, այլ գործող լինելու այս աշխարհում: «Գպրոցներն, ասում է նա, արհեստարաններ են մարդասիրութեան, որոնցում աշխատում են որ մարդիկ ճշմարիտ մարդիկ լինին, ալինքն հոգով իմաստուն, ձեռնարկութեան մէջ ճարպիկ և սրտով երկիւղած»: Ինչ որ հարկաւոր չէ այս կամ այն կեանքին, պէտք չէ ուսուցանել: Հարկաւ, ժողովրդական դպրոցները պէտք է աղղալին լինին. միջնակարգում պէտք է վարժեցնեն ի միտ առնւած բոլոր իրերի պատճառաբանական առընչութեան հասկացողութիւնը և դատումը տրամաբանութեան, քերականութեան և ճարտասանութեան և այլն միջոցով, ի հարկէ ըստ հիմանց և սկզբանց զիտութեան և արւեստի: Ուսուցման մէջ իսկ անցնել ներքինից արտաքինը, ընդհանուրից մասնաւորը, աստիճանաբար, առանց ոտտիւնների, դժւարից հեշտը, սակաւով շատանալ, չը շտապել, կանոնի և կարգի տակ վարել, ակճերև օդտակարը տալ, բազց ամենայն ինչ իւր ժամանակին—այս է կոմենտիտի գլխաւոր ուղեցոյցը, որ ցոյց է տալիս մեղնոյն իսկ ընտելիւնը: Նորա աղկանոնը պէտք է ոսկէ տառերով գրել՝ omnia sponte fluant absit violentia.

«Պէտք է նախ զգալութիւններն վարժել, ապա վիշոյութիւնը, քնտոյ հասկացողութիւնը և ի վերջոյ բանադատութիւնը», հիմնւած հոգու երեք կարողութիւնների վերայ՝ իմացք (nosnanie), հասկացողութիւն և միտք: Հասկացողութեան չարակից է խօսքը, «պէտք է սովորեցնել ոչ միայն հասկանալ, այլ ընդ նմին և հասկացածը արտայայտել և բանավարել»: այլ և սովրել ասածը հասկանալ:

Ուսման ընթացքում ստորին դասարանները պէտք է նախապատրաստ լին

լինին, վերինները կրկնել տալով մտապնդին: Ոչ թէ շատ բան տալ, ալ հաստատուն և չափորդաբար—non multa, sed multum!

Բոլոր ուսուցումները պէտք է փորձնական լինին, առընչական առարկաները զուգորդած և ամենայն ինչ վարժութեամբ: Վերջապէս լինէնք, որ կոմենիոս իւր բանահիմն էր արել ԾՆ. Բ. 19, որում Ադամ անուաններ է տալիս կենդանութիւններին, բաց կարճ և պարզ:

Մանկավարժութիւնն իւր ալս ծաւալման և ծաղկման մէջ էր, երբ երկրի խաղաղութիւնը կրկին արկիտման հանդիպեց. երեսնամեակ պատերազմը, հռոմէականները ալդ սոսկալի գրգռութիւնը տալին ու վրայ արաւ ամբողջ երկիրը, սակայն վերջացաւ առանց բռնապետական հետեանքների: Երբ 1648-ին խաղաղութիւնը տեղի ունեցաւ, իննսկեստ պապը Նոյովեց Նպատակաբարմար պատերազմի ալդ դադարը և խաղաղութիւնը չ'եղած հրատարակեց, ամենքին աղատ հրատարակելով զաշնադրութեան բոլոր շօղաձններից. դորան հետեց սովը, մարդակերութիւնն և ընդհանուր լուսահատութիւն, որ մեծ հարած տաւ երկրի բարօրութեան և հանգստութեան: Ալդ թշուառութեան ժամանակ Մաքս-Գոթալի դուքս Էրնստ երկուրդածն էր (1640—1675), որ առաջինն ալս խառն հանգամանքներում նորոգեց ուսումնարաններն իւր երկրում և ուշք դարձրեց վարժապետների զարգացման: Ալդ ամի մանկավարժ էր իշխանների մէջ և իշխան մանկավարժների մէջ, ալդ սակաւ և խոհուն անձը միակն կղաւ իւր գործերով, որ իրապէս ձեռք գարկեց ժողովրդին լայ մատակարարելու և ալդ նրան անպէս չաջողեց որ առած էր դարձել թէ՛ աղուքս Էրնստի դեղջուկներն աւելի սակաւ են, քան աղնականներն ամբողջ Գերմանիայում: Նա գահ բարձրանալով, ալցեւելց բոլոր դպրոցները, հանդիպեց Արնօլդ Բալհէրին, որին և հրաւիրեց Գօթալի գլխնաղիալի տեսչութեան և իւր իսկ խորհրդակցութեան: Բալհէրը մշակեց ուսուցման ձեւը, որ և առաջին անգամ հրատարակեց 1648-ին, որում ցուց էր տրած թէ ինչպէս պէտք է ժողովրդական դպրոցներում ղրբապէս աւանդել զանազան առարկաներ: Ապա դուքսը հաստատեց մի նոր կանոնադրութիւն, ըստ որում բոլոր մանուկները թէ տղալ թէ աղջիկ պէտք է դպրոց ուղարկէին և քահանան նոցա անունները պարտաւոր էր որոշեալ մատուանում արձանագրելու իսկ եթէ ծնողներն ուշացնէին, պարտ էին առաջին ժամի համար մէկ գրօշ (5 կոպ.), երկրորդին՝ 2 գրօշ, երրորդին 3 և ալցն վճարել, իբրև տուգանք: Գրոցները հոգան էլ վերաթողեց համայնքներին և հողաբարձուներին, որոնք պարտաւոր էին օր ըստ օրէ բարեկարգել և բարենորոգել թէ շինութիւնը թէ ուսման ամենայն պարագաները. նա գրեց՝ «ով իրաւունքներ ունենալ է ուղում, նա պէտք է պարտիք ևս չանձն առնէ»: Իւր չափորդներին ևս կտակեց մի ուսուցչանոց հիմնել:

(Կը շարունակուի)

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ն Ե Ր Ի Ն

Ե. Մ Ա Դ Ա Թ Ե Ա Ն Ի

Սրանից մի քանի ամիս առաջ մեր բանասերների ուշադրութեանը ես առաջարկեցի իմ անդրանիկ քննական փորձը՝ «Փառասոս Բուզանդ»։ Համոզւած լինելով, որ այդ ամենանշանաւոր, բայց և ամենից քիչ ուսումնասիրւած հայ պատմիչներից մէկին վերաբերեալ հետազոտութիւնս զերծ չի լինիլ նոյն խոյ խոշոր պակասութիւններից, ես աչնու ամենաչնիւ սովորական ներողամտութեան փոխարէն սպասում էի խիստ և անաչառ քննադատութեան, ինչպէս ասել եմ նաև գրքովիա ներածութեան մէջ։ Այդան մարդիկ, որ աչքաթող արին իմ այդ հրաւէրը և բաւականացան համառօտ գրախօսական նկատողութիւններով կամ իմ խեղճ գլուխը գովելով, բայց բարեբաղդաբար աւելի շատ եղաւ աչնալիսիների թիւը, որոնք կամեցան կամ ցոյց տւին թէ կամենում են լրջօրէն վերաբերուել գործին, որոշելով իմ աչխատութեան խակական արժէքը և լոյս սփռելով իմ շօշափած մութ խնդիրների վերաչ։ Եթէ առաջին կարգի քննադատներից շնորհակալ պիտի լինիմ միաչն ևս, երկրորդ կարգի կրիտիկոսներին՝ ինձ հետ միասին երախտագարտ պիտի լինի նաև բանասեր հասարակութիւնը։ Խնդրը աչն է միաչն թէ սրքան չաջողութեամբ են կատարել իմ չարգելի կրիտիկոսները իրանց չանձն առած Գլատասխանատու դերը։

Փառասոսին վերաբերեալ խնդիրները պատում են հետեւեալ երեք հարցերի շուրջը. նախ՝ թէ ով էր Բուզանդ, երկրորդ՝ թէ ինչ լիզուով պատմագրեց, և երրորդ՝ թէ ինչ գրութեան մէջ է հասել մեզ նորա պատմութեան ընագիւրը։ Իմ ներկալ լացատրութիւնը գրւած է հէնց աչն աւարկութիւնների աւթիթով, որանցով ոմանք կարծում են խախտել իմ տեսութեան հիմքը։ Ընթերցողը կը ներէ ինձ, որ ստիպւած եմ աչատել երկրորդիլ գրքովիա մի քանի կէտերը։

Փառասոսի ծագման խնդրը լուծելու համար՝ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել մանաւանդ հետեւեալ հատւածի վերաչ, որ գրւած է Բուզանդարանի վեցերորդ գլուխութեան ցանկի վերջում. «Ասորոտ ամենաչն

պատմութեանց չաղաղս իմ տեղեկութեան, որք մի անդամ զմատեանս ընթեռնողք, տունք տասն՝ համարական թուօք»: Այս հատուածը զիստականները հասկանում էին աճյալէս, իբր թէ պատմիչը իւր աշխատութեան վերջում տեղեկութիւն է տւել իւր մասին. ուստի չը գտնելով այդ տեղեկութիւնը, ենթադրում էին թէ Բուզանդարանի վերջից պակաս է տասը տուն: Իմ փորձի մէջ դռն հատուածին ես տալիս եմ տարբեր մեկնութիւն. «Իմ մասին տեղեկութիւններ բովանդակող բոլոր գրութիւններից չեստոյ, ընթերցողներդ կը գտնէք թուով տասը գրութիւն», և այդ է Փաւստոս եպիսկոպոսին և նորա եղբօր նւիրած գրութիւններին չաջորդող չօղածներին թիւը: Ես չեմ տւել այդ հատուածի բառացի թարգմանութիւնը, այլ ներկայացրել եմ միայն միտքը (եր. 6), բայց և աճյալէս ես պատրաստ եմ պատասխանել եմ կրիտիկոսներին ¹⁾, որոնք քննադատում են իմ այդ մեկնութիւնը, որպէս բառացի թարգմանութիւն: Ինձ ասում են. 1) Ինչո՞ւ Փաւստոս ցանկի վերջին է դրել այդ նախադասութիւնը, եթէ պատմութեան վերջին չը պիտի տար իւր մասին տեղեկութիւն: «Եթէ հինգերորդ գլխոյն մէջ պիտի կատարէր իւր խոստումը, — նկատում է նոյնպէս «Հանդէս Ամսօրեայ» քննադատը, — ցանկին մէջ ալ բնական էր որ Ն. զլխոյն տեղը դրէր այս ծանօթութիւնը: Աւելի բնական է կարծել թէ՛ որովհետեւ Փ. զլխոյ ցանկէն անմիջապէս ետքը դրած է այս խոստումը, ճշդիւ հոն ալ պիտի գտնէր գրւած, աչիւնքն գրոց վերջը, և իբրև չի շատակարան»: Զարմանալի լօգիկա. ուրեմն այդ հատուածի միտքը կախւած է իւր տեղից և ոչ թէ աճյալ բառերից, որոնք տալիս են նախադասութեանը իմաստ... Եթէ իւր կարծիքը քննադատը համարում է աւելի բնական, հետևաբար, նոյն խկ իւր տեսակէտից, բնական է նաև իմը: 2) Ինձ ասում են. տուն չէ նշանակում գլուխ: — Թարգմանեցէք տուն. բանի էութիւնը գրանից չի փոխել: Պատմիչը տուն է անուանում Զ. զպրութեան գրութիւնները սկսած Բ. զլխից, որովհետեւ դրանք բոլորն էլ, ունենալով մի ընդհանուր վերնագիր («չաղաղս եպիսկոպոսացն» և այլն) նաև կարճ կարճ են, ինչպէս լինում են սովորաբար ռոմանաւորների կամ սաղմոսի տները: 3) Ինձ ասում են. հինգերորդ գլխից չեստոյ տասըմէկ գրութիւն է դալիս և ոչ տասը: — Բայց չէ որ պատմիչը ասում է. «ստորոտ ամենաչն պատմութեանց չաղաղս իմ տեղեկութեան», և միայն վեցերորդ գլխից ենք մենք տեղեկանում, որ Փաւստոս («ազով հոռոմ») էր: Ինձ ասում են. 4) եթէ տեղեկութեան բառի փոխանակ տեղեկութիւն լինէր, աճյալ ժամանակ իմ մեկնութիւնը սխալ կը լինէր: — Այո, բայց չալտնի է որ բոլոր զրչաղիւրներում

1) Գրքոյկիս մասին հրատարակեցան յօղածներ հետեւեալ պարբերական հրատարակութիւններէ մէջ. «Մուրճ» 1890 թ., № 1. «Աղբիւր» 1890 թ., № 1. «Արաբ» 1889 թ., № 2. «Հանդէս Ամսօրեայ» 1890 թ., № 3. «Արձագանք» 1890 թ., № 4, 6. «Նոր-Դար» 1890 թ., № 38.

տեղեկութեան ենք կարգում, և չը կայ մի հասիկ զըջաղիւր տեղեկութիւն վարիանտով:

Ապացուցանելու համար, որ Փաւստոս լուծարէն է պատմադրել, ևս 1) հաստատել եմ, որ նորա երկը չորրորդ դարու գործ է, որովհետև պատմութեան չափազարանում ակնարկած թագաւորների շարքը՝ Զ. դպրութեան մէջ վերջանում է Խոսրովի և Արշակի անուճներով, իսկ «ղլխաւոր կայսր-կոպոսների» շարքը՝ Ասպուրակէսի անունով, որի հովուութեան տևողութիւնը չէ որոշւած (եր. 13): Այս առիթով «Հանդէս Ամսօրեայ»-ի քննադատը նկատում է. «Եթէ կը զօրէ այս ցուցումն, ապա ուրեմն Խորենացի ալ 441-ին գրած լինցուցած է իւր պատմութիւնը, վասն զի մինչև այն ժամանակ կը հասցնէ իւր աւարտարանութիւնը»: Սակայն այս ակնյայտնի թիւրիմացութիւն է. իմ ասածը այն չէ թէ՛ որովհետև Փաւստոս մինչև Ասպուրակէսի կաթողիկոսութեան ժամանակն է հասցրել իւր պատմութիւնը, ուրեմն հէնց այդ ժամանակն էլ վերջացրել է իւր գործը: Այդ եզրակացութիւնը ես դուրս եմ բերել Բուզանդարանի չափազարանի («խոստարանութեան») և վեցերորդ դպրութեան («առաջարանութիւն վճարման») զուգադրութիւնից: Յառաջարանում պատմադիրը խոստանում է հասցնել իւր պատմութիւնը «մինչև ի վերջին ժամանակն...», իսկ Զ. դպրութիւնից երևում է, որ այդ «վերջին ժամանակը» Խոսրովի և Ասպուրակէսի ժամանակն է: Քննադատի մէջ բերած Խորենացու օրինակը շատ անշուշտ է. այդ կը նշանակէր վէճ բանալ քերթողհօր վերաբերեալ մի շարք խնդիրների մասին, որոնք կարօտ են առանձին հետազոտութեան:

2) Ես քննադատութեան եմ ենթարկել այն կարծիքը թէ չորրորդ դարում հայերէն գրելու սովորութիւն կար՝ պարսից, լուծաց, և ասորոց դրերով: Փոխանակ քննելու իմ բերած փաստերը, «Արաքս»-ի քննադատ պ. Նումէնը (էջ 120—121) ընդհանրացնում է խնդիրը և մատնանիչ է լինում Վիկտօր Լանդլուալի հեղինակութեան վերաջ որպէս զի հաստատէ, որ «Ն. Մ. (իմ նկատութիւնը) հայոց հին գրականութեան հետ լաւ ծանօթ չէ», և որ ինքը՝ պ. Նումէն՝ Վիկտօր Լանդլուալի Collection-ի չափազարանը կարդացել է, ուրեմն «հայոց հին գրականութեան հետ լաւ ծանօթ է»...

3) Պրօֆ. Պատկանեանի այն կարծիքի առիթով թէ Բուզանդարանը կարող է թարգմանւած լինել ասորերէն թարգմանութիւնից, ևս նկատել եմ որ այդ ենթադրութեանը կշիռ տալու համար հարկաւոր էր մէջ բերել Բուզանդարանից՝ խորթ ասորաբանութեան օրինակներ, իսկ ինքս, իմ կարծիքս հաստատելու համար, առաջ եմ բերել մի երկու լուծարանութիւն և մի քանի սակաւ գործածական լուծարէն բառեր: Ես առանձին նշանակութիւն եմ տւել այն հանգամանքին՝ որ Բուզանդարանում Վահագնը Հերակլ է անուանւած, իսկ նախարար բառի փոխարէն մի քանի անգամ կարդում ենք սասրապ: Ինձ առարկում են թէ այդ բառերը կարող էին լի-

նել և հալ ժողովրդի բերանում («Նոր-Գար», № 38):—Այն, բայց խնդիրը այդ չէ. բռնարկն բնագրում միայն Հերակլէս է եղել, իսկ թարգմանիչը մեկնել է այդ անունը («Հերակլազ՝ ալսինքն Վահագնի») (Գար. Գ. զԼ. 14): Գիցուք, սա առաջ բառը կարող էր նմանապէս ծանօթ լինել ժողովրդին, բայց ինչով մեկնենք որ նոյն իսկ Բուզանդարանում անհամեմատ աւելի չաճախ է գործածւած նախարար բառը:

4) Ես պնդել եմ, որ իւր ձևով և բովանդակութեամբ Բուզանդարանը սահմանւած է երևում ընդարձակ չրջանի ընթերցանութեան համար. այդ պատճառով նորա լեզուն քիչ ունի օտարարանութիւններ և աւելի բնական է քան մեր «կլասիկական» բարբառը, որ անմատչելի է եղել ժողովրդի մեծամասնութեանը: Այդ ասելով ես մտքովս անգամ չէի կարող անցկացնել թէ մի նոր բան եմ ասում: Բանից դուրս է գալիս, որ այդ quasi «համարձակ և նորագիւտ դաղսփարը» զայրացրել է իմ գիտնական քննադատներին: Ես չեմ պաշտպանիլ ինձ, թող խօսէ պրոֆ. Ք. Պատկանեանը, որի աւտօրիտէտը, կարծում ենք, չեն ժխտում նաև իմ քննադատները. «Этотъ литературный языкъ, Востаникъ,—ասում է հանգուցիալ պրոֆէսորը, даже и въ IV вѣкѣ, не былъ народнымъ и живымъ. потому что съ тѣхъ поръ и до самаго нашего времени онъ не развивался далѣе и остановился при тѣхъ грамматическихъ формахъ, какія мы встрѣчаемъ въ немъ въ началѣ IV (?) вѣка. Видно по всему, что это былъ искусственный языкъ, который былъ въ употребленіи при дворѣ и канцеляріяхъ». (Исслѣдованіе о составѣ армянскаго языка, стр. XIV).

Հիմնելով պատմիչի խօսքերի վերաջ («է ինչ մեր պատմութիւն՝ որ առաջին է, և է ինչ՝ որ վերջին է»), ես ապացուցել եմ որ Փաւստոս զրեւ է նաև հարց հեթանոսական պատմութիւնը, որ մեր ձեռք չէ հասել: Փոխանակ ցոյց տալու իմ սխալը, («Հանդէս Ամսօրեալ»-ի քննադատը խորհրդաւոր եղանակով նկատում է. «Ինդիր մեծ է թէ ինչ է ճշդիւ իմաստն այս խօսքերուն»): Պ. Քարամեանը չէ «կարծում» որ «կարելի լինի ասել, որ նորա պատմութեան մի նշանաւոր մասը կորել է, քանի որ դորա հակառակ է խօսում Փարպեցու խիական չառաջարանը: Գիււրու-թեամբ կարելի է ընդունել,—չարունակում է «Արձագանք»-ի կրիտիկոսը, որ այդ առաջին զուխը խմբագիր-թարգմանչինն է և ոչ Փաւստոսինը, որով խնդիրը լուծւած կը լինի» («Արձագանք», № 6, էր. 8): Ինչպէս տեսնում էք, պ. Քարամեանը նմանապէս նեղութիւն չէ տալիս իրան մտածելու թէ «ինչ է ճշդիւ իմաստն այս խօսքերուն» և գիււրութեամբ ընդունում է մի ենթադրութիւն, որ ոչինչ չ'ունի և հակասում է նոյն իսկ իւր այն կարծիքին թէ Բուզանդարանը բովանդակում էր մի քանի ազգերի պատմութիւն: Բայց ինչո՞ւ չ'իյօթ չ'զննիր սխալ կրիտիկոսը չէ ուղում ընդունել, որ Փարպեցու ձեռքի տակ եղած օրինակում կարող էր պակաս լինել Բուզանդի պատմութեան մի մասը:

Ես հիմունք չեմ տեսել պնդելու թէ Փաւստոսի բնագիրը լի է օտարամուտ գրածներով, քանի որ էական սարբերութիւն չը կալ մեզ չափոնի գրչագիրների միջև: Իմ կարծիքի դէմ վաստերով լինելու փոխարէն, իմ քննադատները բողբոսում են ենթադրութիւններով: Ի հարկէ, ամեն ոք ազատ է ունենալ իւր կարծիքը և ես հարկ չեմ տեսնում գերադասելու իմ հակառակորդների սուբբիկալու տեսակէտը:

Մրանով ես պէտք է վերջացնէի խօսքս, եթէ կարելի լինէր լուծութեան տալ այն անփութ վերաբերութիւնը դէպի կրիստիկոսի ծանր պաշտօնը, որ աչքի է ընկնում իմ փորձի առիթով գրած մի երկու շղթածում և որ բացառիկ երևութ չը լինելով մեր մամուլի մէջ, արժանի է լինչատակութեան: Բանն այն է, որ իմ կրիստիկոսներից ոմանք, բացի իմ գրքովի թող կողմերը վիշտասակելուց, ձգտում են ցոյց տալ, որ առելի գիտեն քան որ գիտեն իսկապէս և այդ նպատակով գործ են դնում ներելի և անճերելի միջոցներ: Ներելի եմ համարում ես, երբ քննադատը չեղում է բուն հարցից, մանրամասն է կանգ առնում մանր խնդիրների վերաջ և կրկնում է վաղուց չափոնի և ձանձրալի դարձած ճշմարտութիւններ: Բայց անճերելի է հեղինակի խօսքերն աղաւաղելը, նրան չը հասկանալու դճելը և բանագորութիւններ անելը... Ես մէջ կը բերեմ մի քանի վաստեր:

»Արաքս«-ի սրախօս քննադատ պ. Նումէնը, նկատելով որ իմ գրքովի մէջ լածախ է դործածւած համարեա բաւը, իւր կողմից աւելացնում է. »Մենք ես մեր կողմից նկատում ենք, որ Պ. Ս. Մ. Նումուէս համարեա թէ է առանց աւելի հարկաւոր գրքեր կարդալու լանձն է առել Փաւստոս Բուզանդացուն քննադատել. հակառակ դէպքում չէր համարձակի, ի միջի ալոց, Փ. Բուզանդացու և Աղաթանգեղոսի պատմութիւնների մէջ համառութիւն եղբակացնել այնպիսի հատւածներից (էջ 34), որոնք կարող էին լինալ պատմութիւնների մէջ սպրդակ Ս. Գրքից, օրինակի համար՝ »Ո՞վ չափեաց գերկինս« և այլն հանւած է Նոալի գրքից, գլ. խ. 12⁴: Այն ինչ արժէք միայն լինել իմ նոյն եր. 34 ծանօթութիւնը, որտեղ աււած է. »նիթլ չենք սխալուում, առաջին հատւածը ունի և կորիւն, իսկ վերջինը (իմնս »Ո՞վ չափեաց գերկինս« և այլն) կալ և Ս. Գրքում⁴:

»Արձագանք«-ի կրիստիկոս պ. Քարամուհանը, միանգամայն լանդէպս մէջ բերելով Ղազար Փարպեցու պատմութեան լուսաջաբանի վաւերականութեան խնդիրը, նկատում է. »Չարմանալու է արդարեւ, որ յարդ ոչ ոք ուշադիր չէ եղել Փարպեցու լուսաջաբանին, որի անկող և բազմաթիւ ընդմիջարկութիւններով խանգարւած լինելը ոչ ոք չէ նկատել⁴: Այս բոլորի բուն խնդիրը մեզ չէ գրադեցնում, բայց թէ որքան իրատայի է պ. Քարամուհանի նկատողութիւնը, ընթերցողը կարող է գատել, կարդալով պ. Խալաթեանի »Ղ. Փարպեցի և գործք նորին« աշխատութեան երես 55—57¹):

1) Ի դէպ լինէնք նոյն կրիստիկոսի մի ուրիշ համանման վարմունքը նոյն պ.

Նոյն պ. ֆարամեանը նկատում է. «Պ. Մ. Փաւստոսի հեղինակութիւն չունենալը բացատրում է նրանով՝ որ նա ճապաղ լեզուով է գրւած, չոյն ժամանակադիր է և հակակաթողիկոսական ձգտումն է ցոյց տալիս. համաձայնելով այս պատճառաբանութեան, ես (այսինքն ֆարամեան) առաւել մեծ պատճառ եմ համարում նորա հեղինակութեան անկման այն հանդամանքը, որ Խորենացու պատմութեան անհամաձայն էր պատմում, ուստի ինքն ըստ ինքեան խոտելի էր այն պատմագիրներին, որոնք Խորենացու աշակերտներն էին ամենքն ես» («Արձագանք», № 4, էջ 10): Ահա ինչ եմ ասել ես իմ փորձի ներածութեան մէջ (էր. II). «Կարդալով մեր միջնադարեան պատմիչներին, միեք նկատում եմք, որ Փաւստոսի երկասիրութիւնը նրանց համար ծառայել է միայն որպէս երկրորդական աղբիւր: Այն սակաւաթիւ վկայութիւնները, որ քաղում են նրանք Բուզանդարանից, մեծ մասամբ այն տեսակ իրողութիւններ են, որոնք ուղղակի չեն հակասում Մովսէս Խորենացու պատմութեանը: Առհասարակ քերթողահօր հեղինակութիւնը անհամեմատ աւելի բարձր է եղել հին հայոց գրականական աշխարհում»:

Ակնեւր է որ պ. ֆարամեանի խօսքերը հիմնւած են իմ խօսքերի վերայ. բայց զուր է նա կարծում որ եթէ Խորենացու հեղինակութիւնը բարձր էր, ուրեմն Փաւստոսի վարկը ընկած պիտի լինէր: Աւելի մօտ կը լինէինք ճշմարտութեանը եթէ ասէինք՝ որովհետև Խորենացին Բագրատունեաց պատմիչ է, այդ պատճառով նրան հետեւել են այն հալ պատմագիրները, որոնք ապրել և գործել են Բագրատունեաց թագաւորութեան շրջանում կամ Բագրատունի իշխանների անմիջական հովանաւորութեան ներքոյ, իսկ ալեուհետև այն մեծ համարումը, որ մեր նախնիք ունէին քերթողահօր անմահ գործի մասին, անցաւ աւանդաբար սերնդէ սերունդ մինչև մեր օրերը:

Նկատելով որ Փաւստոսի ձեռագիրների մասին ես շատ քիչ եմ խօսում, պ. ֆարամեանը աւելացնում է հետևեալ լանդիմանութիւնը. «Այդ առաւել ես պահանջելի էր պ. Մ.-ից, որովհետև գտնելով էջմիածնում և Վրեննայում՝ շատ չարմար առիթ ունէր Փաւստոսի ձեռագիրները աչքէ անցնելու»: Նախ՝ ես ըստ իմ թոյլ կարողութեան ուսումնասիրել եմ էջ-

Թարթեանի նկատմամբ: Մօսկուայի Հնագիտական ժողովի նիստերէց մէկում պ. Թաւթեանը կարգացել է մի աւեֆերատ Հին Հայոց նորագիտ Անգեղ չատուածի մասին: Այդ ուեֆերատի բովանդակութիւնը յայտնի եղաւ նաև պ. ֆարամեանին «Արձագանք»-ի այս տարւայ տուածին համարում հրատարակւած մի զեկուցումից, որտեղ է մէջի այրոց յիշւած է պ. Թաւթեանի համարում հրատարակւած մի զեկուցումից, որտեղ է մէջի այրոց յիշւած է պ. Թաւթեանի համարում հրատարակել, որպէս ազլիւա ուր ապացուցութիւն», որի մասին «Արձագանք»-ի № 1 զեկուցման մէջ երբ թէ խօսք չէ եղել! (Արձագանք, № 3)

միածնի մատենադարանի գրչագիրներից երեքը, ինչ վերաբերում է Վիհն-նային, պ. Քարամեանին չալտնի պիտի լինէր, որ աղտեղ Փաւստոսի գրչագիրը չը կալ: Վերջապէս, աղտեսակ լանդիմանութիւն անող կրիտիկոսը, որ աւելի «չարմար առիթ» է ունեցել Բուզանդի ձեռագիրները քննելու, պէտք է ծանօթացնէր մեզ իւր հետադատութիւնների արդիւնքներին և ոչ թէ իմ խօսքերը կրկնելով բաւականանար, ինչպէս կը համոզւի ընթերցողը հետեւալ համեմատութիւնից.

Ե. Մ. ասում է՝

«Փաւստոսին չիշող հալ մատենագիրները ձանաչում են նրան որպէս «Ներսէսի պատմութեան» կամ «Հայոց պատմութեան» հեղինակի: Պրոկոպիոս կեսարացին դո՛ւն անունն է տալիս իր աղբիւրներից մէկին որ ինչպէս կարծում են, Բուզանդի երկն է: Սակայն Ս. Էջմիածնի մատենադարանում մեր տեսած երկու գրչագիրը օրինակները կրում են ընդ «Բուզանդարան պատմութիւնք» վերնագրի ը: Նո՛ն մատենադարանի ձեռագիր ժողովածուներից մէկում կալ մի ծաղկաքաղ «ի Բուզանդարան պատմութեան»:

(«Փաւստոս Բուզանդ», եր. 24—25, ծնթ. 3)

պ. Քարամեանը ասում է՝

«Ինչպէս տեսանք Ղ. Փարպեցու խկական չառաջարանի մէջ Փաւստոս Բուզանդացու գործը կոչում էր «Հայոց պատմութիւն», իսկ ոմանք անուանում են աղ և «Ներսիսի պատմութիւն», բայց աչգ անուամբ չը կալ և մի հատիկ ձեռագիրը բոլոր մեր չալտնի ձեռագրների ժողովածուների մէջ, ինչպէս անձամբ ստուգել եմ, Վեհեոկի և Էջմիածնի բոլոր ձեռագիրների վերնագիրն է «Բուզանդարան պատմութիւնք»...

(«Արձագանք», № 6, եր. 6)

Խօսելով Մեսրոպ երէցի և Փաւստոսի գրւածների չարաբերութեան մասին, պ. Քարամեանը նկատում է. «Իմ (Քարամեանիս) համեմատութիւնիցս երևում է, որ Մեսրոպը ծաղկաքաղ է արել միմիայն Բուզանդարանից և չէ օգտւել ուրիշ պատմագիրներից, ինչպէս կարծում է պ. Մ. եր. 47. ծանօթ. 1. եթէ պ. Մ. որ և է ալ աղբիւր էր նկատում Մեսրոպի գործում, պարտական էր չալտնել, որովհետև աղ ինդիրը մեծ կալ ունի Բուզանդարանի հետ» («Արձագանք», № 6, եր. 8).— Համարձակում եմ չը հաւատալ պ. Քարամեանին և շատ հաւանական եմ գտնում որ, իւր մեթօզին հաւատարիմ կրիտիկոսը իրան է վերագրում իմ («Փաւստոս Բուզանդ», եր. 47) արած համեմատութիւնը: Եթէ նա ճշմարիտ համեմատաբար ուսումնասիրած լինէր Փաւստոսի և Մեսրոպի աշխատութիւնները, չէր կարող ասել թէ ինքը՛ պ. Քարամեան «թեթեակի համեմատութեամբ» («Արձագանք», № 6, եր. 8) է բաւականանում, չէր կարող ասել թէ Մեսրոպ

„արտագրում է Բուզանդարանի մի հատւածը“ (»Արձագանք«, № 4, եր. 10), քանի որ այդ մատենագիրը բացի իմ մատնացոյց արած հատւածից, արտագրած ունի Բուզանդարանից ուրիշ՝ մանր հատւածներ էլ, որ ես աւելորդ եմ համարել լինել գրքուկիս մէջ. պ. Քարամեանը չէր կարող չը նկատել և այն, որ բացի Բուզանդարանից Մեսրոպ օգտուում է նաև ուրիշ աղբիւրներից, օրինակի համար՝ Խորենացոյց և Նղիշէից: Ես դիտմամբ որոշակի չեմ ցոյց տալիս տեղերը որպէս զի իմ անձնապատան կրիտիկոսը նեղութիւն քաջ է իմ ասածները ստուգելու համար՝ աշխատել այն գրքերի վերաջ, որոնց ուսումնասիրութեան համար ոչ թէ չաբաթներ, այլ տարիներ են հարկաւոր...

Յամենայն դէպս ես շնորհակալ եմ իմ ոչ կատարելապէս խղճմտաւոր քննադատներից և արդարացնում եմ նրանց՝ ռուս կրիտիկոս Կորբուլիւբովի խօսքերով. «Восторженные хвалители вообще рѣдко бывают истинно-полезны для объясненія публикѣ дѣйствительнаго значенія писателя: порицатели въ этомъ случаѣ гораздо надежнѣе: выискивая недостатки (даже и тамъ, гдѣ ихъ нѣтъ), они все-таки представляютъ свои требованія и даютъ возможность судить, насколько писатель удовлетворяетъ или не удовлетворяетъ имъ».

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՏԵՐ.ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ, բժշկապետ (Թիֆլիսցի),— «ԽՕՒԵՐԱ ԵՒ ՆԻՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ»։ Հանրամատչելի զրոյց, Թիֆլիս, տպարան «Արօր» Տ. Նազարեանի 1890 թ., փոքր քառաձալ, 32 էրես, տառ № 10. զինք 5 կոպէկ:

Այս մաքուր տպած գրքովկում նախ պատմուում է թէ ինչ է խօլերան, որոնք են խօլերալի տարածւելու միջոցները, ուրքեր են աւելի տրամադրւած խօլերալով հիւանդանալու. լետոյ գալիս է խօլերա հիւանդութեան նկարագրութիւնը ու հիւանդների հոգատարութիւնը, դէզինֆեկցիան, մինչև բժշկի դալը հիւանդին օգնութիւն տալու եղանակները և նախապաշտպանողական միջոցների թւելը:

Անկասկած, ներկայումս շատ ի դէպ է խօլերալի մասին ոչ միայն պարբերական թերթերում հանրամատչելի զրոյցներ տպելը, այլ նոյն իսկ առանձին գրքովկներով ժողովրդական էժանագին գրքովկներ հրատարակելը աղ համաճարակումի մասին. սակայն ժողովրդական հրատարակութիւնները պէտք է ուրիշ կերպ գրած, լարմարեցրած լինին, քան լրագրում կամ ամսաթերթում տպած

լօգւածները: Պարբերական հրատարակութիւնների համեմատաբար նեղ ընթերցող շրջանը ուրիշ պատրաստութիւն և զարգացում ունի քան ժողովրդը, մասսան ընդհանրապէս, որի մէջ հէնց գրքովկիս որքան կարելի է ընդարձակ տարածւելը առաւել պէտք է ցանկալի լինէր, դոնեա եթէ ուղեհանք ճիշդ որ գործնական լինել և մասսային պատրաստել խօլերալի դէմ կուսելու: Քաղաքացին կամ փոքր ի շատէ զարգացած ունևոր դասը, աչպէս թէ աչնպէս, աւելի միջոցներ ունի խօլերալի նման սարսափելի համաճարակումների առաջը առնելու՝ քան ժողովրդի մասսան՝ խաւար, աղքատ ու նախապաշարւած գիւղացիք և արհեստաւորները, որոնք բոլորովին անօգնական են և առանց խորհրդատուների. բայց սոցա խաւերում աւելի հեշտ է կարող մուտք զործել մի որ և է փոքրիկ էժանագին բրօշլւր, քան լրա-

գիր կամ ամսագիր: Իսկ որպէս զի գիրքը մասսային գործնականապէս օգուտ տալ՝ պէտք է նա նորա հասկացողութեան չարմարեցրած լինի և մատչելի: Մի գրեաժք կարող է բաւական պարզ և հասկանալի կերպով արտապայտած լինել մտքերը սովորական—փոքրի շատէ ինտելիգենտ ընթերցողի համար, և աչնու ամենաչնիւ բուն ժողովրդի մարդուն մնալ դժւար հասկանալի, եթէ նորա մտածողութեան և մտքերը արտապայտելու ձևին չարմարեցրած չը լինի: Կարելի է գռեհկաբանութիւններից հեռու մնալ, սակաչն միտքը արտապայտել գրել-կարդալ իմացող հասարակ մարդուն հասկանալի ձևով. միաչն պէտք է դորա համար լինել պարզ, կարճ, հեռու աւելորդաբանութիւններից և ինտելիգենտին սովոր ոճերից: Բացի աչդ, պատմածը դասաւորելիս պէտք է գործնական լինել, որպէս զի հեշտ ըմբռնւի խորհուրդը:

Աչպիտով չառաջ է դալիս երկու տեսակէտ «հանրամատչելի» հրատարակութիւնների մասին. կարելի է մի գրքով հրատարակելիս աչքի առաջ ունենալ կամ սովորական՝ աչպէս ասած գրական, կիսաինտելիգենտ ընթերցողներին, կամ թէ բուն ժողովուրդը, ստոր ընթերցող մասսան—գիւղացիներ, մշակներ, արհեստաւորներ, տիրացուներ, մանր-մուշր վաճառականներ, գործակատարներ, ծխական-դպրոցական կըրթութեան տէր երիտասարդներ և աչն: Գլխաւորապէս աչս վերջին տեսակի ընթերցողներին է պէտք, մեր կարծիքով, աչքի առաջ ունենալ «հանրամատչելի» գրքովներ հրա-

տարակելիս, նա մանաւանդ երբ պէտք է գրեաժքը գործնական նպատակների հասնի:

Նաչելով առաջին տեսակէտից, բժշ. Տէր-Գրիգորեանցի «Խօլերան» գիրքը գրեաժ է թեթև և հետաքրքրական լեզուով և կարող է հասնել իւր նպատակին, աչսինքն՝ «բացատրել ինչ է խօլերան և ինչպէս կուէլ նրա դէմ»: Սակաչն, ինչպէս երևում է, երկրորդ, և մեր կարծիքով աւելի համապատասխան տեսակէտը, չէ ունեցել հեղինակը սոչն գրքովը հրատարակելիս, թէ ոչ ամբողջ գրեաժքի լեզուն՝ թէ բառերի, թէ ոճերի և թէ արտապայտելու ձևի կողմից՝ աչնքան գրական-ինտելիգենտալին չէր լինի՝ որպէս զի հասարակ դասին լիապէս մատչելի լինէր: Աւելորդ կը լինէին աչն ժամանակ մի քանի շեղումներ (օր. եր. 5, 8, 9) և նոչն իսկ հատուածների վերնագիրները աչն կերպ գրեաժ կը լինէին, որ հէնց վերնագիրը ինքը ուշադրութիւն գարձնէր սկզբից նորա մասին ինչ բացատրուելու է. օրինակ, փոխարէն գրելու «ինչ է խօլերան», կը գրէր՝ «խօլերան վարակիչ հիւանդութիւն է», և ապա դատողութիւններով աչդ կը պարզէր, կամ փոխարէն հատուածի գլխին դնելու «խօլերալի տարածուելու միջոցները» և փոտոջ չաջորդ երեսների մէջ ցոյց տալու աչդ միջոցները, առաւել չարմար կը լինէր ուղղակի գրել, զիցուք՝ «խօլերան տարածում է մարդկանց, ջրի, կերակրելէնների և ձանձերի միջոցով»—թէ ոչ չետոչ, երբ արդէն բացատրութիւններն են գալիս, հասարակ ընթերցողը նոցա մէջ մտորում է և կորցնում կական կէտերը:

Այս կերպ գրած վերնադիրները շեշտելով էականը աչքսան էլ մեծ չեն կարող դուրս գալ, երբ աւելի որոշ, կարճ և բուն խնդրին վերաբերեալ գրած կը լինի իւրաքանչիւր հասուած. օրինակ՝ «մինչև բժշկի գալը հիւանդին օգնութիւն տալու եղանակները» հասուածում չը սէտք է լինէր թէ հիւանդի առողջանալու ժամանակ ինչ օգտակար կը լինի, մինչև բուժող բժիշկին առողջանալը ինչ զիէտա պիտի պահի, կամ եթէ հիւանդը մեռնում է, զիպի հետ ինչ անել և այլն (տես եր. 25): Հաս-

կանալի է, որ այս ամենը շատ լաւ խորհուրդներ են, սակայն կապ չ'ունին «մինչև բժշկի գալը» տալիք օգնութեան հետ: Մի խօսքով բոլոր գրածքի ձևը և շինւածքը ուրիշ կը լինէին, եթէ գլխաւորապէս երկրորդ տեսակի ընթերցողներին ի նկատի ունենալին այս օգտակար գրքովի հրատարակչները: Այնու ամենայնիւ ներկայումս «ժողերա» բրօշուրը շատ ժամանակին է գուրս գալիս և ցանկալի է նորա լայն տարածումը մեր երկրի ամեն անկիւններում:

Լ. Ս.

ԲՕԴԵՆՇՏԵԴՏ, ՖԻԴԻԻՍ, Ֆօն — «ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՄ ԿԵԱՆՔԻՑ».

I և II հատոր: Հրատարակութիւն «Գերմանական գրականութեան ընդհանուր ընկերութեան». Բերլին. 1890 թ.

Հալ ընթերցող հասարակութեանը ոչ մի այժմուս գերմանացի նշանաւոր գրականագէտի անուն աչքսան ծանօթ չէ, որքան Ֆրիդրիխ ֆօն Բօղենշտեդտինը: Հայկական աշխարհի հետ նա մի քանի իւր համար նշանաւոր բողոքներով է կապւած: Գեռևս երիտասարդ, 40 թւականներում նա ալցելից Կովկասը, գնաց Երևան, Իջմիրածին: Նա մեծ տպաւորութիւններով վերադարձաւ մեր երկրից, և այդ տպաւորութիւնները, որպէս մենք այդ զիտեմք անձնական ծանօթութիւնից, վառ են նորա մէջ ալժի, որպէս աւելի քան քառասուն տարի առաջ: Կովկասում նա ծանօթացաւ Միրզա Շաֆֆիի հետ, որի անունով նա գրեց արևելեան ճաշա-

կով այն սքանչելի բանաստեղծութիւնները, որոնք չարտնի են նաև շատ հեռու շրջաններում: Իւր ճանապարհորդական մի քանի տպաւորութիւնները նա գրեց «Ճանապարհորդութիւնները նա գրեց «Ճանապարհորդութիւնները դէպի Հայաստան» վերնագրով, որ նաև «Մուրճ»-ի ընթերցողներին իւր լօղւածներով չարտնի դօրտ. Յովհաննէս Բարխուդարեանց թարգմանօրէն տպել է «Հանդէս Գրականական և Պատմական» Մօսկուի կիսամեայ հանդիսի երկրորդ գրքում (1889 թ.): Բողենշտեդտը չարտնի է մեզ, վերջապէս, իւր գրախօսական նկատողութիւններով պ. Աբգ. Յովհաննիսեանի հրատարակած «Հայկական Գրադարանի» գերմաներէն գրքերի մասին: Այդքանը, ինչ ուզ-

զակի միզ է վերաբերում. բայց Բօզենչտեղաը առհասարակ այժմեան նշանաւոր գրական անձերից մէկն է Գերմանիայում, չափնի իւր բազմակողմանի գրական գործունէութիւնով, մանաւանդ իւր բանաստեղծութիւնով, և ի՞նչ մէկը ձեռնարկում է իւր «Վիշդութիւնները» գրել և հաւատացած լինել, որ նորան ազանութեամբ կը կարգան ընդհանրապէս բոլոր գրագէտ մարդիկ, — զորա համար պէտք է որ մարդս վաղիւ բաւականին մեծ ժողովրդականութիւն: Եւ Բօզենչտեղաը այդ ժողովրդականութիւնը վաղերւմ է:

Յի. Փօն Բօզենչտեղաը իւր լիշողութիւնները հասցրել է այժմ մինչ 1850 թւականը: Առաջին հատորում, որը զրւած է արտասովոր հետաքրքրական կերպով, նա նկարագրում է իւր երխտասարգութիւնը և իւր երկարամեալ բնակութիւնը Ռուսիայում, որպէս նաև իւր ճանապարհորդութիւնը Առլկասի վերայով և Պօլիս և այլն: Այժմ նա, երկրորդ հատորում, խօսում է 1846—1850 թւականների մասին, այսինքն սկսած նորա հատաստելուց Միւնխէնում, մինչ իւր երխտասարգութեան վերջը: Միւնխէնի ժամանակից նա առաջ է բերում մի շարք հուշակաւոր մարդիկ, և չնայ մի ճանապարհորդութիւն Շէլլայրիպում, ուր մեծ շուքումն էր տիրապետում՝ կանտոնական պատերազմի պատճառով, և վերջապէս ուղևորութիւն Իտալիա՝ Միլան, Տուրին, Ֆլորենց, Հռոմ, Տրիեստ և վերադարձ Գերմանիա:

Այդ ժամանակ լուս տեսան նորա երկը կովկասի ազգերի մասին, որի

համար նա Հռոմում ի զուր 4000 Քրանկ էր սպասում իւր հրատարակչից, որը այդ ժամանակ անանկացու և Ամերիկա փախաւ: Այդպիսով Բօզենչտեղաը իրան խաբւած տեսաւ իւր երեք տարւալ աշխատութիւնների պալմանաւորւած վարձատրութեան համար: Այս Բօզենչտեղաը ընդունեց պր. Փօն Բրուկից նրան առաջարկւած Տրիեստի «Աւստրիական Լրագրի» խմբագրութիւնը, որը նա երեք ամսից չնայ վիճենա տեղափոխեց: Այդտեղ նա ականաւան եղաւ 1848 թ. հոկտեմբերեան վերափոխութեան: Լրագրի խմբագրութիւնը թողնելով, նա անցաւ Բերլին, որտեղից նա 1849-ին, իւր ներկայացուցիչ Բերլինի և ալ քաղաքների, ուղարկեց Պարիզ, ուր գումարւած էր «Ազատաստճառների կոնգրեսը», որին բոլոր լուսաւորեալ երկիրները մասնակցեցին: Պարիզեան նշանաւոր գէպքերի նկարագրութիւնով կը սկսի Բօզենչտեղաը «Վիշդութիւնները» երրորդ հատորը:

Այտեղ մենք կը հաղորդենք երկրորդ հատորից մի քանի հետաքրքրական և ուսանելի կտորներ Միւնխէնում եղած ժամանակից: Այդտեղ նա, իւր աշխատութիւնների համար, օգտուեց պատուական արևելադէտ պրօֆ. Միւլլերից և մեծ լեզուաբան Փօն Թիրշից: Միւլլերը նորան օգնեց զտել արևելեան դժւարին ձեռագրերը, որ Բօզենչտեղաը մեծ քանակութեամբ իւր հետն էր բերած: Միւլլերը այնքան լաւ չէր ծանօթ թաթարերէնի հետ, որքան արարերէնի և պարսկերէնի հետ. այդտեղ նրան օգնեց պրօֆ. Ֆալլմերալէր, որը իւր երկարամեալ

կեցութեամբ արեւելքում՝ մեծ եռանդով լիզուարանական ուսումնասիրութիւններ էր արած: Ֆալմերայէր արդէն մեծ անուն էր ստացել իւր երկերով «Պատմութիւն Մօրէալի» և «Պատմութիւն Տրապիլուստի կայսերութեան», երկեր, որոնք վկայում էին հեղինակի ընդարձակ գիտութիւնը: Բայց հռչակաւոր դառաւ նա միայն, երբ զբքի ձեռով հրատարակեց «Ֆրագմենտներ Արեւելքից»։ Եւրոպայի հռչակ չէր ստացած այն ժամանակ ոչ ոք Միւնխենի գրողներէր: Այդ հռչակին շատ նպաստեց այն հանդամանքը, որ Ֆալմերայէր իւր «Ֆրագմենտները», իւր երկարամեայ ճանապարհորդութեան միջոցին, Թիւրքիայում և Յունաստանում, հրատարակեց Աուգուստրոգի «Ալլգեմաչնէ Ֆալտուս» լրագրում և ալդտեղ այնպիսի թեղիտներ պաշտպանեց, որոնք մեծ վրդովմունք գցեցին գիտնականներին շրջանում և որոնք խիստ ցարձակումներին տեղիք տւեցին: Բայց Ֆրագմենտախոր, բանակոււի մէջ, իւր բոլոր հակառակորդներէր իրան գերազանց ցուց տւեց: Իւր «Մօրէալի պատմութեան» մէջ զեռ. նա այս թեղիտը զրեց և ապա աշխատեց հիմնաւորապէս ապացուցել, թէ այժմեան լոյները իբր թէ հին լոյներին հետագաները չեն, այլ մոսկովցիներին արիւնով ազդական՝ բայց դոնը փոխած սլաւոնացիք, որոնց վայրենի հրոսակները տւելի քան հազար տարի առաջ իբր թէ Պելլոպոնէզը ամալացրած և ալդ երկրի հին բնակիչներին վնասած լինէին: Բնական է, որ Բաւարիայի թագաւոր Լուդովիկոս I, որը բոլոր ֆիլիսոփաներից

ամենաողորածն էր և հալը Յունաստանի թագաւոր Օտտօի, Ֆալմերայէրին ծուռ աչքով էր նայում: Այդ չը խանդարեց, որ Բաւարիայի թագաժառանգ Մաքսիմիլեանը Ֆալմերայէրին իւր հետ բարեկամացնի: Բողենշտեղտը ալդ ժամանակ ոչ մի չարաբերութիւն չ'ունէր թագաժառանգի հետ, այլ ծանօթացաւ նորա հետ վեց տարի չետոյ, երբ նա թագաւոր էր, երբսա հրաւրեց Բողենշտեղտին Միւնխէն: Առիթը տւեցին Բողենշտեղտի ալդ միջոցին դուրս եկած «Աովկասի ազգեր» վերնադրով գրքերը, որոնցից մէկը հռչակաւոր ֆրագմենտախոր Ֆալմերայէրին էր նւիրած, մի հանդամանք, որը ընականապէս թագաւորի ուշադրութիւնը գրաւեց և բաղմիջս իւր վերայ էր դարձնում խօսակցութիւնը: Յետոյ Բողենշտեղտը իմացաւ, որ Ֆալմերայէրը անձնական չարաբերութիւնով թագաւորի վերայ ուրիշ աւելի աննպաստ տպաւորութիւն է արել, քան երբ նա նորան ճանաչում էր նորա գրածներով:

Աուգուստրոգում Բողենշտեղտը ծանօթացաւ երեւելի քաղաքատնտես Պրիդրիխ Լիստի հետ, որը նորանից չետ չուտով Միւնխէն գնաց: Այդ ժամանակ Լիստը Գերմանիայի առաջին հռչակներէր մէկն էր: Պատահեց, որ Բողենշտեղտ և Լիստը մի տան մէջ բնակարան վարձեցին, անգամ իրանց ճաշը միասին էին անում, քանի որ Լիստը իւր ընտանիքը Աուգուստրոգում էր թողած: Ճաշից չետ գնում էին զբօսնելու, բայց ոչ շատ հեռու, որովհետեւ Լիստը թէ գէր էր և թէ սովորութիւն ունէր կանդենէլ

երբ մի հետաքրքրական առարկայ էր տեսնում, իւր նկատողութիւնները անելու համար. և երբ խօսքը ծիծաղելի բանի մասին էր, աչնպէս սըր՝ տանց ծիծաղել գիտէր, որ փողոցով անցնողները ստիպւած էին զարմացմամբ նայել նորա վերայ: Առաջին ալցելութիւնը, որի համար Բօղենշտեղտը Վխտին պէտք է ուղեկցէր, երկուսին տարաւ այն ժամանակապէս մինիսար իշխան Բէտտինգեր-Վալլերշտայնի մօտ, որից Բօղենշտեղտը մի չափազանց հետաքրքրական քարաքտերիստիկ է տալիս:

Իւր «Այովկասի ազգեր» երկը օրեկան չորս ժամ էր խլում, բայց կաշնպէս Բօղենշտեղտը առիթներ շատ ունէր ծանօթութիւններէ համար: Այդպիսիներէցն էին ղինւորական կոմս Մաքս Բօթմեր և վատուաջ գեներալ Փօն Պասաւանտ: Երկուսն էլ իրանց կենդանութեան օրօք մինչ վերջ մնացին բանատեսիլի լաւագոյն բարեկամներ: Բարեկամութիւնը հէնց սկըզբից մեծ դեր է խաղացել Բօղենշտեղտի կենանքում: Մի քանի տարի առաջ ջրում խեղդուած Բաւարիայի անբաղդ թաղաւոր Լուդովիկ II-ի գրասեղանի վերը կախուած դտան խնամքով շրջանակած և թաղաւորի սեպհական ձեռքով գրած ու ստորագրած մի ոտանաւոր՝ որ մենք տալիս ենք այստեղ թարգմանաբար, առանց հետեւելու բնագրի ոտ ու չափին.

«Երբ մէկը բարեկամիդ վրայ խօսում է վատ, նորանից դրուչ կաց՝ մի ընծալիր հաւատ.

Թէ որ ողջ աշխարհ բարեկամիդ վատաբանէ՝

Աշխարհքին մի հաւատալ, բարեկամիդ նալէ:

Միայն ով աչնպէս ամուր բարեկամներին սիրէ՝

Արժանի է, որ երկինք բարեկամներ պարգևէ:

Բարեկամ մարդու սիրտը աչնքան մեծ դանձ է,

Որ ամբողջ աշխարհք նորա տեղը չի տալ.

Դա մի գոհարեղէն է սրբազան հրաշքի ուժով,

Որ հրաշքներ է գործում միայն պինդ հաւատով.—

Բայց ամեն մի կասկածով նորա փալը կը պղտորէք,

Եւ թէ որ մի գամ կոտորեց—ամբողջ չի դառնալ երբէք:

Ահա ինչու, երբ աչպիսին մէկը ունենաս,

Նորա փալը մի պղտորիր, զին տուր անպակաս,

Նորան մի կոտորի! Աշխարհքը ընդունիր

Իբր շրջանակ, որ աչ գոհարը պահում է,

Եւ որին արժէք է տալիս ինքը աչդ գոհարը.

Եւ ուր նա չը կալ—աչդուած է աշխարհը:

Բայց թէ լինես չքաւոր, մուրացկան անդամ,

Դու հարուստ ես, եթէ ունիս բարեկամ,

Եւ արքայի թէ ձեռք էլ բերես գահը,

Բայց ոչ մի բարեկամ՝ դուն ես մեծ թշւառու:

Կարծում էին, թէ դարա հեղինակը Լուդովիկ II-ն է. բայց դա՛

Բողենշտեդտինն է, գրած և հրատարակած զեռ այն ժամանակ, երբ հանգուցեալ անբաղդ թագաւորը փոքրիկ պրինց էր:

Ճաշից վտոյները Բողենշտեդտը մի քանի ժամանակ շարունակ լսում էր ծերունի Գ օ Ր Ր է ս-ի դասախօսութիւնները հին դերմանական կազմութեան պատմութեան մասին. երեկոյնները, եթէ թատրոն չէր գնում, անց էր կացնում բարեկամների շքանում, որոնց թւում, բացի վերոյիշեալներից, կալին նաև լանդշաֆտների մեծ նկարիչ կարլ Ռ օ տ մ ա ն և երկու հռչակաւոր բոսանիկոսներ՝ Փօն Մ ար ց ի ու ս և Փօն Լ ե դ է բ ու ր : Մարցիուս մանաւանդ սիրում էր պատմել իւր խօսակցութիւններից Գեօթէի հետ, որը նորան, իբր երիտասարդ և իւր ճանապարհորդութիւնով Բրազիլիայում (1817—20) շատ շուտ հռչակւած գիտնականին իւր մօտ՝ Վէյմար էր հրաւիրել, և վտոյ նամակագրութիւնով մօտ չարաբերութիւններ էր պահպանել:

Բաւարիայի առաջին թագաւոր Մաքսիմիլիան Յովսէփի ժամանակ (Բաւարիայի պետը թագաւորի տիտղոս ստացաւ միայն Նապօլէօն I-ի ժամանակ), որը գիտութիւնների եռանդոտ նպաստող էր,—կազմեց Բրազիլիա ուղարկելու համար մի բնագիտական էքսպեդիցիա, զեկաւարութեամբ Մ ար ց ի ու ս և Ս պ ի թ ս պրօֆէսորների, 100.000 դուլլէն նշանակեց այդ էքսպեդիցիայի համար: Երբ թագաւոր դառաւ Լուդովիկոս I, սա չ'ուզեց այդ մասին խօսք անգամ լսել և չ'ուզեց տալ գումարը: Մարցիուս և Սպիքս դանդաւտ տւին

պետութեան դանձարանի դէմ, և դատը տարան, որի պատճառով թագաւորը որ միմիայն պեղարեւտով էր ոգևորւած, նոցա վերաջ սկսեց անողորմած կերպով նաչել, աջնպէս որ երբ նոցանից մէկին տեսնում էր, միշտ շփոթւում էր, ընդունելով նորան միւսի տեղ: Թագաւորը, հանդիպելով Մարցիուսին, ասում էր՝ «Ինչպէս էք, սիրելի Սպիքս, և ինչ է շինում Մարցիուսը, այդ չ'իմարը, որը ինձ աջնքան փող նստեց իւր բրազիլիական դարմանի համար, որով ես մի նոր եկեղեցի կարող էի շինել»: Եւ երբ թագաւորին հանդիպում էր անբաղդ Սպիքսը, նա ասում էր սորան՝ «Ինչպէս էք, սիրելի Մարցիուս, և ինչ է շինում Սպիքսը, այդ չ'իմարը, որը նոյնպէս մի բնագէտի տեղ է դնում իրան»: Եւ պատասխանի չը սպասելով իսկոյն հեռանում էր թագաւորը:

Շատ ծիծաղալի է նաև այս փոքրիկ պատմութիւնը, որ Բողենշտեդտի բարեկամները՝ Նէուրեութէր և Ֆորստէր ունեցան թագաւորի հետ:

Էրնստ Ֆորստէր աստուածաբանութեան և ֆիլոսօֆալութեան ուսանողից դառել էր մի նկարիչ և աշակերտ Ա օ Ր Ն է լ ի ու ս ի, որին նա ուղեկցեց Միւնխէն, ուր նա սորա հետ աշխատակցեց Գլիպտօթէիի և Արկադների որմանկարների վերայ, իսկ ապա նաև թագաւորական պալատի պատինկարների վերայ հանձարեղ Ն է ու Ր է ու թ է Ր ի հետ, որը չանձն էր առել թագուհու սալօնը նկարիչ տեսարաններով Վիլանդի Օբերոնից:

Ճաշից առաջ մի անգամ դալիս

է թագաւորը գործերի գրութիւնը տեսնելու համար:

«Բարի լոյս, սիրելի Ֆորստէր:— Սա խոնարհարար գլուխ է տալիս: «Բայց ուր է Նէուրէուլթէր, ես նորան չեմ տեսնում»:

«Մեծութիւն, Նէուրէուլթէր միշտ ժամը 12-ին գնում է ճաշելու և գալիս է ժամը 1-ին: Յետոյ ես եմ գնում ճաշելու»:

Այդ միջոցին թագաւորը արեւն զննարար նալած էր նկարները, իբր թէ նորա խօսքերին ուշք չը դարձնելով, և իւր բաւականութիւնն է չափնում, ասելով՝ «Գեղեցիկ է, շատ գեղեցիկ: Բայց հրէն այն տաճիկը շատ է հաստ: Այդքան հաստ տաճիկ չի սագում թագուհու սալօնի համար: Ասացէք այդ Նէուրէուլթէրին: Մնաք բարեաւ»:

Ֆորստէրը ճիշդ կատարում է չանձնարարութիւնը: Նէուրէուլթէրը չի գտնում, թէ տաճիկը շատ լինի հաստ նկարած, բայց պէտք է հպատակէր և վճռէր մի աւելի բարակ տաճիկ նկարելու:

Մի շարաթ անց կրկին գալիս է թագաւորը և նոյն ժամին ինչպէս առաջին անգամ:

—«Բարի լոյս, սիրելի Ֆորստէր: Ո՛ւր է Նէուրէուլթէրը, ես նորան չեմ տեսնում»:

«Մեծութիւն, Նէուրէուլթէրը միշտ ժամը 12-ին գնում է ճաշելու և գալիս է ժամը 1-ին: Յետոյ ես եմ գնում ճաշելու»:

Այդ միջոցին թագաւորը արդէն զննարար նալած էր նկարները: «Գեղեցիկ է, շատ գեղեցիկ, բայց այն տաճիկը շատ է հաստ, Նէուրէուլթէրը

այդ պէտք է փոփոխէ: Մի այդպիսի հաստ տաճիկ չի սագում թագուհու սալօնի համար: Ես ձեզ արդէն մի անգամ ասացի»:

«Մեծութիւն, ես այդ խօսքն նրան հաղորդեցի և նա շտապեց տաճիկն որքան կարելի է բարակացնելը»:

»Ես ձեզ ասում եմ, տաճիկը շատ է հաստ«, կրկնում է թագաւորը դուրս գնալիս: Նէուրէուլթէրը իւր վերադարձին իմանում է, որ տաճիկը դեռ ևս շատ է հաստ և վճռում է տաճիկն բոլորովին ջնջել և նորա տեղը մի սիրուն արար մանկլաւիկ է նկարում: Մի քանի շաբաթից չետոյ կրկին գալիս է թագաւորը նոյն ժամին և անում է նոյն հարցը խեղճ Նէուրէուլթէրի մասին, որին նա երբէք գործի վերայ չի գտնում: Թագաւորը իւր ուրախութիւնն է չափնում գործի առաջադիմութեան համար, բայց գտնում է, որ տաճիկը դեռ ևս շատ է հաստ: Ի դուր Ֆորստէրը աշխատում է ուշք դարձնել, որ տաճիկը այլ ևս չը կայ և որ նորա տեղը արար մանկլաւիկ է նկարած. թագաւորը, իբր ոչինչ չը լսած, թողնում է թագուհու սալօնը այս խօսքերով՝ «Տաճիկը շատ է հաստ. ասացէք այդ Նէուրէուլթէրին»...

Բողենշտեղտի «Վիշուլթիւնները» լիքն են այդպիսի մանր հետաքրքրական պատմութիւններով: Բայց ուսանելի բաներ էլ շատ կան, որովհետև Բողենշտեղտը ոչ միայն լաւ պատմող է, այլ և մեծ գիտութեան տէր գիտնական է:

Ա. Ա.

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ՍԱՀԱԿԵԱՆՑ ՍԱՀԱԿ քահանայ.— «ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ», ուղեցույց հայ կրօնուսուցիչների համար: Նոր-Ուխտի մշակութիւնը. հատոր Բ. մասն I. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1890 թ., գինն է 1 ռուբլի:

2) ՆԱՐ-ԴՈՍ.— «ԱՆՆԱ ՍԱՐՈՅԵԱՆ», Էտիւղ: ՎԻ-դ. հրատարակութիւն Բարսեղ Քամալեանի, Թիֆլիս, տպար. Տ. Նաղարեանի, 1890 թ., գինն է 30 կոպէկ:

3) ՏԷՐ-ՂԵՒՈՆԳԵԱՆ ԳԷՈՐԳ.— «ՕՐԻՈՐԴ ՆԱԴԻԿ ԿԻԼԻԿԵԱՆ» և չաւելած (բանաստեղծութիւններ): Թիֆլիս, տպարան Մ. Ռոտինեանցի, 1890 թ., գինն է 30 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

„ՎԱՐԺՈՒՅԻ“

ԿՈՄԵԴԻԱ ՆՐԵՔ ԱՐԱՐԻԱԾՈՎ

Գէորգ Չմշկեանի

Ապրիլի 5-ին, Աղնւականների կալածական բանկի թատրոնում, կալացաւ պ. Գէորգ Չմշկեանի «Վարժուհի» կոմեդիայի առաջին ներկայացումը:

Պարոն Չմշկեանը ընդհանրութեանը արդէն վաղուց է լալտնի իւր բազմակողմանի գործունէութիւնով վերաբերեալ հալկական թատրոնին: Նա դերասան է, այդ մէկ. նա թատրոնական գործիչ է, այդ երկրորդ. նա թատրոնական թարգմանիչ է, այդ երրորդ. նա թատրոնական քրօնիկէօր է, այդ չորրորդ. այժմ նորա տիաղոսների վերաջ աւելացաւ նաև մի հինգերորդը՝ պ. Չմշկեանը իբր թատրոնական հեղինակ:

Իսկապէս ես այստեղ մի ժամանակազրական սխալեմ գործում. պ. Չմշկեանից իրանից եմ լսած, թէ նա տարիներ առաջ գրել է և բեմի վերաջ գրել, անգամ երեք անգամ կրկնել «Մախլաս» անունով մի գրածք, էլ չը գիտեմ՝ կոմեդիա, թէ վոդըլիլ, թէ ֆարս: Բայց զորանով արդէն բաւական է աւսած, որ հասարակութեան աչքում պ. Չմշկեանի դերիւտը, իբր թատրոնական հեղինակի, իսկապէս սկսում է նորա «Վարժուհի» ներկայացումով:

Հարուստի որդի Ազիզեանցը, վերադառնալով իւր հայրենի քաղաքը՝ Թիֆլիս, սիրահարւում է Նունէ անունով մի վարժուհու վերաջ: Վերջինս նոյնքան էլ սիրում է Ազիզեանցին: Ազիզեանցը տեղական Նախապաշարունակներից զուրկ մի երիտասարդ է, որը ամուսնութեան մէջ չի թագցնում կողմնակի նպատակներ: Նա սիրում է Նունէին, և հէնց այդ պատճառով կամենում է Նունէին իւր կին ունենալ: Նա ինքը գալով Թիֆլիս, հալոց դպրոցներից մէկում ընդունում է ֆիզիքայի դասեր և մտնում

հաղկական շրջանը: Նունէն չքաւոր ընտանիքի որդի է, ունի դուրեկան արտաքին, իսկ իւր ներքին չատկութիւններով նա աչքի է ընկնում, որպէս ազնիւ ճաշակի ու զգայմունքների տէր աղջիկ, ընդունակ սիրելու և արժանի սիրուելու, ընդունակ անձնւիրութեան, բայց և խելօք, իրան զսպիւղու ընդունակ աղջիկ:

Բայց ահա դժւարութիւնը. Ազիզեանցի մայրը (հայրը վախճանւած էր) միշտ մտածում է եղևի, թէ իւր որդին, ուսումը աւարտելուց վտ, կը գալ Թիֆլիս և կը լինի կամ մի բարձր աստիճանաւոր, կամ մի հարուստ վաճառական: Բնական է նորա զարմանքը, երբ իմանում է և տեսնում, թէ իւր որդին կատակ չի անում մտնելով հաղկական շրջանները և ուզում է առաջարկութիւն անել վարժուհի Նունէին: Մայրը աշխատում է արգելել այդ ամուսնութիւնը: Ճանաչելով Նունէին իբր մի աղջիկ, որը զիտէ հանգամանքները կռուել, Ազիզեանցի մայրը առանձին խօսակցութիւն է ունենում Նունէի հետ, որին չպտնում է, թէ իբր այդ ամուսնութիւնով կը դժբաղդանալ իւր սիրածի քուրը, որը դեռ ևս մարդու տալու աղջիկ է և որը բարձի թողի արւած կը լինի, և թէ իրանց ընտանիքի միակ նեցուկը, որդին՝ ամուսնանալ ում հետ և իցէ: Բայց Նունէն շատ լաւ հասկանում է, որ Ազիզեանցի մայրը խկապէս ուզում է խանդարել և ոչ թէ վտաճղել իւր որդու ամուսնութիւնը մի հալ վարժուհու հետ, այն երբ, որի հարսնացուն, Ազիզեանցի մօր սպասածին համեմատ, պէտք է լինէր մի հարուստի և բարձր դիրք ունեցողի աղջիկ և ոչ թէ մի տնանկ աղջիկ և այն էլ՝ մի հալ վարժուհի: Նունէն, ոչ առանց հեղնութեան Ազիզեանցի մօր պատճառաբանութեան վերայ, Ազիզեանցի մօրը հանգստացնում է, խօսք տալով չ'ընդունել նորա որդու առաջարկութիւնը:

Ինչո՞ւ Նունէն այդ խոստմունքը տալիս է և իւր խօսքի վերայ մնում:

Նունէն նմանապէս ունի մայր—Եփեմիա, որը նոյն կերպ է մտածում, ինչպէս և իւր աղջիկը: Նունէն արդէն տեսնում է, որ ինքը, ամուսնանալով երիտասարդ Ազիզեանցի հետ, պէտք է Ազիզեանցի տանը երկալառակութեան պատճառ դառնալ: Ազիզեանցի ընտանիքում Նունէն պէտք է նկատւած լինի իբր մի բարեբարւած աղջիկ. նորա վերայ, հակառակ իւր մարդու կամքին, Ազիզեանցի տանը պէտք է բարձրից նալին: Նունէի մայրը Ազիզեանցի ընտանիքում պէտք է ընդունւի ոչ որպէս մի սիրւած հարսի մայր, այլ իբր մի չքաւոր կնիկ: Իսկ Նունէի մայրը հպարտ է չքաւորութեան մէջ, որպէս և Նունէն ինքը: Այդ բոլորը գուշակել են տալիս, որ Նունէն իրան չը պիտի բաղդաւոր զգալ Ազիզեանցի ընտանիքի և նորա սովորական հասարակութեան մէջ: Բայց երիտասարդ Ազիզեանցը պատրաստ է բաժանւել մօրից, առանձին ապրել իւր սիրած կնոջ հետ, անգամ հետեւել Նունէին, եթէ սա կամենալ վարժուհի մնալ և գնալ մի ուրիշ քաղաք: Նունէն այդ լսում է իւր սիրածի բերանից, բայց դորանից այս եզրակացութիւնն է դուրս բերում, որ նա

ալն գէպրում, երբ Ազիզեանցը չ'ընկճւի իւր մօր և շրջապատողների կամքի տակ և ուրեմն լանձն առնի կուրը իւր ընտանիքի գէմ, նա ստիպւած կը լինի հէնց առաջին քաղից՝ մօրից բաժանել ու քանքաղացնել մօրը, քրոջը և ալլն: Հասարակաց կարծիքը կը մեղադրէ Նուենէին, ասելով, որ հարսը բաժանեց որդուն՝ մօրից, քորիքից, ազգակիաներից:

Ազիզեանցը անուամ է իւր փառաբանած առաջարկութիւնը և Նուենէից ստանում մերժում: Վերջինս իւր մօր հետ հեռանում է Ղզլար, որտեղից Նուենէն վարժուհու թեան հրաւէր է ստանում: «Թող փորձարար խառնը և ծածանիչ կ'անէ իւր անշնչը, ասում է Նուենէն և հեռանում:

Ահա պ. Չմշկեանի պիեսի թեւը: Բաց պիեսի մէջ կան եան մի քանի ուրիշ գործող անձեր: Այդ երկրորդակարգ գործողներից նշանաւորագոյններն են՝ օր. Սաթեհիկ և Գէորգ, մէկը վարժուհի միւսը վարժապետ: Սաթեհիկը, Նուենէի ընկերուհին և մտերիմը, սիրում է Գէորգին, իսկ Գէորգը ալք բանից ոչինչ չը գիտէ և սիրում է Նուենէին: Աջնպէս որ Նուենէին սիրում են և՛ Ազիզեանցը և՛ Գէորգը, մինչդեռ Նուենէն սիրում է միայն Ազիզեանցին, իսկ Գէորգի հետ վարւում է որպէս եղբոր հետ, չար գելով նորա անձնաւորութիւնը: Գէորգը լոյսը չի կորում, ճանաչելով Նուենէի կամքի հաստատութիւնը և հարստութեան համար ունեցած արհամարհանքը. Գէորգը շարունակ կարծում է, որ Ազիզեանցը մի փչացած տղայ է հէնց որովհետև Թիֆլիսի հարուստ ընտանիքիցն է: Նուենէն, լայտնելով իսկութիւնը Գէորգին, որը վնասութեան մէջն է ընկնում, մասնանիչ է լինում Սաթեհիկի վերայ, իւր սիրելու արժանի աղջկալ վերայ, որին միայն պէտք է մի փոքր ուսումնասիրել՝ նորա հոգեկան արժանաւորութիւնները գնահատելու համար: Սաթեհիկն էր, որին Գէորգը լանձնարարեց հաղորդել Նուենէին իւր սիրու մասին, իսկ ալժամ Նուենէն է, որ հաղորդում է Գէորգին Սաթեհիկի սիրու մասին:—Անձնաւորութիւններից մէկն է, վերջապէս, Ազիզեանցի մօր՝ Եփեմիայի եղբայր Միմոսեանցը, որը, սակաւն, միմոսութիւնով չի զրազւած: Պիեսի մէջ նա երկու անգամ է երևում՝ մի անգամ օր. Սաթեհիկին հրաւիրելու իւր որդիկրանցը հաւոյ լեզուի դասեր տալու համար, իսկ երկրորդ անգամ նա ներկայանում է Նուենէի մօր՝ Մարթայի մօտ, իւր քրոջ կողմից խնդրելու, որ նա, Մարթան, համոզի իւր աղջիկ Նուենէին՝ հրաժարել երխտասարգ Ազիզեանցի առաջարկութիւնից: Բանը սորանումն է, որ Եփեմիան իրան խաբւած էր կարծում Նուենէից, որից խօսք էր առել՝ իւր որդի Ազիզեանցի առաջարկութիւնը չ'ընդունել և շտապել էր իւր եղբայր Միմոսեանցին Նուենէի մօր Մարթայի մօտ ուղարկելու և խնդրելու, լանուն իրանց ընտանիքի բարօրութեան, համոզելու, որ նա իւր աղջիկ Նուենէին լիս կանգնացնի Ազիզեանցի հետ ամուսնանալու մտադրութիւնից: Բաց դա՝ թիւրիմացութիւն էր Ազիզեանցի մօր կողմից. Նուենէն արդէն մերժել էր Ազիզեանցի առաջարկութիւնը, թէև աչք բանից զեռ ևս տեղեակ չէր Նուենէի մայր Մար-

Թան: Մարթայի համար դա մի լաւ առիթ էր ցոյց տալու Աղիղեանցի մօրը, որ սա չը կարծէ թէ Նունէն և ինքը շլացել են Աղիղեանցի հարստութեան վերայ և որ Նունէն այնքան խելօք է, որ կարօտութիւն չի զդալ մի այդպիսի խնդրի մէջ դժւարանալ և հարկաւոր դիրքը բռնել, նաև առանց իւր մօր խորհուրդի:

Պ. Չմշկեանի «Աարժուհին», որպէս տեսնում է ընթերցողը, Բաւականին կենդանի բովանդակութիւն ունի: Եւ հէնց այդ պատճառով նա չաջողեց, որպէս բեմական գրածք: «Աարժուհին» ըստ ամենալնի բեմական է: Այդ իսկ չատկութեան համար «Աարժուհին», որպէս ևս կարծում եմ, կը մնալ հաշկան բեպրտուարի մէջ դեռ ևս մի քանի տարիներ: Տիպերը—բնական են: Հայ վարժուհու տիպարը վերցրած է կեանքից. Աղիղեանցը, որը հարուստ ընտանիքից լինելով, հայ դպրոցներում զատեր է տալիս և մտնում հաշկական կեանքը,—եթէ սովորական երևոյթ չէ, դոնէ իրականութեան դէմ չի մեղանշում: Աղիղեանցից շատաջ շատերն են նոյնը արել Թիֆլիսում: Որ Աղիղեանցը չափշտակում է մի վարժուհու և առհասարակ մի անօթիտ աղջիկով—եթէ Թիֆլիսում դա մի կանոն չէ, բայց և անբնական չէ: Աղիղեանցի մայրը—կեանքն է որ կայ: Նունէի մայրը—թէն իդէալացրած է, բայց անբնական չէ: Նոյնը կարելի է ասել և ուրիշների մասին:

Մի խօսքով «Աարժուհին» իբր մի կօմեդիա Թիֆլիսի կեանքից, հիմնւած է իրականութեան վերայ. տիպերը կամ սովորական են կամ բնական:

Բայց անս մի հանգամանք: «Աարժուհի» գրածքում «եղը չի ողորդում»: Աղիղեանցի և Նունէի սէրը փոխադարձ է և բնական: Ինչո՞ւ այդ սէրը չը պէտք է ամուսնութեան հասցնէր: Հեղինակը այդ սիրոյ զիմաց դնում է Աղիղեանցի մօր պահանջը: Ճիշտ է, այդ մայրը կ'ուզէր իւր որդու համար մի հարսնացու մեծ ու հարուստ տնից. բայց որ մի տղէտ ու նախապաշարւած մօր պահանջը պէտք է աւելի նշանակութիւն ունենար, քան թէ երկու սիրահարւածների ձգտումը—անս թէ ինչն է դժւար հասկանալը: Մայրը այնպէս, ինչպէս ներկայացւած է պիեսի մէջ, մի անընդդիմադրելի ուժ չէ դուրս բերւած. իրաւապէս և նիւթապէս այդ մայրը չի կարող խանդարել իւր որդու ամուսնութիւնը Նունէի հետ: Մայրը կարող էր միայն բարոյապէս ազդել: Արդ, հէնց այդ բարոյական կողմով է, որ մայրը մեղանշում է: Եթէ Նունէն սիրում է երիտասարդ Աղիղեանցին և այնքան խելօք, որ հասկանում է Աղիղեանցի մօր ձգտումները, նա, այդ Նունէն, շատ լաւ պէտք է հասկանար, որ Նիեմիան կը հասցնի իւր որդուն բարոյական անկման և դժբաղդ ամուսնութեան: Միթէ Նունէի պէս սիրող սիրտը և խելօք աղջիկը կարող էր դժբաղդութիւն

համարել անհամաձայնութիւնը մօր և որդու մէջ, երբ նա, նոյն Նունէն, շատ լաւ գիտէ, որ երիտասարդ Ազիղեանցը, տեսնելով իւր մօր սոգէտ և վատ ձգտումները, պէտք է շարունակ կուէր իւր մօր դէմ և կամ, ընկճելով այդ մօր կամքի տակ, ստիպւած պէտք է ամուսնանար մի չը սիրած և դեռ ով գիտէ ինչ թեթևալիկ կամ սոգէտ աղջկայ հետ և զժբաղդանայ, կամ շարունակ կուէր իւր կնոջ դէմ կամ մեռցնելով իւր մէջ բոլոր մաքուր զգացումները և լաւ ձգտումները:

Ի դուր է հեղինակը դրել Նունէի բերանում այսպիսի մարդարեական խօսք՝ «Թող փարատուի խաւարը և ժամանակը կ'անէ իւր անելիքը»: Էլ ինչպէս կարող է փարատուել այդ խաւարը, քանի որ դուք կը սպանէք սէրը լանուծն նոյն խաւարի: Գուք բաց էք թողնում մի հիանալի դէպք՝ լոյս մտցնել խաւար ընտանիքի մէջ Նունէի միջոցով և ձեռքներդ ծալած սպասում, որ այդ խաւարը փարատուի, քանի որ, սպանելով Ազիղեանցին, դուք աւելի ևս թանձրացնում էք այդ խաւարը?!

Որ Նունէն կարող էր այնպէս վարել, ինչպէս պ. Չմշկեանն է կամեցել,—որոք վերայ ևս չեմ դարմանում. այն, անբնական չէ Նունէի վարմունքը. բայց անբնական չէր լինի նաև, եթէ նա արհամարհէր Ազիղեանցի մօրը ի սէր երիտասարդ Ազիղեանցի: Եւ Նունէն, երկու չարիքներից ընտրելով փոքրագոյնը և հետեւելով իւր սրտի թելադրութեան, նոյնքան և աւելի մեծ իրաւունքով կարող էր բացական չել՝ «Թող փարատուի խաւարը, ժամանակը կ'անէ իւր անելիքը»:

Բայց ոչ. պ. Չմշկեանը քաջութիւն չի ունեցել այդպէս վարելու. նա դժարացել է Նունէին դուրս բերել ոչ որպէս մի բացասական հերոսուհի, այլ որպէս ներդործական հերոսուհի, որովհետև «Ապօրուհու» մէջ Նունէն մի բացասական հերոսուհի է: Նա զժբաղդացնում է իրան, դժբաղդացնում է երիտասարդ Ազիղեանցին—սոսնց մի փոքր փոքր: Ես շատ լաւ եմ հասկանում, որ կարելի էր սէրը խեղդելով հերոսանայ. ես միանգամայն թող եմ տալիս, որ կարելի է սէրը թաղցնել—մի այլ սէր ազատելու համար և կամ լանուծ մի որ և է առաքինութեան. բայց ես ոչինչ առաքինութիւն չեմ տեսնում, խանդարելով մի ամուսնութիւն՝ հասարակական խաւարը աւելի թանձրացնելու հետեանքով, խանդարել մի ամուսնութիւն՝ պատուական երիտասարդի և այն էլ մի սիրած մարդու՝ ձանձի մէջը գցելու համար:

Եւ վերջապէս ինչո՞ւ անպատճառ ենթադրել, որ, եթէ Ազիղեանցը պոսակէր Նունէի հետ, զոցա ընտանիքում պէտք է մեծ փոթորիկ լինէր, մալր ու որդի բաժանէին և այլն: Ես կարծում եմ, որ Ազիղեանցի մալրը կը խօսէր, կը փնթփնթար ու վերջը... կը լռէր, կը հաշտէր կատարած իրողութեան հետ, նամանաւանդ որ Ազիղեանցի արածը մի հրէշաւոր բան չէր լինի հասարակութեան աչքում, գոնէ այժմեան Թիֆլիսի հասարակութեան, որը տեսել է ամուսնութիւններ պլլապէս բոմանտիքական, քան

կը լինէր Ազիզեանցի արածը: Նունէն, որպէս Ազիզեանցի կին, կը գտնէր լաւ շրջան նաև այժմեան Թիֆլիսում. նա մինչև անգամ կարող էր իւր կապը չը կտրել ուսումնարանական գործի հետ:

Ահա, ուրեմն, «Ալարժուհու» գլխաւոր պակասութիւնը՝ սէրը զոհուած է առանց չարգելի կամ անընդդիմադրելի պատճառի: Զոհուած է սէրը՝ առանց հետք թողնելու, մինչդեռ կոմեդիայի բնորոշ նպատակն է՝ ցոյց տալ, թէ ինչպէս է ազատուած սէրը բոլոր խոչնդոտները միջից: Սրբ սէրը չը պէտք է ազատուի, այլ պէտք է խեղդւի, զոհուի, դա արդէն կոմեդիա չէ, այլ ողբերգ: Սէրը այն զգացմունքներիցն է, առանց որի ամուսնութիւնը կը դադարի ամուսնութիւն լինելուց, իսկ առանց փոխադարձ սիրոյ վերայ հիմնուած ամուսնութիւնները—ընտանիքները կը փչանան, դոցա հետ նաև ինքը հասարակութիւնը: Փրկել հասարակութիւնը բարոյական անկումից կարելի է ուրեմն միայն՝ երբ դուք կը փրկէք սէրը: Ահա թէ ինչու ամուսնական սէրը, առողջ տևողական սէրը, որը կարող է ընտանիքի համար տաքացնող կրակը դառնալ, թէ ինչու, ասում եմ, ամուսնական սէրը կոմեդիայի գլխաւոր առարկան է, և թէ ինչու այդ սէրը ինքն ըստ ինքեան դառնում է մի նպատակ, որի առջև հասարակական նախապաշարմունքները ոչ չը պէտք է ունենան: Սէրը հարկաւոր է փրկել չանուն հասարակութեան չառաջադիմութեան. այնպէս որ սէրը կարող է զոհուել միմիայն այն դէպքում, երբ նա պահանջում է վերացնել մի այնպիսի կարգու կանոնի, առանց որի նոյն այդ հասարակութիւնը կարող է ապականուել վտանգի ենթարկուել: Օրինակի համար, եթէ մէկի սէրը ազատելու համար, հարկաւոր լինէր՝ ուղղակի ամուսնութիւնը վերացնել և ազատ սէր ընդունել և կամ բաղձակնութիւն ներմուծել և այլն:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ «Ալարժուհու» գլխաւոր միտքը քննադատութեան չի դիմանում: Եւ թող չ'ասեն ինձ, թէ հեղինակը ուղեցել է միմիայն կեանք նկարագրել և ոչ թէ տենդենցիա մտցնել իւր պիեսի մէջ: Այդ առարկութեան ես ուղղակի կը պատասխանեմ.—կեանքը արդէն ինքն ըստ ինքեան նկարագրում է, երբ հեղինակը մեզ ներկայացնում է Նունէի հոգեկան կռիւը Ազիզեանցի մօր Նիեմիայի դէմ. բայց թէ ինչ եւք է ստանում այդ կռիւը, այն թէ այն՝ դա արդէն կախած է նորանից թէ ինչ է ուզում ասել հեղինակը: Եւ ես ասում եմ, որ հէնց դորանումն է, որ կաղում է «Ալարժուհին»:

Մի լաւ կոմեդիա լինելու և թատրոնական ընկերտուարի երկարամեալ սեպհականութիւն դարձնելու համար, այժմեան «Ալարժուհին» պէտք է փոփոխութեան ենթարկուել. և նա այն ժամանակ կը լինէր ոչ թէ երեք, այլ չորս կամ հինգ գործողութիւնով:

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵԶՈՒԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Վենետիկի «Բազմավէպը» իւր այս տարւալ մարտ ամուսայ համարը (հատոր իւր) սկսում է Հալլ Բարսեղ Սարգիսեանի մի շօղւածով, որի վերնագիրն է՝ «Աշխարհաբարը գրարարի ձեռքով զարգացնելու և կանոնաւորելու և գրաբար լեզուն աշխարհաբարի մէջ կենդանացնելու խնդիրն»:

Ահա այդ շօղւածի բովանդակութիւնը, շօղւածի, որը գրւած է շատ անմարսելի հալերէնով և որի մտքի թելը՝ գրւածքը մի քանի անգամ կարգաւով և, նախընթաց մտքերը չը մոռանալու համար, կարևոր կէտերը գրչի անցնելով, այն էլ՝ չալտնած մտքերը լետ ու առաջ դնելով միայն կարելի է որոշել: Յօղւածի բովանդակութիւնը մենք ամփոփում ենք հետևեալ կէտերի մէջ:

1. Հալոց լեզուն իւր կազմը ստացաւ սկսած Աբամից մինչ Տիգրան և Տիգրանից մինչ Վաղարշակ:

2. Այդ լեզուն նոր կենդանութիւն առաւ Պարթև-Արշակունեանց ընտանիքի հարստատելովը Հալաստանում, որով հալերէնի մէջ մուտ գործեցին պարթևական բառեր ու խօսքեր:

3. Չորրորդ դարու վերջը այդ լեզուն, որ էր արարատեան լեզուն, ունէր գրական լինելու հարկաւոր չատկութիւնները:

4. Այդ լեզուն ազնւացաւ չունական դպրոցների գրականութեան ազդեցութեան ներքո՝ Տրդատից սկսած մինչ հայոց մեկնանան Վառմշապուհ:

5. Բայց այդ չունարէնի գանձերը տարրականացան հալոց լեզուի մէջ հալոց գրերի գլխտից լետ, երբ սկսւեց հալոց դպրութիւնը: Այդ դպրութեան ոսկէ դարն էր Ն.-րդ դարը:

6. Ն.-րդ դարու գրաբարը հետագայ դարերում ընկաւ, աղաւաղւեց:

7. Գրաբարի աղաւաղումից ծնւեց այն աշխարհիկ գրական լեզուն, որը իւր կազմը ստացաւ 12 և 13 դարերում և որի ներկայացուցիչն է Մխիթար Գօշի Գատաստանագրքի թարգմանութիւնը Սմբատի ձեռքով:

8. Այդ աշխարհիկ լեզուն կազմւեց ոչ թէ գաւառա բարբառներից, այլ գրաբարից:

9. Չը նալած որ աշխարհիկ գրական լեզուն կազմւած էր 13 դարում, բայց շարունակում էին գրել գրաբար մինչ 19-երորդ դարու կէսը:

10. Այն աշխարհիկ լեզուն, որ կազմւած էր դեռ 13 դարում, զարգացաւ, որովհետև հետագայ դարերում նա գուրկ մնաց կենդանի սերունդների և գաղափարների աջակցութիւնից և ընդհակառակը, նա աղաւաղւեց թաթարական և այլ լեզուների ազդեցութեան ներքոյ:

11. 13-երորդ դարում կազմ ստացած աշխարհաբարը, աղաւաղւելով ստացաւ այն ձևերը, որոնց ներկայացուցիչներ կարող են համարւել, արեւմտեան հալերէնի համար՝ հայր Աւգերեանի Գեղ կենաց, իսկ արեւ-

և լեհանճերի համար՝ Սալաթ-Նովալի երգերը և Աբովեանցի «Վէրք Հալաստանին»:

12. Այդ, 13 դարուց իւր զարգացման մէջ ընդհատուած լեզուն ալժմ մեր գրական աշխարհիկ լեզուն է, որը մենք զարգացնել ևնք կարծում, ներմուծելով նորա մէջ օտար բառեր և դարձւածներ:

(«Բայց զարմանքն այն է, զի քառասուն տարի առաջ աշխարհարարին ռահասորդ եղող հեղինակութեանց վերալիշեալ թերութիւնքն՝ ալժմու արագազիր դպիրներս և քաջալարժ սուրճանդակներս իսկ՝ զործած կը լինինք, և բը կը իր զճեմք դեռ աշխարհաբարի անձուկ պարունակէն ստնփոխ մ՝ անգին անցնել և դասական լեզուէն պատշաճ նպաստներ ընդունել. մինչդեռ օտար բանից և բացատրութեանց թիւն՝ օր քան օր կ'աճի, և բողոքողներ հազիւ թէ կը գտնւին»։ Եր. 87)։

13. Հարկատր է, որ աշխարհարարը գրարարի ձեռքով կազմակերպել և հարստանալ:

Բայց ահա և հայր Բարսեղ Սարգիսեանի դեռ ևս շարունակելի չօր-ւածի վերջաբանը.

«Հայութիւնն և հալ լեզուն՝ իւր զարգացման այն դարուն մէջ միայն պիտի կարենալ ինքզինքն անկարօտ համարել դասական լեզուին, երբ կարող լինի գերազանցել նոր դարը. այլ այս բանս թէ կարելի՛ բաց դեռ շատ հեռի է։ Որքան կը սխալին նոքա՝ որոնք կը կարծեն, թէ արդէն իսկ ալըպիսի դարու մի հասած են. և թէ գիտութեամբ և թէ եւրոպական լեզուաց կենդանի արդեցութեամբ՝ կարող են լեցնել այն ամեն լեզուական պէտքերն, ինչպէս կը լեցնէին մեր նախնիք՝ հայկական բարբառուն ձեռքով, և հարստացնել զայն և կատարելագործել։ Այս, կարող են հարստացնել, բայց այն կերպով՝ որով փորձեցին ևրբեմն հարստացնել Կաթիլ Անդաղթն և իւր համախոհքը, և ոչ այնպէս՝ ինչպէս ըրին Նդնիկ, Սահակ և Մեսրոպ. ուր աղազաւ մնացին անհասկանալի և պիտի մնան տակաւին ի խրատ և ի չանդիրանութիւն մեր օտարամոլներուն, ոչք բնաւ չեն խղճեր օտար աղգաց գաղափարաց հետ ի միասին՝ առնուլ և բացատրութիւնս օտարս, առանց իւրացուցիչ զօրութեան և հալացնելու՝ որոնք չեն միանար հայոց լեզուին հետ, այլ կը մնան անմարսելի. այնպէս զի, և թէ չաճախեն քան դժաւին՝ կարող է ասպդալին սոյլ աշխարհաբարն ևս ենթարկուլ օտար աղղեցութեան, ինչպէս ենթարկուցան երբեմն ասկէ տարբեր աշխարհաբարներ։ Յիրաւի, այս բանիս համուկելու համար՝ րաւական է կարգաւ «Մուրճ»-ի 1890 թւին հրատարակուած առաջին ամսաթիւրթի լառաջաբանն և նման ուրիշ չօրւածներ ևս ալլուր, ուր «ամենաինտելիգենտ» (ամենահասկացող) և ալ կրկզլիւսան ձիւաղներ կը սուկացնեն զհալ լուիւս. իսկ բացատրութիւններն աւելի դիւմանական են՝ քան հայկական»։ —

Բայց ահա այժմ և խրատը՝

«Լաւ կը լինէր, եթէ սոքա իրենց օտարերկրեաց գիտութեան հետ ի միասին՝ իրենց մաշրեմի լեզուն ևս լաւ կերպով ուսանելէն վերջ՝ ձեռք զարնէին ազգախի խմբագրութեանց փափուկ պաշտօնին»:

Այսպիսով, որպէս տեսնում է ընթերցողը, հայր Բարսեղ Սարգիսեանը հայոց լեզուի պատմութեան մի դաս տալուց չետ, անցնում է խրատի՝ թէ երբ և ինչպէս պէտք է խմբագրական գործին ձեռնարկել:

Բայց նախ՝ մի փոքր լեզուից խօսենք: Հայր Սարգիսեանը, նորա հետ և «Ֆաղմալէպի» խմբագրութիւնը, իսկ սորա հետ նաև Վ. Լենտկի Մխիթարեան ամբողջ միաբանութիւնը, դեռ ևս ձեռքից բաց չեն թողել այն խնդիրը, որի մասին մեզանում լրջօրէն կարելի էր խօսել միտիան տասնեակ տարիներ առաջ: Այդ շարքի ի հայրերը մինչև այժմ չեն կարողացել հասկանալ, որ մեզանում ոչ ոք չի հերքում զբարարի նշանակութիւնը արդի աշխարհիկ լեզուի զարգացման համար. նոքա իրանց բոլորովին կոյր են ձևացնում, չ'ուզենալով տեսնել մեր աշխարհիկ լեզուի մէջ գրաբար բառերի այն ահագին քանակութիւնը, որը օրէցօր աւելանում է և ոչ պակասում: Կամենում է արդեօք հայր Սարգիսեանը պնդել, թէ այն լեզուն, որով գրած են հէնց այս տողերը, ոչնչով չեն տարբերում Սալաթ-Նօլալի և Աբովեանցի լեզուից, քան օտար բառերի շատութիւնով: Քանի օտարամուտ բառեր կը գտնէք «Մուրճի» հէնց այս անգամեաց տետրակում:

Արդի հայոց զրական լեզուն զարգանալու ամենալաւ ճանապարհի վերայ է: Այն բոլոր բառերը, որ մեզ պակասում են, մենք վերցնում ենք կամ ժողովրդի բերանից, կամ գրաբարից, կամ օտար լեզուներից, նալած նիւթին, հանգամանքին, ժամանակին: Բայց հայր Սարգիսեանը չի էլ լիչում մեր լեզուն հարստացնելու: Կարևորագոյն ազդիւրներից մէկը, որ դաւառաբարբառներն են: Նա կարծում է, որ ինչ բառ մեղմից մէկն ու մէկը չը գիտէ, իսկոյն պէտք է դիմէ գրաբար բառարաններին. և մտցնէ ու մտցնէ գրաբար բառեր ու գրաբար ոճեր, արդարացնելով իրան, թէ աշխարհաբարը «մանկական տիոց մէջ է, ուրեմն հարկ է որ նա իւր հինաւուրց մօր ստեամբքը սնանի», խօսելով հայր Սարգիսեանի ոճով:

Ոչ, մեզանում ազգայն չեն վարում. մեր աշխարհիկ լեզուն զարգացնելու և հարստացնելու համար՝ դուները չենք փակում ոչ ժողովրդական բարբառների, ոչ գրաբարի և ոչ օտար լեզուների առաջ, թէև այդ դեռ չի նշանակում, թէ մենք գրական ենք շինում ամեն ժողովրդական, ամեն գրաբար և ամեն օտար բառ: Կան դէպքեր, ուր զերադասութիւնը տալիս ենք մէկին, երկրորդին կամ երրորդին: Բոլորովին զուր հառաչանքներ է արձակում հայր Սարգիսեանը մեր օտարամուտութեան համար: Մեղադրել

մեզ օտարամոլութեան մէջ—միանգամա՛ն անհիմն է: Յաճախ մենք գործ ենք անում մի օտար բառ աչն պատճառով, որ այդ օտար բառի նշանակութիւնը զարգացած դասի համար աւելի որոշ է, քան նոյնանշան հալկական բառը: Բայց երբ այդ խօսքը ընդհանրանում է մեր խօսակցական կամ գրական լեզուի մէջ, մենք դէմ չենք լինում, եթէ նորա անգը հալկականը ընդունւի կամ ստեղծւի և ընդհանրանայ:

Գուք գանգատուում էք, թէ մեր «բացատրութիւններն» աւելի դերմանական են, քան հալկական: Մենք դորան կը պատասխանենք:—Աշխարհաբար գրողներինց նոքա, որոնք օտար և զարգացած լեզու չը գիտեն, չը գիտեն այնքան ճիշդ գրելէ, այսինքն՝ ցանկացած մտքերը այնքան ճշգրիտ արտաւայտել, որքան օտար և զարգացած լեզուներ գիտողները: Եւ երկրորդ, մեր արդի լեզուի ողին և ուղղութիւնը արդէն այնքան որոշ են, որ սխալ կամ ոչ հալկական նախադասութիւնները իսկու՛ն աչքի են ընկնում և չեն մոլորեցնում ուրիշներին: Այդ մասին դուք կարող էք բոլորովին հանգիստ կենալ, ինչպէս և մենք բոլորովին ապահով ենք, որ «Բազմավէպի» սոսկալի լեզուն մեզ երբէք չը պիտի կարողանայ օրինակ ծառայել:

Մեր ասածը, վերջ ի վերջոյ, այս է:—Մեր արդի աշխարհիկ գրական լեզուն դեռ ևս կատարելութեանը չի հասած ոչ իւր ձևերի և ոչ խօսքերի հարստութեան կողմին: Բայց այժմ լեզուն զարգանալու լաւ ճանապարհի վերայ է: Մեր արդի լեզուն, չը նաչած իւր անկատարելութեանը, արդէն իւր կազմը ստացած է, նա ունի որոշ բնաւորութիւն, այնպէս որ նա գիտէ թէ ինչ կարող է ընդունել դաւառական բարբառներինց, գրաբարինց և օտար լեզուներինց և ինչ չի կարող ընդունել իբր իւր մշտական սեպհականութիւն: Մեր արդի լեզուն գիտէ որոշել աւելորդ գրաբարամոլութիւնը, բարբառամոլութիւնը և օտարամոլութիւնը, նա ատում է մէկն էլ, միւսն էլ, երրորդն էլ: Իսկ նոքա, որոնք չը գիտեն կամ չեն ուզում չափը պահպանել, չեն էլ կարողանում ընդհանրութեան հաւանութիւնը գտնել և օրինակ լինել:

Կքմենում էք արդեօք, որ մեր հայերէնը կանոնաւորւի: Գորա համար ամենինց առաջ պէտք է ձեռք վերցնել այնպիսի չօղւածներ գրելուց, որ պիտին է հայր Բարսեղ Սարգիսեանի չօղւածը («Բազմավէպում»): Մի բան, որ արդէն վճուած է, չը պէտք է «խնդրի» կերպարանք տալ: Թող մեր գրողները թիւը, ընթերցանելի չօղւածները, երկերի, վէպերի թիւը աւելանայ, աճի, թող մեր գրականութիւնը ներկայացնէ նորագոյն սերունդներէն հետաքրքրող և առաջնորդող գրւածքներ—և հաւատացած կացէք, որ գրողները, հեղինակները շատ լաւ կ'իմանան, թէ ինչին պէտք է զիմեն, որ գտնեն իրանց պակասող խօսքերը և ոճերը: Իսկ երբ մեր գրական վաստակների թիւը չի աճիլ, և նորագոյն սերունդները ստիպւած կը լինին իրանց հետաքրքրող խնդիրները ուսանել միմիայն օտար լեզուով գրւած ամապրերի և գրքերի միջոցով—այն ժամանակ թէկուզ դուք

հաղար չօղւած դրէք լեզուն կանոնաւորելու հնարներն մասին — ձեր խօսքերը կը մնան «ձա՛ն բարբառո՛ւց չանապատի»:

Գրականութիւնը ալ ձեռով հարստացնելու ամենազլխաւոր միջոցը՝ կենդանի հրատարակութիւններ լո՛ւս ընծալելն է: Եւ գուք, չարգելի հալը Սարգիսեան, ալնքան անհեռատես էք, որ գալիս ու մեզ խորհուրդ էք տալիս՝ թողնել «Մուրճը» Ձեր «Բաղմալէպի» և կամ Մխիթարեան ուխտի հրատարակած գրաբար գրքերը ուսանելու համար: Գուք, ի հարկէ, չէք սպասում, որ մենք կը հետևենք Ձեր խորհուրդին, բայց միայն այս մէկը հարկ ենք համարում Ձեզ հանգստացնելու համար ասելու, որ եթէ «Մուրճի» խմբագրի լեզուն չէք հաւանում, գոնէ խմբագրի չատուկ լեզուն չի խանդարում, որ «Մուրճ»-ում տպւեն նաև հիանալի լեզուով գրւած չօղւածներ, վէպեր, բանաստեղծութիւններ և ալն, այսինքն ալն, ինչ հարկաւոր է մեր լեզուն զարգացնելու, հարստացնելու և կանոնաւորելու համար:

Ա. Ա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

«Մուրճ»-ի ընթերցողներին արդէն յայտնի է, թէ ինչ մեծ քաղաքական նշանակութիւն ենք ուսած այն համա-ամերիկական կօնգրեսին, որը դեռ ևս անցեալ տարւայ վերջերքին գումարել էր Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների Վաշինգտօն քաղաքում (տես «Մուրճ»), 1889 թ., № 11, Քաղաքական Տեսութիւն և Թղթակցութիւններ Արտասահմանից №№ 11 և 12): Մենք ասել էինք, որ եթէ համա-ամերիկական կօնգրեսը գլուխ բերէ իւր առաջադրած ծրագիրը, դա կը լինի ընդհանուր քաղաքականութեան մէջ մի նոր Ֆակտոր. այսինքն նորանով կը ստեղծուի մի հանգամանք, որը ոյժ կ'ունենայ ոչ միայն Ամերիկայի, այլ և Եւրոպայի միջազգային յարաբերութիւններէ մէջ զգալի փոփոխութիւններ առաջացնելու: Թողնելով վերջին ժամանակներում Եւրոպայում պատահած քաղաքական դէպքերը մի կողմ, որոնք մեծամասնաբար մեծ քաղաքական նշանակութիւն չ'ունին, և, չը նայած որ մամուլը ընդհանրապէս այն ուշադրութեամբ չի վերաբերում դէպի կատարած մեծ գործը, մենք մի երկրորդ անգամ դառնում ենք այդ ինդրին, ուզենալով շեշտել թէ ինչ մեծ կարևորութիւն ենք տալիս համա-ամերիկական կօնգրեսին, որը, երեք ամիս նիստեր կազմելուց յետ, ներկայ տարւայ մարտ ամսին իւր գործերը վերջացրեց: Դա մի կօնգրես է ամենաառաջնակարգ նշանակութեամբ և ամենամեծ հետևանքներով: Այժմ մենք կը հաղորդենք այն վճիռները, որ այդ կօնգրեսը կայացրել է: Կօնգրեսի հետևանքները կը հրատարակեն մօտ ժամանակներս: Գլխաւորապէս առաջարկութիւնների մասին ժողովը համաձայնութիւն կայացրեց: Դոցանից կարևորագոյնները հետևեալները կարող են հա-

մարտէլ: Նախ ընդունեց միջազգային վճռող դատարանի ծրագիրը Միացեալ Նահանգների, Մեքսիկայի, Կենդրոնական և Հարաւային Ամերիկայի մէջ, այնպէս որ այդ երկիրների մէջ ծագելիք բոլոր տարածայնութիւնները պէտք է վճուեն այդ միջազգային դատարանից:

Կա իրագործումն է մի զաղափարի, որը ներկայ դարուս ամենամեծերիցը կարող է համարուել, մի զաղափար, որ փայտացել են ամենամեծ քաղաքադէտ-մարդասէր մարդիկ:

Մաքսային միութեան առաջարկը չ'ընդունեց իօնգրետից, որովհետև մասնակցող երկիրների շահերը միատեսակ չ'են: Բայց, դորա փոխարէն, դոնեց մի ելք, որով այդ երկիրների առևտրական շահերը իրար հետ աւելի սերտ կերպով են կապուած, այն է, որ պէտք է իրար հետ փոխադարձ դաշնադրութիւններ կապեն, ուր իւրաքանչիւրի շահերը ի նկատի պէտք է առնեն: Ազատ ներմուծող ապրանքների թիւը պէտք է շատացնեն և բարձր մաքսերը իջեցնեն: Բացի դորանից համաձայնութիւն կայացրին մաքսերը կանոնաւորելու նկատմամբ, որպէս նաև նաւերի առողջական-նախազգուշական միջոցների և կարանտինների նկատմամբ:

Մեծ նշանակութիւն ունի նաև, որ ընդունեց այն վիթխարի ծրագիրը, որով պէտք է շինել մի միջազգային ամերիկական երկաթուղի, որը Ամերիկայի երկու ցամաքները ծայրէ ի ծայր պէտք է միացնի: Այդ վիթխարի պրօեկտը պէտք է իրագործուի օժանդակութիւններով և հողեր պարզեւելով բոլոր տէրութիւններից: Կնժիներների մի մասնաժողով, բոլոր տէրութիւնների հաշուով, պէտք է նիստ ունենայ Վաշինգտոնում և այստեղից հարկաւոր երկրաչափութիւնները անէ: Կապիտալիստները կը սկսեն և կը վերջացնեն դործը: Որպէս Ռուսիայից ձեռնարկուած սիբիրիական գիծը, նոյնպէս և համա-ամերիկականը կը լինի աշխարհիս ամենամեծ երկաթուղային գիծը:

Նոյնպէս վճուել են ամերիկական տէրութիւնները միացնել պօստային-չոգենաւային գծերով՝ ապրանքների և մարդկանց համար: Դորա ծախքի մէջ պէտք է մասնակցեն Միացեալ Նահանգները 60% -ով, Բրազիլիան 25%, Արգենտինեան հանրապետութիւնը 10% և միւս տէրութիւնները, ըստ պահանջին, 5-ական պրօցէնտով: Նոյնպէս համաձայնութիւն կայացրեց պատենտային իրաւունքը պաշտպանելու համար, առևտրական նշանների համար, հաւասար չափերի և կշիռների համար:

Մի առանձին մասնաժողով ընտրեց վճռելու համար, որ միատեսակ արձաթէ դրամ ընդունւի ամենուրեք:

Համաձայնեցին նաև դաշնադրութիւն կապել միմեանց հետ՝ փխստական ոճրագործներին յետ տալու համար, առանց սակայն նոցա մէջ հաշուելու քաղաքական յանցաւորներին:

Թէ ո՞ր աստիճանի մեծ ոգևորութեամբ են վերաբերել կօնգրեսին մասնակցող 60 պատգամաւորները զէպի այդ կօնգրեսի հետեւանքները, այն է քաղաքական և առևտրական միութիւնը, այդ երևում է նորանից, որ Մեքսիկայի, Կենդրոնական և Հարաւային Ամերիկայի պատգամաւորները վճռեցին, իրանց տէրութիւնների անունից, 125.000 ֆունտ ստերլինգ (ուրեմն 1.250.000 ռսկի բուբլի) տալ, որ դորանով Վաշինգտօնում կառուցանւի մի արձան, ի չեշատակ այդ կօնգրեսի և սորա բարձր նպատակների, 1892 թւականին, երբ պէտք է տօնւի Ամերիկայի գիւտի 400 ամեաց յօբելեանը:

Ամերիկական պետութիւնների միութեան մի այսպիսի քաղաքական հսկայական ցոյցի զիմաց կարելի է արդեօք ենթադրել, որ Եւրոպան չ'ազդւի իւր միջազգային քաղաքական և թէ առևտրական յարաբերութիւնների մէջ:

Այդ անկարելի է:

Եւ ահա թէ ինչու համա-ամերիկական միութեան գործը ընդհանուր քաղաքականութեան մէջ մեծ Ֆակտօրներից մէկը պէտք է դառնայ այժմեանից և ե[թ]:

Ն.

ԽՐԻՄԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԲ: Նրանց, որոնք հետաքրքրուած են խմանալու, թէ Խրիմեան Հայրիկի ծննդեան օրը ապրիլի 4-ին է, թէ ապրիլի 5-ին, չպտնում ենք, որ «Մուրճ»-ի հաղորդածը հիմնուած է Խրիմեան Հայրիկի մի կենսագրութեան վերաջ, տպուած «Արաքս» կիսամեաց հանդիսի երրորդ դրքում:—Կենսագրողը պզտեզ ասում է՝ «Խրիմեան Հայրիկը ծնւեց 1820 թ. ապրիլի 4-ին»: Մենք բաւականաչափ ձեռնհասութիւն չ'ունինք վճռելու համար, թէ որն է աւելի ճիշդը՝ «Մուրճ»-ի հաղորդածը, թէ Ազանեանցի հառաժական Օրացուցի ցուցմունքը, որի վերայ մասնանիչ էլ լինում «Արձագանք»-ը, իբր արժանահաստ ողբերի վերայ: Կարծում ենք, սակայն, որ մի մարդու կենսագրութիւն գրողին կենսագրուածի ծննդեան ժամանակը աւելի լաւ պիտի չափանի լինի:

ԽՐԻՄԵԱՆԻ 70-ԱՄԵԱԿԸ ՇՆՈՐ ՀԱՒՈՐԵԼ ԵՆ, որպէս մեզ տեղեկացնում են, բազմաթիւ թէ մասնաւոր անձեր և թէ հիմնարկութիւններ, ամեն տեղից, ուր նորա 70-ամեակի լուրը կարող էր ժամանակին հասնել, չը նայած որ տեղական մամուլից ապրիլի 4-ը չիչեցրին իրանց ընթերցողներին միմիայն «Մուրճը» և «Արձագանքը», մինչդեռ ապրիլի 4-ից առաջ «Մշակ», «Նոր-Գար» և «Աղբիւր» ոչ մի բառով չը չիչատակեցին Խրիմեանի մօտաւուտ 70-ամեակը:

Բազուից, մեր տեղեկութիւնների համաձայն, ուղարկեցին հեռագիրներ Մարդասիրական Ընկերութիւնից, հայր Նղիչէ Գեղամեանցից, հայ երիտասարդութիւնից և Բալախանի նաֆթահորերի հաշ-կառավարիչները կողմից:

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ: «Արձագանք»-ը իւր № 8-ում չալտարարում է հետեւեալը. «Հայ հասարակութեան սորանով չալտարարում է, որ Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը ներկայ տարուց մալխի 13-ին (ըստ նոր տօմարի 25-ին) պիտի կատարէ Հ. Ղևնդ վ. Ալիշանի գրական գործունէութեան վիճամեաց չօրելեանը»:

«Մուրճ»-ի խմբագրութիւնը ուրախ կը լինի, և թէ կարո-

դանաչ առաջիկաչ ամիաներից մէկում տպագրել մի քննադատական ջօղւած հար Ալիշանի գրական-գիտնական գործունէութեան մասին:

«ՄՈՒՐՃ»-ի ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԸ: Մի պարբերական հրատարակութիւն, պրունի ոտանաւորների բաժին, և որը պարտաւոր է հաշիւ տալ նորագոյն սերնդի գրական արտաբրութիւններից, նա չի կարող և պարտաւոր էլ չի տալ միմիայն chef-d'oeuvre-ներ, գլուխգործոց գրւածքներ: Ա շ խ ա Ր հ ք ի ս և ոչ մի ամսագիր, իւր բանաստեղծութիւնների բաժնում, մի հաւարածու չէ բարձր բանաստեղծական գրւածների: Վերջըէք սուտաց, գիրմանական, ֆրանսական և այլ աղբերի ամսագրեր և տեսէք, թէ նոցանում տպող ոտանաւորներից քանիսն ևն կարողացել դաստղ գրականութեան մշտական սեպակնութիւն և զետեղւած ոտանաւորների հեղինակներից քանիսն ևն հաշակում իբր բանաստեղծներ:—Շատ և շատ քչերը: Արեկաչ պարտու մէջ եղած ևն հազարաւոր ոտանաւորիտներ, սրտնք աշխատակցել ևն ամսագրերին, բաց ներկաչ պարտու բանաստեղծների անունները միմիայն հատ-հատ կը գտնէք ամեն աղբի գրական պատմութեան մէջ:—Աւ ինչ կարելի է տակ ոտանաւորների մասին, նոցնը կարող ենք ասել վէպերի մասին: Ուրպէս ամեն տեղ, նոցնպէս «Մուրճ»-ի նպատակը չի կարող և չը պիտի լինի տալ միայն ամեն քննադատութիւնից բարձր կանդնած վէպեր: Խնդիրը նորանում չէ, թէ բոլոր տպւած վէպերը, բոլոր տպւած ոտանաւորները գերազանց գրւածքներ ևն թէ ոչ. խնդիրը նորանումն է, թէ «Մուրճ»-ում տպւած վէպերը, «Մուրճ»-ում տպւած ոտանաւորները որքանով ևն կապւում մեր կիւնքի և գրականութեան պահանջների հետ և իրանց գիւղարեւստական համեմատական գերազանցութիւնով, ուղղութիւնով և բովանդակութիւնով որքան ընդունակ ևն բեղմնաւորել և լաւ ոգով ներշնչել գրողներին: Խնդիրը ուրեմն ալստեղ ժամանակակից սերունդների վերաց արած բարոյական աղղեցութեան մասին է: Աւ չը կաչ մի աւելի հեշտ բան քան զերծ մնալ ամեն շարձակումներից, այդ աչն կը լինէր, որ մենք կը տպագրէինք միայն չպտնի անուն և հաշակ վայելող բանաստեղծների գրւածները կամ թարգմանութիւնները: Գորանով «Մուրճ»-ը իւր վերաց կը տարածէր այդ չպտնի անունները կրող մարդկանց հովանաւորութիւնը, իրանից թափ տալով պատասխանատւութեան մեծ մասը: Այն, բաց աչն ժամանակ «Մուրճ»-ը իւր կոչման ծառայած չէր լինիլ: Մենք գերադասում ենք՝ «Մուրճ»-ը և նորա հետ մեղ ինքներն իս հա-

ստրակայ քննադատութեանը ենթարկել և տոկալ ճորտ սնար-
դար, անգամ թշնամական չարձակումներին, բայց զորանով իսկ
մի բան ազատել քան վախճել պատասխանատուութիւնից
և ոչինչ չը ստեղծել և կամ եղածներին ոչինչ ուղղութիւն չը
տալ:—Յատկապէս բանաստեղծութիւնները մասին մենք
կ'ատենք աչն, ինչ անցեալ տարւաչ վերջը մենք արդէն սակ
ենք՝ կազ մի լուրջ հասարակութիւն, որը հետեւում է «Մուրճ» ի
բանաստեղծութիւնների բաժնին: Ոչ թէ այդ հասարակութիւնը
անպարման կերպով հաւանում է ըստը ստանաւորները, որ սրբա-
ւում են «Մուրճ»-ում, ընդհակառակը, հէնց այդ հասարակու-
թիւնն է, որ ամենախիստ կերպով է վերարեւում դէպի «Մուրճ»-ի
այդ բաժինը: Բայց սուանց սլառձառի չէ, որ այդ հասարակու-
թիւնը արժանի է զսոնում հետաքրքիր ուղղութեամբ հետե-
լու «Մուրճ»-ում տղւոյ բանաստեղծութիւններին, զրականու-
թեան այդ ճիւղին, որ այնքան ու աչնքան անխնամ էր լիտ-
ւած մեղանում, քի պտուղները այժմ ստանում ենք մենք այլ և այլ
Սաֆի-Սատիրների մէջ:—Իսկ մի բաժնի համար հասարակութիւն
կազմելը—այդ արդէն մի հանդամանք է, որով մենք աւելի ենք
ներշնչւում, քան աչն մարդկանց կարծիքներով, որոնց ջանքը ամա-
լութիւն ստեղծելն է:—Մենք ինքներս շարունակելու ենք լինել
անկեղծ, և «Մուրճ»-ի բանաստեղծութիւնների խիստ քննադատը,
որպէս մենք ենք տեսնում, լինելու է «Մուրճ»-ը ինքը:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ: Անցեալ № 3-ում, «Աւաղակները» գրախօսութեան մէջ
(երես 430, առաջին սիւնեակ) մկուռդ խօսքը բացատրւած է
մեղնից իբր «կարճ նիղակ»: Ընթերցողներից մէկը կարծում է
որ մկուռդ նշանակում է աչն, ինչ գուհկորէն անուանում են
«թօպուղ»:

ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅՕԲԷԼԱՆԻ առիթով, որ կատարելու է մալխի 6-ին,
«Մուրճ»-ի դալ № 5-ի «Ամսալ Գրօնիկ»-ում կը լինի թէ
կատարւած եղելութեան և թէ մամուլի ու հասարակութեան
վերաբերութեան դնահատութիւնը:

Վերջին ժամին ստացանք՝

ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ.—ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ, Թիֆլիս, 1890 թ., Տպարան
Տ. Նաղարեանցի. դիւն է 10 կոպ.:

ՎՐԻՊԱԿ: «Մուրճ» № 3, սլ. Չմշկեանի լօղւածում, երես 361, 6-դ տողից
չի շարւած մի ստրոջ տող, աչնպէս որ պէտք է լինէր... «Ներ-
կապցման օրը կասասլում կար միաչն 4 բուբլի, աչնպէս որ
մնում էր բաց 400 բուբլու չափ»:

TECHNIKUM MITTWEIDE

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

Մաքսօսիայում

ԴԻՐԵԿՏՐ՝ ԻՆՃԵՆԵՐ Կ. ՎԵՑԵԼ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ-ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ

23-ԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանում է Միտվալդե քաղաքում, Գերմանիայում, (Մադաուրոսթիւն Մաքսօսիայ), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱՆԵՐ շինելու և գործառնում անարկիաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ Լէքտրօ-տեխնիկ և Ջրաղացների շինութիւն:

Սրտանմահան ուսումով այդ հիմնարկութիւնը պատրաստում է հետևեալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, Լէքտրօ-տեխնիկի և Ջրաղացների շինելու համար:

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց ստորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտանիւթերի գործարաններ, շաքի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմբալի, շաքարի, ասեղների, պողպատէզրիչների, կահ-կարասիների, բիմբական գործարաններ, գաղի, լուցկիի գործարաններ և այլն և այլն:

4. Գիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար վիշաճ գործարանների համար:

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելութիւնը լինում է ամեն տարւաւ ապրիլի և հոկտեմբերի միջին:

ՏԵԽՆՈԳՈՒԹՅՈՒՆԸ ուսման առաջին դպրոցում, նախած աշակերտի նախապատրաստութիւնների, լինում է $2\frac{1}{2}$ կամ 3 տարի, երկրորդ դպրոցում $1\frac{1}{2}$ տարի:

ՏԱՐԻՒԸ ԸՆԴՈՒՆՈՂԻ պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Սոյն $18\frac{89}{90}$ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է դիմել՝ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ուր ի միջի ալլոց կարելի է խմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտվալդէի կեանքի, և դպրոցի վարչութեան պահանջմունքների մասին:

af,
65
m.
h.
a.
by
p
r.
p
u,
f,
u
r.
p
p
p
a.
f.
t
p

„Մ Ո Ւ Ր Ճ“

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1890 Թ. ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:

Տարեկան բաժանորդագիրնր	10	ր.
Կէս տարւանր	6	ր.
Երեք ամսւանր	4	ր.
Մի գրքովր	1	ր. 50 կ.

Ընդունում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տղած յայտարարութեան:

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը տարեցտարի մեծացնելը միանգամայն կախւած է բաժանորդագրութեան յաջողութիւնից: Ծաւալիցն է կախւած նիւթերի հարստութիւնը: Այդ պատճառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը խնայել «Մուրճ»-ը իրանց ծանօթ շրջաններում տարածելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամսական մի երեսի համար	10	ր.
„ կէս երեսի համար	6	ր.
„ քառորդ երեսի համար	4	ր.

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարւած գրքերով՝ սոցա գների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРՇ“ . Խմբագրութիւնը գտանւում է՝ Գանուկեան փողոց, նախկին տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ бывш. Іоаннисіа-ни), բոլորովին մօտ Երևանեան հրապարակին:

Արասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».